

15501

1920

891.99
<hr/>
2.55

1920



2003



500

✦ ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ✦

0


# Վ Ի Գ Ա Կ Ն Ե Ր

Ե Ի

## ՑԱՆ ՈՒ ՑԻՐ ԳՐՈՒԱԾՆԵՐ



*Handwritten signature*



Ի Ջ Մ Ի Ր

Տպագր. ՄԱՄՈՒՐՆԱՆ

1920

38	11.99
2	1-55



391.99

Q-55

✠ ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ ✠

# Վ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Ե Ի

## ՑԱՆ ՈՒ ՑԻՐ ԳՐՈՒԱԾՆԵՐ



Ի Չ Մ Ի Ր

Տպագր. ՄԱՄՈՒՐԵՍՆ

1920



40582 ան

202

ՅԱՐԳԱՆԱՑ ԵՒ ՄԵԾԱՐԱՆԱՑ

ԱՌ

ՆՆՈՐԶԱԼԻ ՏԻՎԵՆ ՍՐԵՈՒՆԻ Մ. ԱԶՆՈՒՈՐԵՍՆ

ԳՐ. ՉԻԼԻՆԿԻՐԵՍՆ



24384-61





# ԼԻԻՍԻ ԳԵՂՈՒՆԻ

( Կ Ի Պ Ա Կ )



## ՆՆՋՈՂ ՄՐՏԻ ՄԸ ԶԱՐԹՈՒՄԸ

«Կին մ'եկաւ եւ շաւր. Լիւսի եւ  
«քո՛ղ որ առնում այս ննջողը. պիտի  
«սփոփեմ զինքը՝ իր ողորմութեան մի-  
«ջոցին.»

ՏԱՆԹԷ

Քաւարան

«Երիտասարդութիւն» ժամերուն համ-  
«ընդհանուր ներգործութեամբը կը վերածնի:»

Վ. ՆԻԿՈ

Դարեբուն Աւանդութիւնը.

**Յ**ԻՆԱՆՑ մի անորժեկի օրուան արշալոյսն իր  
ակնախորհող ճառագայթներովը սկսած էր ողորկ երկնա-  
յին կամարի անհուն անջրպետները, և հետզհետէ ամու-  
քել այգային ժամերու փոքր ինչ կծու ցուրտը: Երօք  
1910ի տարուան Մարտին յատուկ յիմարութիւնները,  
յանկարծական տեղատարաւները, կարկուտները, ձիւ-  
ները. հովերն ու փոթորիկները սակաւ առ սակաւ տեղի  
տուեր էին զարնային մթնոլորտի բարեխառն երևոյթնե-  
րուն, և տակաւին հոն ու հոս մասնակի կազմուած ամ-  
պերը հմայական և կենսաւէտ առաւօտներու զեփեռ-



ներէն յամբարար հայածուերով հետաջինջ կըլլային : Աստղերուն յեանորդները դեռ կը վարանէին վարագուրուելու՝ ըստ Հոմերոսի «Ասկեմասն արշալոյսի» փողփողումներէն :

Ապրիլի վերջին օրուան արեւին շքեղութիւնէն Արմէն կրծիկեան զրդուեցաւ արծակուելու անային բանտէն, ուր իր ձմեռնահար առողջութիւնը դատապարտած էր զինքը անդործութեամբ և ձանձրոյթով մաշուելու՝ հրամանաւ ըզկզի թեթև հարբուելի մը, որ՝ ժիւլ Գլարեթի կարծիքին նայելով՝ «Գարնան յառաջարանն է,» «ինչպէս կենաց յառաջարանն է մարդկութեան սոսա.» «ջին մասնութիւնը» :

Հարբուելը ձանձրալի հիւանդութիւն մ'է, այլ սաղայելէն թեկադրուած և օձին գործակցութեամբը Ադամէն և Եւայէն կատարուած մասնութիւնն ոչ թէ ոճիր մ'այլ սիրային երանութեան յանգող եղեմական ցանկալի և ախորժի անհնազանդութիւն մ'է :

Արմէնին նպատակն էր իր հիւանդութեան վիճակը բարւօքել սակաւ ինչ լիննային մաքուր օդով շնչառութեան ուղիները մաքրագործել, կազուրել : Ուստի որոշեց կանուխէկ վար ցատիկ անկողինէն, և շոգենաւ մանելով կէօզ - Թեփէի նաւառատոյցներուն մէկէն դուրս ելնել, զիւղական շրջագայութեան մ'օգուտները քաղելու համար :

Հոս տեղն է բսկու թէ ո՛վ և ի՛նչ է Արմէն : Մամաթիայի միջին դասակարգի պատկանող ընտանիքի մը զաւակն է : Մեծանուն Ռէշէոս Պէրպէրեանին համբաւաւոր վարժարանին մէջ և անոր թեւին և շուքին ներքե մայրենի լեզուէն գատ նաև քանի մը օտար լեզուներ գրել և խօսիլ սորվելէն և ուսումները յաջողութեամբ աւարտելէն ետք դպրոցէն ելած, կենաց ռազմագաշտը նետուած, այլ անշուք և գրեթէ անձանօթ ընտանիքի մը վերաբերելուն սրտածառաւ անոք և անպաշտպան մնացած ըլլալով, և ս առաւել գինուելու և կենաց պայքարին մէջ յողթութեան միջոցներ գտնելու համար նախ մտաւ վաճառականի մը քով՝ տոմարակա-

լութեան տետրակներ բռնելու, օրինակելու պաշտօնով, յոյսը Նախախնամութեան և ապագային վրայ դնելով, և սրտին առօրեայ զարթումէ մ'ետք քնացած ըլլալը զգալով : Մկամադձութեամբ գրաւուած էր նա՝ իր բընաւորութեան զլխաւոր հանգամանաց պատճառաւ. նախ՝ վասն զի բարձրասիրտ էր, և իր օրական ապրուստը չէ թէ մուրալով այլ աշխատելով շահելու և պարկեշտութեամբ ապրելու համար :— Սիրակուզայի անուանի երկրաչափը, Արշիմէտ, երբ գտաւ լծակը (levier), որ՝ յնակէտի մը կոթնելով ձանր բեռերը անգամ կը վերցնէր, ըսաւ. — «Տօ՛ւր ինձ յնակէտ մը (point d'appui), և երկիրը կը վերցնեմ» : Դիտաւորութիւնս հոս երկրաչափական գիւտի մը կարեորութեան վրայ խօսիլ չէ, այլ պնդելու համար թէ աշխատութիւնն ալ լծակ մ'է, որ կեանքի ամենամանր բեռերը վերցնելու, և անոնց ներքե ճգնուելու վտանգին կենթարկուած թշուառները փրկելու մարդկային մտքի զարգացումին միջոցները հայթայթելու, յեղափոխութեան թրթուրը քաղաքակրթութեան ընդունակ արծիւ մ'ընելու յաւիտենական նախախնամական յատկութիւնը ունի : Հետևաբար գիտէր Արմէն թէ աշխատութիւնը միայն անհատներու և ազգ բու բարեկեցութեան, վերածնութեան և լուսաւորութեան, ինչպէս նաև ընկերային գեհնապարտութիւնն ազատման անխրիպելի լծակն է :

Աշխատանքի օրէնքէն դուրս իրօք ոչ յառաջադիմութիւն ոչ քաղաքակրթութիւն, և ոչ ալ թէ՛ անհատական և թէ՛ ազգային կեանքի անկախութիւն կայ : Աշխատանքը մարդուս ձեռքը կը սրբագործէ և քսակը կը փառաւորէ, կըսէ Արմէն : Բարձրասրտութեան զգացումէն զրդուելով, և պնակալէզութեան պժգալի սովորութեան զէմ սրտմտելով՝ Արշիմէտ տը Միւսէին պէս կըսէր. «Բաժակս փօքր է, այլ լամիլիքս բաժակովս կը լամեմ» (1) :

Անպատիւ հանգամանք կամ ապօրինի շարժառիթ մը չունեցող որ և է աշխատանք ըստ ինքեան ոչ անդոսն.

(1) Mon verre est petit, mais je bois dans mon verre.



լի է և ոչ ալ նուաասութիւնս Տոմարակալութեան տես-  
րակներ օրինակելու պաշտօնը պատուարեր գործ մ'էր  
Արմէնին համար: Ֆուրնիէ, որ Գաղղիացի երեւի և  
տաղանդաւոր գիտուն մ'էր. եօթանասուն տարեկան  
հասակին մէջ վաճառականի մը քով նամակներ կ'օրինա-  
կէր՝ օրը տասներկու ժամ աշխատելով, հաց ճարելու  
համար: Ժան - Ժագ - Ռուսօ երաժշտական եղանակի  
ձայնագրական տետրեր կ'օրինակէր որպէս զի ապրի:

Բայց Արմէն նաև անտանելի ձանձրոյթէ մը կը մաշ-  
ուէր, և անընկճելի տխրութեան մը նահատակն էր:  
Պատճառն էր շատ զգայուն և սիրային ծարաւէ տան-  
ջուող անբաղդ մը, և տասը տարեկան հասակին մէջ  
իւսկիւտարի վարժարանին մի գեղեցիկ աշակերտուհիին  
սիրահարած ըլլալը: Թող դարձանայի չթուի այս անտի-  
ական հասակին մէջ սէր ըսուած ճակատագրային և ան-  
դիմադրելի հիւանդութենէն բռնուիլը: Մեծանուն հեղի-  
նակներ իրենց թարմ հասակին մէջ սիրուհիներ ունեցած  
են: Վ. Հիւկօ իննը տարեկան էր երբ Պայօնի մէջ դե-  
ռահաս աղջկան մը սիրահարն եղաւ: Լորտ Պայրըն նոյն-  
պէս իննը տարեկան էր երբ Մէրի Տիուֆ անուն իննամ-  
նայ աղջնակ մը սիրեց մօրեղնարար: Տանթէ ևս իննը  
տարեկան էր երբ սիրեց Ֆօլքօ Բօրթիւնարի աղջիկը՝ Պէ-  
աթիւսը, զոր իր ամեն երկերուն, նամանաւանդ Լա  
Տիվին Գօմէսի անուն հրաշակերտին մէջ յիշած և փա-  
ռաւորած է իրր աստուածաբանութեան խորհրդանիշը:  
Շաթօպրիան, կէօթէ և այլք միենոյն մատաղահասու-  
թեան ժամանակ պատանուհիներ սիրած են Մօլ կրնայ  
ընութեան օրէնքին դիմադրաւել, անոր անխուսելի վճի-  
ռին դէմ ընդզգիլ, և այս ախորժելի ու միանգամայն  
վտանգաւոր ախտէն չզրաւուիլ: Սակայն գոյամարտի  
պարագաներէն և ապրելու դժուարութեանց հեռանկար  
տեսարանէն հարկադրուելով Արմէն յաջողեցաւ զսպելու  
իր սիրտը չարչարող հիւանդութիւնը, և չուտով հրաժեշտ  
տուաւ իր վաղանցուկ սիրային արկածին, և իր կենաց  
կափառչին վրայ էրիքթեթի, դու իմա՛, մեծանուն  
սկեպտիկեանի մը յատուկ համակերպութեամբ անմոռնջ

փառք ՚ի բարձունս կարդալէն ետք, իր մտքին և սրտին  
բոլոր ոյժերը և կամքին ջանադրութիւնները յատկա-  
ցուց նպատակի մ'որ էր կենաց ռազմադաշտին յաղ-  
թողներուն մին հանդիսանալ օրին մէկը՝ Մալֆիլաթրի (1)  
և Ժիլպերին (2) պէս անօթութենէն չմեռնելու, ոչ ալ  
նենդութեամբ և անօրէնութեամբ դիգելու ոսկիներ, ո-  
րոնց ընդհարումէն արտադրուած ձայնն ազահներու հա-  
մար երաժշտային ներդաշնակութեանց ամենէն զմայել-  
լին, այլ Արմէնին համար պարզ չչուք մ'է:

Արմէն՝ Իզմիրի խորչին նաւական ընկերութեան առ-  
տու մեկնող շոգենաւը նետուելով մինչև Գարանթինայի  
նաւամատոյցը հասնիլը՝ ձանձրոյթէն նուազ տանջուելու  
դիտաւորութեամբ սկսաւ բոլորտիքը նայիլ սակաւ ինչ,  
և ահա իր թերևս բաղդախնդիր աչերուն աօջև յան-  
կարծ պարզուեցաւ կնային շտրհալոյս դէմք մը, որուն  
վրայ համեստութեան, պարկեշտութեան, նաև խղճի  
հանդարտութեան և լըջութեան հով մը ծաւալած երև-  
ցաւ իրեն: Երթասարգուհի մ'էր նէ: Արամբի՞ էր, թէ  
ազապ այս անձանօթուհին, յայտնի չէր: Մերձակայ ու-  
ղեոր մը՝ գեղուհիին Արմէնէն դիտուելը նշմարելով, ահա  
բարի պտուղ կին մ'ըսաւ գրեթէ փսփսալով իր քովը  
նստող անձի մ'ականջին: Արմէն՝ լսելով այդ ան-  
ձին աննպաստ վճիռը՝ զրդուեցաւ վարանելու, կասկա-  
ծելու և չհաւտալու էութեան այն յատկութիւններուն  
զոր ինքը կամ ենթադրութեամբ և կամ համակրային  
տպաւորութենէ մը մղուելով վերագրած էր անտիական  
և իրեն անծանօթ գեղուհիին Անոնք հեղկային անտառ-  
ներու լիճերուն մակերեսական հանդարտութեան ներքև  
պահուած դազանային սաստկութեանց պէս թերևս կը  
պարունակէին դժուարաւ զսպուած սև կրից անգլթու-  
թիւնները, փոթորիկները: Միթէ՞ անհարին է անհա-

(1) Մալֆիլաթրը, Գաղղիացի բանաճիւս մ'էր որ Յշուառու-  
թեան մէջ մեռաւ 1767 ին:  
(2) Ժիլպեր երգիծարան բանաստեղծ մ'որ նոյնպէս դժբաղդ  
մեռաւ 1780 ին:



ւանակա՞ն է այս կարծիքը: Հեցելին՝ <sup>(1)</sup> խրատ տուաւ իր հաւը՝ ըսելով. «Վախցի՛ր կնիկէն և որոտումէն»:

Արմէն ոչ փորձառու կնագէտ մ'է, ոչ ալ զիմագիտութեան և գանկաբանութեան վարժապետ կալի <sup>(2)</sup> աշակերտ մը: Ուստի առ այժմ՝ բաւական համարեց իր սպաւորութիւնը ինքն իրեն պահել, և՛ ստէպ ու գաղտագողի նայելէն և զիտելէն ետք հաստատել թէ այս կնոջ կամ օրիորդին էութիւնը և անունը վարագւերուած կը մնան իր առջև: Սակայն տեսաւ թէ նէ իր առաջին երիտասարդութեան յատուկ գեղութիւնը և շքեղութիւնը զեռ պահած է անթերի կերպով. թէ կրնայ նըկատուիլ ո՛չ միայն աղւոր, այլ նաև հաճելի, այլ նաև շնորհալի և անշուշտ հափափելի: Բայց Արմէն կը խոստովանէր իւրովի թէ պատկերահանի աչքով և մտային գեղագիտակով կը նայէր անոր, և ոչ թէ սրտին սչրովն ու մարդկային հոգին զբաւող գեղասիրային զգայումով մը: Նէ անձանօթութեամբը Արմէնին համար մնաց հետաքրքրական զիմակաւոր մը: Միթէ՞ անհնարին է այս զիմակին ներքև առժամապէս պահուած և սքողուած ենթադրել պարագէտ Սալումէ <sup>(3)</sup> մը որ հովհաննէս Ա. Լետարանիչին զլուրը կտրել և արխէի մը մէջ զրուած իր առջևը բերել տուաւ:

Կինը, իր սիրազրգիւ հնարագիտութեամբը և գեղեցկութեանը զինարանին ուժանակովը հարարտանալու, խըրոխտալու: արկածախնդիր սիրապաշտներէ անվստահութեամբ և կասկածոտութեամբ գիտուելու և բամբասուելու սովորած կին մը միշտ հետաքրքրական պատմութիւն մը, և իր մտքին ու սրտին կենսազրութիւնը մրադրելու պատրաստ սիրահար մը էր նենայ: Բնական է հարցնել թէ այս տեսակ գեղուհի մը յիշատակներն իր մարմնոյն մինչև ո՞ր մասը կերթան և կանկ կառ-

(1) Գերմանացի արեւելագէտ գիտն մ'է:

(2) Գերմանացի բժիշկ մ'որ գանկաբանութեան հնարիչն է, նաև զիմագէտ մը:

(3) Հրեայ իշխանուհի մ'որ Հերոս Ֆիլիբին և Հերոսիասին աղջիկն էր:

նուն... Սրամիտ և անողոք երգիծաբան քննադատ մը ժօրժ Ման անուն հանճարեղ հեղինակուհին յիշագրութիւնները կարդալէն և քննելէն ետք կրտէ թէ «անոնք ներա մինչև պորտը, կէս մէջքը կը շարունակուին»:  
A bon entendeur salut! Իրօք Ալֆրէտ տը Միւսէի այս հոչակաւոր տարփուհին պորտէն անդին, աւելի ստորին մասին պատկանող յիշատակներն ի՞նչ խորհրդաւոր և անխոստովանելի նշանակութիւն ունին արդեօք: Գիտնալ ուզող հետաքրքիրը կրնայ զիմել Բարիզի Բէր Լա շէլ ըսուած գերեզմանատունէն, և նայուածքը ուղղել պոլոտային ձախակողմեան մի շիրիմին, որուն զլուխին կողմը վարսաւոր ուռի մ' Ամերիկայէն բերուած և արնկուած է՝ անդ իր յաւիտենական ննջարանին մէջ հանգչող Ալֆրէտ տը Միւսէին խնդրանայը համեմատ, և մլտաբերելով զրուժան բայց հանճարեղ տարփուհին մէջ քէն վար պատահած շահատակութիւնները, որք գուցէ Անահիտի տաճարին միջին և լոին կիսաստուերներուն ներքև մոռցուած յիշատակներ, և թերևս անցող և պահանջատ կենսազրի մ'երևակայական համարձակութիւններ, չափազանցութիւններ, և ապերասան հետաքրքրութեան մը կամէութիւններ և ենթադրութիւններ են...: Եւ ո՞ր է այն կինն որ արիփէ մը մղուելով անխոստովանելի մնալու սահմանուած արկածներու հերոսուհին կը հանդիսանայ երբեմնակի, և զոր անհանդարտ միտք մը, կասկածոտ խիղճ մը չվարանիր՝ իրր գայթակղութեան կենդանի օրինակ ներկայելու և խաչելու հասարակաց կարծիքին և ծանօթ նախանձոտահներու լոին ուրախութեան առջև: Բայց Էօտիբի (\*) աշակերտելու և այս սպինքսային գեղուհիին հանն-

(\*) Ըստ գիցարանութեան Սոլինքս՝ տուիժի մարմնով և և մարդու զլուխով Թէպ քաղաքին ժանսախսն եղած էր՝ իր հանելուկը չլուծող անմիտները ջնջելով Էօտիբ՝ ազատելով Թէպ քաղաքը այս գագանէն իբր վարժաւորութիւն ամուսնացաւ այդ քաղաքին թագուհիին՝ ժօգամի հետ, առանց գիտալու թէ իր մայրն է նէ: Երբ վերահասու եղաւ իրողութեան, ժօգամ անմասոպան եղաւ և Էօտիբ իր աչերը փորելով կուրցաւ:



լուկը լուծելու յոյսով առ այժմ հարկ կը համարինք դադրիլ ներս վրայ խօսելէ և չարունակել Արմէնին առաւօտեան շրջագայութեան վերաբերող պարագաները պատմել, յառաջադրելով մանրամասնօրէն գրել եթէ յիշուելու արժանի իրողութիւններ պատահին իր թափառականութեան ժամանակ:

Այգային լուսաւորութեան յետին վայրկեանները տակաւին չէին անցեր երբ Արմէն շոգենաւէն դուրս ցատկելով ուղղուեցաւ դէպ ՚ի Քարանթինայի նաւամատոցին հանդիպակայ վիմուտ և դերբուկ ճամբան, որ բլուրի մը ստորոտէն աստիճանաբար ցցուելով կը բարձրանայ ծովին մակարդակէն գրեթէ հարիւր մէթրի չափ, գրպանին մէջ մոռցուած բարձրաչափի մը (Iypsometre) համեմատ: Այս գառիկերէն մագլցելով սկսաւ յառաջել, և սրահ մը հանդիպելու և շունչ առնելու համար կանգ առաւ բլուրին գագաթը յանգող ճամբուն ծայրը հասնելէն ետք: Հոն շնչովին ուռելու յատուկ քառուղեքիտայ բարձի մը վրայ քիչ մը նստելով՝ նայուածքը ժուռածեց նախ Իզմիրի նաւահանգստին հանրածաւալ հորիզոնին հեռանկար և ստուերայէս ուրուազրուած սահմաններու զրայ միայ քաղաքը յոնիական երկիրներու թագուհին կը նկատուի բանաստեղծներէ: Իր խորը շրջակայ գիւղերովը, չինութիւններովը նաբոյի ծովածոցին հետ նմանութիւն ունի՝ եթէ ՚ի բաց առնուին վեզուվի հրաչեռն գիշերային հրաշնչութեան բոցեղէն և սպառնալի շքեղութիւնները: Այս նմանութիւնն ալ տեղի կը չեչտուի՝ երբ մեր այս քաղաքին ամբողջներուն (quai) երկտրական լոյսերու սրուակները վերջալոյսէն ետք կսկսին վառիլ և Իզմիրի ծովափը լուսաւորել՝ գիշերաշրջիկներու, բազմախնդիրներու, փողոցային մի քանի առնախնդիր քր՛ուհիներու և Լըվէյսի աչակերտ սկրսնակներու համարձակ կամ վարանտ քայլերը առաջնորդելու համար: Քարանթինայի դիմացի բլուրին այս բարձունքը, որ հանգրուան մ'եղած էր Արմէնին առժամայէս, կընծայէր դալարուէտ և հաճելի տեսարան մը: Նորածիլ բոյսեր, կակաչներ, սպրիմ մեռնիմ ըս-

ուած զատկածաղիկներ պերճապէս կը կազմէին ախորժելի և ակնապարար մարգագետին մը: Երբ այլուր և հեռուն դեգերեցաւ Արմէնին նայուածքը, արշալուսային ստուերամած մթնոլորտին միջեւն սկսան ընդհամարուիլ և հեռոհեռ տեսութեան առջև իրապէս պարզուիլ նախ Չագալ - Պուրնույի հրուանդանը, որ ցամաքէն դէպ ՚ի ծովախորշը բաւական յառաջելով կը կազմէ լիճ մ'որ ձկնորսարան մ'է, (տալիան): Իզմիրի ծովին բազմատեսակ և համեղագոյն ձուկերը հոն կը ժողովին, կը բանտարկուին, կը մաննին, կաճին և ամառուան եղանակին մէջ կը նուիրուին փափկակերներու: Մայիսէն մինչև Սեպտեմբերի վերջերը առաւօտուան ժամերու հեշտաւէտ զովութիւնը վայելել ուզող նաւորդներու, ձկնորսներու, երբեմն ալ կնորսներու համար ժամադրութեան հաւաքարան մ'է Չագալ - Պուրնու: Այս ձկնորսարանէն և Սանճագ - Գալէէն քիչ մ'անդին աղօտապէս կուրուագրին Միմաս լեռանց չլթային երկու բարձրաբերձ և ըստէպ ամպածրար և սրածայր գագաթները, զոր Երկու սիւնի կանուանէ Փոքր - Ասիոյ երեւելի ուղեւոր և երկրախոյզ՝ Շարլը Թէքսիէ իր ուղեգրութեան մէջ: Ապա հանդիպակայ հորիզոնէն անորոշակի կը ծրագրուի Սիբիլեան լեռներու մի չլթայն, որ կանուանի Եամանյար, և որ Իզմիրի քաջասիրտ Նեմրոսներու ծանօթ է իր վարազաբնակ և անտառուտ բարձունքովը, նաև աւազակներու շահատակութիւններովը: Եամանյարի ստորոտը կը տարածուի Գորտէլիօ անուն գիւղաքաղաքը, որ կրնայ Իզմիրի Արշակաւանը նկատուիլ, նամանաւանդ երբ երկկոյեան ժամերու մթին շուքերը կը տարածուին և կը գրաւեն այս գիւղին պարտէզներու խորշերը, նըշդարիներէ կազմուած և գոգցես անթափանց հովանոցները, ուր կը դիմեն, կը վխտան և կապաւենին գիշերայն սիրամոյր երիտասարդներ և Անահիտի մեհեանին ջերմեռանդ երկրպագուներ: Գորտէլիօյի հարաւային կողմէն աղօտապէս կը տեսնուին Բարա - Սկալայի արուարձանը, Զիլ - Ազմաքի ձկնորսարանը, Իէլիքան - Պուրնու, Քօքօլա - Պուրնու ըսուած հրուանդանները,



Նաև Չամ - Ալթը, որ բնավայր մ'է, և Քոմայի հոչա-  
կաւոր ու մեծ ձկնորսարանը, որ Փօշայի ծովին հիւ-  
սիսային մասին վրայ կը տարածուի :

Այլային յետին աստղերն ևս աներևոյթ կըլլային, և  
երբ արեւին առաջին և թեթեակի փողփողուն ձառա-  
գայթները սկսան սփռուել բլուրին վրայ և անոր փոքր  
ինչ մոտայապատ կուշտերը և ցիրուցան տուները թա-  
փանցօրէն վարագուրող ստուերները փարատեցան, Ար-  
մէն ելաւ կանգ առաւ: Գոհունակութեան և բարեկե-  
ցութեան զգացումէ մը զրաւուեցաւ, լեռնակին վրայի  
նոր բացուած և երկուստէք պարտէզներէ, մրգաստան-  
ներէ, այգեստաններէ շրջապատուած պողոտայէն յաջ և  
յահեակ նայելով, մերթ քարելէ և մերթ դադար առնե-  
լէ, և այս բուսաւէտ և գարնարոյր միջավայրէն յամ-  
րաբար հեռանալէն ետք մօտեցաւ հոյաչէն տաղաւար  
մը շրջապատող ընդարձակ պարտէզի մը դրան: Այս  
կալուածին տէրն է մեծահարուստ նկատուած մարդ մ'որ  
հայ է, նաև անուանի՝ իրր Թիւրքարէ (1) մը: Արմէն  
ժամանակաւ այս մարդը փոքր ինչ ճանչած, բայց հետը  
բարեկամական յարաբերութիւն հաստատել չուզած էր,  
գիտնալով թէ յարգանաց և համակրութեան արժանի  
ըլլալէ շատ հեռի է ան: Պահ մ'ետք պիտի խօսիմ այս  
ալլանդակ և անպատիւ անձին վրայ, փափաքելով ու-  
նենայ Շէյքսբրիերեան կաղամար մ'որ՝ ըստ Վ. Հիւկոյի՝  
հրալեռի մը պէս կը ծխէ ընկերային ժանտախտներու և  
աղքատ ապրելով հարուստ մեռնիլ ուզող Հարբակօններու (2) ղէմ:

Յինանց օրերու հարկատու վարդենիներէ կազմուած  
անուշաբայր ուղիէ մ'անցնելով, սակաւ ինչ հանգչելու,  
պարագաներու և ժամանակին արտասովոր հանգամա-

(1) Լը Սաժ անուն գաղղիացի հեղինակին շինած կասակեր-  
գութեան մ'անունն է Թիւրքարէ: Այս կասակերգութեան մէջ տե-  
սարան հանուած է վաղեմի ծառայ մը, որ խելք, դաստիարակու-  
թիւն, նամանաւանդ ուղղամտութիւն չունի, եւ յաջողած է յափըշ-  
սակութեամբ եւ վաշխառութեամբ հարստութեան տէր ըլլալու:

(2) Մօլիէրի Ագստ անուն կասակերգութեան զլխաւոր անձն  
է, ազահութեամբը անուանի:

նաց, մարդկային կեանքի յեղյկուակ և ստէպ յանկար-  
ծահաս զէպքերու վրայ խորհելու, թափառուն միտքը  
երազներու և ամայի սիրտը անիրանալի երանութեանց  
պատրանքին ենթարկելու կամէութիւններով երբ Արմէն  
հասաւ նորածիլ վարդերու բուրմունքովը տողորուած  
հանգրուան մը, դժուարաւ կրցաւ զարմացման և ու-  
րախութեան ճիչ մը զսպել՝ հեռուստ տեսնելով չոզենա-  
ւին գեղուհին և քովը նստած հրեշտականման մանկուհի  
մը: Դուռէն ներս հազիւ քանի քայլ առած էր Արմէն,  
և ահա իր ետեէն եկող անձի մ'ոտքի թեթեւ թփրտու-  
քը լսելով և դառնալով ոչ նուազ ուրախ եղաւ երբ  
տեսաւ թէ եկողն է Անուշաւան, որ իր մի ազգականն  
էր, և կը բնակէր Կէօզ - Թեփէի Սպարդալը անունով  
ծանօթ արուարձանին մէջ:

— Ուր կը դիմես ծովահէնդ իմ, հարցուց Արմէնին:

— Ուր որ կը մ'ղուելի՞մ ձակատազրէս հասնելու,  
հա՞պա գուն, հարցուց Արմէն:

— Քեզի պէս ես ալ կը դրդուիմ ըլլալու ինչ որ ու-  
րոշուած է այդ անողոքելի և անընկճելի բռնաւորէն:

Արմէն Կրճիկեան երբ մօտեցաւ անձանօթ կնոջ, ևս  
աւելի զարմացաւ տեսնելով թէ Անուշաւան ժպտելով  
ներս ձեռքը բռնեց և խոնարհութեան ձև մ'ընելով ը-  
սաւ:

— Տիկի՛ն, ներեցէ՛ք որ ձեզ ներկայացնեմ բարե-  
կամս Ծովահէնք. ապա՝ «Տիկին Ա. Բագրատունեանն  
է, Արմէն», շարայարեց՝ խօսքը բարեկամին ուղղելով և  
անոր ներկայացնելով անձանօթուհին:

— Պատիւ մ'է ինձ ծովերու և հովերու ղէմ կոռու-  
լու և յողթելու սովորութեան հոչակ ունեցող ձեզի  
պէս փորձառու և աներկիւղ քաջասրտի մը ծանօթա-  
նալս: Կը մ'աղթեմ որ ոչ առաջինն և ոչ վերջինն ըլլայ  
մեր այս զիպուածական տեսութիւնը, ըսաւ Տիկին Բագ-  
րատունեան՝ ժպիտովը լուսաւորելով իր շնորհալի ղէմ-  
քը:

— Տիկի՛ն, պատասխանեց Արմէն ուրախալի տպաւո-  
րութենէ և բարեգուշակ յոյսէ մը զրաւուելիլ զգալով, ես



արդէն այլուր ձեզի տեսնելու, ձեր չնորհալի շարժումներուն վրայ զմայլելու պատենութիւնը ունեցած, և ձեզի հետ տեսնուելու սաստիկ փափաք մը զգացած եմ: Կըրնաք ուրեմն երեակայել թէ ո՛րքան սրտազին կը մասնակցիմ ձեր ախորժելի մաղթանքին: Հաւաստի եղի՛ք թէ մեր այս հանդիպումը, զոր դիպուածական կը համարիք, ևս մի անդիմազրելի նախազգացումիս ազդեցութեան և բաղաւորութեանս կը վերագրեմ: Միտելի է ինձ հաւատալ թէ այսօր բարեկամիս Անուշաւանին բարեգործութեան չնորհիւ ձեզի ծանօթացած ըլլալու պատիւը մեր ապագայ բարեկամական յարաբերութեանց և փոխադարձ համակրային զգացմանց ծառայելու սահմանուած գերերկրային տնօրինութիւն մ'է:

Տիկին Բագրատունեան առանց որ և է դիտողութեան հաճեցաւ ժպտելու: Քաջալերուելով ներս այս սօգնիւ վարժունքէն բաւ համարեցի ինձ այս չնորհքը, և հրաման ուղեցի և ստացայ մեկնելու՝ խոնարհութեան ձեռով մնաք բարեաւ ըսելով և ակամայ հեռանալով ծաղկահասակ գեղունիին ներկայութենէն:



Յ.

## Լ Ի Ի Ս Ի - Գ Ե Ղ Ո Ի Ն Ի

**Յ**ՐՈՒՆ հետը առնելով Անուշաւանը մեկնած էր պարտէզէն, միասին ման գալու և կարեւոր խնդիրներու վրայ հարցու փորձ ընելու համար: Իր թագուն գաղափարն էր անհամբերութեամբ տեղեկութիւններ ուղի Տիկին Բագրատունեանին վրայ: Անուշաւան արդէն ներս ծանօթ և բարեկամ մ'ըլլալով կրցաւ բաւական մանրամասնութիւններ տալ այս կնոջ անցելոյն, ներկային և նկարագրին վրայ. այլ զգուշանալով մտերմական խոստովանութիւններէ, կասկած և չարամտութիւն գործու գուշու ընդունակ որ և է ակնարկութիւնէ: Իմացաւ Արմէն թէ այս ակիկնը հիւանդութենէ մ'ետք ապաքինութեան փեճակէն նոր ելած և առտու շրջան մ'ընել, ման գալ ուզած էր Սպարդախան արուարձանին արեւելեան բուսաւէտ բլուրին վրայ իր դեռահաս քեռաղջկան հետ, և առաջաւարը պարփակող պարտէզը մտած էր հոն նախաձաչելու, զուարթ ժամեր անցունելու, մաքուր օդ ծծելու և դարնան օրերու յատուկ արեւին զգուանքէն բոլորովին դարձանուելու և կազդուրուելու յոյսով: Արմէն՝ Գեղունի մականունը առաւ ինքնին և բիտասարդ կնոջ: Եւ սգաւորի պարզ և փայլուչ հագուստ մ'ունէր, որուն սեւթոյր գոյնը ներս սիրուն զէմքը լուսաւորող և վարդային կարմրութիւն փառաւորող սպիտակութեան հետ Միւրիլլոյի վրձինին արժանի և ախորժելի հակապատկեր մը կը նմայէր: Կուրծքին ճախակոյմեան կլորագիւղ գանձին վերեւ կը տիրէր գունեղ և շքեղ ծաղիկներու, յամբիկներու և քիտսեան ֆուլերու հոտաւէտ փնջիկ մը: Այս ամէնը կարծես ներս յաւիտենապէս տեւելու սահմանուած գեղեցկութիւնը կը շնչ-

19-18347





տէր հմայապէս : Արմէն այս հոյակապ գեղեցկութեան վրայ հոգետեսութեամբ կ'զմայլէր . խորունկ մտախոհութիւններով և յուզմունքով կը զբաւուէր : Կողար թէ իր ննջող սիրտը զարթումի թելադրանք ունի . կրտսէր իւրովի թէ նէ իր կեանքին և բաղդին տիրունին ըլլալու յատկութեան արժանի է : Սակայն Արմէն իր այժմեայ տնտեսական և ընկերային վիճակը մտաբերելով կը խոստովանէր ինքնին թէ ապագայ երանութեան մ'երազներով և փափաքներով չէր կրնար սփոփել իր սիրտը :

Կը մտածէր թէ այս ծագկահասակ կինն արամբի է . գուցէ իրապէս իր ամուսնոյն հաւատարմութիւն ուխտած և պահելու յառաջադրութիւն ըրած է ամէն պարկեշտ կնիկի յատուկ պարտաւորութեան համեմատ : Անգլիական և ազնուական լէտիի մը պէս սէգ և զղուշաբար պչրատէր կերէէր նէ . և քանի որ ամուսին մ'ունէր . ասոր հետ տեսութիւն չունեցած կնոջը նկատմամբ և րազներ տեսնելը և մեծ յոյսեր տածելը տպաժամ կը համարէր : Ուստի սրտեց զարթումի մղուող իր սրբտին անհամբերութիւնը զսպել . և ապագային ու դիպուածին թողուլ Տիկին Բագրատունեանի մասին ընդնշմարտած գծուարութեանց զէմ յաղթութիւն տանելու և մթութիւնը փարատելու հոգը : Արմէն չարունակելով իր մենախօսութիւնը ըսաւ ինքն իրեն . — Սյս կնոջ տուի գնդ - ունի մականունը . որ ոգոքալի է . կը յուսամ ի է օրին մէկը ներա մկրտութեան անունը ևս պիտի իմանամ . գուցէ նաև յաջողիմ յարաբերութիւն հաստատելու ամուսնոյն հետ :

Ամառուան օրերէն առաւօտ մը Արմէն իրեն զրկուած հրաւիրագրի մը համեմատ ներկայ գտնուեցաւ ազքատներու 'ի նպաստ տրուած գթասիրական հանդէսի մը . որուն մի յաւելուածական մասն էր ողորմութեան վաճառասեղան մը : Պարագաներ և խտուեթեանց և անգթութեանց նահատակուող անանկներու համար կրցածը նուիրելու յառաջադրութեամբ երբ մօտեցաւ վաճառահանդէսի սեղանին . ախորժելի անակնկալ մ'ունեցաւ անոր առջև աթոռի մը վրայ բաղմած և հմայա-

կան ճարտարութեամբ գնորդ գթասիրտերու քսակը պարպելու զբաղած տեսնելով Գեղունին : Ունտրհարար և ժպտելով բարև տալէն և զինքը այս բարեգործութեան նուիրուած գտնելուն համար շնորհաւորելէն ետք՝ ըսաւ . զիտելով թէ ներա մօտ ուրիշ ունկնդիր մը չկայ .

— Տիկին . թէ և արդէն ձեզ ներկայուելու պատիւը ունեցայ . բայց անկատար մնաց ըստ իս՝ ներկայուելս . քանի որ ինձ ծանօթ եղաք մի մականունով . որ կցուած է ամուսնութեան շնորհիւ ձեր մկրտութեան սնունին և ընտանեկան մականունին . այնպէս չէ :

— Եւ ձեր Ծովանէն անունը . նաև արհեստն ի՞նչ է արդևօք . Պարո՛ն կը հաճէի՞ք յայտնելու ձեր մկրտութեան անունը և մականունը . և Պ . Անուշաւանին անուշազրութեան կամ մոռացումի սխալը սրբագրելու :

— Իրաւունք ունիք . Տիկին : Անունս է՝ Արմէն Կրճիկեան : Արհեստս է՝ մարդկային հիւանդութիւնները կրցածիս չափ դարմանել և բուժել . նաև բնութեան և արուեստի բնական հրաշակերտներու . նաև հոյակապ գեղուհիներու վեհափառութեան առջև ծնրաղբելով գեղ֊պաշտ մը հանդիսանալ : Հօպա ձերինը . տիկին :

— Մկրտութեան անունս Լիւսի և մականունս Գեղունի է :

— Լիւսի՛ . ի՞նչ շքեղ և փառահեղ անուն . տիկին . ըսաւ Արմէն՝ ներա մականունին իր կողմէն հարուածին ձիշըր և նոյնը ըլլալը լսելով :

— Վասն զի . . .

— Վասն զի բարեգուշակ և երաժշտային ըներգի մը պէս անոյշ է այդ անունը : «Լիւսի լուսաւորող շնորհագեղութեան խորհրդանիշն է» . կրտէ Տանթէ՛ հանդիպելով եղեմաբնակ սրբուհիներուն մէկին որուն անունն է այն : Չլօրանաի անուանի բանահիւսին սիրուհին՝ Պէաթրիային հետ Լիւսին երկնային վերնագաւսոի սահմաններէն քաւարածը իջած է՝ վերգիլիոսին հետ զժոխքը և քաւարանը հետաքրքրութեամբ և քննութեամբ ուղիորդ և զէպ ի զբախտ երեսու վարանող և ննջող Տանթէն ք֊ջալերելու և երկնային երանաւէտ բնակարանները առաջնորդելու համար :



Հոս տեղն է ըսելու թէ Անուշաւանէն ստացուած տեղեկութիւններուն և Լիւսիին մտական մշակոյթը հաստատող գաղափարներուն և տեսիլներուն կոթմնելով Արմէն՝ Լիւսիին « բարի պտուղ » անուանիլը չոգենաւին մէջ ըսելով ունեցած կասկածները և աննպաստ ենթադրութիւնները բոլորովին հանած էր իր միտքէն: Գիտէր արդ թէ Լիւսի բաւական ժամանակ օտար հեղինակներու երկերուն մէջ թափառած և իր ընթերցումներուն չնորհիւ հոչակաւոր բանահիւաներու, ինչպէս նաև Տանթէի հրաշակերտին միսթիգական գաղափարներուն ընտելացած և անոնց մթին և խորթին նշանակութիւնը ըմբռնած էր իր ուսուցիչներուն օգնութեամբը: Սակայն զգալով թէ տեղը չէր այս տեսակ խնդիրներու վրայ խօսակցութիւններ ունենալու վաճառահանդէսի սեղանին պանծալի տիրապետուհին հետ, տուաւ իր լուման, և հաւտալով թէ մէկ քարով երկու թռչուն զարկած է՝ ողորմասիրութեամբը հաճելի ըլլալով թէ՛ երկնային գորութեան և թէ՛ գիտութեան գործի մը մասնակցող այս երկրային գերիշխանութեան՝ Լիւսիին, որ այժմէն խորհրդաւոր մտատանջութեան և հոգեգրաւ վրդովումներու կենթարկէր զինքը, Արմէն կրճիկեան վերատեսու-թեան առիթ մը մտալով, գողցիս մուրալով, և այս բազմանքին ընդունուելուն լիայոյս ըլլալով մնաք բարեւաւ ըսաւ և հետացաւ մոզական սեղանին քովէն:

Արմէն մտային ցրումով կը քայլէր, այլ թույլ կը տար իր երեւակայութեան ստնծարձակ և չոգեպինդ խոյանալու երազային աշխարհի և թերևս ցնորական փափներու հորիզոններէն դուրս: Բայց զարթումի և երանութեան ընդունակ իր կենսախնդիր սրտին, նաև մտքին հետ խորհրդակցելով և իր բնաւորութեան բարոյական կատարելութեանց թելադրանքէն ստիպուելով մտատանջութեան և կասկածոտութեան կենթարկուէր, երբ կը մտածէր թէ Լիւսի արամբի է և թէ ամուսնական հաւատարմութեան հակառակ վարուելին և իր պատիւը առաթուր կոխելու հաւանիլը դաւաճանութիւն մը պիտի համարի նէ, հետեարար Արմէնին ձեռնարկու-

թեան յանդգնութիւնը պղատունական սիրոյ սահմանէն անդին չէր կրնար անցնիլ, և ո՛չ ալ պէտք է որ անցնի, կըսէր իր ազնիւ և բարի բնաւորութեանը համեմատ: Ըսել է թէ իր մտքին և սրտին միջև մեծ կոխ մը սկըսած էր: Երկուքէն ո՛վ պիտի ընկրկէր և պարտութեան համակերպէր: Ասոր պատասխանը և վճիռը ապագան, և զուգէ հայ սիրամոյրներու աստուածուհին՝ Անահիտը՝ պիտի տար . . . :

Արմէն այս ներքին պայքարին սաստկութեան զգացումէն բոնուելով և անոր ինչ ելք ունենալու հաւանականութեանց վրայ մտմտալով՝ միջնդեռ գիշերները սակաւ ինչ աքնութեան կը մասնուէր, Լիւսիէն ինչպէս շատ ծանօթներու և բարեկամներու, նոյնպէս և իրեն զրկուած հրաւերի մը վրայ փութաց ներքա բնակարանը երթալու՝ թագուհիի մը ներկայանալ և խնդիր մատուցանել ուզող անբաղդի մը սէս: Համեւելով իր սրտի այս նոր տիրուհին տունը, յարգանայ հաւատարմքը և չնորհակալութիւն յայտնեց իրեն շնորուած հրաւերին փոխարէն:

— Ծնորհակալ եմ նաև ես՝ քեզի հետ այսօր զարձեւալ տեսնուելու հաճոյիցս փոխարէն, և ապա հարցուց .  
— Ի՞նչպէս էք և ի՞նչով կ'զբաղիք:

— Առողջութեանս տեսակէտով կրնամ ըսել թէ լաւ եմ, վասն զի հանդարտաբարոյ և պարկեշտ մարդու մը պէս կ'ապրիմ, հաստատ միտքով և արի սիրտով օգային յարձակումներու և անզգամութեանց դէմ տակալով, տեսանելի և անտեսանելի վտանգներէ և հաւանական հիւանդութիւններէ զզուշանալով՝ կրցածիս չափ: Ըսել է թէ, տիկին, ստիպուած եմ կրաւորական կեանք մը վարելու, բայց զժբաղդարար և կամ բարեբաղդարար տակաւին երեւակայութիւնս վաւովուն է, սիրտս ալ սկսած է զգայուն էակի մը պէս յուզուիլ չղիտեմ ինչպիսի խորհրդաւոր ազդեցութեանմը չնորհիւ: Չեմ կարծեր հակասութեանց մէջ ընկնիլ և թէ ըսեմ թէ գեղեցկութեան և արուեստի տեսարաններու, յառարկաներու, նաև ի բնէ ստեղծուած և անեղծ մնալու արժանի գեղութեանց



առջև՝ խոհեմութեան և լրջութեան կամէութեանցս հակառակ՝ թեւ ու թիւ կառնու կը խոյանայ հոգիէս հրաւիրուող երեւակայութիւնս, որ կարչաւէ դէպ անհունութիւն, իր անխուսելի պատրանքովն և ունայնութեամբը հանգիւրձ կարծես գարնային սփոփումով և զարթումով կը մխիթարէ և կողեւորէ ննջելու և չազ բերու սփորած սիրտս: Ոչիմպիաբճակ աստուածներու առաջինը՝ Վ. Հիւլօ, իր Լա շե ժակն Տե սիեյը անուն հոչակաւոր բանահիւսական երկին մէջ Հոողոս կղզիին փարոսին կողմէն զիմառնաբար խօսելով ուկիւնէին և ասոր յաւիտենական բարկութիւններուն և նահատակներու նկատմամբ՝ կըսէ. «Երիտասարդութիւնս կը վերածնի ժամերու համըոյրին ներգործութեամբը»: Արմէն կրճիկեան իր կիսամեռ, ննջասէր սրտին վիճակին կակնարկէր, և ժամանակին համըոյրներու կենսատու հրաչազործութեանը կը հաւատար: Սիրտս, կըսէր, տակաւին կենդանի է, կը զարթնու արդ: Կը բաղխէ ուժգին և կապրի՝ սիրելու համար այն չնորճալի արարածը, որ առ այժմ մտքիս խտէական տիպարն և թագուէին է:

Աշտ Բագրատունեան որ քիչ մը հեռուէն կը դետէր և կը գուշակէր Մրմէնին էութիւնը վերի վայր շրջող բարոյական փոթորիկի մը սաստկութիւնը, վերագրելով զայն մտովին իր կնոջ՝ Լիւսին հոյակապ գեղութեան, ըսաւ.

— Իմ սիրտս տակաւին արթուն է միշտ: Անընդհատ կը սիրեմ իմ կենացս այս սիրուն սիրուէին, և զիտաւորութիւնս է բնաւ չգաղբիլ հսկելէ իր անընդարարելի կատարելութեանց և հրապոյրներուն վրայ:

Աշտ պարագաներու կամակատարութեան և իր ամուսնական սիրոյ մշտնջենական տեղութեան վրայ անսասան հաւատք ունենալ կը ձեւացնէր այսպէս խօսելով, և գուցէ իր կինը օտարներու առջև ողբեկու, չոյելու, և օր մ'ալ ամուսնական դաշնագիրը դաշունելու, խորանին առջև իր ըրած հաւատարմութեան ուխտը զըրժելու և երդումը ուտելու յուզայական թագուն գա-

զափարով, և իր կնոջ կասկածները փարատելու սաղաթէյակա՞ն կանխամտածութեամբ: Այս պատճառաւ Սրմէն ալ սկսաւ անապարծութեան և քիչ մ'ալ սատանութեանը վերագրել իր կնոջը հրապոյրներէն յագուող չգանող կամ չգանել ձեւացնող այս թերես զիմակաւոր սիրահար և խնկարկու ամուսինին ժպիտները և փաղաքանքը: Եւ յիրսի Լիւսի Գեղունինն պէս հեռատես և սրամիտ պըրուէի մը ակարծելի բնաւորութեան առջև խնկաման ՚ի ձեռին ծնրազրոյններու սփռանա գուշելու և սիրային ցանկութեան և վայելումներու յաւիտենութեան մէջ երանութիւն գտնել կարծող անփորձներու և կեղծ երկրպագուներու յատուկ են այս տեսակ շաքարաբանութիւններ և թեթեւութիւններ:

Արմէն կրճիկեան կը պատրաստուէր հրաման ուղելու Լիւսիէն սրտէս զի մեկնի երբ երեցաւ բարեկամն Անուշաւան: Սա մօտենալով կանգ առաւ Լիւսիին առջև և մի քանի ողբալի և հաճելի խօսքէ և անձուլի բութեան հաւաստիք ցոյց տալէ ետք զիտելով թէ Մրմէն կուզէր մեկնել, անոր հետ միասին գալոս կլաւ ման գալու համար առանձնակի:

Սկսան խօսակցիլ լրջօրէն, փիլիսոփայական խորհրդածութիւններ ընել՝ հովին և ծովին, սիրոյ և ամուսնութեան, այժմէական իրերու պատերազմէ հետեող արդէաներու և թշուառութեանց թագուն և անթագուն մարտիրոսութեանց և կենաց արդ և այլ փոփոխական հանգամանաց վրայ: Սպա պահ մը արտող լուծութիւնէ մ'ետք՝ այս տիկին Բագրատունեանին հետ յարաբերութիւններդ ի՞նչ եզրակացութիւն ունին, և նէ ի՞նչ է արդ քեզի համար, հարցուց Սրմէնին յանկարծ Անուշաւան:

— Ինչպէս գուցէ զիտես արդէն, Լիւսի Գեղունին կրթուած և զատարարուած խելանի և լեզուանի կին մ'է, նաև գուցէ օրին մէկը տիրուէիս ըլլալու նախասահմանուած եզերիս մ'է: Կը թուի ինձ թէ քաջութանց սուզակի մը նախաձեռնութեամբը Մէլանի անդունդներէն քաղուած և իր ամուսնոյն բացակայութեամբը,



դու իմա՛, գուցէ ճակատագրին ապիրատութեամբը  
խոզի մ'առջև նստուելու վտանգին ենթարկուած հոգ-  
ոււագիւտ և մեծագին մարգրիտ մ'է նէ: Այսքան է ա-  
հա յարաբերութեանց ստեսակը, գիտցածս և գուշա-  
կածս: Ամուսինը, Պ. Ա. Բագրատունեան հարուստ  
վաճառականի մը բանիրուն և ժիր մի պաշտօնեան է,  
և կը պատրաստուի մեկնելու և Անվերս երթալու իր  
տիրոջ հոն հաստատած նոր վաճառատունին անօրի-  
նութեամբը գրադելու համար, շահաւոր պայմանն ե-  
րով:



## Հ Ա Յ Թ Ի Ի Ր Ք Ա Ր Է Մ Ը ...

ՊԵՏՏԻՆ տիրոջ ծածկանունն է Թիւրքարէ. ըստ  
ինքեան աննշան և անշահ անձ մ'է: Միջին դասու ըն-  
տանիցի անգամներուն մին է: Ոչ միայն ապուշ, սլլ  
նաև երեւի է իր արծաթասիրութեամբը, շահամուլ-  
թեամբը, անողորմութեամբը և այլ բարոյական տղե-  
ղութիւններովը: Թիւրքարէին նկարագիրը կատարելա-  
պէս հաստատուած կըլլայ Լա Պրիւյեէրի հետագայ տու-  
ղերովը.

«Կան աղտոտ հոգիներ, որք տիղմով և զագրու...»  
«Թեամբ շաղուած են. շահի և սոկոսի սիրահար են»  
«Վառքով և առաքինութեամբ զարդարուած հոգիներ...»  
«Բու պէս: Կարող են ունենալու միայն մէկ հեշտու...»  
«Թիւն, որ է շահեյու, կորուստ չունենալու հեշտու...»  
«Թիւնը: Ոսկի կը ժողովին անպագարար, իրենց պար...»  
«տապաններովը կ'զբաղին: Անհանդիստ են միշտ զրամ...»  
«նեբու, զեղջին կամ անյարգութեան վրայ: Դահնագիր...»  
«նեբու, մութհակներու և մագաղաթներու ներքե թաղ...»  
«ուած և ընկճուած են բոյսրովին: Այս տեսակ ան...»  
«ձինք ոչ աղգական, ոչ բարեկամ, ոչ քաղքենի, ոչ»  
«քրիստոնեայ, գուցէ ոչ ալ մարդ են, վասն զի զրամ»  
«ունին»:

Այս վաղեմի ոսկեմուլ Թիւրքարէին հայրը տարինե-  
րով պարկեշտութեամբ, պատիւով և բարեպաշտու-  
թեամբ ապրած և աշխատած և վաճառականի յատուկ  
շահարբը յարաբերութիւններու չնորհիւ կոկիկ ժառան-  
գութիւն մը թողած է իր զաւակներուն, որոնց մին է  
դժբաղդարար Թիւրքարէն: Սա իր հորը մահուանէն



հոք սխառ վաճառականութեամբ զբաղիլ, նաև սեղանաւորի պէս փոխատուութեան միջոցով տոկոսներ և վաչխեր ստանալ, թագուն կերպով իր յաճախորդներուն և պարտապաններուն իրաւունքը իւրացնելով դադանի յափշտակութիւնը հարստութեան միջոց համարել, տգէտ և միամիտ այլակրօններու զիւրահաւանութենէն օգտուել և խաբէրայութեամբ կազմելէն հոք ստուար դրամազուխ մը եւ, ուպայի և Ամերիկայի մի քանի վաճառչահ քաղաքներու հետ առևտրական ձեռնարկութիւններ գործադրել: Մնապատիժ մնացած անիրաւութիւններովը օրինազանցութիւններովը անոր ասոր իրաւունքը անսովթարար և անխղճարար ուտելով, այսօր հասալակութեան մէջ քաջածանօթ և բարձրակեցութեան (high life) ծագրելի կամէութի ննկովը համբաւաւոր հանդիսացած էր: Իր դրամական մեծութեան հոգիով յաջողած էր իրապէս ազնիւ, սրամիտ, բարեկիրք և մեծաշուք մեծունի մ'ըսուելու արժանի ամուսնունք մը գտնելու:

Այս թիւրքարէն թրիմալիօնի (1) կամէութիւններով երբեմնակի ճաչի սեղան կը տայ պնակալէզներու, կեղէն քաղցր, խմելիք, սիրէցէք կրսէ անոնց, այլ աղքատներու ոչինչ կը նուիրէ առանց բռնութեան լրեն զէմ չարժուձեր տեսնելու, և իր քսակին կապը կը քակէ այն ժամանակ երբ զօրաւոր բազուկէ մը Տափօքլէսի սուրին իր գլխուն վերեր կախուած ըլլալը կզգայ: Թէև հայ մ'է, այլ հագիւ հագ կը խօսի իր լեզուն, և կը թօթովէ օտար լեզուէ քանի մը բառ: Ծակատազրին մի վիժակն է անիկա իր միտքը բռն է, սիրտըն ալ մուլթ: Դրանէն ի դատ ոչինչ ունի այս մտրղը: Մարդուս արժէքըն իր ըրածէն կարտադրի, կրսէ Վ. Հիւկօ: Թիւրքարէն անկարող է այս ճշմարտութեան վստմութիւնը ըմբռնելու, ոչ ալ գէթ փանաքի կեր-

(1) Բեթրօն իր Աարիլիօն անուն հրգիծարանական երկին մէջ Թրիմալիօնի կոչումը վերնագրին ներքեւ հարտաւ անմի մը մեծանաց սեղանին ծիծաղելի ծայրայեղութիւնը կը նկարագրէ եւ կը ծագրէ:

պով և իր դրամատիրական կարողութեան սահմանին համեմատութեամբ հետեւելու օրինակին այն ամերիկացի վաղեմի ծառաներու կամ բանւորներու, որք իրենց միլիոններով և առատածեռութեամբ մարդկային սեռի մտական, բարոյական և նիւթական զարգացման հերոսները հանդիսացած են այլ և այլ բարեգործական և հանրօգուտ հիմնադրութիւններ հաստատելով: Թիւրքարէ իր այս բարոյական անկումին և նուաստութեան գիտակցութիւնը չունենալով հանդերձ կը համարձակի նաև զրժելու իր ամուսնական հաւատարմութեան ուխտը, խաբելու իր ընտանեկան յարկին ազնիւ թագունին, և անուր անմտութեամբ զեզերելու այս կամ այն գեղունիներու քով՝ կնոսային կամէութիւններով և կրկէյսի յատուկ անամօթութեամբ: Ահա այս պատճառաւ է որ Իզմիլէն Անվէրս զրկելով Լիւսի Գիզունիին յալէն հեռացուցած է ներա ամուսինը՝ իր այժմեայ նպատակն է Լիւսիին քով ներա ամուսնոյն յաջորդել և ասոր մենաշնորհը վայելել:

Այս վատագի սիրամոլըն ունի նաև բողանոցէ մ'ըլած սիրամաճառ տարփուէի մ'որ լկրտած և անամօթ կիներու յատուկ ոճով կը խօսի անոր հետ, և որուն լեզուային դառնութիւններուն ակնարկելով այս ազտոտ բողը մօտէն ճանչկու պատենութիւն ունեցողները կը սեն. Օմիասի (1) ակտոններուն ձիաստացնները ներա լեզուն խայլելը և զգուելի զաղբախօսութեան և լրբութեան դատապարտեր են:

Հայ թիւրքարէին մոլութեանց կարգը հարկ կը համարենք զատուկ նաև երկու բարոյական տղեղ էթիւն ևս. մին է մեծերու և հարուստներու առջև իր արժանապատուութեան զգացումը առաջուր կոխել չոգօքորթութեամբ, միւսն է՝ փողաքուշ ըլլալ և նուաստանալը:

(1) Յունաստանի Էլիս գաւառին Յագաուր Օ'իսայն սխոնկը 3000 ձի կը պարունակէին, և 50 սայիէ ի վեր մարբուած չէին: Հետակէս այս երկրէն անցնելով Ալթէ գետը անոնց մէջէն հոնեցոց և արբեց:



Այս տեսակ մոլութեանց համար Տանթէ իր 18րդ գե-  
հներգութեան մէջ կը տեսնէ հետագայ պժգալի պատի-  
ժը. «Հո՛ն, դժօխքին մի փոսին մէջ տեսանք անձեր,  
«որք ընկղմած էին թերևս մարդկային ճեմիչներէ ելնող  
«քակորներու մէջ. մինչդեռ անդին, աւելի ներս երբ կը  
«սուզէր խուզարկու նայուածքս, տեսայ գլուխ մ'որ  
«այնքան սաստիկ շաղախուած էր կղկղանքով որ չգի-  
«տէի թէ աշխարհական մ'է ան թէ կղերական մը»:

Ապագան պիտի յայտնէ այս վաղեմի սպասաւորն ու  
երիկեան հարուստը (parvenu) ի՛նչ պիտի ըլլայ եր  
կեսախրական զեղերումներուն և յանդգնութիւններուն  
վերջը:



## ԳԵՂԱՊԱՇՏԸ՝ ԿՆԱՊԱՇՏ Է

**ՍՐՄԷՆ** սկսած էր ըլլորովին տարբեր նկա-  
րագրի տէր երևալ՝ Գեղունիին ստէպ այցելութիւններ  
տալով, ներս խօսակցութեանց հմայական փաղա-  
քշանքը վայելելով և հրապոյրներուն մոզիչ ազդեցու-  
թեամբը գրաւուելով: Իր երանութեան մթնոլորտին  
վրայ միայն մէկ սև ամպ կը նշմարէր, որ էր Թիւրքա-  
րէին անընդհատ զեղերումները և ներկայութիւնը Լիւ-  
սիին քով: Բայց յետո՛ւ էր թէ ինք Գեղունիին հա-  
մակրութեան արժանի եղած է. թէ իր լիջութեամբը և  
բնաւորութեան լաւութեամբը Թիւրքարէն կը նսեմացնէ,  
թէ և Արմէն պղատոնական սիրոյ սահմանէն անդին սա-  
ւառնելու երազը տակաւին չէր տեսներ: Իր այս վեհն-  
րօտութեան և զգուշաւորութեան միջոցին տոմարակա-  
լութեան տետրեր օրինակելու տաղտկալի պաշտօնէն  
ձանձրանալով հրաժարակօն տուած, բժշկութիւն ու-  
սանելու համար Բարիզ գացած, քանի մը տարի ան-  
ընդհատ աշխատելով, աղքատի և անչուք ուսանողի մը  
կեանք վարելով արիարար՝ կրցած էր յաջող քննու-  
թիւն մը տալ, ազէթափութեան վրայ ուսուցչապետ-  
ներուն գնահատման և հաւանութեան արժանի բնաբան  
մը հեղինակել, և բժշկական վկայական մը ստանալով  
Իզմիր վերադառնալ փառապանծ և լիայոյս, մինչդեռ  
զժրադը Բագրատունեան չուզելով Թիւրքարէի նկնդալի  
հրամանաց և պատուիրանաց հետեիլ և անոր բարոյա-  
կան անկուսին մասնակցիլ և անպատիւ ապրիլ վաճա-  
ռականի աշխարհին մէջ, հրաժարական տուած, և զէպ  
իր ճննդավայրը ուղևորելու միջոցին անպարտելի ախտէ



մը բռնուելով՝ իր յաւիտենական ննջարանը զրուած էր, անհնարին վիշտով և սուգով համակելով իր սիրելի Լիւսի - Գեղունին :

Այս երկտասարդ այրին քանի մը տարի անկեղծապէս սգաւոր մնաց: Մարդկային կենաց ցաւերուն աշակերտունին եղաւ, և իր ամուսնոյն մահուան առթիւ վշտանալ սորվելով հաստատեց թէ մեծ վիշտերու ընդունակ մեծ սիրտ և աշխարհիս պատրանաց իմաստասիրաբար համակերպելու կարող, զօրեղ և ստոյլիկեան շքեղ հոգի մ'ունի:

Տասը տարիի մօտ ժամանակ մ'անցած էր Արմէնին և Աշոտին Իգմիրէն մէկնելէն ի վեր... Լիւսի՝ քսանամեայ հասակէն երեսնամեայի հասած էր՝ առանց ամենափոքր խորշոմ մ'ունենալու իր գեղապանծ դէմքին վրայ: Տակաւին բոլորովին սիրուն, շնորհալի և ցանկալի կին մ'էր: Ընթերցումներուն շնորհիւ ոչ միայն աւելի օժտած էր իր միտքը, այլ նաև իր նրբազեղ մատերը դաշնակին ստեղնաշարին վրայ արուեստագիտաբար ժուռածկ կարենալով երաժշտութեան քաջամուտ և անուանի վարժուէի մ'եղած էր: Ընդունելութեան օրեր ունէր, և իր տունն ախորժելի հաւաքադաս մ'էր գրագէտներու, խմբագիրներու, բարձրաստիճան եկեղեցականներու և աշխարհականներու համար: Լիւսի Գեղունի իր պատիւը և արժանապատուութիւնը անազարտ պահած ըլլալով հանդերձ, հմտութեամբ և սուր միտքովը հեղինական հեթանոսութեան ժամանակի պատմութեան էջերը փառաւորող կիներուն միոյն, պերճազային կեանքովը համբաւաւոր Լայիսին պէս իր բեղուն և զեղուն միտքէն արտադրուած գրաւիչ խօսքերովը, Սաֆոյին ընկերուէի՝ Երինային յատուկ երաժշտային քաղցրութիւններովը իր ոտիցը մօտ գեքերելու և իր ժպիտները մուրալու կը հարկադրէր զինքը կնապաշտաբար պաշարող զուարթ և փողփողուն երկտասարդները, զգոնամիտ և ծանրաբարոյ գրագէտները, գիտունները և այլ արժանայարգ անձեր, որոնց կարգէն էին Արմէն և Անուշաւան: Սակայն Լիւսիին զօրա-

ւորագոյն զէնքը, որով կը նուաճէր և իր ախորժելի բռնութեան առջև գրեթէ ծնրադրելու կտտիպէր սիրամոյր Երկրպագունները, իր մարմնային հրապոյրներուն և կատարելութեանց իտէական փառաւորութիւնն էր:

19... Ինչ շարաթ օր մը Լիւսի իր ծննդեան տարեգարձի օրն ըլլալով՝ գիշերը նուագահանդէս մը տուաւ իր տանը մէջ, ուր հրաւիրուած էին իր թէ՛ համակիր բարեկամները և թէ՛ սովորական այցելու ծանօթները: Ժամանակին յորոյթը հնոյթի փոխելու համարձակելով իրեն ճաշակին յարմար նորոյթի մը համեմատ այնպիսի շքեղութեամբ հագուած և զարդարուած էր որ այցելուներուն բոլորն ալ շնորհաւորեցին զինքը՝ իր ճաշակին ընտրութեան և զգեստին արուեստագիտական նորածեւութեան համար: Լիւսի իր այս պաճուճանքովն և վայելչագիտութեամբը ամենէն ցովեստ առած և ամենուն սիրելի և ցանկալի եղած էր իր անթերի պարկեշտութեամբը: Չարախօսութիւնն ոչինչ ըսած, և ոչ ոք տակաւին խի՞ծ ու բի՞ծ դրած էր ներս պատիւին և առաքինութեան վրայ: Սակայն հոս տեղն է ըսելու թէ անարատ կեանք մը վարելու հոգը զինքը չէր արգիլեր հմայքոտ, երբեմնակի քմայքոտ, կամքոտ և բնապէս պչուէի մ'ըլլալու: Ախորժելի, կարգելի (épousable) մ'ըլլալով հանդերձ չաճապարել կը ձևացնէր հիմնեան տաճարին մօտենալու, իր սիրտը և անձը գրաւելու հետամուտ կնախնդիրներուն և ոչ մէկին հետ: Ողիսեսի վերագարձին սպասել կարենալու, հետք ամուսնանալ ուզող բռնաւոր իշխանազուններուն և այլ երկտասարդներուն պահանջոտ անհամբերութիւնը զսպելու համար իր ոստայնովը զբաղելու նենգութեան դիմող Թենելորին պէս՝ իր սգաւորութեան տակաւին չվերջացած ըլլալը կը պատրուակէր և անհամբերներէն համբերութիւն կը պահանջէր իր անդիմադրելի ժպիտներովը:

Անոնց զլխաւորն էր Թիւրքարէն, որ՝ ինչպէս գիտէ արդէն ընթերցողը՝ նպատակ ունէր չէ թէ Լիւսիին հետ ամուսնանալ, քանզի արդէն կանամբի էր նա, այլ ա-



զատ սիրոյ և ոսկիի զօրութեամբը տարփունի մ' ընել գեղանի այրին: Սակայն իր բոլոր բթամտութեամբը հանդերձ զիտելով վերջապէս իր գեղերուն հետ և չօգտօքորթութիւններուն ապարդիւն մնալու սահմանուած ըլլալը, հասկնալով թէ զրամատիրական զօրութիւնը և կնապաշտական համակրութիւնները ոչինչ կարժեն գեղանի այրիին համար, յուսահատած և հրաժեշտ տուած էր իր ապիկար և անճարակ սիրահարի յատուկ ծաղրելի նպատակին և ձանձրալի այցելութիւններուն: Արմէն իր գիտութեան և հմտութեան շնորհիւ փառքի հասնելով երբ Ռզմիր վերագարձաւ և Լիւսին տարեղարձի նուազահանդէսին ներկայ գտնուեցաւ, համակրութեամբ և անհամբերութեամբ իրեն սպասող զիցունի, նաև տիրուէի մ'ունենալուն հաւտաց: Սակայն Լիւսի իր այս համակրելի բարեկամին՝ Արմէնին հետ՝ առանձին տեսնուած ժամանակ զգուշութեամբ կը խօսակցէր, լրջօրէն կը խորհէր, անտարբեր կը ձեանար, և Արմէն ներս սրտին մէջ ծագող և լուսկայն մանչող սիրոյ փոթորիկին էութեանը գրեթէ անտեղեակ ըլլալով՝ կըսէր.

— Տիկի՛ն, հետս տեսնուելու ձեր կերպը կրնայ անտարբերութեան վերագրուիլ թերևս, բայց ձեր հերկայութիւնը զիս գոհ, գուցէ երջանիկ ընելու յատկութիւնը ունի: Ինձ ցոյց կը տաք անկեղծ բարեկամութիւն, ներկի և ամենափոքր փափաքներս կատարելու յոժարութիւն և պատրաստակամութիւն, որք համարձակութիւն կը տան ինձ ձեզ յայտնելու սիրտս լիուրի գրաւող երախտագիտութեան և յուսաւէտ զգացմանցս հաւաստիքը: Ձեր գործին մէջ ճարտասանութիւն, այլ չեղուն մէջ գոգցես զիտամբ ուզուած և պահուած համբուսթիւն մը կրնդ նշմարեմ: Այս է անա ինչ որ պահ մ'առաջ անտարբերութիւն համարեցի ձեր լրջամտութեանը յատուկ զգոյշ խօսքերը: Բայց կը սխալիք եթէ կարծէք թէ չեմ զիտեր ձեր ընթացքին առերևոյթ սառնութեան շարժառիթը: Թող անահիտեան ժպիտ մը, թող սիրային ճառագայթ մը փողփողի այդ ցտուսթիւնը արտադրող սառնակոյտին վրայ, և անա խակոյն պիտի

հայի այն և անա պիտի յայտնուի թէ անտարբեր և անզգայ ենթագրուած Լիւսին սիրտովը զգայուն և միտքովը բեղուն արմենուէի մ' է հետը ուշադրութեամբ պով տեսնուողներու համար:

— Ողոքալի են մտածուններդ և գազափարներդ, պատասխանեց՝ զիս դուզելու բարեհաճելով առաջին անգամ: Հաւտալովս հանդերձ ձեր անկեղծ թե՛ն կը պարտաւորիմ կարծել թէ ապագան միայն կրնայ հաստատել անոնց մինչև որ աստիճան իրականութեան մօտիլը:

Վերատեսութիւն փափաքիս յայտնելով պատրաստուեցայ մեկնելու: Հաճեցաւ Գեղ - Ունին նուիրելու ինձ իր քնքուշ ձեռքը, որուն վրայ տեղաւորելով երկարատե համբոյր մը մեկնեցայ երանութեան երազով և յոյսերով, բայց նաև արժամապէս զրախտէ մ'արտաքսուած անոնե՛ն արարածի մը պէս:

Անուշաւան ևս մեկնելով ուղեկից եղաւ ինձ.

— Ժիւլ Գլարեթի, ըսի այս բարեկամիս, կը կարծէ թէ առաջին մատնութիւնը կենաց յառաջագանն է: Անշուշտ կուզէ ըսել թէ Եւան Աղա՛ին հետ գիտութեան ծառին պտուղէն սաղանին թելադրանքովն ուտելով երկուքն ալ զրուժան հանդիսացան Արարչին պատուիրանաց զէմ: Անտարակոյս հանճարամիտ գրագէտին այս գաղտփարը չփեղաբար կազմուած բանահիւսարկան, կամ լաւ ևս է ըսել երեակայտկան խօսք մ' է: Սոսքի մը ձեռն գեղեցկութիւնը նշանակութեանը տղեղութիւնը կը վարագուրէ երբեմնակի: Մեր առաջին նոխահայրերը, Աղամն ու Եւան՝ բնական օրէնքին հետ զանդելով, մարդկային երանութեան ամենէն հեշտաւէտը վայելելով Աստուծոյ զէմ մատնութիւն մ' ըրած, և ոճրագործ եղած չեն: Բարեկամս Անուշաւան, շարունակից Արմէն կրճիկեան, սառուցը հալելէն ետք Գեղունին, այսինքն գիրիսս առանց կորուսելու իր զիցային, իր ոլիմպիական փենագետութիւնը և Արիսի անտառին աղբիւրէն արտադրուած իր իմաստութիւնը՝ կըլլայ հալուազիւտ և թանկագին սիրուէի մ' որուն առջև կը խոնարհիմ իբր գեղասպաս:



Անուշաւանին մտայնութեանս վրայ ունեցած գա-  
ղափարները բոլորովին ընդունելի չեն երևար ըսաւ  
Արմէն՝ լւրովի, և պահ մ' իր սրտին հետ խորհրդակ-  
ցելէն և զայն գրաւող մոգական թեւադրանքէն մղուելով՝  
չաբունակեց իր մենախօսութիւնը։ Գեղ - Ունին հոյա-  
պէս գեղանի այրի մ' է. իր կրօնասիրական յօժարու-  
թիւններովը և բարեպաշտութեամբը հանդերձ յաջողած  
է իմաստութեան և հմտութեան պանծալի ներկայացու-  
ցիչ մ' ըլլալու։ Կարող է ինք նոր գաղափարներ և տե-  
սիլներ տալու, նաև կրօնասիրութեան և բարեպաշ-  
տութեան զգացումներ ներշնչելու ոչ միայն հրեշտակ մը  
այլ նաև բնապէս Սաղսնին աշակերտունի ծնած ըլլա-  
լուն համար։ - Թո՛ղ Ուելիբըմ Տրէյբեր իր Կրօնի և Գի-  
տութեան սլայթարներ անուն երկին մէջ ըսէ թէ «տգի-  
տութիւնն է բարեպաշտութեան պատճառը»։ Իր այս  
կարծիքը չկրնար բացարձակ ըլլալ, և հաւանական է  
թէ պիտի բարեփոխէր իր այս յուսահատական վճիռը,  
եթէ ինծի պէս ինքն ալ գեղութեամբը անդիմազերելի  
ղիցունի մ' երկրպագուն և հրու գերին ըլլալու բարե-  
բաղդութիւնը ունեցած ըլլար։ Արդէն ներս հետ յա-  
ճախակի ունեցած տեսութեանս և խօսակցութեանս  
չնորհիւ կզգամ յիս բարոյական վերակենդանութիւն մը,  
Անհարին չէ այս յեղաշրջումը։ Եթէ կարծուի թէ բո-  
պայի մը գերիշխանութեան առջև ծնրադիր երկրպագու  
մ' եմ, թո՛ղ կարծուի։ Այո՛, կը հաստատեմ թէ Լիւ-  
սին պէս չնորհալոյս արարածի մը համար հիացմամբ և  
համակրութեամբ գրաւուած եմ։ Կը մերժեմ կարճա-  
տևներու, անփորձներու, անզգաներու հաւանաբար  
հեզնալի անարկութիւնները։ Բայց առ այժմ կը բողո-  
քեմ խզճիս անդունդներէն, սրտիս խորերէն կնապաշտ  
մակղիբին դէմ, եթէ հիմա տրուի այն ինձ, և կը հաւա-  
նիմ գոհանալու գեղապաշտութեամբ, որ անշուշտ չար-  
գիւր նաև կնապաշտութիւնը՝ եթէ պարագաներն ու  
բնական օրինաց անվիճելի հրամաններն այսպիսի տը-  
նօրինութեան մը ներքև պրկեն կամքս։ «Խորհուրդ  
մարդկան, կամք Աստուծոյ» կըսուի։ Ես ալ իմ կողմէ՝

«Խորհուրդ մարդկան կամք կնկան» կըսեմ, ճակատագրին  
հաւանական վճիռներուն համակերպելով։ Ինչո՞ւ չէ.  
Լիւսին կարծես տրուիտեան քրմունի մէ յատուկ և  
պարկեշտ դէմքէն և համեստ վարմունքէն արտափայլած  
փողփողումը վայելելով՝ անցելոյն մէջ էութեանս վրայ  
բունապէս տիրապետող վիշտերուս ամօքութիւն և սփո-  
փումին նման արտօմելի և յուսադիր տպաւորութեամբ  
համակուրիս կզգամ։ Նէ ևս՝ գիտելով զգայուններուս  
անարատութիւնը, և իր հետ այժմեայ յարաբերու-  
թեանցս մաքրութիւնը և անմեղութիւնը, փոխանակ  
խօսիւ քամահրելու, մերժելու սիրոյս պոստոնական,  
բեթբարքային հանգամանքը, սկսած է խտրել ընկե-  
րութիւնէս, կարեորութիւն տալ գաղափարներուս  
զգացումներուս և ասոնց արտայայտութեան զգուշաւոր  
ձեւերուն, և չնորհած է ինձ արտօնութիւն զինքը կո-  
չելու իր մկրտութեան անունին իզմէ կցուած և վերա-  
դրուած վիպալին հազուագիւտ հերոսունի մը մականու-  
նովը, որ է Գեղ - Ունի։ Նէ այս մականունը կրելու զի-  
ջանելով իր բնաւորութեան կատարելութիւնը և հմա-  
յական ազդեցութիւնը անթերի և անփոփոխ պահած է։  
Մոգական, ողորձալի նշանակութիւն մ' ունի առ մա-  
կանունը, զօգցես գերերկրային զօրութեան մը խորհր-  
դանշիչ է այն։ Հեյլենական հեթանոսութեան աշխարհի  
կիներուն աստուածունին և տիրունին էր Աստղիկ, որ  
գեղեցկութեան զիցունին էր, և որ այլուր անդրիններու  
անգամ կեանք կը տար։ Հեթանոսութեան մասնակ-  
ներու յաջորդեցին քրիստոնէութեան արդի մասնակ-  
ները, որոնց կիներուն աստուածունին կը նկատուի սըր-  
բունիններու թագունին, Մարիամ աստուածամիկը, Հե-  
թանոսներն ունէին իրենց աստուածունին մեհնանը,  
ուր սիրարեկ անրազներ կը դիմէին սիրային ապերա-  
նութեան դարման խնդրելու և միանգամայն կոնապաշ-  
տութեան յատուկ կրօնական պարտականութիւն մը  
կատարելու համար։ Սոկ քրիստոնէից թագունին, աստ-  
ուածամայրը, որուն անուններուն մին ալ կրնայ նկատ-  
ուիլ գեղունի, հրեշտակապետէ մը նուիրուած վարդ մը



հոտոակելով, անշուշտ նաև բնական օրինաց վճիռի մը համակերպելով մեղաւորներու և մեղուհիներու պարզեւեց աստուածորդի մը, գեհննապարտութեան մատնուած աշխարհի փրկիչ մը: Այս գեղուհին անմեղութեամբ կանուանի նաև Մրրուհի, անարատութեամբը Մաքրուհի, ճշմարտասիրութեամբը Իսկուհի, և՛ «լուսաւորող շնորհագեղութեան իբր խորհրդանիշ» Լիւսի և փրկագեղութեամբը Տիրուհի:

Քրիստոնեայ կիներու տիրամայր թագուհին՝ ըստ սուրբ գրոյ՝ վարդի մը շնորհիւ կեանք տուաւ երկնային և աստուածային էակի մ՝ որ կը սիրէր Ղազարոսի քոյրերը, Մարթան, նա մանաւանդ Մարիամը, որ սիրոյ անձնաւորութիւնը ներկայացնող այս աստուածորդիին մերկ ոտները լուալու համար իր տունէն անուշահոտութեանց ամենէն հազուադէպը բերելու գնաց:

Ահա այս գերեկրային Փրկիչը՝ իր երկնային խորհրդաւոր զօրութեամբը Մարիամին եղբոր՝ Ղազարոսին գերեզմանին կափարիչը խախտեց ակնարկով մը, վեր հանեց վանկով մը, և յաւիտենական քունը ննջող դիակի մը զարթուած և յարութիւն շնորհեց բնական օրէնքին անապալելի տրամադրութիւնը առաթուր կոխելով: Արդ Լիւսի - Գեղուհին իր մտային մշակոյթովը հանդերձ ճշմարիտ հաւատացեալ և անկեղծ բարեպաշտուհի մ՝ է: Այրերու մէջ կան թերահաւատներ կամ անհաւատներ, որք եկեղեցի կը յաճախեն զյղուելով այնպիսի թաղուն զաղափարներէ (1) և անխոստովանելի նկատումներէ, որք մարդկային նկարագիրը կազտտեն, և որք կեղծաւորութեան և զխմակաւորութեան հետեւանք են: Բայց կիներուն թերահաւատը կամ անհաւատը հազուադէպ է: Սակայն հաւատարմութիւնը, անկեղծ բարեպաշտութիւնը, կրօնական երկիւղածութենէ արտադրուած առաքինութիւնը և զգաստամտութիւնը, ինչպէս նաև վարուց և բարուց մաքրութիւնը և կնային սիրտը փառաւորող զթասիրութեան և ոգորմասիրու-

(1) Idée de derrière la tête.

թեան զգացումները լնաւ շնն արգիլեր և շնն կրցած արգիլէր կինը իր սիրականը սիրելու, անոր նուիրուելու, և իր սեռին յատուկ շրաւանց և երկրային երանութեանց ամէնէն սիրալին, ամէնէն սրբազանը և անբռնարարելին վայելելու. դ՛ուրս'ւմ, որ միայն իրաւունք մը չէ, այլ նաև թէ՛ բնական և թէ՛ ընկերային պարտաւորութիւն մը: Լիւսի ահա այսպիսի զաղափարներէ և զգացումներէ կառաջնորդուէր իր բարեպաշտական և կրօնասիրական անկեղծութեան մէջ, Գիտէր թէ՛ կրօնքի և զիտութեան սկզբանց, մէջ անհատելի և թերի ս յաւիտենական պաւքար մը կը տիրէ ՚ի բնէ անտի: Բայց նէ իր կրօնական համոզումները անխախտ կը պահէր, և անոնց ներգործութեամբը կը համակերպէր աշխարհիս զանազոյն վիշտերու և տառուպանաց, բայց նաև կը վայելէր խղճի հանդարաւթեամբ մարդկային բնական և ըստ ինքեան անմեղ ուրախութիւնները և հեշտութիւնները:

Հիմա կարգն եկաւ ըսելու թէ՛ աշխարհիս փրկիչն ինչպէս մեռելներու, նոյնպէս և Լիւսին ալ իր գեղութեամբն ու մոզիչ յատկութիւններովն ու բարոյական կատարելութիւններովն ալ եղաւ փրկիչն իմ սրտիս. որ կը ննջէր տարիներէ ՚ի վեր և տուաւ անոր փրկուէտ զարթուած մը: Իրօք Բարիզի մէջ երբ բժշկութեան ուսանողի յատուկ կեանքովս և ազատամտութեամբս սիրուն և ցանկալի տարփուհիի մը հետ ամուսնարար կապրէի և զինքը կը սիրէի մոլեգնաբար, յանկարծ այս զրուժան և անարժան տիրուհիս անլուր ննդութեամբ զիս լսելով աներևոյթ եղաւ, և ներա այս աղետալի մատնութիւնը սիրտս ձերութեան և մշտատե քունի զատապարտեց: Լիւսիին անչափելի հեռաւորութիւնէ եկած անոյ շայուածքը և լուսասփիւռ ժպիտը միացան, և այս միութիւնէն զոյացաւ զօրութիւն մը որ՝ երկնային գաղանքը պղծող գերեկրային գերիշխանութեան պէս՝ տապալեց սրտիս դիակը ամփոփող շիրիմին կափարիչը: Իւկոյէնի անօթութեան աշտարակէն, մշտնջենական բանտէն տուելի անողորմ և անողոքելի այս



գերեզմանին անուանն է անյուստաբիւն նաև մարդկային կեանքի փոխճանին ահարկու գոզափարէն արտադրուած անդարմանելի մեկամտղձութիւն մը: Արտիս այս կափառչին վրայ լըր տաւանագիր գրուած կը տեսնէի գեհնատարտներու դրան վրայ ճակատագրէն արձակուած և փորագրուած սա տանթէական աղետալի վճիռը. «Կտրէ՛ ամէն յոյս, զո՛ւ որ հոս կը մտնես»:

Գեղունիին նայուածքի գգուանքը, ժպիտներուն հըրապոյրը և գեղութեանը տիրապետական ներգործութիւնը կը հարկադրեն զիս սրտիս զարթումին սկզբնաւորութիւնը յայտնելու:

Օր մը ննչող սրտիս այս վերածնութիւնը զարթուած իմացուցի Լիւսի Գեղունիին, և իրեն նայեցայ ակնապիշ խոստովանութեանս իր վրայ ի՛նչ տպաւորութիւն ձգած ըլլալը գուշակելու, զգայու համար, նէ՛ ջերմեռանդ գեղապաշտութեանս վրայ զմայլելով չնորհեց ինձ նայուածք մի, որ համակրութեան և հոգեցունց քաղցրութեան նշանակութիւն ունէր, և որ իր յուսաւէտ և անմոռնջ խոստումովը սրբեց և ջնջեց սիրտս ճգմող և ճմուղ կափառչին վրայ ճակատագրէն փորագրուած դատապարտութեան մահարոյր վճիռը: Երբ Արմէն նամակաւ մը Լիւսիին յայտնեց իր սիրոյն այս ամէն պարագաները և տպաւորութիւնները նէ կամ մոռնալով թէ ամէն ընդունուած նամակ պահասխան մը կը պահանջէ, և կամ չուզելով սիրագրի մը գրաւոր պատասխան տուած ըլլալ, սպասեց Սրմէնին հետ տեսնուելու առիթի մը: Օր մը թատրոնէն պատահարար միասին դուրս ելան, քարափնուղիներու վրայ սկսան առանձնակի ման գալ, նաև խօսակցիլ մտերմարար. —

— Գիտէի ըսաւ Լիւսի Սրմէնին, թէ զգայուն սիրտ մշակուած միտք և յուռթի երեակայութիւն մ՛ ունիս, սրուն բժշկական փորձառութեանդ հետ ո՛րքան համաձայնիլը չգիտեմ, թէ և համաձայնիլը հաւանական, բընական կերեայ եփէ մարդս ոչ թէ միայն բժիշկ մ՛ ալ նաև Անտրէ կոչուած հոշակաւոր պերճաղիճին հրապոյրներուն դիմագրող Միշէլ Անժ մ՛ է: Բարեկամարար,

պղատոնարար սիրելու ժամանակ կը լստարիս նաև մերթ կարծես հայրարար, և մերթ — ի՛նչ զարմանք, — առնարար, նաև բանտնիւտարար մեկնելու այն փանաքի յատկութիւններս զոր գեղասպաշտ սիրտը և սաւառնաթմ միտքը գուշակ գեղադիտակով կը դիտէ, կը խուզէ և կը կարծէ գտնել յիս, որ տիրամօր ամենէն անշուք, խոնարհ և արուպ սպասուհին, նաև Ամենակալին առջև ներա բարեխօսութեան կարօտ մեղուհինուրուն և խնկարկուներուն մին եմ անշուշտ: Սակայն ըզգայումներուդ արտայայտութեան շեշտուած ձևը, և անկեղծարար չափազանցուած մի քանի փանաքի ճրիցըս սրտագին և եռանդագին նկարագրութենէդ կը համոզւիմ թէ ի՛օք և անկեղծապէս կը սիրես զիս, և քիզի պէս անուանի անձէ մը սիրուած ըլլալս զգալով կուրախանամ և քիչ մ՛ ալ կը հպարտանամ, յարեց ժպտելով: —

— Ես ալ կը զարմանամ տղայամտութեանս վրայ, դիտելով թէ միայն ուրախութիւն կզգաս իզմէ սիրուած ըլլալդ գիտնալով Ընդունէ՛ չնորհակալութեանս հաւաստիքը՝ ազանարար սիրոյս փոխարէն ինձ չնորհուած այդ ողորմութեանդ փոխարէն...: Տղայամտութեանս ակնարկելս չարաչար մի՛ մեկներ: Կը կարծէի թէ դուն ևս փոխադարձարար կը մասնակցիս կաթողին սիրոյս և հեշտաւէտ զգացումներուս, մինչդեռ փոխադարձարար զգացածդ ոչ ալ ինչ է, սիրելիդ իմ տիկի՛ն, բայց միայն իզմէ սիրուած ըլլալդ գիտնալ և ուրախանալ Ըսել է թէ ժամանց մը կուեննաս հետս տեսնուած ժամանակ, և սակայն սրամտութիւնդ յայտնապէս քեզ կը բացատրէ թէ ժամանց մ՛ ուեննալը ձանձրոյթ փարատելու միջոց մ՛է միայն, և թէ կը սխալիմ, և եթէ սխալիս մեկնես և համոզես թէ չեմ հասկցած ուրախութեանդ նըշանակութիւնը, պատրաստ եմ ետ առնելու դիտողութիւնս և ներում խնդրելու զթառատ սիրտէդ: Բարափնուղիներու վրայ ման գալէ դադրելէ և իրարմէ բաժնուելէ ետք Սրմէն Կրճիկեան՝ քիչ մը տխրելով և քիչ մ՛ ալ զզջալով իր ըրած անախորժ դիտողութեան



վրայ, սկսաւ նորէն մտատանջութեան մատուիլ և մե-  
նախօսել:

— Եթէ վերաւորեցի փոքր ինչ Լիւսիին փախուկ  
սիրտը քննադատական դիտողութեամբս, մեծ սխալ մը  
գործած և անհամբուութիւն ցոյց տուած եղայ: Նէ իր  
բարոյական, իմացական և մարմնային կատարելութիւն-  
ներով, առանց ինքնահաւանութեան հանդիսացած է  
խոնարհամիտ և համեստ, այլ հոյակապ հայուհի մը Իգ-  
միրի հայկական և օտարական միջավայրերուն մէջ. ու-  
րուն իրերը և մարդերը բաւական կը ճանչէ, և ուր  
յաջողած է շատերուն համարումը և համակրութիւնը  
վայելելու: Իր բնական արուեստագիտութեամբը ա-  
րարչագործութեան ընտրանին կազմող էակներուն մին  
է: Այստ Բագրատունեանին հետ ամուսնանալէն ՚ի վեր  
և մինչև անոր մահը, մինչև իր սգաւորութեան վերջը,  
և մինչև հիմա անցնող տարիներուն մէջ ամենեւին ոչ ոք  
յաջողած է, կրտսի, թիթեակի անգամ մրտեկու իր  
կարապի պէս սպիտակ և անրիժ անունը: Լիւսի՛ կոթը-  
նելով անշուշտ իր անձնական հմայքին և մողական  
թաղուն և անթաղուն չքեղութեանց վրայ ամուսնոյն  
կենդանութեանը ժամանակ համարձակած է առանց  
վարանումի հաստատելու թէ տակաւին երկար տարի-  
ներ յոյս և կարողութիւն ունի իր հրապոյրները պահ-  
պանելու անխախտ և տիրապետելու անոնց մենաշնորհը  
վայելելու իրաւունք ունեցող ամուսնոյն վրայ: — Իրօք  
անասա՞ն էր արդեօք Լիւսիին իր իղութեան սյն սի-  
րակերտ և բնաչէն բոյնը, որուն ստջև ծնւագորդ ա-  
դիրսարկու և խնկարկու մը յագուրդ և յափրածք չէր  
ունենար . . . Ո՞վ է կարող այսպիսի խորհրդաւոր հար-  
ցումի մը ստուգապէս պատասխան մը բացատրու-  
թիւն մը տալու: Սժնդոյի իշխանը օվկիանի խորութիւ-  
նը, նամանուանդ Պերմուտեան կղզիներու չրջակայ  
անչափ և անգատակ անդունդներուն խորութիւնը չա-  
փած և իր Ովկիանագրոյրիսն անուն մեծահատոր եր-  
կին մէջ նշանակած է Յաջողած է ճշգրտապէս չափելու  
անչափելին նկատուածը ամէն օվկիանագէտներէ, ծովա-

կալներէ . . . : Սաղայէլի մը մտքին թաղուն սրութեամ-  
բը օժտուած, հրեշտականման մը կնոջ սիրտն ալ եր-  
բեմնակի օվկիանի կը նմանի, և ստէպ անոր դերերը կը  
խաղայ սնփորձ և վախկոտ նաւորդներու, դու իմա՛,  
սիրահարներու և կնորսներու, նաև մեծանուն գրագէտ-  
ներու, բանահիւաներու, փիլիսոփաներու դէմ: Միթէ՞  
Սիէնտալ, Միչէ. Ալֆրէտ աը Միւսէ կաաարեյապէս  
յաջողած են այս կնային և խորհրդաւոր օվկիանին յա-  
տակները հասնելու, և անոնց անդնդային խորութիւնը  
չափելու իրենց տաղանդաւորութեան և հանճարին շը-  
նորհիւ: Միթէ՞ կրցած են անթերի կերպով նայիլ, տես-  
նել, դիտել և նկարագրել սիրոյ, տրիփի, հեշտախտու-  
թեան, նախանձի, նա մանաւանդ Շէյքսպիրէն «Կանա-  
չակն հրէջ» անունով մկրտուած «Կասկածի» զգացում-  
ներէն ծագող փոթորիկները, ուրուականները, և դիզ-  
ուած մարդկային փրատակները: Եւ միթէ՞ Միչէ «Կինն  
օվկիանոս մ'իջ»: Ըսելու իրաւունք չունի Էրեմն . . . :  
Սակայն Լիւսի բնաւորութեան ներքին հանգամանաց  
նկատմամբ այսպէս փոքր ինչ սկեպտիկութեամբ խօսե-  
լէս և օք կստիպուելիմ դարձեալ խոստովանելու խղճո-  
վին թէ նէ իր երիտասարդական թարմութեամբը և  
անձնական հրապոյրներովը յոնիական գեղանի մ'ի:  
Ունի ասոնց գիտակցութիւնը, ուսկէ կը քաղէ տիրա-  
պետական և քմայական յօժարութիւններ, բայց նաև  
Տէղտո՛ծոնայի յատուկ հաւատք, վստահութիւն սիրա-  
բոյր հլութիւն և զմայելի կամակատարութեան բնագ-  
ղումներ: Շէյքսպիրեան այս հերոսուհիին պէս Լիւսի  
ևս չունի ամենեւին կասկած որ սիրոյ ուսիճն է: Կը  
հաւտայ իր թարմութեան մշտնջենաւորութեանը, թէև  
իր այս պչրային և սիրային հաւատքը չարգիլեր Գեղ-  
ունին երբեմնակի հաւատարիմ հայելիի մ'առջև երկա-  
րատե կենսելու, պարզութեամբ այլ վայելչութեամբ  
հագուելու շքուելու, և իր սեւաթոյր վարսերովը շը-  
նորհայի դէմքովը, անդրիպելի հմայագիտութեամբը,  
լիզուային քաղցրութիւններովը բազմապատկելու և  
գերելու իր կամքին հպատող սիրամոյրները: Կը խոս-



տովանիւմ թէ ասոնց ամենէն անկեղծներուն, անմեղներուն. ներա ախորժելի բռնաւորութեանը համակերպողներուն, ներա մի ակնարկին հլութեամբ հնազանդողներուն մէկն ալ ես եմ: Վասնզի կը սիրեմ Լիւսին միտքովըս, սիրտովս, բոլոր էութեամբս: Կնապաշտութեամբը անուանի բանահիւսի մը այս մասին հրատարակած տողերը յարմար կը դատեմ հոս տեղաւորել.

«Կինը սիրելը արուեստը և բանահի սուլթիւնը սի»  
 «բելու նման պարզ և մ'է: Մարդերուն մեծագոյն մասը»  
 «կը սիրէ կինը աւելի կամ նուազ կատաղի գազաններ»  
 «րուն պէս այն բոպէին ուր մարմինը կը ցնցուի և կը»  
 «բորբոքի: Մակաւաթիւ են այն առանձնաշնորհալ»  
 «մարդիկ, որք կինը կը սիրեն ամեն ժամանակ ինչպէս»  
 «կը սիրեն արևը, կապուտագեղ երկինքը անտառներ»  
 «րը. սվկիանները»:

Այս բնական գեղութիւնները իբր սիրող, կըսէր իւրովի Արմէն, սակաւ ինչ վոսփորի ափանց և երբեմնակի Մարմարայի ծովին եզերաց մօտ ձկնորսութեամբ, նաև մտախորութեամբ և երազներով զեգերած եմ, և ծովահինաբար անվնաս յաջողութիւններ ստանալով հանդերձ մեղամաղձային վայրկեաններէս զրգուելով ինչպէս երկրիս ցամաքային անջրպետներուն, նոյնպէս և ովկիանի տարածութեանց անբաւութեան մէջ հողետեսութեամբ հանդիսական եղած եմ շղթայագերծ տարերաց բարկութիւնէն արտադրուած յեղաշրջումներու սաստկութեանց, ընդերկրային փոթորիկներու, բնական ոյժերու կատաղի պայթումէն ծագած երկրային և միջուորտային խորհրդաւոր ոյժերու ազդումով մարդու ուշը գրաւող թէ՛. անհրապէս գեղեցիկ և թէ՛ գեղապէս տհարիւր երևոյթներուն: Միթէ՞ կին ըսուած ովկիանի մը երևոյթներէն, մատնութեան և նենդութեան մարտիրոսուհիի, գեղանի և առեւանգելի արարածի մը հողւոյն մրրիկներուն և վերի վայր սասանումներուն տեսարանէն գրաւուելու իրաւունքը ներելի է՞ զլացուիլ ծովահէնի մը գեղապաշտ մտքին և վերածնող սրտին:

Այո՛, դարձեալ կը խոստովանիմ թէ ես ալ ներա

յաղթանակներուն պատուանդանին յով խոնարհութեամբ և ակնածութեամբ զեգերողներուն մին եղած եմ բնածին ճաշակիս և ցանկութեանցս թեկադրանքին հետեւելով: Երբ կը խօսի Լիւսի հանդարտօրէն և անկեղծօրէն, կզգաս թէ իր ծիրանեղոյն շրթունքէն ելնող ձայնին ճօճումն երաժշտային խաղերու մի հոգեգրաւ ներգաշնակութիւն մ'է, և աւելնով ու հեշտութեամբ կը համակէ ամենէն հետ և զժուարակամ լսելիքը: Գիտէ՞ ժպտիլ՝ ոչ այնքան իր ծիթի պէս սպիտակ մարգրիտները ցուցադրելու. որքան իր սիրուն և փողփողուն գէժքը աւելի լուսաւորելու համար: Երբ իր մետաքսեայ և շեղակի կիսարօց շապիկը պըրպըն անտարբերութեամբ փոքր ինչ կը մեկուսի և թող կը տայ որ ընդնշմարուի սատափի պէս ձերմակ և բնագէտ յըղկուն իր կուրծքին կիսովին թագուն հարստութեան էութիւնը, ներա սիրոյն հիւանդութեամբը հոգեվար ապերժանիկի մը միտահար սրտին երկարական ցնցումով մը համեմուած լոյս և յոյս կը պարգևէ: Ունի բանթէլիքեան մերմերի պէս սպիտակափայլ բնագէտ թափծու և կլորագեղ թևեր, որք մինչև արմուկը, մինչև անտէթը կը պահեն իրենց փառաւորութիւնը, և կը շարունակուին մինչև ուսերը՝ ևս քան զես մասնակի երևան հանելով թագուն հրապոյրներ. ձեռք մը, որ բացուելով կրնայ աշխարհ մը, տեստեղի կամ անտեսանելի զանձերու անբաւութիւն մը նուիրել հիւղ մը չունեցող և սիրոյ և ցանկութեան անօթութեամբը տառապող սիրամուր պարտին, և որուն մէջ եթէ ներա սիրտը դըրուի և ցուցադրուի շնորհուելու համար, կը հաւատամ կըսէր Արմէն, թէ ամբողջ աշխարհէ մ'աւելի թանկագին և անգիւտ պարզ և մը ուրուած կըլլայ ինձի պէս երանութեան մուրացիկ չգաւորի մը: Լիւսին ստքը տտիկ մէ, փոքրութեանը մասին համամիտ եմ Արմէն Հիւսէյին՝ հետ երբ ձրանասայի և թերևս Եւրոպայի այս կնասէր, գեղապաշտ և կենաց ուրախութեանց գոգցես առանձնաշնորհութիւնը վաշխոյ այս բանաստեղծն ըսու խօսքը հոչակաւոր դերասանուհի Ռաչէյին ուղղե-



Լով՝ «Ամեն բան կը սասանի ոտներուդ ներքև որ գուցէ չճոճ վարդ մը, և զոր կրնամ պահել ձեռքիս մէջ»:

Արմէն ա՛լ դադրած էր իւրովի մենախօսելէ, իր ըզգայութեանց և տպաւորութեանց նկարագրութեամբն ու արտայայտութեամբը զրադելէ, երբ ետեւէն լսեց ծիծաղը Անուշաւանին, որ կըսէր.

Ես ալ քեզի պէս տեսնուած եմ Լիւսին հետ ստէպ, և նշմարած եմ իր ոտներուն փոքրութիւնը: Իր ձիւրքը և շքեղութիւնները ես ալ կը հաստատեմ առանց սուկայն քեզի պէս երազներ տեսնելու և հով կլելու: Կը գուշակեմ թէ ներառ ոտները, սրունքը, ազդրերը, կերթան կը յանգին դէպի սիրարօյլ շուքեր, մինչև ապերասան նայուածքի և մարմնային ցանկութեանց հոսանքին ենթարկուող վերջալու աւան ստուերներ: Չեմ վարանիր, Արմէն, համարձակապէս խօսելու քեզի ոչես և քեզ համաժողովը հաւանելով թէ Լիւսի Գեղոնին ըստ Պօղոսի «դժախտէն կամ գեհնէն զրկուած անգութ գեղանի» այլ նաև անդիմադրելի հրէշ մ'է իր անօգոտ շքեղութեանց և մարմնային ցանկալի հրապոյրներուն անողորմութեամբը մարդկային սրտի և հոգիի աւերակներուն վրայ անտարբերութեամբ ճեմելով և այսպէս իր անպարտիւթեան գիտակցութեամբը փառաւորուելով: Այս պատճառաւ զինքը չէ թէ պղատոնարար սիրելու, — վասնզի այդ զգացումը նախատինք և անարգանք մ'է կնային գեղեցկութեան դէմ. — այլ առնարար սիրելու, և իրմէն սիրուելու անզուսպ փափաք ունիմ: Այդպիսի երանութիւն կը յուսա՞ս փայելել այդ սիրուհիէդ:

— Ի՞նչ երանութիւնս է ըստ Արմէն ներս հետ տեսնողի, ներկայութեանը հաճոյքը վայելել, միտքս պաշարող ինչ ինչ գաղափարներու դառնութիւնը ներս լեզուին անուշութեամբը ատօքել, և իր զգայնութեան և նրբամտութեան չնորհու փարպտել այն մթութիւնը որ երբեմնակի մարդկային կեանքի անխուսելի տղեղութիւններէն և տրտմութիւններէն կարտադրի: Միթէ՞ անկարելի է խելանի և լեզուանի գեղունի մը դադափար-

ներէն օգտուելը: Հելլենական էթէրներու (1) գուցէ ամենէն հոշակաւորը և խելանին Ասքասիան՝ իր գեղեցկութեամբը, լեզուանութեամբը և գիտութեամբը նստելով Բէրիքլէսի ծունկերուն վրայ՝ անոր Յունաստանը կառավարելու, քաղաքակրթելու դասեր կը տար և դիւանագիտութիւն կը սորովեցնէր իր համբոյրներցուն և գգուանաց հետ: Ինչո՞ւ համեստութեամբը, պարկեշտութեամբը, գեղովն ու խելքովը պանծալու և հպարտանալու իրաւունք ունեցող արմէնուհի մը տեսութենէն և խօսակցութենէն զրկուելու հաւանիմ ես որ Բէրիքլէս մը չեմ և ազգ մը կառավարելու և քաղաքակրթութեան վիճակ մը, ընկերութիւն մը հիմնելու փառասիրութիւնը չունիմ և ոչ ալ կրնամ ունենալ: Այո՛, կը սիրեմ Լիւսին, զի սիրելի և պաշտելի է: Կը սիրեմ անքի՞մ սիրով և գուրգուրալով, կը փափաքիմ որ կենացս հաւանական փոթորիկներուն ժամանակ զեկաւարս ըլլայ ան:

Սակայն կը փափաքիմ որ գիտնաս, Անուշաւան, թէ Լիւսիէն ինձ ներշնչուած սիրոյս հանդարտութիւնն և անմեղութիւնը չեն արգիլեր զիս տեսնելու և զգալու թէ տիեզերական իմացականութեան մի խորհրդաւոր և մեզի պէս մահկանացուներու և մտովին սահմանաւոր էակներու համար անբացատրելի նկատուած անօրինութեան ներգործութեամբը Լիւսին մարմնովին ստեղծուած, կազմուած և օժտուած է ռափայելական գեղեցկութեամբ, որ ամէն կնիկի առաջին և վերջին երազն ու զէնքն է: Եւր պարագաները ներքն, երբ իրերու վիճակը նպաստէ, կրնաս այժմէն հաւաստի ըլլալ թէ ներս հրապոյրներուն հանդէպ պղատոնական անտարբերութիւն մը չպիտի ունենամ, ոչ ալ հովիւու մ'ըլլալով պիտի գոհանամ խեղճ ժէրար տը ներվալին պէս, որ ձէն:

(1) Էթէր կամուանէին նախնի Յունաստանի մէջ այն կիներն որք գրագիտութիւնը էին: Էթէր բառը կը նշանակէ ընկերուհի, քարեկամուհի՝ սիրուհի, և կը ճշտէր այս անունը այն կնոջ որ՝ ընտանեկան գերութիւնէն ազատուելով՝ փիլիսոփայութեան և գրականութեան կը հետեւէր: Ա. ՏԸՊԵՅ



նի Գօրծն անուն անպիտացի գուսանուհին մոլեգնարար կը սիրէր, և որ խննալով շարունակ կը լար իր սիրային անբաղդութեան և գուսանուհիին անգթութեան պատճառաւ, մինչդեռ այս սիրելի և երգելի ճիւղաղը ուրիշներու կը շնորհէր իր մարմնոյն և սրտին պարզեաները:

— Արմէն, ըսաւ Անուշաւան՝ իր սովորական քրմծիծաղը հազիւ զսպելով, որ հեգնութեան չկտ և զիմակաւորի կեղծաւորութեան հոտ մ'ունէր, նկարագրութիւնդ չաւանոտ երեւակայութեանդ արդիւնքն է լոկ և ոչ այլ ինչ: Ստէպ տեսնուած եմ գեղունիին հետ: Իրօք իր գեղեցկութիւնը խորին տպաւորութիւն և սիրաւէտ սարսուռ մը կը տայ: Տարիելի կին մ'է: Բայց զինքը չէ թէ քեզի պէս խոնկական կամ հայրական սիրով այլ քայքայար, առնարար սիրելու, և իրմէն սիրուելու անընկճելի ցանկութիւն և երակներուս մէջ պայթումի պատրաստ աղբորակի յանկարծական սաստկութեամբ արիւնիս բորբոքիլը և սիրաւէտ ցնցումի և սրսուռքի մատնուելու զգալով՝ կը զըրգուիմ Լիւսիին համար հետեիլ օրինակին Վան Տիքի որ երբ տեսաւ նորապսակ Պրինեօլ կոմսուհիին Սանյօրենցօ եկեղեցիին գաւթէն անցնիլը՝ իր ամուսնոյն Պրինեօլ կոմսին հետ, այս մարդուն նայելով, ըսաւ. «Կեանքս կը տամ այս մարդուն ունենալիք ժամին մէկ քառորդը ունենալու համար»:

— Կը նայիմ որ, պատասխանեց Արմէն զուն հիմա իրօք կնամուր և սիրամոլ սրտարիթ մ'ես: Բիշէ՛ որ այդ զգացումներդ և տպաւորութիւններդ բոլորովին հակասական են, թէ և իբր մարդ ապագային մէջ աւելի կամ նուազ սաստկութեամբ թերեւս ինծի ալ մատչելի ըլլան անոնք: Հաւանական է թէ կնային ամէն շնորհները վայելելու յաջողած սիրամոյրներու պէս դուն ալ գեգերիս գեղունիին բոլորաբք, և ազատութիւնդ ու անկախութիւնդ ներառաներուն առջև նուիրես և զո՞հս՝ հեղ օրինապէս ապրելու և ցանկութեանց պահանջ լինելը գոհացնելու համար: Բայց այս թէութեամբ իսկ

յաջողիդ տարակուսելի է ինձ: Ես չեմ կարծեր սխալած ըլլալ Լիւսիին հողւոյն պիտոյից և յօժարութեանցը մասին: Դուն թոյլ տուր ինձ առ այժմ մնալ ոչ թէ կնամոյ, ալ կնապաշտ մը, գեղապաշտ մը:

Գեղապաշտական զգացումս կը տարածուի կնային շնորհազարգութեան և գեղութեան ամէն տարերաց վըրայ: Կը խոստովանիմ թէ փափաքելի է ինձ Լիւսիին մերկանդամութիւնը տեսնել, և գեղարուեստագէտի նայածքիս հետաքրքրութեան յագուրդ տալ՝ անզրկական հրաշակերտի մը հանդիսանալու և բնութեան անբաւ ճարտարութեան և խորհրդաւոր հրաշագործութեան հանդիսականն ըլլալու շնորհիւ:

— Ահա փափաք մ'որ գեղապաշտական պահանջատութեան և խոնկական սրբոյ հետ հակապատկեր մը կընծայէ, առարկեց Անուշաւան:

— Կը սխալիս: Միթէ մեղադրուեցաւ, հակասութեամբ պախարակուեցաւ Թէօֆիլ Կօթիէ երբ իր գաղղիացի յատուկ իրաւունքները զո՞հը ուզեց Ժիւլիա կրիզա սնուն գեղանի և անուամի հրեշտակ-սաղանդերասանուհիին բաղնիքէն մերկանդամ կնկը տեսնելու հաճոյքին և զգայութեան փոխարէն:

— Կը մաղթեմ ուրեմն կրկնեց Անուշաւան, որ յաւիտեան մնաս լոկ գեղապաշտ այսինքն վայելես այն երանութիւնը, որ յատուկ է գեղունիի մը սպասարկութեան և ներքիններու, որոնց վրայ չկայ գեղանի և զգայուն կին մը, որ վերջապէս չափոտայ և արհամարանք չզգայ գէթ լոկեային՝ երբեմն ալ ամուսնալուծութեան դարմանին գիտելով: Հետեաբար ներէ որ արգահատանք զգամ ապագայ անբաղդութիւնդ, նաև անմտութիւնդ այժմէն մտաբերելով:

— Մտիկ ըրէ՛, Անուշաւան, կսպասեմ որ դուն աւելի բազաւոր հանդիսանաս՝ հարտութիւնդ և ազատութիւնդ նուիրելով գեղունիին՝ ենթադրելով թէ հաւանի ընդունելու այդ երեւակայական պարգևներդ, և կեղծ բարեկամի դերը խաղալով ներաքով: Համոզումով կը յայտնեմ քեզ սակայն թէ չպիտի յաջողիս ձեռ-



նորկութեանը մէջ : Իսկ գալով ինձ, ես երկնային դոր-  
ծակցութեամբ վառուած ակնաստիղ լոյսի մը, Լիւսիին  
լոյսին բոլորտիքը թուշտող թիթեռնիկ մը կը համարիմ  
ինքզինքս գիտակցաբար, վասնզի անա ըսեմ քեզ, ա-  
զատութիւնս և անկախութիւնս կարգիցին զիս օրինա-  
ւոր ամուսնութեամբ ապրելու ներա հետ Բայց համոզ-  
ուած եմ թէ գուցէ վերջս է այրիլ այդ լոյսին հրաբու-  
նային ճրագին անհունութեան սահմաններէն եկած ջեր-  
մութիւնէն . . . :

Արմէն սաստիկ ուրախացաւ երբ քիչ ժամանակէ  
ետք լսեց թէ Անուշաւանին ամուսնութեան առաջար-  
կութիւնը Լիւսիէն մերժուած է, թէ հոյակապ արմէնու-  
հին Արմէնին համար եզերիա մը և կենացը ղեկավարը  
հանդիսանալու յառաջադրութեամբ որոշուած տուած  
ըլլալը բացարձակապէս յայտնեց է Անուշաւանին՝ հե-  
տագայ պատասխանը տալով :

— Առաջարկութիւնդ ինձ համար շատ ողորջալի է,  
բայց ցաւելով կտտիպուիմ չհաւանելու այդ պատիւին :  
Իհուսեա արդէն թէ ամուսնացած և հիւսա այրի մնացած  
ըլլալով ամուսնական կեանքի թէ՛ քաղցրութեանց և  
թէ՛ դառնութեանց ու ձանձրոյթներուն ճաշակը ստած  
եմ : Նորէն ազատութիւնս և անունս ամուսնոնի մը յատ-  
կացնելու և նախնի հոռութեան կիներու պէս գերու-  
թեամբ ապրելու և էրիկի մը քմածին հաճոյից և ան-  
խուսելի պահանջոտութեանց միշտ համակերպելու պար-  
տաւոր ըլլալ չեմ ուզեր : Կը պահեմ անունս, անկա-  
խութիւնս, ազատութիւնս ամէն պարագաներու մէջ,  
և մինչև մահս, կենացս, մտքիս և սրտիս կարողութիւն-  
ները կը յատկացնեմ Արմէնին եզերիան և անոր կենացը  
հաւանական փոթորիկներուն վրտանդէն ազատիչը հան-  
դիսանալով և անոր էութեան յարակից փառքին մաս-  
նակցելով :

Այս վիպակին ընթերցողներն անշուշտ ազատ են  
վերապահութեամբ հաւատալու կամ չհաւատալու Արմէնին  
և Լիւսիին պղատոնական սիրոյն և միասնական կենաց  
անմեղութեան, յիշելով թէ՛ ըստ վկայութեան վոյթերի

Աղէք սանդր վեցերորդ բաբը անգամ Բիք տը Միրան-  
տօլ իշխանին հետ չէր վարաներ էմիլիա անուն հոչա-  
կաւոր պերճադիճին տանը մէջ կերուխում ընելու,  
և ներա մարմնային հրապոյրներով յանգուող տալու  
իր ցանկային պիտոյից և բորբոքումներուն, մինչ-  
դեռ իր աղջիկը՝ Լիւքրեցիան ծննդաբերութեամբ կը  
տանջուէր, և Հոռոմի մէջ ոչ ոք գիտէր թէ ծնող զա-  
ւակը Սրբազան բարինն էր թէ իր տղուն՝ Տը Վալան-  
թիւնուա դուքսին, և կամ Լիւքրեցիայի ամուսինին,  
որ Ալֆօնս Տարակօն էր և որ կը կարծուէր թէ որ-  
ձատ մ'է :

Իսկ վոյթերին վկայութեան փոքր ինչ կը վարա-  
նինք հաւատալու, թէ և մարդկային բնութեան աննա-  
հանջելի պահանջումները և անդիմադրելի ցանկութիւն-  
ները կը զրդեն մեզի նուազ թերահաւատ ըլլալու Վ.  
Հիւկոյէն մարդկային աստուած կոչուած վոյթերին վը-  
կայութեան դէմ, ինչպէս նաև դժուարութիւն կրած  
ենք Ռափայելի և իր ժիւլիին սէրերուն եթերականու-  
թեան, անմեղութեան հաւատալու, նա մանուսանդ այն  
բոպէն ետք, ուր էքսի լճին մէջ միասին նաւարկելու  
և անհունութեան անարատ երանութիւններով գրաւ-  
ուած ժամանակ գիրկ ընդ գիրկ խառնուեցան, զգա-  
ցին թէ իրենց փոխադարձ և սիրաբորբոք նայուած-  
քին անսահմանութեանը մէջ յաւիտենապէս թաղուած  
են, և ահա «Օ՛ն, մեռնի՛նք» գուչեցին միասին՝ առանց  
սակայն դէպի Բէր - Լաչկ փոխադրուելու և իրենց  
մշտնջենական ննջարանը ղիմելու :





ԴԻՍԱԿԱԻՈՐ ԱՍՊԵՏՈՒՅԻՆ

(Վ Ի Պ Ա Վ)

---



202

ՅԱՐԳԱՆԱՑ ԵՒ ՄԵԾԱՐԱՆԱՑ

Ա.Ռ.

ՇՆՈՐՀԱԼԻ ՏԻԿԻՆ ԻՍԿՈՒՀԻ Հ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԳՐ. ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ





## ԳԻՄԱԿԱԻՈՐ ԱՍՊԵՏՈՒՀԻՆ

Գ Լ ՈՒ Խ Ա.

Վ Ա Ղ Ե Մ Ի ՈՒ Ս Ա Ն Ո Ղ Մ Ը

L'homme est l'énigme étrange et triste de  
la femme.

Et la femme est le sphinx de l'homme.  
Sombre loi !

VICTOR HUGO — Les quatre vents de l'esprit.

**ՉՄԵՌՈՒԱՆ**, արեաղարձի յետին օրերուն մին՝  
երեկոյեան ժամանակ աղապուլթեան յատուկ և բուռ-  
կան կոկիկ կերպով կտնաւորուած սենեակի մը մէջ  
յաջ և յահեակ անշնդհատ կ'ըթեկէր երիտասարդ մը :  
Տարիքը հասուն էր, երեսունին նպաստաւոր կողմը  
կերեար տակաւին, և զէմքի տխրութիւնը նայելու և  
տեսնելու սովորած դիտող մը կրնար գուշակիկ թէ  
անոր մտքին, ինչպէս նաև սրտին մէջ փոթորիկ մը  
կը գուար: Կարծես համաձայնութիւն կար էօրի անգի-  
տակից անդթութենէն արձակուած բոնաչունչ քամիին,  
երեկոյրնական ժամերու հանդարտութիւնը վեր 'ի  
վայր չըջող ուրականին, և անոր միտքը պրկող և  
ճնշող աղմկայի թելադրութեանց և վաղուան անըս-





## ՔԻՄԱԿԱԻՈՐ ԱՍՊԵՏՈՒՀԻՆ

Վ. Լ. ՈՒԿԱ.

ՎԱՂԵՄԻ ՈՒՍԱՆՈՂ ՄԸ

L'homme est l'énigme étrange et triste de  
la femme.

Et la femme est le sphinx de l'homme.  
Sombre loi !

VICTOR HUGO — Les quatre vents de l'esprit.

**ՉՄԵՌՈՒԱՆ,** արևադարձի յետին օրերուն մին՝  
երեկոյեան ժամանակ աղապուրեմեան յատուկ և բուռ-  
կան կոկիկ կերպով կահաւորուած սենեակի մը մէջ  
յաջ և յահեակ անդնդհատ կ'ըթիւնկէր երիտասարդ մը :  
Տարիքը հասուն էր, երեսունին նպաստաւոր կողմը  
կերևար տակաւին, և զէմքի տխրութիւնը նայելու և  
տեսնելու սովորած դիտող մը կրնար գուշակիկ թէ  
անոր մտքին, ինչպէս նաև սրտին մէջ փոթորիկ մը  
կը գտար: Կարծես համաձայնութիւն կար էօրի անգի-  
տակից անդթութենէն արձակուած բոնաշունչ քամիին,  
երեկոցնակոն ժամերու հանդարտութիւնը վեր 'ի  
վայր շրջող ուրականին, և անոր միտքը պրկող և  
ճնշող ազմկալի թելադրութեանց և վաղուան անըս-



տուգութենէն հետեւիք անձկութեան և մտաւանջութեան միջև։ Սենեակը մութ էր իր սրտին պէս, ուսկէ անյուսուցութիւնը հիմնովին խլած և արտաքսած էր երանութեան յոյսը և լոյսը։ Կահ կարասիները կարծես թէ իրարու հետ խառնուած իբր խաւարին ուրուականներ կընդհարուէին։ Անոնց և այս երիտասարդին այժմեայ էութեան մէջ անմեկնելի և խորհրդաւոր նմանութիւն մը կար։ Վերջալոյսի յետին վայրկեանները յամրապէս կը սահէին կանցսէին՝ իբր թէ վանդակի մը մէջ բանտարկուած այս անձին անհամբերութիւնը և ձանձրայթին դառնութիւնը շեշտելու համար։ Խաւարն օրուան աստղին լուսաւորութեան դէմ իր սովորական առժամեայ յաղթանակը տանելով երկնային տարածութեան հորիզոնը շրջապատող ստուերային անջրպետներն աներևոյթ ըրած էր, նաև արևամայրին յետորդ նշոյլները, նարնջադեղ և գու՛նեղ նշոյլներ, որք քիչ մ'առաջ կը ցոլանային սենեակին ապակիներուն վրայ։ Այս երիտասարդը Բարիզի մի վաղեմի ուսանողն էր։ Հիմա տխուր էր, և կը շարունակէր սենեակին մէջ ման գալ ցրուն և թարթափուն միտքով, ուր կը խոնէին և կը վխտային սև գաղափարներ և տխուր տեսիլներ։

Յրանսայի Մայրաքաղաքին մէջ իր ըրած կենցաղասիրային զեղծումներուն և ասոնց դառն հեռեանաց վրայ տրտմութեամբ կը խորհէր. նաև թէ՛ միջնորդութիւն սաստկութեանց և թէ՛ իրերու կացութեան հաւանական վտանգաւորութեան պատճառաւ վհատութեամբ կը համակուէր։ Այս վաղեմի ուսանողին անտոյն էր Հովիկ Զրօբան։ Մելամաղձութեամբ գրաւուելու երկու պատճառ ունէր. նախ՝ իր այժմեայ անարժանք վիճակն և մտալուստ չքաւորութեան ահա որ խրատելալը։ Երկրորդ կը սիրէր Տիկին Հեղինէ Տիրանիսնը, որ անոր տարփունքն եղած էր, և որ ամուսնալուծութեան չտրհիւ ազատ մնացած անտիական և չտրհալի, նաև գեղեցիկ և փոքր ինչ շուտիկ կիսայրի մ'է։ Հովիկ ներս հետ օրինաւորապէս ամուսնանալու խօսք տուած

էր երդումներով, և սակայն ասոնց հակառակ կըսէր իւրովի թէ Հեղինէին մշտնջենական հովանին և պաշտպանն ըլլալու անգամ ղիտաւորութիւն և կարողութիւն չունի։ Բայց եթէ պարագաներէն ստիպուիմ հետը կարգուելու, ոչինչ կարգիլէ զիս նաև տարփունքի մը ունենալու։ «Կնիկ մը կառնունք մեր սերունդին հա...» «մար, տարփունքի մ'ալ կառնունք մեր հեշտութեան» «համար», կըսէր՝ Տէմոսթէն, որ ամենացի երևելի ատենաբան մ'էր։

Հովիկ հիմա ոչ այնքան կզբաղէր իր քսակին թեթեւութեամբը, որքան հոգեին կըզձար տակաւին առժամապէս վայելիլ Հեղինէին գեղեցկութիւնը և շնորհք՝ հետը՝ օրէնքէ զուրս՝ կենակցաբար և կողակցաբար ապրելով։

Վիպային արկածներու վրայ խորհող և մարդկային գործերու շարժառիթները պրպտող և իմաստասիրող քննադատ մը կըսէ թէ «կնիկին և ծովին նայիլը թուսաւորուելու վտանգին ենթարկուել է»։

Հովիկ Բարիզի խաղարաններու և բողանոցներու մէջ կորուսած էր այսպիսի վտանգներու առջև ընկրկելու սովորութիւնը։ Կը թուի սակայն թէ այս թունաւորութիւնն աւելի բանահիւսական կարծիք քան թէ մաթեմատիքական ճշմարտութիւն մ'է։ Հովիկ յաճախ այցելելովն անխոստովանելի տեղեր և կատարելովը մարդկային թշուառութեանց և անկումներու առջև անզգայ և անկարեկիր էրիքիւրեանի մը դերը՝ կարող էր անպատիժ նայելու գեղեցիկ կնիկին իր հաւաքածոյին նահատակուհի մ'ևս կցելու ղիտաւորութեամբ։ Կրնար Ովկիանին ալ նայիլ՝ ծովահինական ասպատակութիւններով գուցէ անուանի ոճրագործ մը հանդիսանալու վտանգը անգոսնելով։ Կը հաւանիմ թէ երբեմնակի կին մ'իր հրապոյրներովը կուեննայ թոյնի աղղումը մարդկային բնաւորութեան և սրտին վրայ։ Չթունաւորուիլը, հեշտութեան ծարաւէն չհիւծիլ, չը մաշուիլ և կորստեան չմատնուիլ եթէ ոչ անկարեկի, զէթ շատ դժուարին է, եթէ այսպիսի հոգետեսութեան



մարտիրոս մը զիտէ թէ իր սիրտը կենացը հետ միասին նուիրել կուզէ՝ ծաղկահասակ և գեղանի կնիկի մ'որ ալուր կը սիրէ և կը տիրէ: Եղած են և կան բանահիւս սիրահարներ, որոնցմէ ոմանք փոխանակ թունաւորուիլ զգալու՝ գերմարդկային սիրով կը գրաւուին: Անոնք տրիփին այրուբէնին մինչև յետին տառը հեղու կամք և կարողութիւն չեն ունեցած և կամ չեն ուզած ունենալ: Երեւոյայական վայելումներով, բարոյական երանութեան մէջ հեշտութիւն գտնել կարծելով կերգեն կին մ'որ շորհալոյս է, մատաղահաս է, և որ իր ձիւքովն ու շքեղութիւններովն արաչագործութեան վսեմագոյն հրաշակերտը կը նկատուի բանահիւսներէ և հանճարեղ արուեստագէտներէ: Կը հիանամ ճանթէի գերմարդկային սի, ոյն վրայ, որով Պէտլիթը՝ ներա մահուանէն ետք՝ երգեց և պաշտեց, երկնաբնակ երանուհիներու և Աստուծոյ սիրուհիներուն կարգը դասեց, իր Երկնային կասակերզութիւն անուն երկին մէջ. որ աւելի իր մտքին քանթէ սրտին բեղմնաւորումէն և զգայնութեան ճոխութենէն արտադրուած կերևայ, և որ դարէ ի դարս ասրելու և մարդկային սեռի գրական հանրագիտարանին մէջ յաւիտենապէս անջինջ մնալու սահմանուած է:

Ինձ զարմանք չպատճառեր այն վայելումը, զոր Իտալիայի երեկելի բանահիւս՝ Բեթրարք՝ իր պաշտելի սիրուհիին, իր գեղահարաչ Լորին՝ (1) ձեռնացը գեռնէն առնելու և անոր յանձնելու հեշտութեան ու քաջասրտութեան մէջ կը գտնէ երանութիւնը և կը գոհանայ անմոռնչ մինչև ի մահ:

Հովիկ մտածելու անխժեալ ըսուած սովորութեամբ շարունակելով մտովին տանջուիլ, սկսաւ դարձեալ մեռնախօսել իւրովի: Աշխարհիս լայնածաւալ թատերա-

(1) Լոր իր գեղեցկութեամբը հռչակաւոր է: Բեթրարք անմահացոյց զինքը: Քսան արեւկան արամբի և պարկեշտ գեղուհի մ'էր նէ երբ սիրուեցաւ Բեթրարքէն, որ ամենին երանութեան յոյս մը չունեցաւ, և որ իր բոլոր բանահիւսական գործերուն մէջ երգեց և անմահացոյց իր այս սիրուհին.....

բեմին վրայ պատմութեան խաւարին ժամանակներէն ի վեր կը ներկայացուի խաղ մ'որ կանուանի մարդկային կեանք, և որ զերեկրային նախաձեռնութեամբ և հեղինակութեամբ երկնուած, հիւսուած և երեք արարուածներու բաժնուած է: Այս խաղը՝ կսկսի իբր կատակերգութիւն, կը շարունակուի իբր տուամ և կը վերջանայ ողբերգութեամբ մը: Խաղին զերասաններուն մին ալ ես եմ աճա: Իբր ուսանող միտքս բաւական մշակեցի, խորհելու և հասկնալու փրկուէտ կարողութիւնը ստացայ և սակայն չյաջողեցայ ճարտար և բաղդաւոր դերակատար մ'ըլլալու: Դերակատարներուն մէջ շատ տեսակ անձինք կան, անձնիւր իրեն յատուկ խաղը կը խաղայ: Մին գիտուն և բանահիւս աւագակի դերովը կը հոչակուի և՛ իբր մարդասպան՝ կառափնառը կինէ գրեթէ անխոով: Միւսը ապագայ թագակիրներու կենացը դէմ դաւադրելու զաւաճանութեամբը երեկելի կը հանդիսանայ, կը յաջողի, և աշխարհիս քաջերը և ընտանեաց զաւակները և պաշտպանները հանրական ջարդ ու բուրդի կը մատնէ: Թիւրքարէները մեծ հարստութեան տէր կըլլան շահամուլի յատուկ մեքենայութիւններով և զինայրական բռնութեամբ: Ի՛ յաւիտենից անտի շարունակուող այս թատերգութեան ներկայացման մանրամասնութիւնները, և զերասաններուն յայտնի ու անյայտ շարժառիթները գտնող կամ գուշակող իմաստասէրներ յիմարութիւն անուանեցին և կանուանեն մարդկային կեանքը, և արդ ես ալ կը խոստովանիմ թէ այս յիմարութեան վրայ Թէօդրիթ խնդալու և Հերագլիթ լալու իրաւունք ունէին: Բայց Հովիկ փոխանակ իր այժմեայ վիճակը բարւոքելու և անոր պերակագմութեան յատկացնելու իր կամքը և ջանադրութիւնները՝ երբ զիտեց թէ ինքն ալ մարդկային յիմարութեան զերակատարներուն կարգը կրնար անցնիլ՝ եթէ երկու հազար հինգ հարիւր տարի առաջ իրենց կեանքը խնդալով կամ լալով անցունող այս յոյն փիլիսոփաներուն օրինակին հետեւէր, սկսաւ ուշարբիլ, փոխեց



միտքը : Համոզուեցաւ թէ իր մտայնութեան այս տեսակ մտումներէն քշուելովը կենաց պայքարին յաղթուողն և ոչ թէ յաղթողը պիտի ըլլայ, մտածելով թէ խտեական ճշմարտութեան մը, իրական երանութեան գաղափարի մը վրայ հիմնուած նոր համոզումի մը չը հետեւիլը և հնոյթի արժէքը ունեցող սխալ կարծիքի մը վրայ յամառութեամբ կռթնելը կենալն այլանդակութիւն մ է և օ՛ն, մարդ ըլլամ, ըսաւ ինքն իրեն : Նետուիմ կենաց պայքարին ասպարէզը՝ անձնական և իրական շահերս պաշտպանելու և դործնական միջոցներուն վրայ խորհելու և ոչ թէ ստոյիկեան անօգուտ, ամուլ և վնասակար գաղափարներով բարոյական ինքնասպանութիւնս պատրաստելու համար : Ապագան պիտի ցուցնէ ընթերցողին թէ ո՛րքան անհամաձայնութիւն կար անոր խօսքին և դորժքին միջև :

Որոշեց դուրս ելնել, և գրպանին մէջ սպասող տամսակի մը զօրութեամբ երթալ դիմակաւոր պարահանգէս մ'որ այն գիշեր պիտի տրուէր ի նպատակ համազգային ազգատութեան : Երբ աննակին պարտէզի վրայ բացուած պատուհանէն դուրս նայեցաւ, տեսաւ որ հորիզոնին վրայ հետզհետէ ամպեր կը տարածուին, կը թանձրանան՝ տեղատարափ անձրևներու սողունայիքով : Դիւրին էր երևակայել թէ մթնոլորտին բնական յարձակումները կը պատրաստուէին պատժելու իր սովորական անզգամութիւնները և անպատկ խաղերը անգունել և դուրս ելնել յառաջադրող թէ Հովիկին պէս յանկարծապէս քարսիլոտ և ինքնամոլ հանդիսացողները և թէ՛ ճակատագրին սովորական նենգութիւններէն վախնալ և վարանիլ չգիտցողները : Մինչդեռ կը վարանէր և կը մննախօսէր բազմախնդիրներու յատուկ յաջողութեան հնարք մը գտնելու համար, յանկարծ կեանքի կոիւն մէջ յաղթողի արիութեան ըզգացումէ զբաւուիլը և իր մտքին յեղափոխութիւն մը կրելը զգաց : Հայելիին տուջև որան մը կանգ առաւ, հագուեստի կաշուստը թերութիւնները ուզողեց, տկուաները խողանակով և վարդագոյն փոշիով մաքրեց, բե-

րանը ցօղեց հոտաւէտ ջուրով, իր պահեստի փայլուն մուճակները հագաւ՝ համոզուած ըլլալով թէ մարդիկ ընդհանրապէս կօշիկներու փայլին կը նային աւելի քան թէ սրտի աղախն և մտքի կեղտին : Երբ պատրաստ եղաւ դուրս ելնելու և մեկնելու, դրան զանգակին հնչիւնը այցելուի մը գալուստը խմացուց .—

— Քուզդ եմ պահ մ'այս իրիկուն, բարեկամ, ըսաւ Սեպուհ թօրփիկեան, որ Հովիկին մտերմն և արբանեակը եղած էր Բարիպի մէջ : Երկուքը միասին սովորական անցորդներ և յաճախորդներ եղած էին այդ մեծ քաղաքին «բողանոցի փողոցներուն», որք ընկերային աշխարհի կոյուղիներն են» ըսաւ մարդերու և կիներու վարքը ու բարքը ուսումնասիրող անաչառ քննադատ մը :

Թօրփիկեան մըրիկի պէս սենեակէն ներս արշաւած և իր բարեկամին ձեռքը թօթուած և աքծանի մը պէս սեղմած էր :

— Ծատ բարեղէպ է այցելութիւնդ, Սեպուհ, ըսաւ Հովիկ : Պահ մ'առաջ ձանձրոյթէն սրտիս կրծուիլը և տարտամ փիճակիս գրեթէ մի յուսահատ մարտիրոսն ըլլալը կզգայի :

— Վա՛մնդի . . .

— Վա՛մնդի . . . Հեղինէս այս իրիկուն հոս գալու, հետս առանձնակի ընթերելու, և հարկաւ ինձ երանութեան մի քանի վայրկեան շնորհելու խօսք տուած էր, բայց մոռցաւ կամ կերաւ խոստումը, սաղայելամիտ զեղանին . . .

— Շնորհելու, ըսիր : Սեղանակիցդ ըլլա՞ն էր փոխարինութիւնը, հարցուց Սեպուհ :

— Ծատ հետաքրքիր և քիչ մ'ալ անհամբեր ես, Սեպուհ : Ուրիշ ի՞նչ կրնայի տալ իբր փոխարինութիւն : Ոսկեղէն դաշոյն մը նուիրէի իրեն Սրսէն Հիւսէյին պէս . . .

— Պատմէ՛, կը խնդրեմ, այդ նուիրումին պարագաները :

— Նարոյէնն երրորդի կայսրութեան ժամանակ բարիզաբնակ և կենցաղասիրական պերճութիւններովն



անուանի բանահիւաներուն ամենէն հոշակաւորը, գեղանձը, լեզուանին էր կարծեմ Արսէն Հիւսէյ, որ իր ազապուլթեան յատուկ, ճոխարար կահաւորուած և դարդարուած բնակարան մ'ունէր, ուր գիշերայն կը յաճախէին բարձրակեցիկ ընկերութիւններու պատկանող գեղունիներ, և գիշերն ի բուն առանձնակի կապրէին՝ սիրաւէտ ժամեր շնորհելով անոր, և փոխարէն ընդունելով կնասէր և սիրամոյր բանահիւսէն ոսկեձող փոքրիկ դաշոյն մի: Մէն մի այցելուէի ջոջային ընկերութեանց սրահները յաճախելով այդ դաշոյնը իր վարսերուն մէջ իբր գնդասեղ կը տեղաւորէր գրգռելու համար ուրիշ վիպասէր գեղունիներու նախանձը, որք նոյնպէս ընդունած էին այդ սիրային և տարօրինակ յիշատակը: Միթէ՞ Արսէն Հիւսէյինի փարթամութիւնը, առատաստուութիւնը ունիմ ես: Ոչ հայ թիւրքաբէրի մը ժառանգորդն եմ, ոչ ալ կրեստի մը թուր:

— Ուրեմն ի՞նչ պիտի նուիրէիր Հեղինէիդ, եթէ այս գիշերուան համար քեզ տրուած խոստումը բռնելու միատուութիւնը ունենար:

— Ընթրիք մը, սիրաբանական վայրկեաններ, նաև տրփային վայելումներու մի քանի բոպէ և անժխտելի հաւատարմութեան մը սովորական խոստումները, երզումները, և ոչ այլ ինչ:

— Բայց ո՞վ և սպուզապէս ի՞նչ է այդ Հեղինէդ, հարցուց Սեպուհ:

— Քանի որ մտերիմ բարեկամս ես և խորհրդապահ, ըսեմ քեզ թէ Պոլսեցի կիսայրի մ'է նէ վասն զի իր օրինաւոր ամուսինն աներեւոյթ եղած է և յայտնի չէ կենդանի կամ մեռած ըլլալը: Գեղանի և սրամիտ երկտաստրղուէի մ'է Հեղինէն:

— Նա՛ն սրբամիտ այնպէս չէ՞:

— Ուսկէ՞ իմացար անոր մտքին սրբութիւնը:

— Ի լրոյ: Միթէ՞ կր սխալիմ:

— Կը հիանամ զիւրահանութեանդ, բարեմտութեանդ վրայ, Սեպուհ: Ես քեզի պէս այդպիսի կարծիք մ'ունենալու ընդունակ չեմ զիւրաւ: Այս կամ այն

կնոջ մտային սրբութիւնը պէտք է փնտռել և գտնել անոր գործքին և ոչ թէ մշակուած մտքէն արտադրուած խօսքերուն պերճութեան և փողփողումին մէջ: Իտալական առած մը կըսէ. Տալ սեքքո ալ ֆաքքո չի ուն կըրան քրաքքո, որ կը նշանակէ. «Խօսիմ եւ գործիմ մեջ մեծ ակցրպէս մը կայ»: Կնային սրբամտութիւնը, հանրապէս խօսելով, ինձի համար սպինքսային հանելուկի մը դաղանիքին կը նմանի: Հանելուկը չլուծողը կը տապալի անյարիր, իսկ լուծողը՝ իմաստասիրական, կը բօնական, մասունական խորհրդանիշերէ առնուած և բացատրուած գերեկրային գաղտնի ճշմարտութիւններու և նախապատմական աւանդութեանց խելամուտ կը նըկատուի: Կինը մարդուն սպինքսն է. կըսէ Վ. Հիւսօ: Կինն ովկիանոս է, կըսէ Միչլէ: Ըսել է թէ գաղանիքներու, անդունդներու և փոթորիկներու ընդունակ վրտանգաւոր էակ մ'է երբեմնակի այն կինն որ ծագկասակ է և գեղանի, նաև խելանի է և սրամիտ: Հա՛պա սրբամտութիւնը: Փնտռէ՛ որ գտնես զայն ճիշդ այն խուզարկու սուզակին պէս որ Պերմուտեան կղզիները չըջապատող ովկիանին անդունդէն մարգրիտներ հանելու միամտութիւնը և յաւակնութիւնը ունի: Ես խօսքով բացատրուած կամ հաստատուած սրբամտութեան չեմ հաւատար՝ բացառութիւններու էութիւնը խոստովանելով հանդերձ: Տասնը իններորդ դարուն Պրանսայի ամենէն հոշակաւոր և քաղցրախօս հեղինակուէիներուն մին էր Ժօրժ Սան: Ոչ այնքան գեղեցիկ էր նէ որքան հանձարեղ, սրամիտ և հրապուրիչ: Իր երկերուն մէջ յայտնուած գաղափարներու մաքրութիւնը, զգացումներու անարատութիւնը, և սկզբունքներու վեհութիւնը ցոյց կը տան թէ նէ ունէր միտք մ'որ նշանաւոր էր հանձարով, նաև արքաթեանք, բայց այս արքամիտ և տաղանդաւոր կինը Վենետիկի մէջ մայրաքար խնամելու ժամանակ անդ յանկողնի և հիւանդութեամբ տառապող Ալֆրէտ Տը Միւսէն, զոր պաշտելով կը սիրէր, չվարանեցաւ զժբաղը հիւանդը խաբելու՝ անոր սնարին քով հսկող և դարման տանող իտալացի բժիշկին նուիրելով



իր սիրտը, ուր գթութիւն չկար, և իր միտքը ուր արտաքիւնը խօսքով միայն կերևար...

— Էհ, ինչո՞ւ ուրեմն սիրեցիր և տարփուհիդ ըրիր այդ Հեղինէն:

— Սիրեցի, Հեղինէն վասնզի տակաւին թարմահասակ է և գեղանի: Սիրուէիս մնաց մինչև այն օրը, ուր հաւատարմով կեղծուած հաւատարմութեանս ինքն ալ սկսաւ սիրել զիս, և հաւանեցաւ ըլլալու նոս տարփուհիս՝ իր անձը նուիրելով ինձ, թերևս սիրովէս մը ունենալու և անշուշտ անձնական նպատակներու հասնելու համար... — Պարտ կը համարիմ յաւելուլ թէ Հեղինէին շահերն և բնաւորութիւնը կը պահանջեն տիրել իմ վրայ իբր սիրուհի, նաև իբր տարփուհի մը: Սոկրատ ըսաւ. «Երկու Աստղիկ կայ. մին երկնային է, և կանուանի Ուրանիա, միւսն է երկրային և ժողովրդային, և անունն է Բօլիմիա: Ուրանիան լոկ սիրուհի մ'է, իսկ Բօլիմիան տարփուհի մը»): Տանթէ և Բեթրորք սիրուհիներ ունեցան և պաշտեցին մինչև ի մահ, առանց տարփօրէն սիրելու համարձակութեան: Իրենց համար եթերաբնակ երկնային էակներ, աստուածուհիներ էին իրենց սրտի այդ տիրուհիները: Արդ իմ այս Հեղինէն ցանկութեան օձին թելադրութիւններէն և գուցէ շահու տենջէն մղուելու սովոր և առնախնդիր սաղանուհի մ'եղած է պարկեշտութեան և պատուաւորութեան ղիմակի մը ներքև: Գեղազէտ պատկերահաններու կամ բանասիրաներու լոկ հոգեբանական և խորհրդաւոր սէրը Հեղինէին համար օղային և երազային վայելում մ'է, և կը պահանջէ իր սիրողէն հեշտախորտութեան զժուարթին, մինչև իսկ անհնարին և ծայրայեղ զգայութիւններ և գոհացումներ: Կզգամ թէ ալ յափրացած եմ իր սէրէն, և միաքս դրած եմ վերջ տալ իր հետ ունեցած յարաբերութեանցս, եթէ կարենամ փոխարինութեան մը շնորհիւ ազատել զիս գերող իր շղթաներէն, որք բաւական ժամանակէ ի վեր զադրած են սիրածոյ ըլլալէ: Կը յուսամ, Սեպուհ, թէ մեր մէջ պիտի մնան իմ այս գաղափարներս, բացա-

տրութիւններս, վասնզի վերջապէս ապերախտութիւն մ'է գեղանի կնոջ մը շնորհները վայելելէն ետք ներս անուշը ազարտել՝ զաղտնի մնալու սահմանուած իրօգութիւններ երևան հանելով:—

Ժամանակն է արդ հոգ տանելու մեր ստամոքսներուն, որք կարծեմ թէ սկսան բողբոջել իրենց դատարկութեան դէմ: Այդ Հեղինէին հետ վերջին անգամ պարսպուելու սահմանուած երկու շիշ Բիտսի օղի և Պորտօյի գինի, մի քանի տեսակ աղանդեր, և ղիւզինեան սակաւասիրութեան արժանի սեղանի մը յատուկ և վանաքի ընթրիք մ' ունիմ քեզի և ինձի համար, ըսաւ ժպտելով:

— Պատրաստ եմ պատիւ ընելու այդ սեղանիդ, և լեցնելու սովաբէկ ստամոքսիս բողբոջը, և քեզ նախ ըսելու ինչ որ ըսուեցաւ Լուի 14 բզ.ին:

«Եթէ կուզես երկար կեանք վարել, գոցէ՛ սիրտդ.»  
«և բաց գինիի մատանդ:»

— Ապրիս, Սեպուհ: Գոհացնե՛նք նախ անբան կենդանին, որ է ՚ի մեզ, և ապա ճառենք քեզ և ինձ ծանօթ մի քանի կնիկներու վրայ, և ծամենք անոնց միտք: Կակնարկեմ այն դիւրահաւան պչրուհիներուն, որք կը վստահին մեր խոստումներուն և երգումներուն և մեզ չեն զլանար իրենց սիրտը, և այլ ինչ որ ունին իբր լաւագոյն:

Տեսածը չտեսնել և լսածը չլսել ձեացնելու սովորած սմանողուկ սպասուհի մը Հովիկին մի ակնարկին վրայ բերաւ երկու բարեկամներուն առջև դրաւ սփսէ մը, որուն մէջ կային շիշ մը օղի, սև և կանաչ ձէթիներ, քացախուած կաղամբի, ստեղծի, կարոսի, չղզամ մի բեկորներ և խաչուած ու շեղակի կտրուած թարմ հաւկիթներ: Սկսան օղիին փոքրիկ բաժակները հետզհետեւ պարպել, տակաւ ինչ զգլխիկ, և գուարթանալով խօսակցիլ այն զիշերուտն պարահանդէսին վրայ, ուր որոշեր էին երթալ: Ալքոլական ըմպելիքը մտատանջութիւններէ և տխուր գաղափարներէ մարդկային ըզեղին վրայ դրուած աղէտալի կափառիչը վեր հանե-



լու և տապալկու զօրութիւնը կունենայ երբեմն ոչ միայն անփորձ անձերու, այլ նաև փորձառու և տուկուն խմաններու համար:

Երբ ընթերցու համար նստան սեղանին առջև, որ անշուշտ ոչ թրմախոսիոնական կոչունք մ' էր, և ոչ ալ սակայն Դիոգենեսան սեղանի մ' անշքութիւնը ունէր, նախ բերուեցաւ պնակ մ' որուն մէջ դիզուած եգիպտական և մարդարտանման բրինձներ բրզած քիչալ մը կը կազմէին: Նիւթական կեանքի սղութեան և զրամական տաղնապի բերմամբ կրնայ ըսուիլ թէ չընայութիւն մ' էր այն բրինձի քիչալը, զոր անշուշտ Հովիկ իր տարփուհիին համար պատրաստած էր: Սեպուհ զմայեցաւ այս արեւելեան հաղուազիւտ կերակուրին համեղութեան վրայ, և չնորհաւորեց իր հիւրընկալը՝ իր ընտիր և փափկակերի յատուկ ճաշակին համար: Հովիկ պատեն առիթ սեպեց բանիւ բերանոյ կարգալու բրինձի վրայ զրուած յետագայ հնգեակը, որուն առջի երկու տողերը կը վերագրուին երեւի և տաղանդաւոր մահմետական գրագէտի մը, իսկ միւս ևրեք տողերը զրուած են անձանօթ մնացած գրագէտէ մը.

- «Պու Մսըըն բիրիճի տիր.»
- «Հէր տանէսի պիր ինձի տիր.»
- «Եմէքլէրտէ պիրինձի տիր.»
- «Եէյէնլէրին սէվլինձի տիր.»
- «Եէյիմէզի տէ ինձի տիր.»

Բիւլավին յաջորդեցին գառնուկի խորոված գիստ մը, տապկած պականջներ, արքայածուկեր, Լօֆօրի պանիր, և մէկ շիշ պօրտօ, զոր երկու սեղանակիցները ուտելով և խմելով լափեցին սովահար գայլերու պէս:

Հովիկ բոլորովին դադրեցաւ սև գաղափարներով տանջուելէ, մոռցաւ Լուի 14 թղ. ին՝ արուած խրատին իմաստութեան համեմատ փառք ՚ի բարձունս ըսել իր սրտին վրայ, շաղակրատեց՝ ոկրամոլութեան և փափկակերութեան յատուկ մանրամասնութիւններ շարելով և ըսելով թէ՛ կերուխումն է ձեւրուն մին մարդկային երանութեան.

— Նաև անասնային երանութեան, պատասխանեց Սեպուհ: Սակաւ ինչ այս մասին համամիտ ըլլալովս հանդերձ քեզի հետ, հարկ կը համարիմ ըսել թէ իրաւունք ունի սպանիական առածն երբ կըսէ թէ «մարդս իր ակուաներովը կը պեղէ իր գերեզմանը»: —

— Ես սկսայ յափրիլ կեանքէն, ըսաւ Հովիկ Գոհ կըլլայի եթէ արկածի մը հետեանքով և յանկարծապէս դադրէի ապրելէ:

— Կը զարմանաս այդ ինքնամոլութեանդ վրայ: Ի՞նչ պատճառաւ կը փափաքիս կենացդ կատարածին հասած ըլլալ, երբ Հայաստանի ներգաղթը կը պահանջէ քեզի պէս երիտառարդներ, և երբ մանաւանդ ունիս գեղանի տարփուհի մ' որուն հետ կը կարծեմ թէ օրինաւորապէս պիտի հաւանիս կենակցելու՝ ապերախտ և զրուժան մը չնկատուելու համար. —

— Անձնական չահերս գիս կը հարկադրեն տարբեր ուղղութիւն մը տալու գաղափարներուս և քեզի հետ համամիտ չըլլալու թէ՛ հայրենիքի և թէ՛ տարփային խնդիրներու վրայ: Մի կարծեր թէ այլասիրութեան պարտքը կը մերժեմ բոլորովին. ոչ, բայց այս պարտականութիւնը մարդուս թէ՛ կարողութեան և թէ՛ երանութեան պահանջումներուն համեմատ կը սահմանուի.

— Կը նայիմ, պատասխանեց Սեպուհ քիչ մը յուզուելով և նեղանալով, ազգային ազատութեան և անկախութեան փրկաւէտ սկզբունքը, ինչպէս նաև ծաղկահասակ կնոջ մը իրաւունքը՝ ու պատիւը խաղաղիկ մը կը համարիս՝ հայրենեացդ ինքօրինութեան և սիրունիիդ բարօրութեան ծառայել չուզելովդ, մարդկային և բարոյական օրէնքը առաթուր կը կոխես՝ կարողութիւններդ, կեանքդ մի միայն անձնական պահանջումներդ յատկացնելով:

Հովիկ պահ մը մտածելէն և նայուածքը Սեպուհին վրայ յառելէն ետք՝ ըսաւ. —

— Կը նայիմ, Սեպուհ, որ տակաւին պարզամտի յատուկ գաղափարներէ պաշարուած ես: Խորհրդապահութեանդ, համակրութեանդ և քիչ մ' ալ ուզիդ



դատողութեանդ վրայ ունեցած վստահութիւնս կը դրդէ զիս մտերմապէս յայտնելու մարդկային կեանքի, կնային պատուոյ և հայրենիքի փրկութեան անձնադիր հոյի զոհարելութեան վերաբերող մի քանի գաղափարներս: Ինծի համար հայրենիք է ոչ միայն Երևան, այլ նաև այն երկիրը, ուր օրէնքը գործքով և ոչ թէ խօսքով կը պաշտպանէ մարդուս բնական, ընկերական և բարոյական իրաւունքները: Եթէ չիք այդ օրէնքի պաշտպանութիւնը, — եթէ անկախութեան, ազատութեան, ինքօրինութեան իրաւանաց վրայ չկայ ընկերային անդիմադրելի նախախնամութիւն մը, ես տեղ և գործ չունիմ այդպիսի հայրենիքի մը մէջ: Մարդս նախ ինքն իրեն ապա ուրիշին կողորմի, կըսէ գաղղիական առածը: Գալով Հէղինէին, նէ իր պատուոյն վրայ կը հսկէ իր ըմբռնած կերպով, բայց նաև հաշուել գիտէ: Կը սիրեմ զինքը, վասնզի գեղեցիկ է, մարմինը հրապուրներ ունի ամէն սիրել սկսողներու համար: Բայց ես տակաւին զինքը սիրելովս հանգերձ իր մարմնային շքեղութեան խայծէն մշտնջենապէս խարուելու և ցկեանս ներս գեղութեան գերին ըլլալ չեմ ուզեր: Երանութեանս բաւական կը համարիմ զինքը սիրելս և իրմէ սիրուիլս՝ առանց կաշկանդուելու և ազատութիւնս զոհելու ամուսնութեան պողպատաձոյլ շղթայովը: Կենացս անդորրութեան հոգը կը հարկադրէ զիս ոչ ներելու թշնամիի մ' որ ապիրատութեամբը սիրոսս ատելութեան կը դատապարտէ, և ոչ ալ խնայել կնոջ մ' որ խելանութեամբ զինուած իր գեղեցկութեան և սիրային արուեստագիտութեան հընարքներով կը հաւանի ինձ առօրեայ բարօրութիւն մը չնորհելու՝ մինչև Կի կատարած կենացս իզմէ չքուելու, տիրապետուելիս հանդիսանալու և իր քմածին կամքին համեմատ յայտնի կամ անյայտ կերպով ապրելու յառաջադրութեամբ և սաղայելչամտութեամբ: Ատելութեան զգացումը և սիրային յաջողութեան սաստը գծուաբին է, չըսեմ անհրճաբին, զսպել, և հաւանիլ հանգստութիւնս վրդովելու և զոհելու: Անդորրու-

թեանս և երանութեանս խոչընդոտները սրբազրութեան և վերակազմութեան կարօտ օրինաց անբաւականութենէն և կենացս միջավայրը պաշարող թագուն և գողցես անընկճելի ազդեցութիւններէն կարտադրին, խոչընդոտներ, որոնց առջև չընկրկիլ գծուաբին է, եթէ մարդս չունի այն ոյժը և այն համոզումը որով միայն կը յաջողի կենաց ուղիւնադաշտին վրայ յաղթական կանգնելու: Հակառակը պնդողը, այս մասին տարբեր կարծիք ունեցողը, տարբեր զգացումներով համակուտողը թող գաղբի մարդ ըլլալէ. թո՛ղ հրաժեշտ տայ զգալական վայելումներու, թո՛ղ սխի հեռի ապրիլ մարդկային ընկերութիւնէն՝ կեանքի ուրախութեանց վաղանցուկ հանգամանքէն և տիրութեանց դառնութիւնէն ազատ մտալու համար. թող ստոյկեան գերիի վը պէս էրիթթեթի մը պէս չարչրուի, Յորին պէս ազբններու վրայ վայնասունով հառաչէ և խմաստապիրաբար ու մարգարէաբար Ենովսային մատուցանէ իր հառաչանքը, ես այս կազմութիւնը, կարողութիւնը չունիմ, ես այս նահատակութեան ընդունակ չեմ, ուրիշին տմեն տեսակ իրաւանաց դէմ յարձակելու կամք ալ չեմ ուզեր ունենալ, բայց նաև երեսիս ապտակ մը սուտոյն միւս երեսս ալ չեմ ցոյց տար ապտակ մ' ևս ուտելու համար, բայց նաև թշնամի մը խնայելու և Հեղինէին պէս գեղութիւնի մը պատիւին միշտ և ամենուրեք պաշտպանը հանդիսանալու արիութիւնը և կարողութիւնը չունիմ: Գուցէ զարմանաս իմ այս գաղափարներուս և զգացումներուս ալլանդակութեան և դողցես անգթութեան վրայ: Կը հաւանիմ թէ անոնք շատերուն իմացականութեան ոչ հպելի և ոչ հաճելի կը թուին: Բայց տարբեր կերպով մտածելը և զգալը կամքէս կախում չունի: Երբեմնակի կզգամ զբաւուրի աջնպիսի գողափարներէ և զգացումներէ, որք խորհրդաւոր և խաւարային հրաւէր մ' են բնութեանս՝ համամիտ ըլլալու և ծափ գարնելու Անպիտի թագաւորին, Անրի Ութերորդին որ ըսած է: «Երբէք չեմ մերժած ատելութեանս մարդու մը կեանքը, ոչ ալ մերժած եմ



ցանկութեանս կնոջ մը պատիւը») Հիմա կրնաս, Սեպուհ, դատապարտել մտածելու և զգալու կերպերս, և բնութեանս անողորմութեան վերագրել զանոնք...

— Կը վերագրեմ, ըսաւ Սեպուհ, չէ թէ մտքիդ մոլորութեան և սրտիդ անզգամութեան, այլ Քարիզի մէջ ունեցած ապրելակերպիդ և անցուցած կեանքիդ այլանդակութեանց և չոպլութեանց, ինչպէս նաև օրէնքէ դուրս ապրիլ սիրող անհատներու հետ սաստիկ չփուլած և չփոթուած ըլլալուդ...



Գ Լ ՈՒ Ն Բ.

Դ Ի Մ Ա Կ Ա Ի ՈՐ Ա Ս Պ Ե Տ ՈՒ Շ Ի Ն

Սեպուհ ևս որոշած էր պարահանդէսը երթալ քիչ մ' աւելի կանուխ՝ Օր. Սիրուն Շահնուրեանին պարասեօրին մէջ իր անունը նշանակել տալու և հետը պահելու համար: Ժամը տասնութէկին Հովիկ ևս հասաւ պարահանդէսը տուող ակմբանոցին (club) սյուղն:

Երբ վեր ելաւ սանդուղէն, և պարասրահին դուռէն ներս դրաւ ոտքը.

— Օգնութեան հասի՛ր ինձ, Հովիկ, գոչեց Սեպուհ, որ իբր վախի ասպնտ ոտքի վրայ կանգնած էր՝ քօլը և աթոռի մը վրայ բազմած ունեկնալով դիմակաւոր Յովնո մ' որ իր պարընկերուհին, ասպետուհին էր.

— Ի՞նչ կայ, ի՞նչ է ուղած օգնութիւնդ, հարցուց Հովիկ.

— Այս վախի ազնիւ ասպետուհիս չգիջանիր իր դիմակը հանելու և ցուցադրուելու՝ որպէսզի իր հաւանական գեղութենէն և անշուշտ լուսեղէն ժպիտներէն զրկուիմ, անզուխ:

— Իրաւունք ունի չհանելու, վասնզի տգեղ է, ըսաւ Հովիկ, և արագօրէն շարունակեց չըջիլ՝ պարասրահին դէպի ներսի կողմերը յառաջելով: Քանի մը վախկեան ետք՝ իբր կը վերադառնար՝ վախողներու խումբին մօտելու համար, տեսաւ որ Սեպուհ՝ դիմակատ տօմինօյին տալով թեւը՝ կը յառաջը սիգապանծ, դիմաւորելու համար իր բարեկամը, որուն ներկայացուց անգուլթ մակդիրով մկրտուած իր ասպետուհին: Չքնաղ և չնորհալի էր տղեղ կարծուած անձը, որ Օրիորդ Սիրուն Շահնուրեանն էր:

— Պարո՛ն, ըսաւ նէ՛ Հովիկին նայելով իր լուսատու ժպիտով: Դիմակս չհանած ըլլալուս վերագրուած պատճառէն չեմ զչարիք, վասնզի գեղեցիկ ըլլալու պահանջտութիւնը կարծեմ չէ տուած ինձ հայելիս՝ և ծիծաղելով շարայարեց. ընդհակառակն անձնասիրական զգացումս ողորքեցաւ տրուած բացատրութենէն: Դիմակս վար առնելու ստիպող նենգամտային հնարքն աւելի ախորժելի քանթէ տհաճելի թուեցաւ ինձ: Կրնաս հաւաստի ըլլալ թէ չդժգոհեցայ ընաւ այդ կնազիտական շարամտութեանդ ազգուսէն զրդուելով այս ազնիւ պարընկերիս հանդէպ զինամափ ըլլալուս պատճառաւ:

— Հաճէ՛ ուրեմն չնոր՞ք մ' ևս ընելու ինձ, Օրիորդ, իմ անունս այլ պարասեօրիդ մէջ նշանակելու և վերջին վախը հետս պարելու՝ անշուշտ ստանալէն ետք հաւանութիւնը Պ. Սեպուհ թօրփիլեան բարեկամիս, որուն խոստացած ևս այդ թանկագին շնորհքը:

— Կը հաւանիմ սիրով, փութաց պատասխանելու Սեպուհ, եթէ այս շնորհալի Սիրունը հաճի խնդիրդ ընդունելու:

— Յօժարակամ կընդունիմ, և ընդունելովս կը յաջողիմ երկու ազնիւ անձեր գոն ընելու առանց գոհութեան, ըսաւ Սիրուն Շահնուրեան:

— Ուրեմն, յաւելցուց թօրփիլեան ցած ձայնով Հովիկին ուղղելով խօսքը, այժմէն ահա քեզ կը յանձնես պարահանդէսի այս պանծալի ասպետուհիս, վաստան ըլլալով թէ իբր հաւատարիմ և աջուրջ աւանդապահ



պաշտպանութեանդ և հսկողութեանդ ներքե պիտի ունենաս զինքը իբր թանկագին աւանդ որ գեղութեան հազուագիւտ տիպար մ' է, որ այս պարահանդէսին անուրանալի թագուհին է, և որուն դէմ սիրամոյր Տօն ժուաններու նենգալի ձեռնարկութիւններն և թագուն դաւադրութիւններն անհաւանական չեն երևար ինձ:

— Անող եղի՛ր, բարեկամ, նաև վստահ թէ ևս ալ փոքր ինչ կարող եմ դնահատելու աւանդին թէ՛ շքեղութիւնը և թէ՛ նուիրականութիւնը, պատասխանեց Հովիկ, խոնարհութեան շարժուած մ' ընելով:

Երբ կարգն եկաւ վերջին վալը պարելու, Հովիկ մանրերորդ մ' իսկ առանց կորուսելու՝ Օր, Շահնուրեանը աթոռին վրայէն հափափելու պէս առաւ, պարի սրահը տարաւ և հետը պարեց՝ կատարեալ արուեստագէտի մը ճարտարութեամբ, հեշտութեամբ և հանդիսականներու զմայլում պատճառելով, ոմանց ալ նախանձը գրգռելով:

— Ա՛խ, փսփսաց այս վերջիններուն մին, որ հարուստ հայի մը ժառանգորդն էր, և կրնար լիարուստ վատնել հայրական ոսկիները, ա՛խ, ըսաւ՝ Օր, Շահնուրեանին արդուզարդովը շքեղարար չեշտուած չնորագեղութեան և չքնագութեան, ինչպէս նաև սիրագրգիւ պարագիտութեան վրայ հիանալով, ինչո՞ւ չըլլայի ես ևս այն Ռուսաց կայսրուհին՝ որ՝ երբ Օրիորդ Թայլեօնի կը պարէր անօրինակ ճարտարութեամբ և շարժուածներու բանահիւսական ներդաշնակութեամբն որով հռչակուած էր Եւրոպայի մէջ, թատերաբեմը իջաւ կայսեր հետ, և տասնեկններորդ դարու առաջին պարագէտ, Թայլեօնիին թեէն գողի պէս, քաչեց առաւ երկու հազար հինգ հարիւր ֆրանքնոց ապարանջան մը և տեղը դրաւ քսանուհինդ հազար ֆրանքնոց ակախակուռ մը:

Հովիկ որ իր ուսանողական կեանքի փորձառութեամբը կը տեսներ և կը զիտէր նախանձի այս հոսանքը, ըսաւ Օր, Շահնուրեանին. —

— Եթէ Գոսկէի Տիպիկնի անմահ հեղինակին հան-

ճարէն մաս մ' ալ ես ունենայի, անոր պէս այս ամէն շտես և ծակաչք նախանձոտները չէի վարաներ կաթոլիկներու գեհնին կից քաւարանը զրկելու, որպէսզի իրենց աչքի կոպերն ալ երկաթէ գերձանով կարուած և հոն իրենց մեղաւորութեան պատիժը կրելու և արտասուքով նախանձոտութեան մեղքը քաւելու դատապարտուած ըլլային:

Հովիկ՝ Իտալիոյ հռչակաւոր բանաստեղծ Տանթէի բեզմնաւոր երևակայութեանէն հնարուած և նախանձոտներու վերագրուած այս անարկու պատիժին վկայութիւնը յառաջ բերելովն թերևս ուղած էր իր գրագիտական յիշողութեան մի նմոյշը տալ ասպետուհին՝ առանց մտածելու թէ այս փառասիրական դադափարովն իր սրտին սևութեան, նաև անմտութեան մի ապացոյցը առած էր գողցել անգիտակցութեամբ:

Օր, Շահնուրեան կարևորութիւն չտալ ձեացուց Հովիկին այս բանաստեղծական վկայութեան յառաջ բերելու անպատեհութեանը, և հաւանեցաւ հետը պարահանդէսին շքասեղանը մօտելու, մի քանի գիւրամարս հաստեայ ուտելու, և բաժակ մը Պորսօ պարպելու, չուզելով մերժել իր պարընկերին քաղաքավարական հրաւերը:

Ապա պարասրահին կից սենեակը մտան պահ մը հանգչելու և խօսակցելու համար:

Ասպետուհին բազմոցին վրայ նստաւ, իր ասպեան ալ անոր ոտներուն մօտ դրուած աթոռակի մը վրայ տեղաւորուեցաւ, և սկսան իրարու հետ քիչ մ' աւելի բարեկամութեամբ տեսնուիլ: Հովիկ առիթ չէր կորուսեր իր սովորական փաղաքուշ խօսքերովն հաճելի ըլլալու գեղանի պարընկերուհին, որուն մտայնութեան և բնաւորութեան վրայ տեղեկութիւն ոչ ունէր և ոչ ալ կրցած էր գաղափար մը ստանալ ներա կրթութեան, դաստիարակութեան, ինչպէս նաև պիտակական հնարագիտութեան վրայ: Առանձին էին տակաւին Օրիորդ Շահնուրեան չնորհակալութեան և համարութեան քանի մը խօսքէ և ցոյցէ ետք և զգա-



լով թէ սակաւ ինչ յողնած և գինիէն թեթեակի զգըլ խած է, բազմոցին բարձին վրայ կոթնեցաւ, վեր ըրաւ թեւը, և ձեռքը ճակատը տանելով սկսաւ թմրիլ և մրափել: Գլուխը դրած էր թաւշեայ գտակ մ' որուն վերևը ոսկեհիւս ժապաւէնով շրջապատուած էր: Իր այս գիրքը շնորհայի և հրապուրիչ էր: Կարծես Ռաֆայելական գեղուհի մ' էր նէ: Այտերը թեթեւ կարմրուկ և ծիրանեփայլ չքեղութիւն մը առեր էին: Ալպաթրեան մարմարինի մը պէս ձերմակ և սնդուսի պէս շողշողուն փղէն կախուած էր մարգարտաշար մանակ մ' որուն ծայրի Նոդակնահուռ մետայեօնը շապկիկին աղեղնաձև կտրուածքէն փայլատակող լանջին ստատափնային փառաւորութեան ուշադրաւ շեշտ մը կընծայէր:

Սիրունին այս յղկուն և փայլուն կուրծքը՝ արքեների արտօնութեամբ Տիկին Տիւպարիին արձանը յինոյ հրուշակաւոր անդրիագործ գաղիացի Գուսթուին դուրին եթէ արժանի էր ըսուի, կնապաշտի յատուկ շողփորթութիւն մ' եղած չըլլար: Նիհրելովը մեզմովին առնուած շունջէն իր լանջին երկու փատահեղ գանձերն ելեէջ մ' ունէին՝ որ հազիւ հազ ընդնչմարելի և զգալի, այլ Հովիտին պէս ծակաչք սիրամուրի մը համար զըրեթէ տեսանելի էր: Ներա փոքրիկ և քնքոյ ձեռները բանտուած էին ժուէնեան թաթպաններու մէջ, որք մինչև արմուկը կերկնային, և ուսերուն յանգող մսեղ բազուկներուն ճոխութիւնը վարագուրելու պաշտօնը կը յանձնէին նրբահիւս և թափանձիկ չղարչ մը կազմուած լողիկի մը թեւերուն: Այս թափանձիկ չղարչին ներքև կընդնչմարուէր Սիրունին անութներուն ոսկեղոյն ստեղ շքաւորուած խորչերուն ցանկազրզիտ ստուերագիրը՝ ձեռքը վեր ըրած և ճակատը տարած ըլլալուն շնորհիւ...: Մետաքսայէն մուճակներու մէջ դժուարաւ տեղաւորուած իր թաթիկներու նման՝ ոտները, և սրունքէն մինչև ազդերը՝ Շարլը Պոտլերին երևակայածին պէս՝ մինչև — «սիրուած այլ իրեն անձանթ մնացած անհունութեան մը դուռը հասնող» — գունեղ և չքեղ գուլպաները ներա մարմնային փառաւորու-

թիւնը զմայելի յաւելուածով մը կը կատարելագործէին, և անդիմողորելի և խորհրդաւոր հրաւէր մը կը կազմէին անզոյշ, յաւակնոտ և Հովիկին պէս զսպուիլ և հանդարտ կենալ չգիտցող անառակի մը համար: Սա պատեն առիթ համարեց անտիական և արդ դիմակատ ասպետուհիին մըափելը՝ աւելի ուշադրութեամբ և խուզարկութեամբ քննելու, պրպտելու անոր անձին ակներև գեղեցկութեան մանրամասնութիւնները, ընտիր ճաշակը և վայելչասիրական հարագիտութիւնը հաստատող և պարահանդէսին արժանի արգուզարդին պերճութիւնը, նաև կարելի եղածին չափ գուշակելու գեղանի օրիորդին թագուն հրապուրները: Սիրուն իր այս սիրահրաւէր յատկութեանց տեսարանին վտանգը չնախատեսելով և իր պարընկեր ասպետին վերագրուած հաւատարիմ աւանդապահութեանը գուցէ վստահելով սխալած էր թէ ծուղակ մը լարած էր Հովիկին առջև: Չգիտենք, կնային հանելուկները և քմայքտութիւններն անթափանձելի են շատ անգամ, ինչ և է, կրնանք ըսել թէ Օր. Շահնուրեան իր այս շնուհարցոյ դիրքովը ու ձիրքովը Ռաֆայելական վրձինով մը նկարուած և «Սիրուն ի Բուն» անունով մկրտուած պատկերացու գեղուհի մ'էր: Հովիկ մոռնալով թէ բարիգեան և ըզմիւսական սիրատանց մի աղբասէր յաճախորդն եղած է, մոռնալով իր շունչին ապականութիւնը, վստահ ըլլալով նաև թէ կրնայ չէ թէ անըջային այլ իրական և անպատիժ մնալու սահմանուած համբոյր մը գողնա ներա անձին պէս գեղեցիկ և նորափթիթ վարդի մը նմանող բերնէն, նկատելով թէ Սիրուն իր այս լքուն և գողցես նկուն փեճակին մէջ պիտի զգուշանար գայթակղութեան տեսարան մ' ընծայելէ և հպարտութեան անձնասիրութեան գրացումէ մը զրդուելով գուցէ անմոռնչ պիտի ընդունի այս կնորսային գողութիւնը, գզալով թէ արիւնը երակներուն մէջ գողցես հրաշքնջային շերմութեամբ կը չըջաբերի, խոստովանելով թէ գեռահասակ գեղանիին այս սիրաւէտ տեսարանէն սաստկապէս գրգռուած, ցանկութեան գրգռումէն կատ-



դած և ընկճելու վիճակին հասած է, չկրցաւ զսպել իր յուզմունքին կատողութիւնը, չյաջողեցաւ դիմադրելու ներա անօրինակ և բացարձակ հրապօրնեբուն ներգործութեան և բարեպատեն համարելով ներա զինտփափ վիճակը՝ ծուռեցաւ առանց վրդովումի, և Սրբարան մը համբուրողի մը պէս ջերմևանդութիւն ձեացնելով և «համբուրի մ՝ ոյժը իր երկայնութեամբը կը չափուի» (1) ըսելով կրկնակի պագաւ Սիրունին չրթունքը, որուն երկու կողմին խորչերը համբուրի բոյն անուանելը բանահիւստական չափազանցութիւն մը չնկատուիր։

Հովիկի անառակութեան կեանքի բոլոր փորձառութեանը հակառակ ինկած էր ծուղակի մը մէջ, զոր լարած էր ծածկամիտ և հեռատես ասպետունին՝ մրափել ձևացնելով, և անոր հաւատարմութեան թերութիւնը և դիմակաւորութիւնը փորձով գիտնալու համար։ Իսկոյն իբր թէ արթնցաւ ելեկտրական ոյժէ մը ցնցուելու պէս, բացաւ աչերը, և նովանարովն անոր դէպ երեսը սպառնալիք մ՝ չբաւ, նաև ժպտեցաւ, և լուռ կեցաւ՝ գայթակղութեան տեղի չտալու համար։ Հովիկ իր անխոհմտութեան և յաւակնոտութեան պատիժէն ազատուած ըլլալու համոզում ունեցաւ ներա ժպտէն իրախոսուելով։ Բարեբաղդարար Օր. Սիրուն Ծերրայի դուքսին քոյրը չէր։ Իրօք Իտալիոյ հուշակաւոր բանահիւստ Լը Թաս այդ բոնաւոր դուքսին՝ հրաժանաւ քսան տարի ներքնաբանտի մը մէջ իր ազատութենէն զրկուեցաւ՝ յանդգնած ըլլալուն համար սրտգնելու անոր քոյրերուն մին զոր կը սիրէր անդիմադրելի արիփով։ (2)

— Ի՞նչ պիտի ըլլար վիճակս եթէ Օր. Շահնուբեան թշնամիի մը պէս բարկանար և եթէ ունենար յանդգնութիւնս պատժելու կարող և հզոր պաշտպան մը,

(1) Տե՛ս Լորս Պայրընի Տօն Ժուանը.

(2) Պիլլէ՛ Լը Թաս բոնասեղծին՝ Ճեւարոյի դուքսին մէկ քոյրը համբուրելուն համար եօթը տարի իսկ Վ. Հիւիօ քսան տարի բանաւորուած է, կրտէս

ըսաւ՝ Հովիկ իւրովի մենախօսութիւն մը սկսելով։ Եւ միթէ՞ աննեբելի յանցանք մ՝ է այս համբուրը, զոր զողցայ չեթէ ներա բերնէն այլ քունէն։ Համբուր մը չկրնար անմեղ ըլլալ, ոչ ապաքէն եղած են կիներ անգամ, որք ինծի պէս համարձակած են քնացող սիրական մը համբուրելու։ Եթէ մեղադրուիմ, և ինձ վերագրելի յանցանքը ծանր և աննեբելի նկատուի, չեմ վարանիր Ֆրանսայի ասպետութեան ժամանակին սիրադատ ատկանին նման և արմենուհիներէ բաղկացեալ դատարանի մը զինելու, վստահ ըլլալով թէ անոնք միահամուռ պիտի տան այն վճիռը զոր աւատակամութեան ժամանակի կիներէ բաղկացեալ դատարանը կը տար և որ էր սիրունին ժամանակ մը տեսնելէ զրկուել եթէ ասպետն էր մեղապարտը, և ժամանակ մը խամրած բոսպ մը հագնելի եթէ ասպետունին նկատուէր յանցաւոր։

Երբ Մարգրիտ Տ' Էգօս իշխանունին, շարայարեց մտովին Հովիկ Զրօեան, համբուրելովը Ալէն Շարթիէ բանաստեղծը, որ ի քուն էր և ոչ արթուն, չվարանեցաւ ըսելու ներա համբուրելը տեսնողներուն և զարմացողներուն. «պաղի ոչ թէ անձը, այլ բերանը», «ուսկէ այնքան հեշտաւէտ և քնաղցր խօսքեր ելած են»։ Մարգրիտ Տ' Էգօս անպատիժ մնաց բանաստեղծի մը վրայ ունեցած իր համակրութիւնը այսպիսի աներկեւանութեամբ յայտնելովն՝ ոչ թէ վասնզի Լուի մետասաներրորդի կինն էր անոր գահաժառանգութեան ժամանակ, այլ վասնզի անմեղ և անվնաս էր իր ընթացքը։ Ըսուի դուցէ, ուրիշ ժամանակ, ուրիշ բարք։ Եթէ չատ թեթև նկատուի արմենուհիներու սիրադատ ատկանէն՝ Ֆրանսայի ասպետութեան ժամանակի կնային սիրադատ ատկանին իրաւագլխութեան համեմատ՝ ինծի դէմ հաւանօրէն տրուելիք դատապարտութեան վրձիռը, վարմունքս արդարացնելու համար ներուի ինձ հոս յիշել դէպ մի, որ չէ թէ հին դարերու այլ արդիական ժամանակներու և Լոնտրայի Պաու Սթրիթ գարանին մէջ պատահեցաւ։ Իրօք տասնևիններորդ դարուն վերջերը Լոնտրայի բազմամարդ մի փողոցէն



կառքով անցնող սէգ և չքնաղ անկլուհի մ' իր կառքին կանգ առնելուն պատճառը հասկնալու համար երբ զըռնակէն զլուխը դուրս հաննց, նոյն պահուն անցնող ածխավաճառ մ'անտիական լէտին պագաւ բռնապէս, և ամբաստանուած ըլլալով՝ երբ դս տարանին նախագահին կողմէն հրաւիրուեցաւ ըսելու ինչ որ կրնար ըսել ինքզինքը պաշտպանելու համար, պատասխանեց.

— Տէր իմ նախագահ, Անգլիոյ ամենէն գեղանի անկլուհին տեսայ, և չկրնալով դիմադրել և ինքզինքս զսպել, պագի: Տո՛ւր պատիս:

— Ի՞նչ կրես տիկին, հարցուց նախագահը, ամբաստանող անկլուհին.

— Այս մարդը յիմար մ'է, տէր իմ: Ետ կառնում գանգատս, և կը խնդրեմ որ անպարտ արձակուի ան:

Ի՛յօք պագնուած դատախազին խնդրանօք անպարտ արձակուեցաւ ածխավաճառը:

Հովիկ քսաներորդ դարուն կնամոլ զաւակներուն, համալսարանի ուսումնաւարտ պսակաւորներուն և Բարիզի պուլվարները չափելու և անոնց գիշերաչրջիկ, սիրավաճառ և առնախնդիր կնիկներուն առջեւէն, ետևէն դարձող, դեգերող կենցաղամոլներուն մին ըլլալով՝ ինքզինքը կը սխիթարէր, իւրոյի հաստատելով թէ ներքինի պէս գեղեցիկ կին մը սիրեցն իր կազմութեան և սրտին բուռն պահանջումներուն ներհակ է բոլորովին:

Հոս պէտք է ըսել թէ Օր. Սիրուն Շահնուրեան տակաւին առաջին անգամն էր Հովիկին պէս իրեն անձանթ և շողոքորթ երիտասարդի մը հանդիպելը պարահանդէսի մը մէջ: Զարմանալի չթուի ուրեմն անոր փաղաքուչ խօսքերէն տպաւորուելը. և սիրոյն անկեղծութեան սակաւ ինչ հաւտալը: Ուստի կը՝ շարունակէր հանգստեան սենեակին մէջ անոր անոյշ խօսքերուն ուղնել, ողոքուել, և փոխադարձաբար խրախուսել երիտասարդը՝ յայտնելով թէ կը մասնակցի անոր գորովալի զգացումներուն և ախորժելի բացատրութիւններուն: Գրեթէ ժամի մը չափ այս գիրքով կը տես.

նուէին՝ սիրոյ վրայ խօսակցելով, և ոչ թէ սիրաբանելով, մինչդեռ մօտակայ պարասրահին տախտակայատակը կը դորդուէր պարողներուն ցատկառութէն, և պարուհիներուն բոլորտիքը անընդհատ դեգերող և նայուածքով խօսակցող երիտասարդ կամ ծեր հանդիսականներուն քայլի դիտութէն:

Պարելէն ետք հանգչիլ ուզող տիկիներէն մին, Տիկին Հեղինէ Տիրանեան, որ մուտքի տոմսակի մը չնորհիւ եկած էր այս հասարակային պարահանդէսը, ծածկասրտութեամբը, ինչպէս նաև Հովիկին մտերիմ բարեկամուհին ըլլալու տարածայնութեամբը ծանօթ էր, և հայ ընկերութեան մէջ իր անուան վրայ՝ գուցէ յանրաւի՝ խի՞ծ ու բի՞ծը կը դրուէր, յանկարծ խուժեց հանգստեան սենեակէն ներս, արշաւելով մօտեցաւ Օր. Շահնուրեանին և Հովիկին, բարև տուաւ ժպտելով, և անգամ մ' այս վերջինին ուղղելէն ետք իր նայուածքը, որուն մէջ ենթադրուած սիրային երանութեան դէմ դաւադրութեան փայլակ մը կարելի էր գուշակել, ըսաւ Սիրունին.

— Օրի՛որդ, քանի որ Պ. Հովիկին ունկնդիրն ըլլալով հանդերձ ոչ կը յօրանջես և ոչ կը մրափես, կերևակայեմ թէ քնարեր չեն իր խօսքերն ու ձևերը:

— Կողոքես զիս, տիկին, ըսաւ Հովիկ: Իրաւունք ունիս գնահատելու Օր. Շահնուրեանին զգոնամտութիւնը, և լուրջ խնդիրներու վրայ դարձող խօսակցութեան մ' անձանձիր ունկնդիրն ըլլալու ունակութիւնը:

— Տիկին, և դու, Պ. Հովիկ, զթացէ՛ք ինձի և դարեցէ՛ք զիս ուղոքելէ, վասնզի խաչնելու կարմրելու յատկութիւնս չեմ կորուսած տակաւին, և ինձ ուղուած խօսքի մը ախորժելի ճշմարտութիւն մը կամ ախորժելի սուտ մ' ըլլալը չհասկնալու չափ ըթամիտ չեմ:

— Բնդհակառակը, Օրիորդ, ներէ՛ որ բողոքեմ այդ խոնարհամտութեան և ծածկասրտութեան դէմ, ըսաւ Հեղինէ: Այս գիշերուան պարահանդէսին թագուհին



ևս, կրօնէին պարընկերներս, բայց անգութ թագուհի մը, քանի որ ներկայութենէդ և հետդ պարելու հաճոյքէն կը զրկես զանոնք, ուրախութեան և զուարթութեան ժամերդ Պ, Հովիկին հետ խօսակցելու կը յատկացնես :

— Եթէ պարահանդէսին թագուհին ըլլայի, պատասխանեց Սիրուն, իմ այս պարընկերս արդէն ինձ շնորհած պիտի ըլլար այդ պանծալի տիտղոսը, նա որ իր կնոքսային յաջողութիւններովն և անոյշ խօսքովն և ակնարկութիւններովը միշտ պատրաստ է կրտուի մշտնջենական թարմութիւն և անեղծ գեղութիւն վերագրելու իգական սեռին վերաբերող այն ամէն անձերուն, որոնց հաճելի ըլլալ կը յառաջադրէ :

— Օրիորդ, ըսաւ Հովիկ, ինքզինքը վայելչասիրութեան և պճնագիտութեան զինարանին հրազէններովը յտեց ցզուլս պչրապէս և շքեղաբար զինուած երկու հմայքոտ գեղունիներէն պաշարուիլը և անոնց կողմէն իրեն գէժ լարուած երկսայրաբանական կափուլէն բռնուիլը զգալով, թերևս մտայնութեանս պահանջումներուն բերմամբ երբեմնակի զրդուիմ սուփրականէն աւելի պղպղկու և համեմելու ինչ ինչ բացատրութիւններս և խօսքերս երբ սիրագրդիւ և ցանկարար գեղեցկութիւն մը շեշտել ուզեմ: Խոստովանէ՛ Օրիորդ, թէ ցարդ ոչ այդպիսի ակնարկութիւններ ըրի քեզ մեր խօսակցութեան ժամանակ, ոչ ալ չափազանց ազ ու պղպղով համարձակեցայ քու ընտիր ձիրքդ, արդուզարդի անքննադատելի ճաշակդ և մարմնային փառաւորութիւններդ համեմելու, ինկարկելու, վասնզի, Օրիորդ, խօսքէն աւելի գործքի մէջ կը բռնտուես և կը փափաքես գտնել ուշադրաւ կատարելութեանցդ և շքեղութեանցդ արտայայտութիւնը: Միթէ՞ գործքս խօսքէս աւելի ճարտասան չէ, շարայարեց ժպտելով Օր. Սիրունին աներևութապէս անմեղ զիտողութեան և էապէս առնորատական յարձակումին վերայ: Արդ չըսես ինձ, Օրիորդ, թէ ժամէ մ' իվեր յոտս ո՛ր գեղանիին ծնրադիր և ուշադիր կը գտնուիմ, եթէ՞ դուն չես այն գեղունին:

Հովիկին այս փայփայելի բացատրութեան արդիւնքին եղաւ Խորթելի և համակրելի տպաւորութիւն մը Օր. Նահնուրեանին վրայ: Սյայպէս չոյուելով նէ սկսաւ նայիլ անոր իր աղու աչերովը, որոնց հեռուստ եկող և վտանգաւորապէս զրաւիչ նայուածքն այս կնամոլ երիտասարդը գերելու կարողութեան ընդունակութիւն և հաւանական նկատուած անըջային երանութեան մը լըռին խօստումը կը պարունակէր թերևս. և զգուշապէս բրաւ այնպիսի ակնարկութիւններ, որք անփորձ և պարզամիտ կոյսի մը հրապոյրներուն նմանելէ հեռի էին շատ, և որոնց հոգեգրաւ ազդումէն Հովիկ խորհրդաւորապէս յուզուիլը, և համակրութեան, բարեկամութեան և սիրոյ բուռն զգացումներէ բռնուիլը կազդուրուիլը, զոգցես սիրաբանելու վայրկեանին հասած ըլլալը զգաց՝ երբ մանաւանդ յիշեց և դիտեց թէ տիկին Հեղինէ Տիրանեան՝ սկսող պարի մը համար՝ տիպուած էր շուտով մեկնել սենեակէն և թռիլ համեմի պարասրահը:

— Ճանչելով փոքր ինչ նկարագրիդ և վտանգելով այս գիշերուան փափուկ կերպերուդ և նկատումներուդ՝ կը զրդուիմ հաւտալու անկեղծութեանդ, նաև սակաւ ինչ հոլարտանայու բուրվառիդ խուռնկին ճոխութեան ներդարմութեամբը, սյայմանաւ որ դուն ալ անկեղծութեանս վրայ կասկած չունենաս, և մեծատուութեանս ու չողոքարթութեանս ախտէն բռնուելուս չհաւտաս, եթէ ըսեմ թէ հմտութեամբդ և լեզուագիտական ասղանդովդ այս պարահանդիսին զխաւոր ասպեաներուն մին, նաև սաղայերամիտ կնապաշտ մ'ես, ըսաւ Սիրուն իր այս չողոքարդութեան վրայ ժպտ մ'աւելցնելով:

— Երբ օրիորդ մը շնորհալի, լեզուանի, հմուտ, պրշրոտ, հմայքոտ և քիչ մ'ալ քմայքոտ է, զիւրին չէ տապալել անոր քնական տիրապետութիւնը և գերիշխանութիւնը իր այս Խորթելի և սխրալի յատկութիւնները գնահատողներու վրայ: Կը ներե՞ս ինձ յուսալ թէ պիտի հաճիս հաւանելու որ երբեմնակի այցելիմ ընդունելութեանդ օրերը, և նուիրել քեզ յարգանացս,



համակրութեանս, նաև զմայրմանս հաւաստիքը:

— Պատիւ կը համարիմ հետս տեսնուելու և խօսակցելու փափաքը, պատասխանեց օր. Շահնուբեան:

— Հաւաստի եղի՛ր, օրի՛որդ, թէ այդ պատիւը պիտի կրնայ ամենակալ հրեշտակի մը պաշտպանութեան նշանակութիւնը ունենալ յուսադիր ապագայէ մ' անկալուած երանութեանս համար: Կը հաստատեմ քեզ սրտազին թէ այս գիշերուան ժամերն ինծի համար փայլակի արագութեամբ սահեցան, անցան, կակնարկեմ սչն ցանկալի վայրկեաններուն, զոր ապրեցայ ներկայութեանդ շնորհիւ, և արդ կը համարձակիմ յայտնելու թէ էութենէս մաս մը կը թողում հոս և կը մեկնիմ լիայոյս՝ քեզի բարեկամիս՝ Սեպուհին յանձնելէն ետք:

— Կը խոստովանիմ, պարոն, պատասխանեց սրմ. սեղուկ երիտասարդուհին, թէ այդ հեշտալի խօսքերը գուցէ նոր թուական մը սկսին վիպային կեանքի շրջանի մը մէջ: Գուցէ, ըսի, վասնզի ապրօգային և ճակատագրին մեզ ի՛նչ վերապահած ըլլայն անյայտ է, մուշ է, երբ մանաւանդ խնդիրը քեզի պէս փոփոխաւոր հոշակուած երիտասարդի մը սրտին վրայ տիրելու զժուարութեանց վրայ կը խորհի անփորձ և պարզամիտ աղջիկ մը, զոր հաճեցար սովորական կնապաշտութեամբդ հրեշտակ անուանելու: Փաղաքուշ են կարծիքներդ, չարայարեց Սիրուն, եթէ զգացումդ վերաւորելու վախը չունենայի պիտի ըսէի թէ այդ կարծիքներդ մինչև ՚ի շողորթութիւն կրնան յանգիլ ըստ իս:

— Կը սխալիս, Օրի՛որդ, փութաց պատասխանելու: Հովիկ, ենթադրութիւն մ' է այդ: Ըսածս ճշմարտութիւն մ' է, անկեզձ զգացումի մ' արտայայտութիւն է, մեծարանք մ' է: Մեծարանքն ասործելի ճշմարտութիւն մ' է. իսկ շողորթութիւնը ստութիւն մ' է ասործելի:

— Շատ զերբագրգիտ ես, պարոն, պատասխանեց Օր. Շահնուբեան՝ ժպտելով և զժուարաւ զսպելով իր ներքին գոհունակութիւնը և անձնասիրական զգացումին զգուշիլ:

— Լաւագոյն է և աւելի պատուաւոր քեզմէ յաղթուիս քան թէ անիրաւութեամբ քեզի դէմ՝ յաղթանակ տանելու ունայնապէս նկրտիս: Կրկին տեսնուինք, ըսաւ Հովիկ, և ծնրադրելու չափ խոնարհութեան ձև մ' ընելէն ետք մեկնեցաւ:



Գ Լ Ո Ւ Ե Գ

Դ Ի Մ Ա Կ Ա Տ (1) Խ Ա Բ Ե Բ Ա Յ Ս Ը



Ուրի պատանութեան ժամանակ բարերարներու հանգանակութեամբ և պաշտպանութեամբը Բորիզ զըրկուած, գրականութեան և գիտութեան պատկաւօրի վկայական ընդունած, ձրօնաբէն և Անգլիերէն լեզուները գասելու չափ ուսումնասիրած և սորված էր: Այս պատճառաւ ինքզինքը երեւի և անօրինակ զըրագէտի մը տեղը դնելու թեթևամտութիւնը ունէր: Զարմանալի չէ այս, վասնզի ամենէն գիտուն, ամենէն մեծ գրագէտը չկրնար իբր այն ճանչուիլ և ընդունուիլ յուսաւոր հասարակութեան մը մէջ, եթէ ուղիղ դատողութեան տէր չէ: Դպրոցի մը մէջ վերաժարժիչի (répétiteur) և զոնապաններու ընթերցման սահմանուած մի քանի անչուք թերթերու համար լրագրի պաշտօն վարելով և այս առթիւ ընկերային ստորին և միջակ դասերու մէջ անուն վաստկելով՝ իր ուսուստը և զգեստը հայթայթելու չափ դրամ կը վաստկէր: Առիթ ունեցած էր սիրամուլ քրմուհիներու և խաղամուկներու ընկերութեանց մէջ սոցոսկելու, և Պոհնմացի ըսուած ցօփակեացներու հետ տեսակցելով, կենակցելով և անոնց սիրային արկածներուն և զեղխութիւններուն մասնակցելով որոշած էր քանի մը տարի ապրիլ ձրանսայի

(1) Déwasqué.



մայրաքաղաքին մէջ, որ Եւրոպայի և ուրիշ երկիրներու և մանաւանդ՝ ժողէֆ Մսծծինիին կարծեսց նայելով՝ աշխարհիս ուղեղը կը նկատուի: Այս կարծիքը չափազանց չի՞ուիր երբ մանաւանդ կը մտաբերենք Բարիզի երեւիլ բանահիւսնները, գրագէտները, արուեստագէտները, դիտունները և այլ հանճարներ, որոնց էութիւնը կարգիլէ մեզի գիշուն անուանելու այդ հրաշալի ուղեղը, և որ սակայն ներուի մեզ եթէ ըսենք թէ աշխարհիս այս լուսարձակ ըղեղը նաև արդիական ժամանակներու Բարեւոնն է: Հովիկ պոնեմական աշխարհի մէջ այսպէս տարիներով ապրելէ, ցորեկները ուտելիքը և ըմպելիքը ճարելու համար չարաչար աշխատելով շահած գրամները բաղդալմեղի կնամոյներու և անյագ կենցաղասէրներու սովորական կերուխումովն և ապօրինի վաշելումներովը վատնելէն, նաև պարտքի տակ ճնշուի սկսելով մարդկային ամէն ազնիւ զգացումները, հաւատարմութիւնը, ուղղասիրութիւնը, արդարասիրութիւնը, գթասիրութիւնը, և այլ բարոյական կատարելութիւնները գիշերաշրջիկ քրմութիւններու, ցոփութիւններու պահանջութեան և չտալութեան անգունը նետելէն, բոլորովին անարծաթ մնալէն և Գլխի միջին սննեակներու մէկին մէջ բանտարկուելու վտանգը ընդնմարելէն, իր ծանօթներուն և բարեկամներուն արհամարհանքին և ծաղրին ենթակայ և խայտառակուելու սահմանուած ըլլալը զգալէն ևտք գաղտագողի խոյս տուած էր Բարիզէն և վերադարձած էր Իզմիր: Բայց այս Հովիկը բաղդին հալածանաց զէմ չուտով յուսահատիլ և վատիլ չէր գիտեր: Մարգուս քաջասրտութեան ընտիր ձեւերուն մին է բաղդին ձախորդութեանց զէմ՝ դիմազրաւել և ողնասիւնը չծռել դիւրաւ: Վիճակահանութեան շահող տոմսակի մը տիրանալով կոկիկ գուժար մ' ունեցաւ. մի քանի պարզամիտներ խարեց և համոզեց իրեն հետ ընկեր ըլլալու ատուտուրի ձեռնարկութեան մը մէջ, և քիչ ատենէն ևտք՝ մղուելով անյաջողութեան և ապիկարութեան ստուգութիւնէն սընանկացած էր՝ իր պահանջատէրերուն իրաւունքը

խղճի հանդարտութեամբ ուտելու համար: Այս անանկութեան մէջ իր խարդախութիւնը ծածկելու և պատժական օրինազրքին բոլորտիքը թափառելէն և անոր մէջ գլտորուելու և անյարիր կործանուելու վտանգէն դժուարաւ ազատուելէն ևտք ինքզինքը տուած էր ապրուստի ուրիշ միջոցներ գտնելու: Վաշխտուններու թելադրութեամբը որոշեց խաղամոյի արհեստով զբաղիլ: Մնանկութեան օրինական հետուութեամբն իր կորուսած վարկը և պատիւը չիրնալով վերստանալ սկսաւ անոր ասոր պահանջքը ևս չլճարելու աշխատիլ խաղամոյի, գինեմոյի, կնամոյի կեանքով աղտոտ և ցեխոտ գետիններու վրայ սողալ: Երբեմն ալ չգլտենք ինչպիսի թագուն ազղեցութեան չնորձը յաջողեցաւ իր անցեալը և ներկան մտէն չճանչցող ընկերութիւններու մէջ ստղելու: Ան ատեն մեծամտութեան մարմաչէ մը զըրդուելով ուղեց յարգ, պատիւ և գուցէ հարստութիւն գտնել, և այս յոյսով սկսաւ զգուշաբար և խանձապէս ապրիլ և վարուիլ իր մտային պաշարքը բազմապատկելու աշխատիլ, և իր սովորական ինքնահաւանութեամբը պարծիլ կարծելով թէ գէթ հայութեան աշխարհի մէջ հոչակաւոր և մեծանուն գրաղէտ մը հանդիսանալու սահմանուած է: Երեւիլ հանճար մ' ըլլալու երեւակալութեամբ միտքը դրած էր գէթ Իզմիրի հանրածանօթ վտճառականի մը միածին և բազմահմուտ աղջկան հետ ամուսնանալ, և անով իր բաղդը շինել և վառաւորուիլ:

— Ինչո՞ւ չէ: «Երբ կրները կուսնին Յունաստանի» «մէջ» կրսէ է. Բէլլան, իրենց տաղանդին չնորձը» «անմահութեան կերթան հանճարները» Սօֆօքլէին սիրուէին էր Արչիբ, Բրաքսիթիլին տիրուէին էր Ֆրիսէ, Արեկին սիրուէին էր Լայիս, Պրատոնինն էր Սլքէանաս: Ես ալս երեւիլ հանճարներուն հաւասար նկատուելութեթութիւնը չունիմ, բայց իմ կարողութեանս սահմանին մէջ քիչ մը հպարտանալու և Օր. Սիրուէին պէս եթէ ոչ հարուստ, գէթ հանճարեղ, լուսամիտ և զեղանի արարածի մը սիրոյն պաշտպանութեանը տ-



պաւելինի և փառաւորուիլ ուզելս միթէ՞ կրնոյ զէզ-  
զէկութեան վերագրուիլ: Սմենեի՛ն, ըսաւ Հովիկ, որ  
քիչ ժամանակէ ի վեր ընկերութեանց մէջ տեսած և  
չատ հաճելի և ախորժիկի գտած էր Օր. Շահուրեանը՝  
առանց տակաւին անոր ներկայացուելու և հետը տե-  
սութիւն ընելու:

Ահա այս էր այն երիտասարդն որ պարահանդէսի  
զիշերուան երոկոյին իր ազգապութեան յատուկ սենեկին  
մէջ տխուր նախազգացումներով, մտատանջութիւննե-  
րով և սպառնալի հաւանակութեան զազափարով կը  
չարչարուէր: Սեպուէին ստիպումովը պարահանդէսը գա-  
ցած, հոն դանուած իր սիրելի այլ անտարբեր ձեացող  
Հեղինէին ներկայութենէն չզգուշանալով, ներս անտար-  
բերութեան, գուցէ ատելութեան զգացումը և նախան-  
ձը զրգոած և թշնամութիւնը իր վրայ հրաւիրած էր՝  
իբ կնապաշտական և սիրարանական խօսքերը, հոգա-  
ւերութիւնը, շարժումները Օր. Շահուրեանին յատ-  
կացնելով:

Երբ մեկնեցաւ պարահանդէսէն, Հեղինէ Տիրանեան  
առանց ժամանակ կորուսելու պահ մը տեսնուեցաւ Սի-  
րուհին հետ: Հետը խօսեցաւ Հովիկին վրայ, անոր  
անցեալը և ներկայն մանրամասնաբար և զիտցածին  
չափ պատուեց՝ ներս պատրանքը փարատելու համար,  
եթէ ունէր պատրանք: Այսպէս վարուելուն պատճառն  
էր լսած ըլլալը թէ Հովիկ որոշած է զինքը լքանել, և  
կուղէր իր լքման վրէժը այժմէն լուծել այս անձէն, որ  
վերջապէս զբնակը վար դրած և զինքը խաբած էր՝ Օր.  
Շահուրեանին նուիրել ուզելով իր սիրտը և կեանքը,  
և նահատակուելի մ'ևս կցելու երազով իր տարփուէինե-  
րու հաւաքածոյին: Սիրուն ուրիշներէ և մանաւանդ  
թագուն ոտոխներէ իրեն տրուած բարեկամական տեղե-  
կութիւնները և լուրերը համաձայն գտաւ Հեղինէին  
պատմութեան, և ինչպէս որ ասկից կտք պլտի պատ-  
մենք՝ նէ չըլլալով միամտօքար խաբուելու ընդունակ  
պարզամիտ և անփորձ աղջիկ մը, որոշեց իր զգոնու-  
թեան և հեռատեսութեան համեմատ ընթացք մ'ունե-

նալ, և այդ յատկութիւններէն իր մտքին մէջ կազ-  
մուած գաղափարները կենացն ուղղութեան և ապրե-  
լակերպին ընդհանուր և անխախտ կանոններ հասարել:

Երբ Հովիկ պարահանդէսէն տունը վերադարձաւ,  
յոյս և լոյս ունէր իր հոգւոյն մէջ: Հեղինէին հետ իր  
յարաբերութիւնը կտրեց բոլորովին՝ առանց ամոքել  
փորձելու այս լքման դատնութիւնը, և առանց դրա-  
մական հատուցում մ'ընելու թէ՛ իր քսակին պարա-  
պութեան և թէ՛ նոր և դառնագոյն նախատիք մ'ը-  
րած չըլլալու համար անոր: Ապա սկսաւ խորհիլ և ու-  
րոճալ Սիրուհի հետ հաստատուել սկսող իր սիրային  
այժմեայ անմեղ յարաբերութեանց ապագային վրայ,  
Տօն ժուանի մը յատուկ թիթեաւարութեամբ և անա-  
ռակութեամբ:

— «Սահէ՛, մահկանացու մի կոթնիր» ըսաւ իւրու-  
վի և ինքն իրեն ուղղելով խօսքը, միտքը բերելով չի  
զիտեմ ո՛ր ինքնամոլ հեղինա՛էն արձակուած անատա-  
կութեան այս վճիռը Իզմիրի մէջ իր վարելու կեանքին  
ապիրատութեան և ցոփագնացութեան նախերգանքն էր  
անոր այս անօրէնութեան խորհուրդը: Օր. Շահուրե-  
ան, չնորայարեց՝ մենախօսելով, չնորայոյս արարած  
մ'է: Տղայութեան հասակի անմեղութեան քունէն տա-  
կուէին արթնցած չէ: Կը հաւտայ սիրահարի մը մեղրա-  
րանութեանց և անշուշտ պարզամտութեանը չնորհիւ-  
ղեմ չգիտեր թէ զիրար մշտնջենապէս պաշտելու խոս-  
տումները, երգումները անդրդուելի հաւատարմութեամբ  
անձնուէր մնալու յատաճաղրութիւնը ընդհանրապէս  
խախուտ և սուտ են, և սապանի պղպձակի պէս յօգս կը  
ցնդին: Կերևայ թէ պատրաստ է նէ օրինաւորապէս չը-  
նորհելու ինձ իր շքեղ անձը, նաև իր միակ այլ մեծա-  
զին օժիտը որ է իր անարատ սիրտը, լա՛ւ. բայց ետքը՝  
Ամուսնութեան սիրերգութիւնը կտրճատե է: Հետզնե-  
տէ կը գան կը հասնին և իրարու կը յաջորդեն անողո-  
քարար կապտապեղ կրկնից ամպոտ և սպառնալի մըթ-  
նոլորտին խստութիւնները: Ապրելու, բնակելու, ուտե-  
լու, խմելու, հագուելու, դարդարուելու, չըջիլու, այ-



ցելութիւններ ընկու, հիւրեր, բարեկամներ և ծանօթ-  
 ներ ընդունելու, գուցէ նաև զաւակներ ունենայու,  
 կրթել և զատարակել տալու, նաև իր տիրապետական  
 կամքը կատարելու պահանջուութիւնները երևան պիտի  
 ելնեն, եթէ չուզեմ ասոնց դէմ ընդվզել և ընդվզելով  
 տեղի տալ գտութեան և զչարութիւն Առանց զբամի  
 կարելի չէ, ընդհակառակն յիմարութիւն է պծնասէր,  
 պլքասէր և քմայքոտ երկտասարգուհի մը հաճելի ըլ-  
 լալ: Ուսկի հայթայթել ոսկին: Կիներն ընդհանրապէս  
 իրենց տալագային անդորրութիւնը ապահովելու և նիւ-  
 թական կեանքի զժուարութիւններէ և ճանձրոյթներէ  
 ազատ մնալու գաղափարով անոնութեան հետամուտ  
 կըլլան: Կուսուցոյն կը համարին հանդարտաբարոյ, քիչ  
 մը տարիքոտ, բայց ոսկերարձ էրիկի մը նուիրուել անձ-  
 նոյին քան թէ անարժօթ, այլ խելանի, հմուտ և փո-  
 փախասէր կարիճ երիտասարդի մը: Ըսել է ուրեմն թէ  
 անկարելի, գէթ շատ զժուարին է ամուսնութեամբ ինձ  
 յատկացնել Սիրունիին պէս հազուապէս և անգին գանձ  
 մը: Մակայն չեմ կրնար այս սրամիտ, հեռատես և ըս-  
 կեպտիկեան, այլ գեղեցիկ արարածը գէթ առ ժամա-  
 նակեայ կերպով գրաւելու զիտաւորութենէս և փափա-  
 քէս հրաժարիլ: Անտիպ ձեռագրի մը վաճառուելէն և  
 կարդացուելէն ետք արդէն սպուած ըլլալուն վերահա-  
 սու ըլլալն երբ արդելք եղած է անոր պարունակու-  
 թեան կատարելութեանց և շքեղութեանց տեղեակ ըն-  
 թերցասէրներ և հմուտներ զանուելու...: Բայց եթէ  
 սա վաղեմի տարիուհիս, սա սաղաշէլամիտ Հեղինէն իր  
 սովորական չարասրտութեամբը խաչնդատ չդնէ ամուս-  
 նական չինձու ձեռնարկութեանս առջև: Սիրունին յայտ-  
 նելով անցելոյս մի քանի չնչին պարագաները, թեթե-  
 մեղքերը, և չվերջացնէ ներս պարզամտութիւնը, ա-  
 պահով եմ թէ պիտի յաջողիմ չնոյ հալի օրիորդին օրի-  
 նաւոր կողակցին ըլլալու, և առանց կտրելու կողակ-  
 ցութեանս հանգոյցը՝ ազատութիւն կուեննամ այլնսի-  
 րութեանս մզումներուն հոսանքին հետեիլ անարգել ա-  
 զապութեանս ժամանակին պէս: Մէկէն աւելի կին մ'ու-

նենայն ոճի՞ր մ'է միթէ: Քրիստոնէութեան աշխարհի  
 մէջ միակնութիւնն օրէնքէ և եկեղեցական խորհուրդէ  
 կը հետևի. բայց իրականութեան աշխարհի մէջ եղածն  
 ու տեսնուածն է բազմակնութիւնը, և հակադարձ հե-  
 տութեամբ երբեմնակի բազմանութիւնը: Այս չէ՞ մարդ-  
 կային ընկերութեան մէջ խաղացուած յայտնի և ան-  
 յայտ կատակերգութիւնը: Ոյժը կը բռնաբարէ իրաւուն-  
 քը փոխանակ անոր սպասարկուն ըլլալու: Մեղաւորը  
 անմեղին, զօրաւորը տկարին, կայէնը Աբելին, Ահրի-  
 մանը Ռոմիզդին և Իսկո Տէզտոմօնային դէմ կը դիմի,  
 կը գաւազրէ և կը յաջողի: Վայ յաղթուողին (vae  
 victi) ըսաւ Պրենիոս (1) Հռոմայեցւոց: Գթութեան և  
 կարեկցութեան զգացումէ մը զրդուելով վայելումէ  
 զրկուիլն ու ճակատագրին սպեղութիւններուն զոհուիլը,  
 աւանդ ունենալ և չուրանալը, աւանդատուն վատ-  
 նութիւնը չզկցծելը և պատժական օրէնքէն վախնալը և  
 ծիծաղիլը Պէզարիայի վրայ, որ կրտէ թէ՛ «Կրօնքը  
 մարդկային ընկերութեան մէջ ոստիկանութեան պաշտօն  
 կը վարէ», Ձէնօնի փիլիսոփայութեան, ոտոյիկութեան  
 յատուկ առաքինութեանց և զոհողութեանց համեմատ  
 ապրիլն և կենաց ուրախութիւնները առ ոչինչ համարե-  
 լը, անդսնելը, մաշուիլը, հիւժելը և հուսկ յետոյ սև  
 հողին ներքև օրդերէն կրծուելով հետաջինջ ըլլալն ան-  
 մտութիւն չէ՞, Հող էիր և ի հող դարձցիս, կրտէ Սուրբ  
 Գիրքը: «Ամեն ինչ կը վերջանայ վեցը ոտք հողին ներ-  
 քև» վճիռը պատին վրայ գրուած գտաւ Նարոէնոս Ա.  
 երբ Բարիկի զինուորական զարոցը մտաւ, և մանաւոր-  
 եան սենեկին պատին վրայ իր Գօրսիքայի տունին ըստ-  
 ուերագիրը ծրագրելով անոր ներքև ինքն ալ գրեց այ-  
 յուսանատութեան վճիռը, որ իրմէն առաջ կնխանապէս  
 մը զրազրուած էր հոն: Պարկիչտութեամբ և պատուով  
 ապրիլը, տաղանդով, հանձարով երևելի հանդիսանալը,

(1) Գաղասացի զօրապետ, Քրիստոսէ 390 սուրի առաջ Հռոմին  
 փրկեց, բաղաբը կողապեց, «Վայ յաղթուողներուն» ըսաւ իր ա-  
 նիրաւութեանց դէմ գանգատողներուն:



գրական, գիտական, բարեգործական հիմնարկութիւններով և հանրագումար ձեռնարկութիւններով ժամանակակիցներու ծափահարութեան արժանի ըլլալը, հոշակուելին և անուշիս պատմութեան էջերուն մէջ յաւիտենապէս արձանագրուելիս ի՞նչ օգուտ ունին. քանի որ ամէն յատկութիւններս, իմացական և բարոյական կատարելութիւններս պիտի ջնջուին, և կմախքս հոն հոս պիտի ցրուին՝ ուրիշներու ոսկերտութիւն հետ խառնուելով և անհետելով: Եթէ Աննիպալ մը. Սդէքսանդր մը, Շէյքսպիր մը, Վ. Հիւկո մ'ըլլայի անգամ — ի՞նչ այլանդակ ենթադրութիւն, ըսաւ իւրովի. — կմախքիս բեկորներն ո՞չ ապաքէն տակառի մը ծակը պատի մը ճեղքը գոցելու, պարտկելու պիտի ծառայեն՝ ինչպէս կըսէ Համլէթ: Օ՛ն, յառաջ գնա, Հովի՛կ, գոչեց ինքն իրեն. Ըրի որոշումս: Իմս պիտի ըլլայ Օր. Շահնուբեան: Վերջն ի՞նչ կուզէ թող ըլլայ: Բայց մի՛ աճապարեք. Հովի՛կ, ըսաւ դարձաւ իւրովի՝ պահ մը խորհելէն ետք. «Խորհուրդ մարդկան կամք Մտուածոյ» կըսին տատուածապաշտ և բարեսիրտ անձինք: Բայց ես կըսեմ. «Խորհուրդ մարդկան, կամք կնկան»: Հրապուրուած գեղանիկի մը կամքը պիտի կրնամ առ ոչինչ գրել: Տեսնե՛նք, ըսաւ, և բաւական կոկիկ ոճով և դարձուածքով Սիրունին երկու սիրազիր գրկիցէն ետք, որ անպատասխան մնային, անհամբերութեամբ սպասելով անոնց ընթերցումէն գոյանալիք արդիւնքին, իր շահատակութեանց ասպարէզ ընտրեց նախ մի քանի խաղարաններ, ուր խառնուակի, բոֆերի, շակագմեի, պպաուուի և այլ զբամախաղերու քաջամուտ և ձեռնածուներու յատուկ ճարտարութեամբ խարդախ և նենգաւոր մ'ըլլալով միամիտ սկանալներու զբոսեր կը պարսէր, և չխոզվելով ու ժպտելով բարեբաղդութեան կը վերագրէր իր խաբեքայութեան, գողութեան արդիւնքը: Սպա երբեմնակի ծանօթներու նախաձեռնութեամբը սկսաւ յարաբերութիւն հաստատել ընկերութեան վերին դասի պատկանող ընտանիքներու հետ և ընդունուել իրապէս յարգի և պատուակիր ընկերութեանց մէջ ուր անձա-

նօթ էր գլխովին իր անառակութեան կեանքը, և ուր հարուստներու քով ճարպիկ չողոմարարի և պնակալէզի դերը կատարելով անամօթարար համակրութիւն և պաշտպանութիւն կը գտնէր՝ ետքէն ապաշնորհ ապիրատի մը պէս վարուելու յառաջադրութեամբ:

Մարդկային ամենէն չքեղ առաքինութեանց գլխաւորներն են, ըսաւ Վօլթէր, կարեկցութիւնն ու արդարասիրութիւնը: Հովիկին անձանօթ էին այս վսեմ զգացումները: Չարութեան ոգիին անձաւորութիւնը անբարոյակաւութեան անօրինակ օրինակն էր ան: Չարութիւնը՝ մարդկային հոգւոյն մթութիւնն է: Չտեսներ ոչ թշուառութեան աղետալի հետեւանքը, ոչ ալ ճակատագրէն ճգնուողներուն նահատակութեան տեսարանը: Հնարագէտ և նենգամիտ բաղդախները մ'եղած էր Բարիդի այս ուսումնաւարտ և բաւական տաղանդաւոր անառակը. «Ճանճը մեղրին և գողը ոսկիին կը մօտի» կըսէ առածը. կնամոյն ալ գեղանի կնոջ կը մօտի, կրնայ ըսուիլ թերեւ: Իր այս յարաբերութեանց շնորհիւ իբր անյագ և անպարտելի Սիպարիթ այս կամ այն տան տիրուհիին քով կը քծնէր ներս գիւրահաւանութիւնէն և կամ պճնասիրական ծախուց համար զբամական կարտութեանէն օգուտ քաղելով, ցկեանս անոր խնկարկու և սիրամոյր գերին մնալու խոստումներով, և իսկոյն զբժուելու սահմանուած երզումներով իր նպատակին կը հասնէր, մինչդեռ տան տիրուհին այս խոստումներու և երզումներու ունայնութեան վրայ գաղափար չունի ոչ ալ ամուսինը իր պատուոյն և ընտանեկան անդորրութեան դէմ նիւթուած այս դաւաճանութեան և վտանգին տեղեակ է: Ահա այս տեսակ արարած մ'էր Հովիկ երբ պարահանդէսին մէջ Սիրունին ներկայուելու, հետք տեսնուելու, և խաբեքայութեամբ անոր հաճելի և նախընտրելի սիրակրանն ըլլալու երազը տեսած էր, առանց գիտնալու թէ իր գլխին վերելք Տամօքլէսեան սուր մը կախուած էր:



Գ Լ ՈՒ Ե Գ.

### Գ Ե Ղ Ա Ն Ի Ս Ա Տ Ա Ն ՈՒ Հ Ի Ն

ՊԿԱՐԾՈՒԻ Թէ Հեղինէ Տիրանեան անարժէք և հասարակ կին մ'է: Սամաթիայի միջակ, գրկթէ չքաւոր նարարաժաճաւրի մ'աղջիկն է: Փոքրահաս, կոկիկ, գրեթէ գեղեցիկ և շուտիկ պատանուէի մ'էր երբ նախ ծաղիոց, ապա դարոց, և յետոյ Պոլսոյ մի մեծ վարժարանը մտնելով նշանաւոր վարժապետներու հսկողութեան և վարժ ու թեկն տակ դասարանները կանոնաւորապէս յաճախելով յաջողած էր իր բացառիկ առումին, ժրութեան և մշտարթուն յիշողութեան չնորհիւ աւարտելու զպրոցական ծրագրին բոլոր ուսումները, և հայերէն ու ֆրանսերէն լեզուներու քաջահմուտ եղած ըլլալը հաստատող քննութիւններէ ետք յաղթութեան մրցանակով և ուսումնաւարտի վկայականով պատկուած քաջախելուած և իր հայրենի յարկը վերադարձած էր: Նշանած մը գտնելէ առաջ սկսած էր զբաղիլ իրենի հեղինակներու երկատիրութեանց և թարգմանութեանց ընթերցումներովը իր մտքին հորիզոնը ընդարձակելու համար: Միանգամայն կեանքի ու բարութեանց և վիպոյցի մայրնութեանց վրայ աշատ և սանձարձակ գաղափարներ և յաւակնոտ նարատակներ կազմած էր կարգուելի և ամուսնութեան խորհրդաւոր իրողութեանց խեղամուտ ըլլալէ առաջ: Մասնաւորապէս Հոմերի և Բարիդի գրաքննութեան եկեղեցի մատնուած մատնաներու փոշիներուն մէջ թաղուելով և այլ ուղակ տեսիլներու կողմնակից հանդիսանալով թէ՛ իր մտքին և թէ՛ սրտին հաւասարադատութիւնը խանգարած էր: Իրր թէ այսքանը չէր բաւեր, և ահա կալթոչալիտ ստամբակէ մ'իրեն նուիրուած էր Օրիորդ Մօրեն անուն վի-

պատանութիւնը, հեղինակութիւն թէօֆիլ կօթիկի, որ նշանաւոր քննադատի մը կարծիքին նայելով «վոլթէրին հանրագիտական գլուխը ունէր»: Հեղինէ Տիրանեան քանի մ'անգամ և ուշադրութեամբ կարդացած էր այս վէպը: Ներածութեանը մէջ մոլութեան ջատագովութեանը յատկացած յանդգնութեանց վրայ բաւական համակրութեամբ և համազումով մտածելէն և վիպասանութեան գլխաւոր անձին, Օրիորդ Բօզալէնտին ծրագրուածի ներքե վարած կեանքին զէպքերը, և ներքե թէ՛ առնասիրային և թէ՛ իգասիրային վայելումներու նկարագրութիւնները ուսնելէն և թէօֆիլ կօթիկի հանձարին վրայ հիանալէն ետք յաջողած էր գեղանի և վտանգաւոր ստատուէի մ'ըլլալու: Աւելը մտք մը, որ իր խորհուրդները կը պահէր, և սիրտ մ'որ զգացումները կը ծածկէր, զայլթակգութեան տեղի չտալու և հասարակութեան համարումէն չզրկուելու համար: Այսպէս հայրական տունէն դուրս, ազատութեամբ և ծնողական հսկողութենէն հեռի և անխախ կեանքով ապրիլ կարենալու համար Բերայի մէջ բնակարան մը վարձու բռնելով ցորեկները իրր վարժուէի կաշխատէր իսկ գիշերները վարժարանին մի քանի վաղեմի, հասակակից և իրեն պէս ազատամիտ ընկերուհիներու հետ կես-կոչսերու յատուկ և ծածուկ կեանք մը վարելէն ետք սկսած էր յաճախել Բերայի այն ընկերութիւնները, զոր ինչպէս ըսինք այլուր՝ Սղէքսանդր Տիւմա Յիս իր բարձր տաղանդին վրձնիովը յաջողած է կէս-աշխարհ անունով նկարագրելու իր թատերագութեանց մէկին մէջ: Թատերագութիւններ, որոնց աղմկալի և հիանալի ներածութիւնները եթէ մըսնասայի գրական պատմութեան էջերը փառաւորելու յատկութիւնը ունին, ըսեմ, չափազանցութիւն ըրած չեմ ըլլար կարծեմ: Մինչ այսպիսի խառնակեցութեամբ օրեր կանցունէր նէ Բերայի մէջ, առիթ ունեցաւ կէս-աշխարհեան ընկերութեանց միոյն մէջ հանդիպելու Տիրան անուն յանձնակատար երկատարողի մ'որուն հետ ստեղծուած համակրութիւնը բարեկամութեան, և բարեկամութիւնը սիրոյ փոխուած էր կարծես



չոգեպինդ արագութեամբ, և եկեղեցւոյ խորանին առջև  
 Հեղինէ յաւիտենական հուշատարմութիւն ուխտած և  
 իր այս Տիրանին գիրը նետուելու հաւանած էր, ա-  
 ոանց գիտնալու և առանց գիտնալ ուզելու թէ այս  
 Տիրանը Պօլսոյ կենցաղամոլ և կատաղի կնասէրներուն  
 մին է. թէ չպիտի յարազի յփրանալու մեղրամային  
 հեշտութիւններէն և այլուր փնտելու նորանոր և փո-  
 փոխական զգայութեանց վայելումները, և թէ ներա-  
 տնտիական հասակի և չքնաղ պչրասէրի յատուկ ծախ-  
 սերը անտրտունջ վճարելու չափ զարդարուն քսակ մը  
 չունի: Եկաւ հասաւ լքումի օրը, Տիրան աներևոյթ և  
 դաւ՝ առանց իմացնելու երբ և ուր երթալը, և Հեղինէ  
 մնաց անոք, անորդի և անօդնական: Ամուսնալուծու-  
 թեան վճիռ մ'առաւ, ալ նկատուեցաւ նէ սմանդուկ,  
 կասկածելի և փոքր ինչ վտանգաւոր կիսայրի մը: Նո-  
 րէն դասատուութեան տաժանելի պաշտօնով աշխատե-  
 լու և աղքատութեան ճիրանին մատնուելու անձկու-  
 թենէն գրողելով և իր վիճակին լաւագոյն ապագայ մը  
 կազմելու յոյսով մայրաքաղաքէն իզմիր եկաւ, և այս  
 քաղաքին կիս - աշխարհեան ընկերութեան մը մէջ զըժ-  
 րագրութիւնը ունեցաւ հանդիպելու Հովիկին պէս փո-  
 փոխամիտ և անհաստատ մարդու մը, և իր միայնու-  
 նութենէն հետեւած ձանձրոյթին, ինչպէս նաև նիւթական  
 կենաց անստուգութիւններուն վերջ տալու, հետեւաբար  
 անոր սրտին և քսակին տիրելու յոյսով հետը օրինաւո-  
 րապէս կարգուելու խոստումներուն անխղճութեանը  
 հաւատայ: Հեղինէ զինքը սաստիկ սիրող Հովիկին անոյշ  
 խօսքերուն և սիրաբանական շոգօքորթութիւններուն  
 վստահելով և կնասպաշտը զեղապաշտին հետ չփոխելով,  
 անոր պունասիրական յօժարութիւնները և զգացումները  
 հաւատալի և ընդունելի համարելով ուզած էր հաճելի  
 ըլլալ անոր, առանց սակայն վերջնական յոյսեր տալու:  
 Բայց Հովիկ Հեղինէին միայն մարմնային զեղութեան և  
 շքեղութեան սիրահարն էր, և անոր այս յատկութիւն-  
 ներէն հետեւելիք հեշտութիւնները վայելելու համար նե-  
 րա նորօրինակ և ծայրայեղ գաղափարներուն մատնակ-

ցիլ կը ձևացնէր իր սիրաբանութիւններով և կնասի-  
 րական մեծարածքովը: Սակայն իր առջև երկայրարա-  
 նական դժուարութիւն մը կար: Հեղինակ մը կրնէ թէ  
 «զժուարին է սիրտը տեղաւորել և դրամը պահել:»  
 Հովիկ գիտէր թէ սիրտ չունի վասնզի նախախնամա-  
 կան ներշնչուած է մը ստեղծուած նոր բառ մը մենք  
 ալ գործածելով կրանք թէ տեղաւորելու չունինք: Հովիկին  
 սիրտն այլուր փոխադրուած էր: Իսկ քսակը գիտենք  
 արդէն թէ անշուք էր: Երբևմնակի գրամախաղի չը-  
 նորհիւ կը շքուէր այն, բայց չուտով կանչքանար իր  
 կեանքի զեղխութեանց պատճառաւ: Այս դժուարին  
 կացութեան մէջ Հեղինէին սրտին տիրելու յոյսը կտրած  
 չէր: Հետը տեսնուած ժամանակ իր շոգմարարի բուր-  
 վառին մէջ դրած խունկին առատութեամբը Հեղինէ  
 կզգլտէր:

Այսպէս նէ իր անձնասիրութեան զգացումին շոյ-  
 ուրիլը և ողորձելը զգալով սկսաւ քիչ մ'աւելի հա-  
 ւատք ունենալ Հովիկին թախանձանաց, սիրաբա-  
 նութեանց և սիրամոյրի զեղբրուներուն վրայ, և ալ  
 չդիմադրելով զինքը պաշարող ռազմագիտական ու մի-  
 անգամայն սիրագրգիռ յարձակումներու, հաւանեցաւ  
 նախ անոր սիրուհին, և ապա տարփուհին ըլլալու,  
 զուցէ առանց կասկածելու թէ իր առջի էրիկին՝ Տի-  
 րանին պէս այս Հովիկն ալ միտքով ու սիրտով նեն-  
 գաւոր և դուրժան մ'է: Մեղրամային վայելումնե-  
 րէն քիչ ժամանակ ետքը՝ առանց պսակուելու Հովի-  
 կին հետ՝ անորմէն լքուելու վտանգին ենթարկուած  
 ըլլալը, և իր սրտին անհնարին տակութեամբ և վը-  
 րէժխնդրութեամբ սինալը զգալով, նախ կափսոսար իր  
 անխոհմտութեամբը ճակատագրին ամբարշտութեան  
 մատնուած ըլլալը տեսնելով, և սպա մտածեց վրէժ  
 լուծելու միջոցներուն և հնարաւորութեան վրայ: Ի-  
 րաւունք ունէր դառնապէս տրտմելու իր բաղզին ա-  
 նողորմութեան և չարչարանքին պատճառաւ: Զգաց  
 թէ կեանքի հալածանաց նահատակուհին է: Ամուսինէն  
 լքանիլը, խաբեբայ հումանիէ և տարփածուէ մը մատ-



նուեիլը իր դիւրահաւանութեան, անխորձութեան, ան-  
մտութեան վերադրեց, և խորին ախրութեամբ խառն  
տպաւորութենէ մը գրաւուեցաւ : Խորհելով այս ճա-  
կատագրային երկու աղէտից վրայ կը կարծէր թէ  
մասնուած է Սիկիլիայի մրրկայի նեղուցին երկու վը-  
տանգաւոր, գրեթէ մահահրաւէր որձանքին, թէ Գա-  
րիբիթիսն Սկիլլա և Սկիլլայէն Գարիբիթիս նետուած և  
փրկութեան յոյսէ զրկուած թշուառ մ'է : Սակայն յու-  
տանտութիւնը անդուստութիւն չէ : Պահ մ' ուշաբրելով  
և մտածելով թէ բարդին խտութեանց գէմ՝ արիաբար  
դիմադրելը քաջասիրտ անձերու համար պանծալի  
յատկութիւն մ'է, լրջօրէն անգամ մ' ալ իր վիճակը,  
հատակը, մտայնութեան ճոխութիւնը, անձնական թար-  
մութիւնը և թագուն ու անթագուն շքեղութիւնները  
ինքն իրեն պարզելով սկսաւ հոգի առնուլ, յուսալ :  
Անյուսութեամբ համակուելը աններելի տխրութիւն և  
տեսակ մ' ինքնասպանութիւն հատարեց, վտանգի իր  
թէ գեղութեան և թէ կրիցը գիտակցութիւնը ունէր :  
Ուստի որոշեց կռուել մարդկային տարրութիւններու,  
քմայքոտութեան և անդթութեան գէմ : Ղինուել թար-  
մագեղ և պլրագէտ երիտասարդուններու գէնքսիլը,  
և ըլլալ կենաց պայքարի ասպարէզին մէջ քաջալանջ  
զինայրուէի մը : Հեղինէ ստէպ կը հագուէր կը զար-  
դարուէր, կը շքուէր : Արդուզարզի անուրանալի ճա-  
շակ, նաև նորոյթի և վայելչութեան արուեստադիտա-  
բար հետեւելու ճարտարութիւնը ունէր : Հայ ընկերու-  
թեանց մէջ իր վրայ խօսուելը, բամբասուելու հաւա-  
նականութիւնը, զրպարտութեան ենթարկուած և կոս-  
կանելի կին մը հանդիսացած ըլլալու վտանգը աս ո-  
չինչ գրեց : Սոնն չարաթ քանի մը անգամ տունէն  
գաւրս կ'ելնէր, իր բացակայութեան վրայ տեղեկութիւն  
և բացատրութիւն ստանալն անկարելի եղած էր : Ոչ  
ոք գիտէր ներս ո՛ւր երթալը և ուսկէ՛ վերագոռնալը :  
Կը կարծուէր թէ ինքն ալ համարձակութիւն չունէր  
խոստովանելու իր այցելութեանց գլխաւոր շարժառի-  
թը : Այսպէս վարուելով և հասարակաց կարծիքին կա-

րևորութիւն չտալով եղաւ յիրաւի կամ յանիրաւի  
կատակածելի, և չարախօսները կը կարծէին թէ կիւ-  
աշխարհի վերաբերող արանց և կանանց ընկերութիւն-  
ներուն մթին և լռին խաւերուն մէջ Հեղինէն սկսած  
է սողուկիլ, բայց նէ բոլորովին անտարբեր կերևար այս  
տեսակ չողմոզութեանց (cancan) և զրպարտութեանց  
նկատմամբ : Թէ՛ իր ամուսնութեան և թէ՛ վիպային  
սիրահարութեան և սիրագործութեան մասին ստացած  
փորձառութեամբը, հետութեամբը, բարձր մտայնու-  
թեան և նորածն ազատասիրութեան մը ներգործու-  
թեամբը անտիական կիներու յատուկ հասկատութեան  
և պարկեշտութեան զգացումներուն հրաժեշտ տուաւ,  
և իր փիղիզական կատարելութեան, վառաւորութեան  
տիրապետութեամբը տրիպային նորանոր վայելումներ  
հնարելու ջանք ըրաւ : Ահա այս յառաջադրուիւն-  
ներով էր որ դիմակաւոր պարահանդէսը եկած էր իր  
բարեկամ Սեպուհ թօրփիլիանին հետ : Հոն գտած էր իր  
զրուժան սիրողը, անոր Օր. Շահնուբեանին մօտ դե-  
գերուցները, չողքօրթութիւնները, նենգալի շարժու-  
ձեւերը նշմարած, և թօրփիլիանին հետ ունեցած նորա-  
ծին և բարեկամական յարաբերութեանց չնորհիւ Հո-  
վիկին սո՛ցեալ և ներկայ կենաց անառակութեան ման-  
րամասնութիւնները և ապիրատութիւնները իմացած  
էր :

Հեղինէ չուչացաւ համակրութեամբ վարուելու Սե-  
պուհին հետ, որ քաջալանջ և բարեկիրթ երիտասարդ  
մ'է, և ունի զգայուն և սիրուն կնիկէ մը գնահատ-  
ուելու արժանի և բազմաղիմի ձիրք, նաև Մէֆիսթէ-  
լոսեան ճարտարամտութիւն և դիմակաւորութիւն :  
Նէ փութաց ևս քան զևս աւելի մտերմական յարա-  
բերութիւններ հաստատելու այս նորածին իրահարին  
հետ, և անոր տիրուէին հանդիսանալու իր հրապոյրնե-  
րուն ազդեցութեամբը :

Սեպուհ թօրփիլիան ուսանողութեան և ծայրայեղ  
կնասիրութեան կեանքին մէջ հեռատեսութեան և խո-  
հեմութեան անհրաժեշտ պարտք սեպած էր լուրջ մշա-



կութեամբ բարձրացնել իր մտայնութեան մակարդակը .  
 և այս նպատակաւ Բարիդի ազգային մատենատունը .  
 թանգարանները . յաճախել , օրերով զրտադիլ պատմա-  
 կան , մարդարանական , կնարանական և ընկերվարա-  
 կան երկերը կարդայ լրջօրէն և ուշադրութեամբ , բա-  
 ոին ընդարձակ նշանակութեամբը սիրոյ և ընտանիքի  
 վերաբերող մատենաները հետաքրքրութեամբ քննել , և  
 այսպէս իր հմտութեան և ուսմանց սահմանը ընդար-  
 ձակել նորանոր տեսիլներով և հաստատ սկզբունքնե-  
 րով : Նպատակին հասած էր , և իր մտայնութեան վի-  
 ճակին այս բարդաւաճումը յայտնի ըլլալով իր բարե-  
 կամներուն և բարեկամուհիներուն , օր մը ընտանեկան  
 գումարումի մը ժամանակ Հեղինէ՝ Տիրանեանին զըր-  
 դումովը հրաւէր ընդունեցաւ կնապաշտութեան և կը-  
 նասիրութեան վրայ իր կարծիքը յայտնելու :

— Ըստ իս , սկսաւ խօսիլ Սեպուհ , մեծ տարե-  
 ղութիւն կայ այս երկու զգացմանց նշանակութեան  
 մէջ՝ թէ հին պատմութեան և թէ արդիական կեանքի  
 տեսակէտով : Կնասիրութիւնը մարդկային առնական  
 կազմութեան և բնաւորութեան անխուսելի պիտոյից  
 մին է , և այս ճշմարտութիւն մ' է հասարակ և հան-  
 րածանօթ : Կեղանի և ծաղկահասակ կին մը սիրելը  
 բնութենէն սիրելու կարող և կարօտ ամէն այրերու  
 շնորհուած յատկութիւն մ' է ընկերային բարեկարգու-  
 թիւնը . անհատական անդորրութիւնը և բարօրութիւնը  
 հաստատելու , ապահովելու ձկտող պայմաններու ներ-  
 քե :

Ասանց մին է միակնութիւնը գրեթէ ամեն քաղա-  
 քակիրթ և ստուգապէս լուսաւորեալ ժողովուրդներու  
 մէջ : Միակին կամ միայր անձերն անշուշտ տ'ղ տեղ .  
 դուցէ ամենուրեք այրասիրութեան կը հետին ապօրի-  
 նի և գաղտնի կերպով հեշտութեան վաշխումներու գա-  
 նազանութեան մէջ աւելի գոհունակութիւն , երանու-  
 թիւն փնտռել և գտնել կարծելով : Բայց՝ ինչպէս կըսէ  
 երեւելի պատմիչ և կնարան Միշլէ՝ «Մարդկային ընկե-  
 »  
 « րութիւնը հիմնուած է ընտանիքին , ընտանիքն ալ »

« սիրոյ վրայ , որուն բնական առարկան է կինը » : Սրդ  
 ընկերային բարեկարգութիւնը . և վարուց ու բարուց  
 մաքրութիւնը պահելու , և զեղխութեան , չուսյութեան ,  
 ընտանիքի կործանումին տեղի չտալու համար ապօրինի  
 բազմակնութիւնն արգլլուած է ամէն ազգերու մէջ :  
 Սակայն այս արգելքին հակառակ վարուողներ կան գրե-  
 թէ ամենուրեք : Ստոնք կրնան անուանիլ կնամոյ . բայց  
 ոչ կնապաշտ : Անաստուածութեան , կոսապաշտութեան  
 ժամանակներու խաւարին մէջ , մասնաւորապէս Մայ-  
 բագոյն Արեւելից մէջ մասոնական կրօնքի ծածուկ սկզբ-  
 բունքներուն , արարողական դադտնիքներուն և թաղուն  
 խորհուրդներուն մասնակցող անձինք կըր բարոյապէս  
 մեծ ազդեցութիւն ունէին կառավարութիւններու և  
 ժողովուրդներու վրայ , գտնուած են փառամոլ և անձ-  
 նական նկատումներու հետամուտ մարդիկ , ուք կինը  
 այրին զերիչխանուհին . աստուածուհին հոշակելու և  
 կրօնապէս պաշտելու հրաւէր կարգացին տգէտ և կռա-  
 պաշտ ժողովուրդներու : Սյս մասին լաւօգոյն կը հա-  
 մարիմ Իրջու անուն արքայազուն և զահաժառանգու-  
 թեան հետամուտ անձի մը հետագայ խօսքերը , զօր կը  
 քաղւմ Մարգ Սօնիէլի La légende des symboles philo-  
 sophiques, religieux et magoniques անուն զարմանալի  
 և հօր միտքերու հպելի մատենանէն . «Ինչո՞ւ , կըսէ Իր-  
 շու , կը պաշտէք Իզվարան , որ արուին խորհրդանշանն  
 է : Ինչո՞ւ չէք պաշտեր Բագրատին , որ է կինը : Միթէ՞  
 գերազանցապէս աստուածուհի չէ կինը : Իր չրթունքը  
 ուրախութեանց բաժակն է . իր մարմինը սքանչալման  
 սրբարանն է , և իր աչերը լի են լոյսով մ'որ ամէն ա-  
 ոաւօտ երկնային կապուտազեղութիւնը փաշխացնող լոյ-  
 սէն աւելի անոյշ է : Կինը կը ներշնչէ սէրը և կը ներ-  
 փչէ ցանկութիւնը : Իր համբոյքը կը ջնջէ բոլոր սխտերը  
 այս աշխարհն մէջ : Իրեն հետ փարիլը քեզ կը մոռցնէ  
 ժամանակին Լութիւնը : Կը թուի քեզ թէ կնոջ հետ  
 գիրկնիցխառն ըլլալով կը մասնակցիս յաւիտենութեան ,  
 կը թուի քեզ թէ ներս հետ կը թափանցիս անհունու-  
 թեան : Պէտք է ուրեմն պաշտել կինը » :



Մասօ՛ն ական խորհրդագէտներու (initié) ժողովին առջև Իրշու ամբաստանուելով երբ հրաւիրուեցաւ իր հակընկերային ամբարշտութեան գաղափարները ետ առնելու, պնդեց անոնց վրայ և պահ մը լռեց: Նախապատմական աւանդութեան մը նայելով եղաւ ժամանակ մը, ուր կինը սկսաւ պաշտուել իրր զիյուեհիներուն գերագոյնը՝ կախարդներու և մոգերու քարոզութեամբն ՚ի Հնդկաստան և այլուր: Այս արքայազուն Իրշուն որ կնապաշտութեան և բազմակնութեան առաքեալն էր, միակնութեան և ընտանեաց պաշտպաններուն առարկութեանց և պատճառարանութեանց նետագայ կերպով պատասխանեց՝ իր լռութիւնը խզելով:

«Բնութիւնը մեր մայրն է, և մեր պարտքն է պատուել զայն: Այս աշխարհիս մէջ կինը բնութիւն մարդ-«միտաւորութիւնն է. կինը, որ մարդկութեան մայրն է, «Ահա այս պատճառաւ կինն այրէն առաջ պէտք է որ «պաշտուի իրր կենաց աղբիւրը: Եւ ճիշդը խօսելով ՚ի նշ «է բնութիւնը, եթէ չէ յաւիտենական սիրահար մը: «Բնութիւնը միայն մէկ բանի վրայ կը մտածէ, այսինքն «կը մտածէ սիրաբար փարիլ, և իր մէն մի սարսուռն «ոչ այլ ինչ է բայց եթէ սիրաւէտ ստնգանք մի: Անոր «օրինակին հետեւելով արք կը պարտաւորին սիրել, ա- «նընդհատ սիրել: Փարիլը պէտք է որ անոնց օրէնքն «ըլլայ, պէտք է որ սիրային համբոյրն անոնց պաշտա- «մունքը ըլլայ, և սիրագործութիւնը (acte d'amour) ի- «քենց բոլոր արարողութեանց վսեմագոյնը: Ուստի կի- «նը կը պարտաւորի խորանին վրայ ելնելու և նուիրել- «լու իր մերկութիւնը բազմութեանց պաշտումին: Իր «մարմինը կը պարտաւորի ըլլալ քնարը, զոր մարդս «պէտք է որ մոլեգնաբար նուագէ և որուն նուագային «չարժումն անասելի սարսուռով մը կը ցնցէ սիրտերը: «Ի՞նչ հարկ ուսումնասիրելու, աստղերուն նայելու, «երկնից անհունութիւնը խուզարկելու քանի որ անհու- «նութիւնը ըմբռնելու համար կը գտնէ գայն կնոջ համ- «բոյրին մէջ (1) »:

(1) Տես Մարգ Սօցիէ:

Բայց մենք կը կարծենք թէ այս սանձարձակ և հա- կընկերային ամբարշտութեան սաստկութիւնը մարտելու կարող չկայ տակաւին զօրաւոր ստամոքս մը, վասն զի հանճարեղապէս մշակուած հզօր միտքն ալ անշուշտ կը մերժէ լեզուային և մտային այս յաւակնութիւնները: Մասօններու խելամուտներուն ժողովը նկատելով թէ Իրշույի այս այլանդակ և անօրինակ դաղափարներուն ժողովրդոց մէջ ընդունուելով և տարածուելովն լնկե- րային մարդը պիտի ճնշուի, բոջխտնութիւնը պիտի վերածնի, ընսանիքը պիտի կործանի, բազմակնութիւնը պիտի հիմնադրուի, և կինն ալ որ կուռք է՝ ընտանե- կան յարկին քրմուեհին ըլլալէ դաղբելով, պիտի ըլլայ անդունդն, ուր այրերն իրարու վրայ պիտի խուժեն, թէ ան ատեն կնոջ մարմինը կատաղի վէճերու առար- կայ պիտի հանդիսանայ, և թէ պատժազմը յարութիւն պիտի առնու ներա թասուն մարմնոյն վրայ, որոչեց աքսորել և պատժել Իրշուն»:

Սեպուեհին ունկնդիրներուն մէջ արական սեռի վե- րաբերող քանի մ'երիտասարդներ համարձակեցան Իր- շուին գաղափարներուն հաւանիլ, իսկ կիններուն մէջ փոքր ինչ վարանումով մասնակցողներն եղան Հեղինէ և Սիրուն: Բայց Սեպ ւն, որ սկսած էր սաստիկ սիրել Հեղինէն կարծես տպաւորուելով Իրշուի մտային ապե- րասանութիւնէն և յանդգնութիւնէն զգաց թէ զմայելի է իրեն համար Հեղինէին պէս գեղամարմին սիրուհի մը, և ըսաւ ինքնին թող ըլլայ իմ տիրուհիս և իշխանու- հիս, իմ ալ ուզածս այս է: Հետզհետէ զրկեց այդ գե- ղանի սաղանուհիին սիրագիրներ՝ առանց գրաւոր պա- տասխան առնելու, նաև ծաղկեփունջեր, մշտնջնաւոր հաւատարմութեան և գերութեան խոստումներ ընելով, ներա ապրտղային մթութիւնը փարատելու յանձնառու ըլլալը երզումներով հաստատելով: Այսպէս վարուելով ինքն ալ սաղայէլէ առաջնորդուած և խրատուած սի- րահարի մը զերը կատարած եղաւ, և յաջողեցաւ երսն- դագին սիրուելու Հեղինէէն որ իրր յաջողակ երաժըշ- տագէտ իր սովորական վարպետութեամբը ու սատա-



նութեամբը յետագայ հանելուկի ձև ունեցող գիրը  
զրկեց Սեպուհին :

«Կը նուիրեմ քեզ, որ սաղան մ'ես, խիտա նայ-»  
«ուսած մի, հաւատարմութեանդ ալ յաւիտենութիւնը»  
«խակ անհաւատարմութեանդ արհամարհանք և ոչ այլ»  
«ինչ, և ոչ իսկ ցաւ մը, տրտօտլ, երբէ՛ք: Կը նու-»  
«իրեմ թողունին կանանչագեղ սատ մի՛ մնչելու հա-»  
«մար, սիրոյ՝ արուփուն սիրտ մը՝ անդ պատասպարուել-»  
«լու համար, շանթին՝ գազաթ մը որպէսզի գարնէ»  
«սիրավառ աչքի հոգի մը՝ զայն լափլիկելու համար...»  
«Սէրը ձայնաշար մէ՛. որուն յետին խաղն անհունու-»  
«թեան մէջն է: Պատրանքը՝ զերեզմանէն կրկնուած»  
«երաժշտալին սխալ համաձայնութիւն (accord) մ' է:»  
«Գերեզմանու ալ մշտնջենական վախճանին բռնն է:»  
«Երբ հոն անպաւորութիւն, որ և է ձայն չպիտի գոյ քե-»  
«զի Մ'նաս բարեաւ, բայց հարկն է այս:»

ՏԻՐՈՒՆ ԷՆԳ.

Սեպուհը հաստատապէն չզիմայելու և իր կենացը  
հետ անքակտելի կապերով կաշկանդելու զխաւարու-  
թեամբ և սաղայեկանութեամբ հնարուած էր այս  
գիրը: Սեպուհ սոյն սիպիլական տողերուն վրայ բա-  
ւական ուղծապէն ետք երբ ասիթ ունեցաւ Հեղինէին  
մտեղ և շքեղ մարմնոյն հրապոյրները զուշակելու տե-  
սակցութեան մը ժամանակ, երբ ներս վարի և վերի  
ընտան կատարելութեանցը զխոտակցութիւնը ունեցաւ,  
երբ մանաւանդ կրցաւ Շ. Պատրէր բանաստեղծին սէս՝  
ըսել թէ ներս «վզին և կըրծքին բաց թողուած մասին  
ինչպէս նաև կիսովին մերկ ու փառաւոր թեկերուն  
«սիրտ, յղուտ և փայլուն միտք խաճուտելու հրաւեր-  
կը կարգայ» երբ սուգեցաւ իր նայուածքը ներս թէ՛  
սիրուէտ զանձերով խնդրուած լանջին զիւթական ան-  
դունդը, և թէ՛ թեկերը ուսերուն կցող անութիւններուն  
ոսկեգոյն ստեղծելով վսրագուրուած խորչը, երբ ա-  
ռաւ ներս շունչը, որ իր բանահիւսական բացատրու-  
թեան համեմատ՝ խնկաւէտ և անոչարկիր էր, և երբ

Հեղինէին Բանագրաթ մը հրատարակու և մոլորեցնելու  
կարող և պչրասիրարար կազմուած ժպիտն իր հո-  
գոյն վրայ ցոլացող լոյսին պայծառութեամբը՝ իր սրտին  
ամբողջեան խաւարը փարատեց, եղիցի լոյս. գոչեց  
խղճովին և իւրովի Սեպուհ, և իր խնկամտնը հրահրե-  
լով դնաց ճնրաղբեց Հեղինէին առջև՝ անոր սիրամոյր  
գերին ըլալ, անոր կամքը իր կենաց անբռնարարելի  
օրէնքը նկատել և հետը օրինաւորապէս ամուսնանալ  
խոտանալով, Հեղինէ հասած էր արդ իր նպատակին  
որ էր ապահովել և հովանաւորել իր ապագան և Հո-  
վիկէն խարուած և լքուած ըլլալուն վրէժը լուծի՝ ա-  
նոր բուռն նախանձը գրգռելով և Օր. Շահնուրեանին  
նկատմամբ լարելիք գաղտնի մեքենայութիւնը գե-  
րեկելով:



Պ. Լ. ՈՒՆ ԵՆ.

Ս Ի Ր ՈՒ Ն Շ Ա Ն Ն ՈՒ Ր Ե Ա Ն

Ս Ի Ր ՈՒ Ն անշուք ալ պարկեշտ և միջին դասու վե-  
րաբերող ընտանիքի մը միածին աղջիկն էր: Հայրը  
փանաքի գրածագլուխի մը տէր, պատուակեր, այլ իր  
աշխատութեան վարձատրութիւնը չգտնող վաճառա-  
կան մ'էր. Հիւանդացաւ համաճարակ ախտի մը մի-  
ջոցին և մեռաւ՝ անոք և անօգնական թողրով իր կինը  
և Սիրուհը, որ ձեր հօրեղբոր մը խնամակալութեան  
յանձնուած մանկուհի մ'էր: Մանկութեանը ժամանակ  
նախակթրական դպրոց մը կը յաճախէր: Ընկերուհի-  
ներուն հետ խոտիւ կը վարուէր, և ճանչուած էր իբր  
կամքոտ, սրամիտ, այլ յամառ և կուռարար: Երբ  
պատանութեան հասակը մտաւ, խորհելու, հասկնալու  
և զգալու կարողութիւնը սկսաւ ունենալ: Դիտեց ա-



Նստոն թէ իր ընտանիքը մարդկային ընկերութեան վարի խաւերուն մէկին կը պատկանի: Յառաջադրեց վերագոյն դասի մը բարձրանալ: Կը նշանակէր այս մտնել կեանքի պայքարին ասպարէզը: Բայց մտածեց թէ հոն նստուողին և կուուողին պարտքն է յաղթել և ոչ թէ յաղթուիլ՝ իր նպատակին հասնելու համար: Հարկ էր ուրեմն զինուել, ըլլալ ուժեղ և դօրեղ և բաւական չհամարիլ իր սեռին յատուկ զէնքերը, որք են մարմնային գեղեցկութիւն, պաճուճանք, պչրանք, հմայք և քմայք: Զգաց թէ այս կենցաղի ռազմա դաշտի կտրիճներուն յատուկ զէնքը կը դարբնուի մասնաւորապէս այն վսեմ և նախախնամական դարբնոյլին մէջ, որ կանուանի ուսումնարան: Թէ մարդկային միտքը և սիրտն այս փրկաւէտ դարբնոցին սալին և կոտին ներքե ծնծուելով և ձեւաւորուելով կը կազմուի կը վերածնի այն թանկագին գործիքներու շնորհիւ որք կանուանն յառաջողիմական գաղափարներ և ընտիր ըզգացումներ: Խորհեցաւ թէ այսպիսի կատարելութիւններ և ձիրք իրեն առաջնորդ ունենալով պլտի յաջողք արիւրար կուուելու, տգլտութեան զէմ մաքառելու, մարդկային միտքը կրծող և ամլութեան դատապարտող նախապաշարութիւնները, աւելորդապաշտութիւնները, յետադիմական գաղափարները ջնջելու և օրին մէկ ըլլալու խելանի և անուանի մեծուհի մը: Պաշտպաններու և իր խնամակալին օգնութեամբը յաջողեցաւ օտար և բարձրագոյն վարժարանի մը մէջ ընդունուել իրը գիշերօթիկ և համալսարանական ծրագրի մը ուսումները աւարտելէն և մարտելէն ետք ելաւ դնաց ուսումնաւարտ և պսակաւոր ուսումնականի մը վկայականով: Բայց իր ուսմանց և գիտութեանց ազդումով Սիրուն ինքնահաւան, սկեպտիկեան և աւելի բռնասէր և կամքոտ աղջիկ մ'եղած էր: Քանի մը օտար լեզուներով գրելու և խօսելու կարող, հին և արդի ժամանակներու պատմութեան և օտար մատենագրութեան հմուտ, քաջ նուազածու, բանահիւսական յուրթի երեւակայութեամբ օժտուած, նաև յաջողակ և վարպետ զերծակի մը պէս

հազուստ և կապուստ ձեւիւ և կարելու կարող արմնունհի մ'եղաւ: Կարծեց սակայն թէ կեանքը կրնայ ուրախութեան և երանութեան հիւս մ'ըլլալ: Թէ կին մը ամուսնութեամբ փոխանակ այրի մը հու հպատակը, նաև երբեմնակի գերին ըլլալու: Իրաւունք ունի տիրելու ամուսինի մը վրայ որ ներա հեշտութեան և երջանկութեան վրայ անդու հսկէ՝ առանց ալլասիրութեան, առանց անհաւատարմութեան և մատնութեան, և առանց զրժելու պսակաւորութեան միջոցին ըրած ուխտը և երդումը: Թէ այր մ'այսպիսի անձնուէր և հաստատամիտ ամուսին մ'ըլլալու համար հարկ էր որ ան իր մինչև ամուսնութեան օրը անարատ և անեղձ պահած ըլլար իր սրտին առնական կուսութիւնը, սիրային և վիպային կեանքի յեղեղուկ և վտանգաւոր պատահարներուն օտար միացած և միայն իր բարոյական և նիւթական շահերով զբաղած և կնոջը խնկարկուն և սիրախնդիր հպատակն ըլլայ: Ի՞նչ երեւակայութիւն և ի՞նչ պահանջութիւն:

Սիրուն նրբամիտ, բայց տակաւին տակաւ ինչ պարզամիտ, նաև բաւական սմտեղուկ, ծածկասիրտ, գաղտնապէս նենգասէր, ինքնապաշտ և զիմակաւոր երիտասարդուհի մ'եղած էր: Զէր հաւաներ բնաւ սահմանարկելու իր մտային կարողութիւնները և սրտին բուռն զգայութեանց զեղումները, բայց կը պահէր զանոնք՝ առանց յայտնելու ոչինչ: Իր բոլոր ջանքերը և ուշադրութիւնը իր բարօրութիւնը և կենացը անդորրութիւնը ապահովելու ծառայող միջոցներուն կը յատկացնէր: Պարկեշտութիւն, համեստութիւն, կնային ամօթխածութիւն, խոնարհամտութիւն, բողոքին հաւանական ձախողանաց զէմ համակերպութիւն ունենալ կը ձեւացնէր ը՛կերութիւններու և հատարակութեան մէջ: Ամուսնութեան հետամուտ անձերու առջև կասկածելի և գայթակղելի հսկատուելու և իր նպատակին շուտով հասնելու համար հոգ կը տանէր: Իր նպատակն էր սանձարձակ միտք ու ազատ ու անկախ սիրտ մ'ունենալ, միամիտները իր հմայական հրապոյրներու ուղկոսմին մէջը



անուշ, և սիրագրգիւ կամքոտութեանը ներքև պրկել իր կրթութեան և ուսմանց շնորհիւ :

Օտար վարժարանէն ելնելն ետք Հեղինէին հետ տեսնուած և մտերմական յարաբերութիւն հաստատած էր : Եթէ Սիրունին միջավայրն ըլլար հին ժամանակներու Սթէնքը կամ Կորնթոսը, չպիտի վարանէր ապրելու ոչ թէ Բարիղեան Քօֆօթի կամ Լօրեքի մը, այլ հելլէնական էքսերի մը պէս, հետեկով այն երեկի զեղազան, բանահիւս, փիլիսոփայ, արուեստագէտ և երաժշտագէտ հելլէնուհիներուն որք իրենց այս յատկութիւններու և մարմնային կատարելութեանց ազդեցութեամբը կը յաջողէին թագաւորներու, իշխաններու, պետական մարզերու սիրուհիները, տարփուհիները, ամուսիններն ըլլալու, ստանց անառակութեան և զայնակողութեան : Օր. Սիրունին գլխաւոր նպատակն էր արդ ստանալ բարեսիրտ, ազնիւ, այլ հարուստ և իր քույրային շուքին տակ հեշտաբար ճգնորտուելու և հաւատարիմ գերին մնալու ընդունակ էրիկ մը, և անոր գերիշխանուհին ըլլալ իր ատնորսային թէ՛ ընական և թէ՛ արուեստական հրապոյրներուն զօրութեամբը : Ահա այս պատճառներով եղած էր նէ հրեշտակի - սատանի վտանգաւոր և զիմակաւոր խառնուրդ մ'իւր սկզբունքներովը, գաղափարներով, և անխառնովաների յառաջադրութիւններովը : Իր տնական զբաղումներէն աւելցած ժամանակը յատկացուց ազգային և օտար անուանի հեղինակներու երկերը կարդալու և ուսումնասիրելու : Իր միտքն և զգաւ զրական պատմութեան թանգարան մը : Իրանէր թէ Ռուսահայ և հոչակաւոր գրագէտ և բանաստեղծ Միքայէլ Նայպանտեանց ձարային բանակարութեան մի նահատակն եղաւ, թէ հայութեան պարծանքը հանդիսացող Ս. Ոսկանեան, Մատթէոս Մամուրեան, Ռէզէոս Պէրպէրեան և այլ մի քանի նշանաւոր գրագէտներ իրենց թէ՛ հեղինակութիւններով և թէ՛ թարգմանութիւններով տանային զպրութեանց պատմութեան էջերը փառաւորեցին : Ինչ նուազ ետանդով կ'գրադէր օտար հեղինակներու հրաշակերտներուն ընթերցումովը Մանօթ

էին իրեն այն մեծ հանձարներն որք կ'անուանին Վօլթէր, Ժան - Ժապ - Բուսօ, Վ. Հիւլօ, Լամարգին, Ալֆրէտ տը Միւսէ, Շէյքսպիր, Պայրըն Տանթէ, Կէօթէ, որք մարդկային սևութ բուսաւորութեան և բոլոր աշխարհի քաղաքութեան ծառայեցին, և այսպէս յառաջադիմութեան և հանձարեղութեան բանթէնին փառքը և պարանքը հանդիսացան : Սորին ուշադրութեամբ կուսումնասիրէր նաև Տիկին Տը Սթաէլի երկերը, և կը հիանար քաջասիրտ և ազատամիտ հեղինակին վրայ, որ մինչդեռ աշխարհ համայն ծնրադիր, երկրպագու և խընկարկու էր Նարոյէոն Առաջինի առջև՝ եղաւ մին այն վեցը կորովամտ ազատասէրներուն, գրագէտներուն և բանահիւսներուն, որք կանգուն պահեցին և չհաւանեցան կակղելու և ծոելու իրենց ողնասիւնը զօրսիկեան բռնակալին առջև : Կ'զմայէր Տանթէլ Սթերնի վրայ, որ Յրանսայի 1848 ի յեղափոխութեան մի շքեղ պատմութիւնը գրած է, և որ «Ճշմարտութեամբ զէպ Ազատութիւն» նշանարանը տուաւ Եւրոպայի հին գահերը սասանող Ժ. Մաժմինին պէս գրեթէ ամենուրեք մահուան դատապարտուած յեղափոխական պարագլուխի մը : Ժօրժ Սանի ոճին և շեղուին քաղցրութեան հրաշակերտները նկատուած երկերն անձանօթ չմնային Սիրունին, ոչ ալ ներս սիրահարութեան և վիպային կեանքը Ալֆրէտ տը Միւսէի հետ, և կը դարմանար իմանալով թէ այս անուանի հեղինակուհին Վենետիկի մէջ մտոցաւ Յրանսայի երեկի մի բանաստեղծին սիրուհին և տիրուհին ըլլալը իր սիրտը Իտալեան բժիշկի մը նուերեւրով . . . : Այս ընթերցումներուն, ինչպէս նաև Հեղինէին և ուրիշ բարեկամուհիներու և կարգելի կ'ինքու հետ ամուսնութեան հետամուտ երիտասարդներու յատուկ ապրելակերպին և ինչ ինչ հաւանական իրողութեանց վրայ ունեցած մտերմական խօսակցութեանց շնորհիւ և ծածկարանական ակնարկութեանց ազդումովն Սիրունին կուսական մտքի բնական պարկեշտութեան և պարզութեան մնացորդ մասն ալ յօղս ցնդած էր արդէն երբ ընդունելութեան մասնաւոր օր մ'որոշեց, և իր ընդար-



ձակուած յարաբերութեանց հետեանքովը սկսաւ ընդունիլ հայ և օտար ջոջերու, ինչպէս նաև նշանաւոր և տաղանդաւոր անձերու այցելութիւնը, և իր հիւրանմեծարութեան ազնիւ և ախորժելի կերպերով, սրամտութեամբը, լեզուանութեամբը և կամակատարութեամբը գրեթէ ամենուն հաճելի և համակրելի եղաւ :



Գ Լ ՈՒ Խ Զ.

Վ Ա Ր Ա Ն ՈՒ Մ Ե Ի ՈՐ Ո Շ ՈՒ Մ

ՍԻՐՈՒՆ Շահուերեան ընդունելութեան օրն իրեն այցելող Հովիկին անցելոյն և ներկային վրայ տեղեկութիւններ ստացած, և պարահանդէսին մէջ անոր տեսակցութեան և քաղցրատոյր խօսքերուն ախորժելի տպաւորութիւնը սկսած էր մտնալ և անտարբեր ըլլալ երբ օր մը Հովիկին կողմէն Մեպուն ներկայացաւ Սիրունին մօրը տիկին Աշխէն Շահուերեանին, և առաջարկեց որ հաւանի իբր ամուսին նուիրելու անոր իր աղջիկը, մի առ մի թուարկելէն ետք կհասնող թարեկամին նմանորական բարեմասնութիւնները, և իր կինը երջանիկ ընելու երևակայական կարողութիւնը :

Սիրուն իմանալով Մեպունին միջամտութեան առարկան, ըսաւ իր մօրը թէ իբր մայր իրեն խրատ և հրահանգ տալու իրաւունք ունի, և սակայն խնդրեց որ օր մը պայմանաժամ տայ մտածելու և պատասխան մը տալու համար : Ապա խորհելով մտաբերեց իր ամուսնական ապագային հաւանակութիւնները : Խորհրդակցեցաւ իր սրտին հետ, նամանաւանդ որ Հովիկէն արդէն ջերմագին սիրոյ հաւատովք պարունակող երկու նամակ ընդունած էր, նաև Շարլը Պօտրլէրի Երզ առ Գեղարհիկն անուն չքեղ քերթուածին յետազայ տողերը, որու ըը-

նագիրը արձակ թարգմանութեամբ հանդերձ հոս կը տեղաւորենք :

« Que tu viennes du ciel ou de l'enfer, qu'inporte, O beauté ! monstre énorme, effrayant, ingénu ! Si ton œil, ton souris, ton pied, m'ouvre la porte, D'un infini que j'aime et n'ai jamais connu ?.. »

« Ո՛ր գեղունի, ճիւղաղ անմեղ, ամենամեծ և ահարկու, կամ երկինքէն եկեր ես և կամ դժոխքէն, հոգս չէ եթէ աչքդ, ժպիտդ, ոտքդ կը բանան ինձ սիրելի այլ բոլորովին անձանօթ անհունութեան մը դուռը » :

Բազմիցս կարդաց նամակները, նամանաւանդ Պօտրլէրի բանահիւսութիւնը, զոր Հովիկ վաւերացուցած էր ստորագրութեամբը, և սիրապէս յուզուեցաւ : Խոստովանեցաւ իւրովի թէ ինչպէս հացը ստամոքսին, նոյնպէս սէրը սրտին բնական մեղունդն է : Երկուքին ալ սովարեկութիւնը անհնարին չէ, և ի հարկի այս անօթութեան յագուրդ տալու պէտքն անհրաժեշտ է : Հաստատեց մտովին թէ հետը ցմահ կենակցիլ և կողակցիլ առաջարկող անձը յաղթանդամ, քաջալանջ, ուժեղ և զօրեղ, բարեշնորհ և քաղաքավար, սուր և նուրբ մտքի տէր երիտասարդ մ'է, առանց սակայն ուղիղ դատողութեան ընդունակ ըլլալու :

Սիրագիրները և Պօտրլէրի հիանալի տողերը կարդալով վիպային և բանահիւսական վերագաւառները սրանալ, սիրային անհունին կապուտագեղութեան անջըրպետներուն մէջ սաւառնիլ և երանութեան իրականութիւնը վայելիլ սկսիլը զգացո իայց յանկարծ ուշաբրեցաւ : Իրեն երեակայած պանծալի մետային ետեի կողմնուրուագրեցաւ իր անտղօք երևակայութեան առջև : Յիշեց թէ իր սրտին վրայ հսկող անաչառ և դիւրաւ չի համոզուող խնամակալ մ'ունի, որ էր իր միտքը և ուզեց ասոր հետ զգօնարար խորհրդակցիլ և ապա տալ այն որոշումը զոր խոստացած էր մօրը, և որով կախում ունէր իր էութեան կամ չէութեան անեղ խնդիրին լուծումը : Աձագարելովս և զգացումս մղումս



հետեւելովս գուցէ անխոհեմութիւն մ'ըրած և սխալ քայլ առած պիտի ըլլամ: Սորունկ մտնուեքի գնաց և մենախօսիլը շարունակելով՝ «Մի՛ վստահիր սոսաջին զրդուսիդ, որ ուրիշին համար շահաւէտ է» կ'ըսէ թաւրան զիւանագէտն որ Եւրոպայի ամենէն փորձառու և շահասէր զիւանագէտներուն և զիւանագիտութիւններուն կարող էր դան տալու թէ՛ քաղաքական և թէ՛ սիրային կնճիռներու և մեքենայութեանց Վասին, բոսաւ իւրովի:

Սիրուն զիտեց թէ գործնական ճշմարտութիւն մը կայ սահայէլարարոյ զիւանագէտին խօսքին մէջ: Ամուսնանալը, շարայարեց իւրովի, անձս անխախտ և յարատե հաւատարմութեամբ այրի մը նուիրելու ուխտագրութիւն մ'է եկեղեցւոյ խորանին և Աստուծոյ առջև: Այսպիսի անպաշտաւի խոստում մը ուխտ մը ներհուն ուշադրութեան և նախագրուելութեան պայմաններու կարօտ է: Արթիւր Շօրէնհաւեր՝ գերման փիլիսոփայն իսկ՝ կարգուելու հաւանոյ կանանց զգուշութեան և հեռատեսութեան այսպիսի պարտականութիւն կը յատկացնէ: Կարգուելն երջանիկ կամ ապերջանիկ ապրելու հաւանիլ է: Այս է խնդիրը, կ'ըսեն անգլիացիք: Բայց ոչ թէ պարզ, այլ խառն և անոյժ խնդիր մ'է այս: Հոս տեղն է Համլէթին պէս մենախօսելու և ըսելու. «Էութիւն կամ չէութիւն» ակներև ճշմարտութիւն մ'էր էութեան կամ չէութեան խնդիրն որ բոլոր անձկալի հաւանականութիւններովն իր մտքին առջև ներկայացաւ: Հովիկին լաւ յատկութիւնները ծանօթ են ինձ. բայց ծանօթ են նաև իր կեանքի այլանկի չեղումները, զեղծումները, նենգութիւնները: Միտքը մըշակուած, այլ քսակը պարպուած է: Աշխատելէ շախտութող ծոյկըսն չքաւութիւնն՝ ամուսնական երանութեան կապերը շարդ ու բարդ ընող վտանգներուն ամենէն անարկուն է: Տարսկոյս չունիմ թէ Հովիկ այսպիսի պարագայի մը մէջ իր թէ՛ անարժանութեան վիճակէն, և թէ՛ խաղամոլութեան, գինեմոլութեան, կնամոլութեան արտերէն զրդտելով պիտի վտելայ երանութեանս և լքմանս մահահրաւէր զանգակը հնչեցնելու և վերջ

տալու երազներուս: Ենթադրելով թէ այսպիսի անըջային երջանկութեան որոշում տուած ըլլամ, Ամուսնութիւնը կ'սկսի սիրերգութեամբ, կը շարունակուի տաւմով, և երբեմնս կի կը վերջանայ հեծկտուքով: Ամենէն չքաւոր այլ քաջակազմ և նորապսակ ամուսններու մեղրամասային ժամանակի խոճիթը զրախտային բնակարան մ'է, իսկ ետքը կ'ըլլայ ընկերային քաւարան մը: Այս աղետալի հաւսնականութեանց վերևը օրկնի ունինք, ըսուի թերևս: Հոչակաւոր օրէնսգէտ մ'ըսած է թէ օրէնքը արգարութեան սահմանն է. բայց չըսեր թէ ո՞ր երկրին արգարութեան կախարկէ: Արգարութիւնը մարդկային սեռի վրկութեան լծակն է: Առանց անթերի գործադրութեան օրինաց՝ անհարկն են ընկերային աշխարհի բարեկեցութիւնն և անդորրութիւնը: Արդ ինչպէս հին, նոյնպէս արդիական ժամանակներու մէջ օրէնքին կիրարկութեան վրայ անաչ ուսպէս հսկող անձինք բացառութիւն կը կազմեն: Օրէնքը տկարին համար պրոպատեայ ուղկան մ'է. իսկ զօրաւորին համար սարդի ոստայն մի: Գրիստոսի թուականէն 592 տարի առաջ Սնագարսիս փիլիսոփայն այս կարծիքը յայտնած է՝ ըսելով թէ օրէնքը սարդի ոստայն մ'է, որ միայն ճանձերը կը բռնէ, իսկ թռչունները կը թողու որ անցնին: Ամուսնութեան յոռաշարանական և մեղրամասային երանութեանէն ետք ի՞նչ հնարք և միջոց պիտի ունենամ սփոփելու այն ամէն վիշտերս և զարմանելու վընամներս որք պիտի արտադրուին անշուշտ կեանքի խոչընդոտներէն. քանի որ օրէնքի անօրէնութիւնն և անբաւականութիւնն յայտնի են ամէն ողջախոհ միտքերու:

Զգիտեմ. բայց, շարայարեց Սիրուն, քէջ մը ևս խորհելն ետք և ձևքը ճակտին տանելով, ըսուի գուցէ թէ կենաց պայքալի մարտիկներուն մին ալ ես եմ, թէ առանց կնային միջամտութեան և գործակցութեան չիտուած օրէնքն ոչ ալ ինչ է եթէ ոչ արերուն կողմէն իրենց գաղափարներուն և շահերուն համեմատ հընարուած յայթութեան պայմաններու հաւաքածոյ մը ըստ մեծի մասին, և թէ սակայն իրերու այս վիճակին



մէջ առնական սեռին դէմ յաջողութեամբ կրուելու և նպատակիս հասնելու համար արդէն ես այլ զինուած կը համարուեիմ բարձրագոյն վարժարանի մը մէջ ստացած գաղափարներուս և ուսմանցս շնորհիւ : Լա՛ւ, բայց օրինաց թերութիւնը շատ յոյս և լոյս չտար ինձ այս մասին . . . Ուրիշ միջոցներ հարկաւոր են ինձ առնական անիրաւութեանց և մթին ժամանակներու աւանդութեանց խտտութեանց դիմադրուելու և իրաւունքս պաշտպանելու համար : Մարդկային արդի ընկերութեան սովորութիւնները և պահանջումները նկատելով կը պարտաւորիմ խոստովանիլ թէ ստէպ ստիպուած եմ հայելիին դիմելու, հազուատիս կապուտիս պակսութիւնները լրացնելու, շքեղնալու և կնային բռնական տիրապետութեան նպաստող արդուզարդի զինարանին օգնութեամբը պատրաստուելու որպէսզի կենսական կռիւին մէջ կարելի ըլլայ ինձ սեպհական յաղթանակը տանիլ՝ առանց դիմելու ծածկամտութեան, ծածկասրտութեան, նենգաւորութեան, դիմակաւորութեան, սուտ ճշմարտութիւններու, որոնց՝ երեւի կնագէտի մը կարծիքին նայելով՝ զեղազան և թարմահասակ կիները կը դիմեն ամուսնութեան ժամանակ, որպէսզի ապահովեն իրենց ապագան կարելի եղածին չափ : Սիրուն հասաւ սա եզրակացութեան թէ մշակուած մտքի տէր կին մ'իրաւունք ունի ազատութիւն վայելելու, որ անկարելի է առանց անհատական անկախութեան, և թէ այս անկախութիւնն այլ, այսինքն նիւթական կեանքի դժուարութեանց դիմադրելու և յաղթելու հնարաւորութիւնն անընդամենն է : առանց արդիական գերագոյն ոյժին, ոսկիին, թէ ամուսնութիւնը սիրերգութեամբ սկսելով իսկ պէտք է կարգելի աղջկան մը համար իր ապագան քիչ կամ շատ ապահովելու յարուար և շահագիտական գործառնութիւն մը նկատել, քանի որ նա մանաւանդ իր անձէն ի գատ ոչինչ ունի իր օժիտ նուիրելու և օգնելու որու որ իր հետը միշտ և ի մահ կենակցելու և կողակցելու կամք և արժանիք ունի :

Ուստի որոշեց մերժել Հովիկին ամուսնային առաջարկութիւնը : Իմացուց իր մօրն այս որոշումը, պատճառաբանելով թէ Հովիկին անցեալ և ներկայ կենաց ցոփութիւնները, զեղծումները և այժմեայ անարժանութիւնը, որ հաւանականաբար անդամանելի կ'երևար, կարգիլէն զինքը չնդունելու անոր խնդիրը և թեթեւութեամբ ամուսնութիւն ըստած անդունդը ցատկելու և ցմահ դժբաղդ ըլլալու և կամ անպատիւ և անչուք ապրելու : Հաւաստեց թէ պատուոյ և պարկետութեան սահմանէն տոանց զուրս ելնելու պիտի ախտախտի՝ արնական պիտոյքը հոգալով ճանդերձ՝ իր մտական կարողութիւններու բարգաւաճումին յատկացնել իր ամէն ջանադրութիւնները մինչև յաւագոյն պարագաներու վերահասնիլը :

— Խելահասութեան տարիքը ունիս արդ, սիրելիդ իմ Սիրուն, ըսաւ մայրը, վարուէ՛ այնպէս ինչպէս կը պահանջին շահերդ, ճակատագրին սովորական թխամուշութիւնը չըրգոյնելու և փափաքներդ կատարելու համար : Միայն մի՛ մոռնար որ Հովիկ իր չքաւորութեամբը հանդերձ դրամական օժիտ չուզեր :

— Չուզելն իր անշահախնդրութիւնը կը հաստատէ թերևս, ոչ սակայն ատի իր հետը յաւիտեան կապուելու հնամոզեր զիս : Անոր նկարագրին և կարողութեանց վրայ համարում և փստահութիւն չունիմ բնաւ, եթէ ունենայինք անգամ դրամական օժիտ մը տալու միջոցը, չպիտի հաւանէի տալու : Իսկ եթէ ուրիշ անձ մը, սիրոյ և համակրութեան արժանի և աշխատելու կարողութեամբը նիւթական կեանքի դժուարութեանց յաղթելու սովոր մարդ մը համարձակի դրամական օժիտ մը խընդրելու, և եթէ ունենայիր անոր այս փափաքը կատարելու միջոցը, ես վերջնական և անդառնալի կերպով, բայց նաև քաղաքավար և փափուկ ձևով պիտի պատասխանէի անոր թէ ինչպէս ժօրժ վեպեր պատմիչը կը հաստատէ, Գերմանիայի մէջ հին ժամանակ չէ թէ կինը էտատէ, Գերմանիայի մէջ հին ժամանակ չէ թէ կինը էտտակին, այլ էրիկը կնկան օժիտ կը տար : Ուստի դրամական օժիտ մը նուիրելու և այդ կերպով ամուսին մը



գնելու պայմանը չեմ ընդունիր: Եւ իբր օժիտ ոչ այլ  
ինչ ունիմ, եթէ ոչ միայն անձս...

— Ա՞նձդ...: Հա՞պա այդ լաւատեսութիւնդ եթէ  
մերժուի:

— Սիրելի մայրիկ, ամուսնութիւն կոչուած խոր-  
հրդաւոր մետայլին առջևի և ետևի երեսին վրայ բը-  
նական և ընկերային օրէնքէն քանդակուած, այլ մա-  
սամբ իւրիք տեսանելի և ըստ մեծի մասին անտեսանելի  
իրողութեանց հարկաւ և գուցէ փորձառութեամբ տեղ-  
եակ են. բայց կարծեմ թէ ուրիշ մայրերու պէս կը հե-  
տևիս և դուն գրէթէ հանրածառալ սովորութեան մը,  
որ է մետայլին առջևի երեսին պարունակութեան վրայ  
անկեղծարար խօսիլ, իսկ ետևի երեսին անտեսանելի և  
գաղտնի իրականութեան վրայ քանի մը խօսք փրս-  
փսայլ, և մնացածին վրայի վարագոյրը բանալու հոգը  
ապագային և ամուսնական փորձառութեան թողուլ:  
Այս մասին հետզ համակարծիք չեմ: Տարիներէ ի վեր  
կը թափառիմ մարդաբանական, սիրազիտական, կնա-  
բանական, ամուսնական, պատմական, իմաստասիրա-  
կան լուրջ և ընտիր մատեաններու մէջ, և անոնց ըն-  
թերցումովն ու մտնողովը կը գոհացնեմ միտքս: Ա՞նձդ,  
կը հարցնես ինձս Այո՞, անձս, կը պատասխանեմ քեզ,  
որ անշուշտ գիտես արդէն ըսելիքս: Արանց եթէ ոչ  
ամէնուն, գէթ մեծամասնութեան կարգուիլ ուզելուն  
առաջին և գլխաւոր շարժառիթն է բնական և անդի-  
մադրելի պիտոյք մը գոհացնելու համար իրենց կամքին  
և յօժարութեան ներքև միշտ պատրաստ և գուցէ հլու  
և գեղակազմ էգ մը, կին մ'ունենալ իբր հաճոյց և  
հեշտութեան գործիք: Դիմակաւորուիլը, ծածկամտու-  
թիւնը, անօգուտ խոհեմութիւն մը յարմար չեն նը-  
կատեր իրական ճշմարտութեան քօղը բանալ: Ըսել  
կուզեմ թէ կնախնդիր մարդու մ' ամուսնութեան մէջ  
բնտաւած և ուզածն է գլխաւորապէս կնոջ մատաղա-  
հասութիւնը, չնորհագեղութիւնը և բարեկազմութիւնը:

Բազանիքի ընկերուհիներս, որոնց մէջ կան անկեղծ-  
ներ, կը հաստատեն խնդալով, ուրախանալով թէ Պը-

րիւնս Մեյերին La grace féminine (կնային չնորհագե-  
ղութիւն) անուն արուեստագիտական, պատկերազարդ  
և կարծես հաղուագիւտ գիրքին մէջ լուսանկարուած  
և տարուած մերկանդամ կիներու և աղջիկներու ամենէն  
չնորհալոյսին հետ մարմնովին բազդատուելու, չափուե-  
լու վախը չունիմ: Հոս, մայրիկ, անօգուտ չեմ համա-  
րիր ըսելը թէ այն երեկի՛ գերման փիլիսոփայն, որուն  
անունը յիշած եմ արդէն, և որուն ամէն կարծիքները  
չեմ ընդունիր անշուշտ կուրօքէն և անխափր, այսինքն  
Արթիւր Շօքէնհաուեր կիներու և անոնց ամուսնութեան  
վրայ սանձարձակ ազատութեամբ գրած է մատենիկ  
մ' որուն մէջ կարդացուած յետակայ տողերն իրակա-  
նութեան և բանասիրութեան համաձայն կերեան ամէն  
անկողմնակալ և ճշմարտասէր անձերու: «Այն իրապէս»  
«Այսպէս մեկ բան կը պահանջէ հետը ամուսնացող կը»  
«Նիկիէն: Հետեարար կիները կը պարտաւորին այնպիսի  
«Կերպով վարուիլ և կարգապարտութիւններ ընել որ այ»  
«Երն անոնցմէ այն միայն մեկ բանը ստանալ կարե»  
«Նալու համար պարտաւոր են յանձնատու լրջու»  
«անոնց և զաւակներուն խնամակալութեան: Այս կար»  
«գաղութիւններէն կախում ունի ամէն կիներու երա»  
«նութիւնը»:

Հայելիս կըսէ ինձ, մայրիկ, շարայարեց Նիրուն քիչ  
մը և հոսմեստապէս ժպտելով, թէ ենթադրութեանդ  
չափ մերժելի, անգոսնելի չեմ: Այ գո՞նջ եմ կամ հե-  
բատ, ոչ ալ շախն կամ միակամի: Դէմքս ալ անչնորհ  
և խորշովուտ, քիթս ու բերանս ծուռ ու մուռ չեն:  
Չեմ վախնար ծիծաղելու քանի որ ակամներս մանրա-  
ձև և սպիտակ են. չինձու չեն, և քանի որ ոսկերուտ  
և նիհար չեմ տակաւին, ըսելով, խնդալով և վերջ տալ  
կարծելով մայրական վարանումներու: Սիրունին գըլ-  
խաւոր նպատակն եղաւ այնուհետև իր սրտին և սրտ-  
քին թելադրութեանց համաձայն ինքն իրեն հետ խոր-  
հրդակցիլ միշտ ապագան ապահովելու. ինչպէս նաև  
իր թէ անձնական և թէ տնական ծախսը աշխատու-  
թեամբ ճարելու միջոցներուն վրայ մտածել, նաև ազ-



զային և համազգային ընկերութեանց մէջ փալիլ, գեղանի և խելանի, լեզուանի և անուանի ըլլալ, ձիրքովն իր այցելուները հմայել, սիրուն, սիրելի և տիրուհի հանդիսանալ, մողիչ հրապոյրներովը, ընկերութեանց մէջ յարգուիլ, ընդունելութեան շնորհալի և զգուելի ձեերով և մեծարանաց մասնակցելու իրաւունք ստանալով ախորժելի և համակրելի մեծուհի մը նկատուիլ: Անրնական կը գտնէր ամուսնութեան հակառակիլը, բայց զգուշութիւնը և խոհեմութիւնը չէր ուզեր զոնց ընել վիպային թելադրութիւններէ ներշնչուած աճապարումէ մը զրդուելով: Իր մտքին մըշակուած և հմտութեամբ բարգաւաճ ըլլալու գիտակցութիւնը ունէր, և հակառակ էր կարգուելու հանճարամիտ և տաղանդաւոր ամուսինի մը հետ, որ կրնար տիրապետական կամէութիւններ ունենալ, և որուն հետ հաւանական էր ստէպ գծով և զշարիլ իրենց փոխողարձ և հակամարտ գաղափարներու և զգացմանց յաճախողէպ ընդհարումներու պատճառաւ:

Հելլենական կոապաչտութեան ժամանակի էթերներու (1) կինսագրութիւնները, Յունաստանի հին պատմութեան ժամանակի կնային վարուց և բարուց մանրամասնութիւնները ուսումնասիրած ըլլալով ունէր ասբասիական (2) յօժարութիւններ, պահանջատեթիւններ իսկ: Իր փափաքն էր ունենալ բարեկիրթ, ազնուամիտ և ազնուասիրտ և հարուստ, և սակաւ ինչ

(1) Երախր կամ Երէր յունարէն բառը Ֆրանսերէնի մէջ պերն աղին թարգմանուած ռեսանք: Հին Յունաստանի մէջ կը նշանակէր այս բառը բճկերուհի, բարեկամուհի, սիրուհի: Այսպէս կանուանէր այն կինն որ ընտանեկան գերութենէն ազատ ունիով դուրս կելնէր կանանոցէն՝ փիլիսոփայութեան կամ գրագիտութեան հետեւելու համար: Հետեւաբար յուրի է բառին Ֆրանսերէն լեզուի մէջ թարգմանութիւնը:

**Ա. ՏԵՊԵՑ**

(2) Ասբասիա իր քաղաքագիտական հմտութեամբը, փիլիսոփայական եւ գրագիտական կարողութիւններովը երեւելի է: Թերիքլեսի կինն եղաւ եւ իր զարուն մղում տուաւ:

տարիքոտ և ջոջ ամուսին մը: Չուշացաւ հասնելու այս փափաքին: Նախ շարունակեց իր երաժշտութեան ուսումները կատարելագործելու աշխատիլ, և շուտով եղաւ քաջ և անուանի կիթառահար մը: Աշնային և զոսնակի օրերէն իրիկուն մը նուագահանդէս մը տալ որոշելով հրաւէր զրկեց իր բարեկամներուն և բարեկամուհիներուն: Այցելուներուն մէջն էին Սեպուհ և Հեղինէ, նաև Հովիկ Զրօբան: Այս վերջինը պահ մը կըրցաւ առանձին մնալ Սիրունին հետ, և ըստա թէ զըմբաղղ մ' է ինք քանի որ ներս սրտին մէջ սեղ մը զըրաւելու և երջանկանալու փափաքն մերժուած էր. թէ այս մերժումին բնական հետեւութեամբը իր ներկայութենէն աքսորուած է, և ալ կը պարտաւորէր մշտնջենապէս վտարիլ՝ գէթ իր ճակատագրին անգթութիւնը սակաւ ինչ մեղմելու համար:

— Անկեղծապէս կը մաղթեմ որ այդ փափաքդ կատարուի: Վստահ եղի՛ր, պարո՞ն, թէ ծափահարներուդ մին ալ ևս պիտի ըլլամ, պատասխանեց Սիրուն, և քաղաքավարի կերպով հեռացաւ իր միւս հիւրերուն հետ տեսնուելու, և նուագահանդէսին պատրաստութեամբը զբաղելու համար:

Մայրն ալ ներկայ էր, և կը պատուէր ու կը մեծաբէր այցելուհիները, որք վերին և միջին դասու այրեր, տիկիներ, օրիորդներ էին: Երիտասարդներուն երեքը կ'անուանէին՝ Սմբատ Ալանեան, Աշոտ Գեղամեան և Վրոյր կրճիկեան: Ասոնք Սեպուհին բարեկամներն էին, և անոր նախաձեռնութեամբը պատիւ ունեցեր էին Սիրունին ներկայուելու և համակրութեամբ ընդունուելու: Աշոտ և Վրոյր ուսումնական, պատուակիր և իրենց մտային աշխատութեամբը կեանքի պիտոյքը հողալու կարող և ժրջան անձեր էին:





Վ. Լ. ՈՒ Ե Ե.

ՍՄԲԱՏ ԱԼԱՆԵԱՆ

ՍՄԲԱՏ փարթամ վաճառականի մը միածին աղան էր : Մեսրոպեան վարժարանին մէջ հարեանցի կրթութիւն մը առնելէն ետք՝ դպրոցական ուսանողութեան չըջանին աւարտումէն առաջ հրաժեշտ տուած էր աշակերտութեան կեանքին . և շուկայ կլած էր զրամ փաստիկը ջերմ և անզուսպ փափաքով : Եր սահմանաւոր մտքին բոլոր կարողութիւնները և կամքին բոլոր ոյժերը յատկացուց միայն մի նպատակի . այսինքն ոսկի գիլելու : Երբեմնակի կ'ըսէր, «տէր ոսկիի, տէր զօրութեան» : Ուշադրութիւնը տուած էր շուկայական գրադումներու, առետրական գործառնութիւններու, չահեկան նախաձեռնութեանց, և վաստակած զրամները անվտանգ շահագործելու և պահպանելու ասպնովագոյն միջոցներու : Կրօնասէր, բարեպաշտ, ուղղասէր, արդարամիտ, այլ սակայն կարեկցութեան և արգահատութեան ոչ այնքան մատչելի է : Արդ տակաւին սրտի զարթում չէ ունեցած, և ունենալէն ետքն ալ այս գարթումին պահանջումները գոհացնելու զազափարն իսկ կարծես անձանօթ մնացած է առետրական գրադումներու աղմուկին և փոթորիկին մէջ : Յաջողած է այս կերպով սիրահարութեան թակարդէն ազատ մնալու, բնայայի մը բըռնակալութեան չհպատակելու, գերութեան չմատնուելու և տիրուհի մը գործիքը չըլլալու՝ ներա հրապոյրին ներգործութեամբը : Ասկաւ ինչ տարբերութիւն է քառասունին նպաստաւոր կողմը կը գանուի հասակը : Երբ առաջին անգամ առթիւ ունեցաւ տեսնուելու Սիրունին պէս

Սիրէնի (1) մը հետ, խորհրդաւոր շնչում մը կրեց սրտովին : Այս սմանողուկ և պչրազէտ զեղունին իր սովորական սրամտութեամբը և հեռատեսութեամբը ամէն աչցելուներուն հետ քաղցրութեամբ կը վարուէր . կը խօսակցէր . երբեմն ալ խոնարհամտաբար կը խօսէր քաղաքական, պատմական, գիտական և արուեստական ինդիւրներու վրայ ձեռնհասութեամբ, առանց ինքնահաւանութեան, ինքնագովութեան, չմոռնալով մերթընդ մերթ ուղղել իր խօսքերը Սմբատին . Վրոյրին, Ս. չոտին, որք ամուսնութեան հետամուտ կը կարծուէին, անոնց ամէն մէկին լուսատու ժպիտ մը, յուսադիր նայուած մը չնորհել, նաև լոնլեայն հասկցնել թէ սովորութիւն չունի անոնց և ոչ մէկին դէմ գործածելու փոփոխամիտ և սմանողուկ աղջիկներու յատուկ նենգութիւնը : Ամենուն ուշադրութիւնը իր վրայ կը հրաւիրէր իր վայելչագիտական հմտութիւնը հաստատող արդողարդին պարզութեամբը, եթէ ներելի է պարզութիւն համարիլ այս ծածկամիտ և փառասէր պարմանուհիին հմայքոտ դիրքը, քմայքոտ հագուստի, կապուստի բաւական ազատ այլ անպարկեշտութեան չեչտէ դիտմամբ զերծ ձգուած մանրամասնութիւնները : Նուազահանդէսին յաջողութեան համար հրաւիրուել էին նաև մի քանի ճարտար կրածիչտներ, որք յանձն առել էին վին, սրինգ, դաշնակ նուագել : Օրորդ Շահուերեան կիթառահարի պաշտօնը կատարելու համար եկաւ, համեստաբար նստաւ աթոռի մը վրայ . կոկիկ և աղօթք մեծ տաքսեայ մուճակներու մէջ զետեղուած իր ոտներուն մին միւսին վրայ դրաւ, և անոնց այս խաչածուութեան դիրքն եղաւ բաւական ցանկագրող : Երբ զգուշապէս

(1) Սիրէն առասպելական հրէշ մ'էր, կէս մարդ եւ կէս ձուկ : Այլարանօրէն կը նշանակէ հրապոյրիչ կին, որուն պէտք չէ վրասահիլ : Ըստ առասպելարանման՝ Սիրէնները Գարեէ կղզիին եւ Իսախայ ծովեզերքին միջեւ սնուածու բարձրալի երեւ վրայ կը բնակէին, չեւ իրենց երգին քաղցրութեամբը ուղեւորներ Սիկիլոյ ծովին ժայռերուն վրայ կը հրաւիրէին : Ողբերգական այս քաղցրութեան դէմ անզգայ մտալուն պատճառաւ Սիրէնները ծովը նետուեցան :



և իբր թէ սկսածայ ցուցադրուեցաւ մասամբ իւր իր կիրառակող սրունքը, որք իր մուծակներուն մետաքսի գոյնին համանման գոյնով հիւսուած ծակոտիէն գուլպաներուն մէջ հմայաբար զետեղուած էին: Երբ Սիրուն քնքոյ մատերովը սկսաւ քերել կիթառին աղիքը և նուազել Գարսեկի, Պոնեւի և Մանօս Լեսգոյի մի քանի անոյշ եղանակները, ծափահարութեան փոթորիկ մը ծագեցաւ և չնորհաւորութիւնները տեղացին կ'իջառահար գեղօտիին վրայ: Ծափահարներուն ամենէն եռանդոտն ու խնկարկուն եղաւ Սմբատ, որ իր նայուածքը անընդհատ Սիրունին վրայ կը յառէր, ուչի ու չով ներս չնորհակալութեան արտայայտութիւնը կը լսէր և կը քաջալերէր, կը շօյէր անտիական արուեստադիտուէին: Սմբատն էր ճիշդ այն ազապ երիտասարդը, որ յարմար կ'երևար ներս բնաւորութեան և փափաքած ամուսնութեան: Այս հարուստ և պարկեշտ անձը միայն մէկ պակասութիւն ունէր, որ էր մարմնովին և սրտովին անբաւ ապրած և իր առնական կուսութիւնը պահած ըլլալը . . .

Նուազահանդէսին հետ երբ երեկոյթն ալ վերջացած նկատուեցաւ, այցելուները միտո մի մտաք բարեաւ ըսին Սիրունին և իր ժօրը «չնորհակալութիւն յայտնելէն ետք ամենքն ալ մեկնեցան, ըսց ՚ի Հեղինէն, Թօ փիլեանէն և մեկնելու պարտաւորիլը մոռցող Սմբատ Սլանեանէն, որ նոյնպէս նախ տիկին Եանուրեանին ձեռքը պագաւ, յետոյ սրբարանի մ'առջև բարեպաշտարար խոնարհող մեղաւորի մը պէս և կարծես մասունք մը համբուրելու ջերմաւանդութեամբ. քիչ մ'ալ կարմրելով, վասն զի չէր կորուսած իր կարմրելու յատկութիւնը, և իբր թէ լաւ միտքով, բարի դիտումով պագաւ չքնաղ երիտասարդուէին ձեռքը, զոր յուսաւէտ ժպիտի մը հետ չնորհելու զիջաւ արքայազուն իշխանուէի մը յատուկ սիգապանծութեամբ և առատասարտութեամբ: Սմբատին մեկնելէն ետք Հեղինէն վաղրկեան մ'իսկ առանց կորուսելու ըսաւ Սիրունին թէ՛ Սմբատին զիւրավառ երեակայութիւնը սրտին հետ սկսած էր հրդե-

հի ներս գեղեցկութեան և հրապուրանաց շանթերէն: Տունը կրակ առաւ, շարայարեց Հեղինէն, և վատահեմ թէ ախորժիկի ջերմութիւն մը պիտի ծաւալի շուտով այս տան վրայ՝ առանց ոչինչ այրելու: Տար երկինք որ յոյսս ՚ի դերև չեղնէր, և դրուծան Հովիկին սիրտն ալ, եթէ ունի, նախանձէն կրծուէր և մաշուէր:

Իրօք հետեւալ օրը Հեղինէ արչաւակի եկաւ, գտաւ Սիրունը, և մօտալուտ հարսանեկան հանդէսի մը իբր այրուբնական սիրերգութիւնը չնորհաւորութեամբ և ուրախութեամբ Սիրունը համակելէն ետք՝ յանձնեց իրեն հետագայ նամակը. —

«Նագելի Օրիորդ Ս. Եանուրեան»

«Անբասիր կենացդ, գերընտիր ճրիցդ, ինչպէս»  
 «նաև գեղակազմութեանդ և հանճարամտութեանդ»  
 «ճարտասանութեան չնորհիւ գլխովին հարողուած եմ»  
 «արդ ի՛նչ այսուհետև անհարին է ինձ երանութիւն»  
 «Երագել և վայելել առանց օրինաւոր կենակիցդ ըլլա-»  
 «լու: Ինձ ալտպէս խօսողը սրտիս յանկարծական դար-»  
 «թուան է: Վատահեմ թէ պիտի հաճիս ներկայ մամա »  
 «նակիս վտանգաւոր պիկոծութեան մէջ կենացս հա »  
 «րագէտ նաւուղիդն ու զեկապարը, միայնգամայն ճա »  
 «կատագրիս կարգապիտի ըլլալու: Այս յուսով կը հա »  
 «մարձակիմ քեզի խեղճ և նորածիլ սրտիս միահեծան»  
 «թագուէին և բարօրութեանս անպարտելի հեղինակու »  
 «հին համարելու: Թոյլ տուր ինձ, ազնիւ և զթախրոտ»  
 «օրիորդ, որ համբուրեմ ոտքդ և անոր առջև տեղա-»  
 «ւորեմ կեանքս և գոյքս »

«Անձկութեամբ սպասելով մի յուսատու ակնար »  
 «կիդ, մնամ երանութեանդ յաւէտ անձնուէր

ՄԻԲԱՏ ԱԼԱՆԵԱՆ

Իզմիր . . . . 1917

Սիրուն այս սիրագրին ընթերցումէն ետք բաւական յուզուեցաւ և անմիջապէս պատասխան մը տալէն առաջ՝ ևս քան զևս Սմբատին սրտին կատարելապէս



տիրելու և անոր սէրը աւելի սաստիւութեամբ հրահրելու նպատակաւ որոշեց ոչ միայն աւելի փառաւորապէս գեղեցկանայու միջոցներուն դիմել, այլ նաև բարեպաշտ և ջերմնաանդ քրիստո՛ էի յատուկ պարտականութիւններ կատարել, յաճախակի եկեղեցի երթալ, Սստուածածնին պատկերին առջև մտ՛ վառել և ծնրադիր աղօթել, և այս կրօնասիրութեամբ աւելի հաճելի և վստահելի կին մը նկատուելի իր ապագայ ամուսինին առջև : Անգամ մը ևս կարդալէն ետք նմմալը, զոր Սմբատին բարեկամ գրագէտի մը գրչին վերագրեց մտովն, Սիրուն ինքնին մենախօսել սկսելով ըսաւ. պարզապէս սիրագիր մ՛ է այս : Մեկուսի թողով պարունակութեան բանահիւսական ոճը, և նորածին սրտէ մ՛ արտադրուած աւելնը, կը պարասուլով ընդունել թէ նամակին նշանակութիւնն է հետս ամուսնանալու առաջարկութիւն մը, այսինքն կենացս ամենէն հանդիսաւոր, խորհրդաւոր միտոր շրջանը մտնելու հրաւէր մը : Եթէ աննպատակաւ պատասխան մը տամ, յանձն առած պիտի ըլլամ այն ապագայ վտանգը, որուն ընդհանրապէս կենթարկուելի կարգելի աղջիկ մը, եթէ ստէպ ուղուի ամուսնութեան համար, և եթէ ամէն անգամ իր մտքին ու սրտին մի անհամաձայնութեան պատճառաւ մերժողական պատասխան տայ : Ըսել է թէ ապագային հոգն ու խո՛հմութիւնը կը պատուիրեն ինձ ընդունելի Սմբատին ոգոքալի առաջարկութիւնը : Կը խոստատանով թէ ան պարզամիտ, նաև սրբամիտ, ազնուասիրտ և հանդաւ տարբոյ երիտասարդ մ՛ է, Վարան ի՞նչ արդեօք վստահելու անոր հաւատարմութեան, որմէ ըստ մեծի մասին կախում ունին կարգուող աղջկան մը անդորութիւնն և երանութիւնը : Կըստի թէ ամուսնութիւնը յառաջաբան մ՛ ունի, որ կանուանի սիրերգութիւն, և որ կը նշանակէ մեղրամուսային երջանկութիւն : Մշտառե չէ այս սիրերգութիւնը Այրական անհաւատարմութիւնը եթէ մտղկային կ՛ազմութեան մի բնական հետեանքը նկատեմ, ոչ ծայրայիղ եզրահացութիւն մը հանած և ոչ այ բնախօսական այլանդակ դաղափար մը յայտնած

կըլլամ, կարծեմ : Առասպելական պատմութեան մէջ ըսուած է թէ Նէսիւս անուն յուշկապարիկը Տէժանի-րին (1) պատմուածան մը տուաւ իբր հմայէկ, որ իր էրիկին՝ Հերակլէսին՝ հաւատարմութիւնը մշտնջենապէս անխախտ պահելու զօրութիւնը ունէր : Բայց ո՞ւր գըտնեմ այսպիսի հմայէկ մի : Կը կարծեմ թէ խոհմութիւն է այժմէն համակերպիլ Սմբատին հաւանական փոփոխասրտութեան, և այսպօսի ձախորդութեան ժամանակ վարուել այնպէս ինչպէս կը վարուի այս կանայն կինը պարագային պահանջումներուն թելադրութեանց համեմատ : Տէժանէրի հմայելին զօրութեան վերագրուած յարատե հաւատարմութիւնը կը յենու դիցարանական տրամաբանութեան մը վրայ, որ բոլորովին կը տարբերի մարդկայինէն, և զոր լըջօրէն ուսումնասիրող անձը կը հարկադրուի անդիմադրելի սկեպտիկութեամբ համակուելու և ճիծաղելով իր ուսերը թօթուելու : Արդարասիրութիւնը, խոհմութիւնը, համրերասիրութիւնը կը պահանջեն որ ճիւղադային հմայեակի մ՛ երևակայական և դնորական սողումէն խաբուելով չվստահիմ ամուսնական հաւատարմութեան յարատուութեանը : Վստահիլ ուղելս գուցէ ժամը տասնուչորսին կէսօր ընտոնելու նման անհեթեթութիւն մ՛ է : Բացարձակ ոչինչ կայ մարդկային կեանքին մէջ : Բացարձակ համաշխարհային գերագոյն իմացականութիւնէն տիեզերաց կեանքին տրուած յաւիտենական և մշտակայ յատկութիւն մ՛ է, մինչդեռ բնութիւնէն ամէն կենդանի էակնե-րու, հետեարօք մարդկային սեռի կենաց տրուած և

(1) Նէսիւս, որ յուշկապարիկ մը, այսինքն ըոս առասպելաբանութեան կէս մտր, և կէս կին մ՛ է, ուզած ըլլալով առեանգել Հերակլէսի կինը, որ Տէժանի կանուանուէր, Հերակլէս փրաւորեց Նէսիւսը նետով մ՛ որ Լէնի վեշապին արիւնովը միտած էր : Նէսիւս՝ մեռնելու աւն՝ Տէժանիին տուաւ իր պատմութեանը, որ Յունաւոր էր, և որ իբր հմայեակ Հերակլէսը իրեն պիտի վերադարձնէր, եթէ անհաւատարմութիւն ընէր : Գրականութեան մէջ ստէպ ակնարկութիւն կըլլայ յուշկապարիկին Յունաւոր պատմութեանին



րանութիւնը յարտաբերական, առժամանակեայ պարզեմէ որ կարծես թէ ազանութեան, անզխութեան հանգամանքը ունի: Այս երկու գերեկրային և մշտնջենական ոյժերուն, տիեզերական խնայականութեան և բընութեան այս անխախտելի և անողոքելի անօրինութեանց դէմ գանգատիլը: Երբեմն ալ ընդվզիլն անփորձութեան, անստութեան, անխմաստութեան դաղափարէ մը բռնուել, և չուտով փարատուելու սահմանուած պատրանքի անդունդին յատակը գլխիվրի է: Անխուսելի՞ էր այս վտանգը: Միթէ այս հիւանդութեան, այրական անհաւատարմութեան նահատակուած կնիկ մը չունի՞ որ և է դարման բոյժ և ոյժ գտնելու և կուռի կարենալու համար: Այո՛, ունի ըստ իս, շարունակեց մենախօսիլ Օր. Շահնուրեան: Այսպիսի աննեհ պարագայի մը մէջ կրնամ ի որհուրդ հարցնել մտքիս և սրտիս: Անտարակոյս անոնք ցոյց պիտի տան ինձ դարման մ' որ անախորժ, բայց բողբոլին փրկաւէտ է: Այս դարմանն է գուցէ յո. դորել զիս որ զգայորանաց ցանկութեան հաւանական սաստը մեզմեմ՝ զսպեմ, համբերեմ, հրաժեշտ տամ ամուսնոյս փոփոխական, թափառական և զրուժան սրտին տիրուհին մնալու փառքին, զագրիմ սիրելէ և սիրուելէ, և հրաման տամ սրտիս որ վերսկսի նիբնել ի խաւարի՝ ստոյլիկաններու յատուկ համակերպութեամբ: Կայ ուրիշ՞ դարման մ' ալ որ ինձի համար չէ, և որուն դէմ ընաւորութիւնըս կընդվզի կանխաւ գանիլ զգալով, այսինչն լրման և մասնութեան ենթարկուելէն և ատելութեամբ համակուելէն ետք այլասիրութեան, գուցէ բազմաունութեան դիմել զաղտնի՞ և վրէժ լուծել:

Երակներուս մէջ չըջարերոյ արիւնը դօրսիկեան չէ, և կը դրդէ զիս ուժգնակի գոչելու. բո՛ւ՛ն, հեռի իզմէ այսպիսի անպատիւ վրիժառութեան մը զգացումը, որ իրապէս ամուսնական դաշնագիրը վատօրէն դաշունելով պատուել է, ոճիր մը գործել է: Բայց ի՞նչ կ'երգեմ, ի՞նչ կ'երագեմ այս ամէն հարցումներովս և անիրանալի կամէութիւններովս, թերահաւատութեան

դեզուուներովս: Երանութիւն մը միայն օր մ' իսկ տուած ըլլայ անգամ, միթէ՞ յաւիտենութեան մը մէջ ապրուած երանութիւն մը ըլլալէ կը դադրի: Օ՛ն, ըլլայ ի՞նչ որ ճակատագիրս պիտի վճռէ որ ըլլայ. ըսաւ Սիրուն՝ վերջ տալով իր վարանումներուն և կասկածներուն, և ահա դրեց և զրկեց հետեւալ պատասխանը՝ Հեղինէին հետ:

Իզվիր, ..... 1917

Գիրագնիւ. Պ. Սմբատ Ալանեան.

Ուրախութեան և մեծամտութեան զգացումէ մը զրդուելիս և աչերուս թըջուիլը զգացի՝ անյազաբար կարդալէ ետք գողտրիկ նամակդ որ զգայուն սրտի և բեղմնաւոր երեակայութեան սիրերգային քերթուած մէջ. Պարծանք մ' է ինձ առաջարկութեանդ համեմատ կեանքս սիրաձուլ չլլժայով կենացդ կցել և ամէն ջանադրութիւններս յատկացնել թէ՛ երջանկութեանդ նպաստելու և թէ՛ ճակատագրին հաւանական խստութեանց՝ դառնութիւնը ամօքիլ փորձելու՝ եթէ հարին ըլլայ անոր անզգամարար վարուել քեզի պէս նրբամիտ և բարձրասիրտ անձի մը հետ՝ վստահ ըլլալով թէ՛ փոխողարձ սիրով մեր ամուսնական երանութեան և իմ բարոյական էութեան հոգը պիտի տան իբր անվեհեր պաշտպան, խնդրեմ, հաճէ՛ հաւտալու զգացմանցս անկեղծութեան և ստանալու մօրս հաւանութիւնը՝ իմինս արդէն քեզ տրուած նկատելով:

ՍԻՐՈՒՆ ՆՍԱՆՈՒՐԵԱՆ

Սմբատ Սիրունին մօրը հաւանութիւնը արագօրէն ստանալէն ետք փութաց նշանաւորի մատնի մը յղել Սիրունին, վստահ ըլլալով թէ՛ ինչպէս կը կարծուէր հին ազգերու մէջ՝ այս մատնին կրող փոքրիկ մատին ջեղը սրտին կը համապատասխանէ:





Գ Լ Ո Ւ Խ Ը .

Հ Ա Ր Ս Ն Ի Ք

**ՅԻՆԱՆՅ** մի պայծառ օրուան առտու Սիրունն պարտք համարեց պատրաստուել իր հարսութեան հանդէսին, որ նոյն օրուան գիշերը եկեղեցւոյ խորանին առջև պիտի կատարուէր պսակադրութեան ամէն կրօնական պայմաններու և արարողութեանց համեմատ, և որմէ ետք հրաժեշտ պիտի տար իր պարմանեկան ազատութեան և մօրը ինամակալութեան՝ հիմինեան մեհեանէն ներս մօտնելու համար: Հեղինէ կանուխիկէ ելած էր խրատ և հրահանգ տալու համար Սիրունին իր նախապատրաստութեանց նկատմամբ: Առաջին յորդորն եղաւ նախ մարմնային մաքրութեան և գեղեցկութեան հոգեբուլը զրազիլ: Հարսութեան ինդիրներու մէջ գործնակատապէս փորձառու սաղանուէին սկանակի մը գերը խաղալու անկարող էր: Մաքրութեան առաքինութիւն մ'ըլլալը զիտէր, և մարմնային գեղեցկութիւնը սիրահար ամուսինի մը հաճելի և ախորժելի ըլլալու պայմաններուն առաջինը կը նկատէր: Սիրունն նախ և առաջ սովորական լողաբանի մը զով ջուրովը լուաց իր շքեղ մարմինը, որ երեւելի անդրիագործի մը տաղանդին արժանի քնօրինակ մ'է (modèle): Հին ժամանակի հելլենական գեղուհիներու յատուկ և պրագիտական բազադրութիւններով պատրաստուած գեղութեան լողաբանի (bain de beauté) մը մէջ ևս մաներով լուացուեցաւ, լուացուելով նոր փայլ մ'առին իր այտի փոսիկները, որք կրնային համբոյրներու ակնատ նկատուել, ինչպէս կը կարծէ Գլէման Մարօ բանաստեղծը՝ Ֆնանտուա Առաջինին Լա Ֆերօնիէր անուն տարփուհին շողոքորթելու համար: Յետոյ իր դէմքը, թևերը, ձեռքերը սպիտակեց, եղնգա-

քարի փոշով եղունգները փայլեցուց, ուրիշ բազադրութեամբ մը գոյնը բարւոքեց, չմոռնալով Բիոսի ընտրելագոյն ծիթէն կտոր մը բերանը դնել և ծամել՝ իր շունչին անուշահոտութիւն և ակռաներուն սատափեայ փայլունութիւն և սպիտակութիւն տալու համար: Հարսանիքի հանդիսին լուսատու աստղը հանդիանալէն և իր նորհարսութեան հագուստի շքեղութիւններով ամեն հանդիսականաց զմայլում պատճառելէն ետք՝ ա'լ Սիրունն կորուսած էր իր հայրական մականունը, եղած էր Տիկին Ս. Ալանեան:

Հովիկ լսելով ներա ամուսնութիւնը և չկրնալով դիմադրել իր այս պարտութեան, համակուեցաւ խորին մեղամաղձութեամբ: Ամուսնութեան փափաքին դեղեկւլը, իր քսակին յարածուն գատարկութիւնը և անառակութեան կեանքը և վատահաճութիւնը մտաբերելով՝ յառաջադրեց յրամ ձարելու յոյսը բողորովին խաղի սեղանին վրայ դնել, և իր վիշտերուն և խղճի խաթերուն զառնութիւնը օղիի չիչին մէջ մոռնալ: Հետևաբար սկսաւ առաջուան պէս բողորովին ցոփութեամբ ապրիլ, բողանոցներէ և ակմբանոցի մը խաղարանէն չի պակսիլ ընաւ, և՛ որովհետեւ բազալանդիրները հազուերթևնակի կը յաջողին՝ խաղի սեղանին վրայ կորուսած ապառիկ դրամները անվճար թողած և խարդախութիւն ալ ըրած ըլլալուն համար գայթակղութեան տեղի տրուած և խայտառակութեամբ ակմբանոցէն արտաքսուած էր: Ժամանակէ մ'ետք քանի մը պարզախոսութիւն փիչ մը դրամ շորթիլէն ետք աներեւոյթ եղած էր՝ գուցէ ինքնասպանութեամբ իր կենաց վերջ մը տալու դիտաւորութեամբ... ըսին ոմանք:

Ամուսնութեան մեղրամայի սովորական ուղեորութեամբը սկսող սիրերգային հեշտութիւններէ ետք, նորազսակ ամուսինները վերադարձեր և հարս հայելի այցելուներուն գալստեան սպասելով իրենց մենախուցը քաշուեր էին: Սիրունն ուրախ էր և գուարթ բնականաբար: Երանութեան յաւիտենութիւնը վայրկեաններուն մէջ վայելելու սովորած էր ուղեորութեան ժամանակ:



նէրէեան յաւերժահարսի մը պէս կը լողար հնչրութեան ուկիւանին մէջ, և ալ գողցնո կը հաւատար իր բարեբաստութեան և Սմբատի հաւատարմութեան մշտատեութեանը: Սմբատին ծունկին վրայ կը նստէր իբր անոր սիրունին, տիրունին և իշխանունին, համբոյրներովը կ'ողողէր սիրամոյր ամուսինը, շարունակ կը ժպտէր, գարնային վարդենիի մը վրայ դարած քանարեակի մը պէս ճռուողելէ չէր դադրէր, և բոլոր սրտովն կը յուզուէր, նաև մելամախճոտութեամբ կը գրաւուէր մտաբերելով իր այս երանութեան ընդհատումին հաւանականութիւնը: «Կին մ' ազնուական է իր գեղեցկութեամբը, ինչպէս այրն ալ իր հանճարամտութեամբը», ըսաւ երեւի հեղինակ մը: Սմոյսնոյն ծունկերուն վրայ Սիրունին նստած ըլլալը անպատեն և աններելի համարողը կը սխալի՝ գէթ հին ժամանակներու կնային և սիրային ազատութեան տէսակէտով: Ինչպէս քիչ մ' առաջ ալ հարեանցի ակնարկութիւն մը յիշած էինք, աիկին Ալանեան Սթէնքի և Կորնթոսի մէջ անկախութեամբ և սիգարար ապրելով թագաւորներու, իշխաններու, պետական երեւի մարդերու և հարուստ ջոջերու հետ ամուսնաբար կամ հարճապէս ապրող քաղաքագէտ իմաստասէր, բանահիւս, նաև մի քանի սիրավառ քրտունիներու վարուց և բարուց և սիրային կենաց պատմութիւնը ուսումնասիրած էր, և գիտէր թէ իր ամուսնոյն հետ սիրային տիրապետութեամբը՝ վարուելն իր սրտի ազատութեան և առանձնաշնորհութեանց մին է:



Գ Լ Ո Ւ Խ Թ.

### Հ Ա Ր Ս Յ Ա Յ Ե Լ Ի Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Յ Ի Ի Ն

ՀԱՐՍԻՆՍԵՆԻԿ այցելութեան պատրաստուած քանի մը բարեկամներ ճաշի հրաւիրուած ըլլալով կանուխիկ եկեր և ընդունելութեան սրահին մէջ տեղաւորուէր էին: Անոնց հետ եկած էին Սեպուհ և իր կինը՝ Հեղինէ, նաև Սշոտ և Վրոյր: Տիկին Ս. Ալանեան իր հարսնութեան չքեղ ու փառաւոր զգեստներովն և արդուզարդովն աւելի գեղեցկացած էր: Տան տիկնոջ յատուկ գերը իր վրայ առած էր թէ՛ սեղանակիցները, և թէ՛ ուրիշ այցելուները ընդունելու համար: Հացկերոյթի զանգակը երբ հնչեց, սեղանին բոլորտիքը բաղմեցան հրաւիրեալները՝ անձնաբեր իր քովը ունենալով գեղուհի մը: Պնակի երբ պարպուելէն և հետզհետէ փոխուելէն ետք գինիի բաժակները լեցուեցան, հարս ու փեսային կենացը նախ, և ապա ամէն սեղանակիցներու առողջութեան բաժակներ պարպուեցան երանութեան մազթանքով: Ան ատեն Սեպուհ չգիտենք ինչպէս պատեն առիթ համարեց խօսիլ սկսիլը, և ըսաւ.

— Այս միջոցիս կար սակայն մեզ ծանօթ դժբաղդ մը, որ իր անբաղդութիւնը պատճառ կը համարի՝ անշուշտ յանիրաւի՝ Օր. Շահուրեանին հետ ամուսնանալու առաջարկութեան մերժուելը, և կը համարձակի կարծելու թէ ներա մերժումը չարութիւն մ' է:

— Եւ միթէ՞ ամուսնութեան անյարմար անձի մը հետ կենակցիլ չուզելը չարութիւն մ' է, հարցուց Սիրուն:

— Հոյիկին այս կարծիքը զչարումի և անմտութեան արդիւնք մ' է պարզապէս, պատասխանեց Սեպուհ. Արիսթիբ փիլիսոփան ըսած է թէ՛ «բարին և յար ճըշ-



«դապէս չեն կրնար սահմանուիլ և անհատներու, ժո»  
 «զովուրդներու, վայրերու և ժամանակներու վերա»  
 «բերուելով կը դատուին: Ինչ որ բարի է այսինչին հա»  
 «մար, յոռի է այն ինչին համար: Հետևաբար տրամա»  
 «քանորէն կարելի է եզրակացութեան մը յանգիլ երբ»  
 «ըսինք թէ բարութիւնը և չարութիւնը, նոյնպէս ա.»  
 «դարն և անարդարը մեր զգայու եզանակին մի ալ.»  
 «դիւնքն է»:

Վրոյր որ ուշ կը զնէր այս խօսքերուն, սկսաւ մասնակցել վիճաբանութեան և յայտնեց իր կարծիքները բարիին և չարին, օգտակարին և վնասակարին օրինակներ բերելով քաղաքականութեան և գրականութեան պատմութիւններէն:

— Թէ՛ հին և թէ՛ արդիական ժամանակներու մէջ, ըսաւ, եղած են իրողութիւններ, պատահարներ, և յայտնուած են գաղափարներ, որոնց բարի կամ չար ըլլալը տեղերու, շահերու, նկատումներու, զգացումներու, սպաւորութեանց և աւանդութեանց տեսալէտին վերաբերուելով՝ չէ թէ բացարձակապէս այլ յարաբերաբար ըմբռնուած և սահմանուած են: Սրինակի աղաքաւ, Պրիւթիւս և Գայիոս՝ կեսարը սպաննելով կայսերապաշտ Հռոմայեցւոց համար մահապարտ ոճրագործ նրկատուեցան, և Տանթէի գեհններգութեան մէջ Աստուածասպանի մը, դու իմա՛ Յուզային հետ միասին դրժոխքին մէջ յաւիտենապէս տանջուելու դատապարտուեցան բանահիւսական երկակայութեան մը զօրութեամբը, մինչդեռ այս գեհննապարտները հոռմէական հանրապետութիւնը հաստատելու համար կեսարին կեանքը և բռնամոլութիւնը ջնջող գիւցազուներ և արգարագործներ սեպուեցան հանրապետականներէն: Հրէայք չարագործ անուանեցին Յիսուս Գրիստոսը և խաչեցին, մինչդեռ աշխարհի փրկիչն եղաւ: Ան իր գերերկրային վարուց և բարուց անարատութեամբը, մարդասիրութեամբը, գթութեամբը, Ան զոր՝ Անրաւ Արչալոյս կ'անուանէ Վ. Հիւլիօ Մարային Շարլօթ Գօրտնյէն ըսպաննուիլն աղէտալի պատահար մը սեպուեցաւ Գօն-

վանսիօնի անդամներէն, ծայրայեղ հանրապետականներէն և ահապետութեան (terrorisme) հեղինակներէն, մինչդեռ ժերօնտէններու կուսակցութեան համար նախախնամական դէպք մը, և յեղափոխութեան համար փրկութեան միջոց մը համարուեցաւ: Մեծն Նարոլէոնի վախերթօլի դաշտին վրայ յաղթուելը բարի և օգտակար եղաւ եւրոպական դաշնակցութեան, իսկ Պրանսայի համար յոռի և աղետալի: Գթութեան քոյր մը դուռը բաց թողլով իր սենեկին մէջ ծնրագրութեամբ մինչդեռ կ'աղօթէր, ներս մտաւ ժան վալժան և զրան հետ պահուեցաւ. երբ ժալէր ժան վալժանին եկած և պահուած ըլլալը կամ չըլլալը հարցուց, ծնրադիր կրօնուհին բացաստարան պատասխան մը տուաւ: Բայց այս սուտով անմեղ մ'ազատեց ոստիկանութեան վագրի մը ճիրանէն, և Վ. Հիւլիօ՝ պատասխանուող չէ թէ սուտ խօսած, այլ աղօթք ըրած եղար, քոյր իմ, կրտէ: Տիկին Ալանեան Հովիկին հետ կարգուելու չհաւանելով և իր սիրտը այս Սմբատ բարեկամիս պէս ազնուարարոյ և հազուադիւտ ամուսինի մը չնորհելով և Երջանիկ եղաւ. ուրեմն մերժումն ուրիշին համար չար, այլ ի, են համար բարի է: Ելմե՛նք ուրեմն անգամ մ'ալ այս սիրելի ամուսիններուն բարօրութեան յարատեւութեանը համար:

Յետոյ ընդունելութեան սրահը դիմեցին. անդ գումարուեցան կիները. նաև այրերը, քանի որ ասոնց ծրխախտա ծխելու սովորութեամբը կիներն ալ նիփօթիլ ունեցու վախը ոչ միայն չունին, այլ իրենցմէ ոմանք ալ ծխելու և իրենց ակտաները տեղունել չեն խրաչիր նորամուտ սովորութեան մը համեմատ: Հին ժամանակի Յունաստանի գեղուհիները իրենց տարփածուն՝րուն վրայ ապահովապէս տիրապետելու վճռական միջոց նկատելով մարմնային մաքրութիւնը և գեղեցկութիւնը, սովորութիւն ունէին սատափի պէս սպիտակ և մաքրափայլ ակոսներ ունենալու. և այս նպատակին կը հասփայլ ակոսներ ունենալու. և այս նպատակին կը հասնէին ծամելով հերձի ըսուած ծառին սետինը. սր իգնէին ծամելով հերձի ըսուած ծառին սետինը. սր իգնէին ծամելով հերձի կ'անուանի: Ա. Տրայէյ հեղինակը կը հաստատէ թէ հերձի սետինը ակոսներուն փայլ և



սպիտակութիւն կը տայ, և ծամողին շունչը կ'անուշաբուրէ:

— Բայց կարծեմ թէ ծխելը սովորութիւն չէ, այլ մոլութիւն, ըսաւ Աշոտ:

— Սովորութիւն կամ մոլութիւն, ընթերցուհիներուն կը մնայ օգտիլ այս ատամնաբուժական խրատէն, որ բժիշկէ մը տրուած է; ըսաւ Վրոյրն ալ:

Այս խնդիրին վրայ բաւական տաք վիճաբանութիւն մը սկսաւ և արմկալի խօսակցութեան տեղի տուաւ սովորութեան կամ մոլութեան խնդիրն ալ:

— Ըստ իս, ըսաւ Վրոյր՝ նորէն միջամտելով ազմկալի վիճաբանութեան, ծխելը սովորութիւն մ'է և ոչ մոլութիւն, և որպէս զի, Տիկիններ, չկարծէք թէ սովորութիւն մ'է ըսելովս ձեզ շողոքորթութիւն մ'ընել կուզեմ, ներեցէ՛ք որ պատմեմ ձեզ բարձրաստիճան և հանձարեղութեամբը բոլոր Եւրոպայի մէջ հռչակաւոր և պատկառելի հանդիսացած անձնաւորութեան մը կարծիքը ևս: Երբ Լեոն 13րդ սրբազան Քահանայապետը ծխելու համար գլանիկ մը (cigarette) տուաւ այցելութեան եկող եկեղեցական իշխանի մը, կարտինալի մ'որ ամեն մոլութիւններու մարմնաւորութիւնն էր, ևս այդ մոլութիւնը չունիմ, Սրբազա՛ն Հայր, ըսելով կարտինալը՝ մերժեց գլանիկը:

— Եթէ մոլութիւն մ'ըլլար, արդէն ունեցած կըլլայիր զայն պատասխանեց այժմեայ Սրբազան Քահանայապետին պատրաստաբան նախորդը:

Կարծես ինքնածին հաւանութեամբ մը լուութիւնը կը շարունակուէր երբ տիկին Ս. Թօրփիլեան տիկին Ս. Ալանեանին ականջին խօսք մը փսփսաց Հովիկին անունը տալով: Սմբատ կրցաւ լսել փսփսուքը՝ սուր ականջ մը ունենալուն չնորհիւ:

— Ի՞նչ հարկ փսփսալ իրողութեան մը վրայ որ երէկուանէ ի վեր ամենուն ծանօթ է: Եթէ չես համարձակիր բացէ՛ ի բաց խօսելու անա ևս կը յայտնեմ թէ այդ անձը երէկ գիշեր ակմբանոցէն արտաքսուեցաւ խաղի դրամական պարտքը չվճարելուն, նաև խարդախութիւն մ'ըրած ըլլալուն համար:

— Ուրեմն անա գտաւ իր շարութեան պատիժը, ըսաւ Հեղինէ:

— Իր ո՞ր շարութեանը, հարցուց Աշոտ:

— Հովիկ համազգային աղքատներու պարահանդէսին սրահը մտնելէն անմիջապէս ևտք՝ զիմակաւոր ասպետուհիի մը զիմակը հանել տալու համար տգեղութիւն վերագրեց անոր, որ մեր այս գիշերուան շնորհալի տիկին Սիրուն Ալանեանն էր, պատասխանեց Հեղինէ: Այս էր անա շարութիւնը:

— Ներէ՛, տիկին ըսաւ Վրոյր, որ համարձակիմ համամիտ չըլլալու քեզ այս մասին: Հովիկին վերագրուած շարութեան նպատակն էր չէ թէ թշնամանք մ'ընել, այլ՝ ինչպէս ըսիր՝ զիմակը հանելու ստիպել զիմակաւոր ասպետուհին՝ ներս անձնասիրական զգացումը զրգոելով: Կը խոստովանիմ թէ շարութիւն մ'է այդ անձին ընթացքը, բայց մտքի և ոչ թէ սրտի շարութիւն մ'է այն:

— Միենոյն նշանակութիւնը չունի՞, հարցուց Աշոտ:

— Ո՛չ, պատասխանեց Վրոյր, այն շարութիւնը, որուն կ'ակնարկէ տիկին Թօրփիլեան, նրբամտութեան և պատրաստօրանութեան յատուկ կարողութիւն մ'է: Անով շարամիտը ոչ գոք կը վերաւորէ, այլ երբևիմակի համեղապէս սկսուած խօսակցութեան մը մտունդ ջամբելու, ընդհատումը արգիլելու, ունկնդիրներուն ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը զրգոելու կը ծառայէ: Երբեմն ալ անձնասիրական զգացումի թեթև խտրութեան, գոզցես ախորժելի գիզում մը կը պատճառէ, և այսպէս զգացուողն ինքնին կը խոստովանի, թէ ամեղուկի մը շարամտութեան ենթարկուած է միայն: Ախորժելի շարամտութեան օրինակ մը տամ ձեզ՝ եղբւրեւ, և պատմելով: Պարահանդէսի մը մէջ բանալութիւն մը պատմելով: Պարահանդէսի մը մէջ բանահիւս և բազմահմուտ, այլ ծերունի չ'ը մը՝ զիտելով թէ գեղուհի մ'իւր բոլորտիքը թիթիկոնիկներու պէս թռչտող երիտասարդներուն ամէն մէկին ժպիտով չամամտութեան խօսք մը կը չնորհէ, ինքն ևս մօտեցաւ և խնդրեց որ իրեն ևս ընէ այդ չնորհքը, — Միայն երիտասարդնե-



րուն կ'ընեն այդ շնորհքը, պատասխանեց պատրաստաբան զեզուհին :

Այս է ահա չարամտութիւնն որ ըստ ինքեան գրեթէ անզնաս է: Բայց չարասրտութիւնը մարդկային սև կրից, ատելութեան, թշնամութեան, նախանձու, վրիժառութեան, գրպարտութեան, նենգութեան, ստախոսութեան, բարկութեան և այլ տգեղ կրից ծնունդ կը տայ, և հետեանքն է բարոյական և նիւթական աւերակներ զիզել:

— Կը խոստովանիմ, ըսաւ տիկին Ալանեան, թէ ինձ Հովիկէն տգեղութիւն վերադրուելը չարամտութեան հնարք մ' էր միայն, նպատակ ունէր ստիպել զիս որ զիմակս հանեմ: Գրեթէ ասորժեկի թուեցաւ ինձ այս հնարքը, վասն զի անոր ազդեցութեամբ որոշեցի ընական զվարձութիւն երեւոյս և ինչպէս կ'ըսուի՝ մէկ քարով երկու թռչուն զարնել. այսինքն նախ հաճելի ըլլալ պարնկեր ասպետիս, երկրորդ տգեղութիւն վերադրողին հաստատել թէ կարծածին չափ տգեղ չեմ, և թէ այս առթիւ իմացայ անոր ոչ միայն Բարիզեան վաղեմի ուսանող մ' այլ նաև գեղապաշտ և կնապաշտ կենցաղասէր մ' ըլլալը:

— Գեղապաշտութեան և կնապաշտութեան տարբերութիւնը կուզէի գիտնալ. ըսաւ Հեղինէ, չգիտնալ ձեւացնելով, ինքն որ առիթ ունեցած էր լսելու Թօրփիլեանէն կոապաշտութեան ժամանակի կնապաշտութեան ի՞նչ ըլլալը:

— Պարոն Վրոյրին կը տամ փոխանորդութիւնս, երկու յատկութիւնները բացատրելու և տարբերութիւնը յայտնելու հոգը. պատասխանեց Սիրուն:

— Տիկին, կը հասկնամ այս փոխանորդութեան շարժառիթը և արժէքը, և գրեթէ կը հրճուիմ ինձ այդպիսի ողորակի վստահութիւն մը շնորհելու համար: Ըստ իս գեղապաշտը կը սիրէ կենդանի կամ անկենդան, բանաւոր կամ անբան էակներու գեղեցկութիւնը. որ թէ՛ յաւիտենական և անմահ արուեստագէտէ մը, այսինքն բնութիւնէն, և թէ՛ մարմնովին մահկանացու, այլ հանճարովն անմահ բանահիւսէ մը կը պարզուուի: Բա-

ջալանք և գեղակազմ երիտասարդը. հրաշագեղ կինը, առիւծը, վագրը. գիշերայն հրաշալեօի հրաշնութեան մ' ահաւոր տեսարանը, ովկիանին շղթայաղերծ բարկութիւնը, սոխակին դայլայլիկը, թռչունին ճուղղուժը և զուենդ փետուրները, ապրիլի ծիրանագեղ վարդը, մանիշակը, անտառները, մարգագետինները բանահիւսին, արուեստագէտին համար գեղասիրութեան մը տնջնական առարկաներ, հիանալի երևոյթներ և էութիւններ են: Էտկար գինէ իր Նոր միջր «անուն երկին մէջ կրտէ թէ» գեղասիրութիւնը քմահաճութիւն մը չէ, համայն կենդանի բնութեան օրէններուն մին է այն», իսկ արդիական ժամանակներու կնապաշտը կը սիրէ, մոլեգնաբար կը սիրէ ցանկագրգիւ կնոջ թէ՛ գեղութիւնը և թէ՛ մարմնային շքեղութիւնը: Բայց նաև հեթանոսութեան դարերու մէջ կինը պաշտուած է իբր կրօնական պաշտամանց գերերկրային առարկայ մը, իբր բոլորովին մերկանդամ կուռք մը: Գեղապաշտին լոկ սիրուհին է երկնային աստղիկն է գեղանի կինն այն մարդուն համար, որմէ կը սիրուի, կը պաշտուի և գոր ինք տակաւին չսիրեր: Երբ ինքն այ կսկսի սիրել իւր պաշտողը, կը դադրի պարզ սիրուհի մ' ըլլալէ, և հաւանելով ամուսնաբար ապրելու իր սիրականին հետ՝ կըլլայ կամ լոկ տարփուհի մը, եթէ առանց օրէնքի հաւանութեան ընդունի կողակցութիւնը, և կամ հարազատ կինն իր սիրականին՝ եթէ ձեռնհաս իշխանութեան նուիրագործուի այս ամուսնութիւնը:

Պէտքերիս ծաղկահասակութեան ժամանակ մնուած ըլլալուն շնորհիւ մնաց լոկ սիրուհին Տանթէի, որ ներառանուանէն ետք չվարանեցաւ սարփուհիներ ունենալու, իսկ գեղանին Լորան Բեթրարքին միայն սիրուհին եղաւ՝ արդէն Հիւլ Տը Սատ անուն երիտասարդի մը հետ ամուսնացած և անորմէ տասնուամէկ զաւակ ունենալ և ամուսնական պատիւը պահած ըլլալով: Կը հետեի թէ գեղապաշտը կրնայ Տանթէական սիրուհի մը ունենալ և միայն պաշտումով գոհանալ:

— Կը խոստովանիմ թէ ասորժեկի, հետաքրքրական



չահաւէտ են այս բացատրութիւնները, կարծիքները: Արդ ն' ընկի՞ է ինձ արդեօք փափաքիլ որ ա'լ վերջ տրուի այս բանախօսութեան: Եւ անա՞ վրոյր փութալով Տիկին Ալանեանէն անուզողակի կերպով տրուած այս հրամանին համակերպելու, և յիշեցնելով թէ Հովիկ Զըրօսանին անառակութեան յատուկ կեանքն է ա.ս վիճարանութեան բուն պատճառը, դադրեցաւ խօսելէ՝ յիշելով Վոյթէրին հետագայ խօսքը. «Երբ մարգս կը կոր՝ «անցնէ ամէն բան և ալ յոյս չունի, կեանքը նախա-«տինք մ' է և մանր պարտաւորութիւն մը (1) »:

— Ժամն է արդ յարատեւ երանութիւն մ'աղթել հարս ու փեսային և մնաք բարեաւ ըսելու, փոփոաց Վրոյր Պ. Թօրփիլեանին:

— Իցիւ թէ յարատեւ ըլլար: Եւ արդկային կեանքն ոչինչ ունի մշտնջենական և կամ բացարձակ, ըսաւ Թօրփիլեան, ինչ որ մարդկային է, վերջ մ' ունի անշուշտ: Բայց պէտք է խոստովանիլ նաև թէ երջանկութիւնը վերջանալու նախասահմանուած ըլլալովն ուրախութիւն և վայելում ըլլալէ չը դադրի:

— Այո՛, բայց մի՛ մոռնար պատասխանեց Վրոյր, որ Սիրուն գեղապանձ երիտասարդուհի մ'է: Կըսուի թէ գեղանի կին մ' ունենալը բանուկ ճամբու վրայ բարեբեր այգի մ' ունենալու կը նմանի:

— Տիկին Ալանեանը՝ Տիկին Պօվարի մը չէ: Ունի ամուսին մ' որ այս մեծագին գանձը պահպանելու կարող կերբերոս (2) մ' է:

(1) Lorsqu' on a tout perdu et qu'on n'a plus d'espoir,  
La vie devient un opprobre et la mort un devoir.

VOLTAIRE

(2) Գերփերոս՝ ըստ դիցարանութեան՝ եռազլի շուն մ'է, որ գիշեր ցորեկ առթուն կենալով հեծանոսական գեհեանը կը պաշտպանէր: Գերկրային երաժշտագէտ Որփէոս իր քնարին քաղցրութեամբը քնացուց գազանը և իշաւ գեհեանը՝ ազատելու համար իր կինը Էօրիսիսը, գոր Եփրատի մէջ օձ մը խայթած էր ներքանէն:

— Անշուշտ, վրայ բերաւ Թօրփիլեան, բայց մի՛ մոռնար որ կերբերոսին վերեւ Որփէոս մը կայ, հետևաբար վտանգ մը կայ Ալանեանին Էօրիսիսը առևանգելու:

— Սիրուն Ալանեան արմենուհի մ' է քաջազուն, ի պահանջել հարկի հափափուելէ առաջ ամենէն յամառ և անպատկառ Տօն ժուանի մ' առջև կարող է հաստատելու թէ կիւքրէսի յատուկ սիրտ մ' և դաշոյն մ' ունի:

Հովիկ ա'լ թաղուած էր իր պատրանաց, երազներու և յոյսերուն վլատակներուն ներքև, ինքզինքը Դիւնակաւոր Ասպետունիին անգթութեանը զոհուած նահատակ մը համարելով. և անա՞ գեղանի սաղանուհին՝ շեղինէ վրոյրին և իր Թօրփիլեանին խօսակցութիւնը վերջացած նկատելով, ոտք ելաւ, գնաց համբուրեց իր սիրուն Սիրունը. սիրերգութեան յարատեւութիւն և գիշերային հանգստութիւն մաղթեց, չմոռնալով իր վաղեմի դրուժան օտարիածուն բարոյական մահուան դազաղին վրայ՝ իրր դամբանական լռելեայն փառք՝ ի բարձունս փսփսալ, հարսհայելի բոլոր այցելուներուն հետ մեկնեցաւ թեք տալով Սեպուն Թօրփիլեանին:







## ՅԱՆ ՈՒ ՅԻՐ ԳՐՈՒԱԾՆԵՐ

### ՕՆՏԻՆ ԵՒ ԻՐ ԱՐՏՕՍՈՒՐԸ

**Յ**ՈՒՂԻՍԻ մէջ կիւրակէ օր մի երեկոյեան ժամանակն եկած էր: Ճորեկը Ռէմուրի ջերմաչափն ելած էր մինչև քսանևութ սասիճան, և այս տաքէն խաչուելու չափ շարչարուած անձինք, արք և կանայք, տղայք և սպասուհիք ըստ սովորութեան կէօզ - Թէփէի տուներէն կսկսէին դուրս ելնել և կը դիմէին դէպի ծովափունքը՝ հոն հոս յամբարար ման գալով, օրուան սաստիկ տաքէն նահատակուած թռքերը Իզմիրի խնկաքիւն մեղմ շունչերովը զովացնելու և ծովին մաքուր, աղի և իօտային օդը ծծելու համար:

Արևին վերջին ճառագայթները՝ դադրելով կիզողական ըլլալէ Միմասի լեռանց չղթայի ժայռուտ ու մերկ բարձունքէն, բլուրներու մշակուած և դալարուտ կուշտերէն, մինչև ծովեզերքը տարածուող պարտէզներէն և այգիներէն հեղձնտէ կը քաչուէին, և վերջալուսական ժամի յատուկ բարեխառն զովութիւն մը կը սփռուէր տապահար բուսոց և մթնոլորտին վրայ:

Սակայն գիւղին հարաւային ծայրին մի ամայի և վիմուտ ծովափին վրայ բազմութիւն չկար: Անդ կը տիրէր հանդարտ և խորին լռութիւն մի, որ հոգետեսութեան և խոհանաց տրամադիր բնաւորութեան մը համար կարի հանդիսաւոր էր, զգուելի և նսւիրական:







մերկութեան հանդիսականը . Մովսէսն որ Աքթէոնին՝  
 պէս պատժուելու վախը կարհամարհէր : — Թէօֆիլ Կօ-  
 թիէ Ժիւլիա կրիզիին ծովէն մերկ ելնելը տեսնելու հա-  
 մար իր գաղղիացիի յատուկ իրաւունքները զոհել կը  
 խոստանար : Մովսէսն այդ իրաւունքներէ զուրկ էր . իր  
 բոլոր ունեցածն էր իր սիրտը, ուր դժուարաւ կը զըս-  
 պուէին սարսուռներ : Նա պատրաստ էր իր օրերը իսկ  
 զոհելու Օնտինի մերկութեան փառաւորութիւնները  
 տեսնելու համար : Յիմարութիւն, կը գոչես անշուշտ,  
 կրտէր ինձ Տ . . . ինչ եւ ո՞վ ըսաւ թէ սէրը յիմարու-  
 թեանց գերագոյնը չէ :

Նոյն պահուն Օրիորդ Արաէմիս ձեռքը բռնած էր  
 պզտի գիրք մը, որուն վերնագիրն էր Կիլեն և Ովկի-  
 անն : Ինքն ալ կին մ' էր, և իր առջև կը տարածուէր  
 յոնիական ովկիանն : Նէ բանահիւսէն երգուած կնոջ և  
 ովկիանին, իսկ Մովսէսն Աստուծոյ ստեղծուած երկու  
 անհունութեան, այսինքն Օնտինին և ծովին առջևը կը  
 գտնուէր :

Հազիւ քսան տարեկան կար նէ : Աւեր հագած էր  
 պարզութեամբ այլ վայելչութեամբ . իր անարատ դէմ-  
 քին վրայ տարածուած մելամաղձային հովէ մը կզգայիր  
 թէ սիրական մնռելի մը յիշատակը պատուելու և չէ  
 թէ գոյներու հակապատկերով մ' իր գեղեցկութիւնը  
 շնչտելու համար սգաւորուած էր : Օնտին արդէն կորու-  
 սած էր իր հայրը երկար տարիներէ ի վեր, իսկ քանի  
 մը ամիսէ ի վեր իր մայրն մեռած էր, գոգցես անոք  
 և անպաշտպան թողլով կենաց մրրկալի յորձանքին իր  
 սիրրկան աղջիկը : Օնտին՝ խորհելով թէ կըբայր մի չի  
 կրնար մօր մի յատուկ պաշտպանութիւնը տարածել իր  
 վրայ երբեմնակի կը տխրէր սաստիկ, և արտասուելու  
 ատեն յուսահատութենէ մզուելով կասկած կը տածէր  
 վերին բարութեան դէմ : Իրաւունք ունէր այսպէս  
 դառնութեամբ վշտանալու, զի կորուսած էր այնպիսի

մայր մի, որ իր խանդաղատանաց և անընդհատ հոգա-  
 ծութեան շնորհիւ Օնտինին համար նախալնամութիւն  
 մ' եղած էր : Այս գեղանի հելլէնուհին կենաց սեմէն դէպ  
 աշխարհն առած առաջին քայլէն մ'նչև իր մօրը մահ-  
 ուան ժամանակ անցուցած էր օրեր որք պատանեկան  
 հասակի յատուկ ուրախութեանց հիւս մը կը կազմէին  
 միայն : Անկից ետք անցած էր երկու տարի, և այս եր-  
 կու տարուան մէջ կը կարծէր գիտնալ թէ քառսուն  
 տարի ապրած է, թէ ա'լ պառաւ աղջիկ մը կը համար-  
 ուի, և թէ ապագան ա'լ ժպիտ չունի իրեն համար :  
 Ատոյգ է թէ սիրամիան մօր մը մահուան կսկծալի յիշա-  
 տակը, անդարմանելի հիւանդութեան մ' ենթակայ եղ-  
 բօր մը մօտալուտ և անխուսելի վախճանը, ապագային  
 նկատմամբ անստուգութեան զգացումէ արտադրուած  
 հնհնուքը, իրերու և մարդերու մշտնջենական դիմակին  
 ներքև պահուած ստուծիւնները, բարեկամուհիներու  
 մատնութեան հաւասար փոփոտեքը, և կենաց այս հան-  
 գամանքէն հետևող կասկածոտութիւն մ' այս անտիա-  
 կան օրիորդին բնաւորութեան վրայ տխուր ներդործու-  
 թիւն մը կընէին երբեմնակի և ներա բարոյական ոյժերը  
 քայքայել կ'սկսէին : Այս պատճառաւ կարճատև ժամա.  
 նակի մը մէջ վիշտն և մտատանջութիւնը նաև ներա  
 վարդագեղ այտերը գոգաւորեր, իր աչերուն վարի  
 արտեանունքին ներքև հազիւ ը' դ' շմարելի ակօս մը  
 կազմեր, և ներա նրբին և թափանցիկ կայիին թեթև  
 գունատութիւն մը տուեր էին : Կէօզ Թէֆէ եկած էր  
 նէ, և անդ կը բնակէր տարիէ մ' աւելի, և այժմ իր  
 փոքր ինչ խախտուած առողջութեան վեճակը բարւո-  
 քելով վերստին ստացած էր իր առաջուն քաջառող-  
 ջութիւնը և հոյակապ շքեղութիւնը :

Օնտին միջահասակ, բարեձև և վայելչասէր անձ  
 մ' էր : Իր վրայ գուրգուրացող մօր մը թեւին ու նայ-  
 ուածքին ներքև լաւ պաշտպանուած և պահպանուած  
 կոյս մ' էր, չէ թէ կէս - կոյս մ' այլ անարատ կոյս  
 մի, շնորհալի արարած մի, որուն վրայ դժուարին էր  
 չզմայլկլ զինքը մօտէն ճանչելէ ետք : Իր սևաթոյր յոն-

\* Աքթէոն Թէպացի երեւի որսորդ՝ որ յոնոգիկով Անանտայ  
 մերկութեան նայելու՝ եզերուի փոխուեցաւ այս աստուածուհիին հրա-  
 մանաւ և շունբէն կերուեցաւ :



քըն և ասոնց ստորևը շքաւորող ոսկեթել ազրներ խորհրդաւոր շրջանակ և կիսաստուեր մը կը կաղմէին ներս սեւագեղ աչերուն, որոնց նայուածքը անգիտակցապէս վտանգաւոր, իսկ փողփողունն ակնախտիղ էր: Բնական պչրասիրութեամբ, կամ իր բնաւորութեան յատուկ մի անտարբերութեամբ թոյլ կը տար որ հոսին և ծփան իր իարտեաչ մագերը, որք մերթ հովէն կը տարուբերուէին և մերթ կը թռէին նախ դէպ իր ճակատը, որ լուսաւոր գաղափարներու և խորին խորհուրդներու մեհեհն մ' էր, նախ դէպի միզն որ կարասի պէս սպիտակ էր, և ուսիէ միագոյն բիւրեղէ ակնոց մը կը կախուէր ոսկիէ բարակ շղթայով մը: Հովը կարծես իրեն յատուկ գործ ըրած էր Օնտինը չարչարել՝ ներս աղուզարդը չփոթելով, վարսիցը և շղարչին վրայ յարձակելով, և ահա նէ կը հարկադրուէր հովին այս անողոք չարամրտութեան դէմ կուռիլ՝ ձեռքը ստէպ վեր ընելով, որպէս զի իր բացուած սև շղարչէ քողիկին երկու ծայրերը իր գլուխին վրայ բերէ, և իր ճակատը վարագուրող մետաքսափայլ վարսերը մեկուսէ (écarter): Այս չարմաման ատեն իր գիրուկ ու բոլորագեղ թեկն մինչև արմուկը տամածուող շքեղութիւնը մասամբ իւրիք կ'ընդունչմարուէր: Չեռքերը միշտ մաքուր էին, և աշպոթի (albâtre) փախուսիկ գոյնը ունէի. իսկ իր նրբաթել և քնքոյշ մատերը նոր զարդ և շնորհ կընդունէին բիւրեղի պէս փայլուն և վարդագոյն ըղունգէն:

Երբ Մովանէնն ամենափոքր ակնարկութիւն մ' ընէր հովին մատնութեանը շնորհիւ յանկարծապէս ընդունարւող ներս մարմնային շքեղութեանց, նէ կը բարկանար, կամ բարկանալ կը ձևացնէր, նաև կը ժպտէր, փասն զի վերջապէս կին մ' էր, թէև աստուածունի: Բարկութիւնը ներս դէմքին գիշերն իսկ ժպտան արևն էր: Իր պչրային ախորժելի ձևերուն մին էր իր զուարթ դէմքը խոժոռել և վտանգի ենթարկուած վեստեան կոյսի մը պէս շիկնելով բողոքել, սրամտիլ իսկ, կամ այնպէս զգալ ձևացնել կիներու յատուկ բնական յաջողակութեամբ մի ամեն անգամ որ Մովանէնն ակնար-

կութիւն մը կընէր ներս ֆիզիգային հրապոյրներուն: Երկնային իրաւունքի վրայ կոթնող թագուհի մը պէս նէ վեհօրէն նուիրական կը համարէր իր անձը, փասն զի զեռ Հիմէնեան գաղտնիքը չէր գիտեր կամ թերի էր իր գիտութիւնն այս մասին, և այս անձին դէմ որոտիսեան խորանի մը հուրը ժարելու ոճիրը գործած, սրբապղծութիւն ըրած կ'ըլլար ո՛վ որ հետը խօսելու ատեն սեբրա ֆիզիգային կատարելութեանց ակնարկութիւն մ' ընէր, յանահրատար ներս գեղեկութիւնը երկրու յանդգնէր: Օնտին սանձանուած էր ամուսնութեամբ հանգիստանալու Լուքրէս մի, այն հռոմէական մարտններու մին որք իրենց մարմնոյն անարատութեամբը կուզեն փառաւորել նոյն իսկ իրենց մշտնջենական ննջաբանին հողը: Աստուածունի մը՝ կը համարէր ինքզինքը, ծայրայեղ և անգութ գիցուհի մ' որ առ այժմ լոյ խուսկ և երկրպագութիւն կընդունէր, և որ ըլլանգնելուն միոյն պագնուիլը իսկ ապտակի արժանի յանդիսութիւն կը համարէր: Տ . . . ին, Մովանէնն որ այս գեղանիին բայասարկուն և երկրպագուն հանդիսացած էր անդիմադրելի արիւիէ մը համակուելով, բանահի սի յատուկ անգործութեամբ և ծուլութեամբ Օնտինն հետը կէօզ անդ թէլիլ ըլլարներուն վրայ ստէպ ման կըգար: Այս շրթէլիլ ըլլարներուն ժամանակ երբ կը յոգնէր Օնտին և քայլելի կը զաղտէր՝ ճամբուն ժայռերուն միոյն վրայ նստելու և հանգչելու համար, Մովանէնն իսկոյն գտուլուէ բարձիկ մը կը հանէր գրպանէն, փչելով կուռեցնէր զայն և կը դնէր հոն ուր կուզէր հանգչիլ իր սրտին տիրուհին: Օնտին անոր այս խնամատարութենէն և պաշտպանութենէն կը յուզուէր որքա՛ն սիրուած, պաշտուած ըլլալը կըզգար և կ'հարցնէր:

- Ի՛նչ կերպով կարելի է վարձատրել զքեզ . . . :
- Ժպտելով և ինձ նայելով, կը պատասխանէր ան:
- Ժպտաս և նայուածքս բոլորովին ձերն են արդէն կը յաւելուր նէ, և իր գիւթական դէմքը կը լուսաւորէր ժպտողն ու նայուածքովը:
- կը ժպտէր՝ հագիւ հագ բանալով իր կարմրապեղ



չրթունքը, և անա նորափթիթ վարդի մը կը նմանէր իր փոքր բերանը, ուր ծիթի պէս սպիտակ և մաքուր, մանր ու փայլուն մարգարիտներու կրկին շար մը երևւան զարով կը լուսաւորէր ներա ժպիտը, և ուսկէ կ'արտաբերուէր կուսական շունչերու ամենէն ինկաւէտը Մովսէնին համար, կը նայէր այն խորին ու ներհուն նայուածքով, որ անտիական և անմեղ կոյսի մը յատուկ է, որ մոգական ոյժերու անգունդ մ'է, և ուսկէ հրաշնչութեան ենթակայ այլ գուցէ կամաւ և կամ երկնային հրամանաւ զսպում սիրուէտ և կաթողին զգացումներու հոսանքը զեռ ճամբայ չէր գտած դուրս ժայթքելու և իրեն արժանի երկրպագուի մը կեանք և երանութիւն պարգևելու համար:

Օնտին պժգում կզգար շինծու պչրասիրութենէ մը թկարդուած սատանութեանց, և աղջկան ժը անունը և ապագան վտանգող թեթեւութեանց դէմ: Մանաւանդ որ իր այժմեայ վիճակին մէջ զինքը գրաւող զգացումներուն հզօրագոյնը տակաւին վիշտն էր, որ չէր ուզեր մնալիլ և որ ներա հոգւոյն փարած էր սաստկութեամբ: Իր ընդունած կրթութեան և դաստիարակութեան բերմամբ անպարտելի հակակրութիւն մի կզգար կենաց այն պայմաններուն դէմ որք անհրաժեշտ են, այլ տգեղապէս իրտկան: Իր վառվուռն երեակայութեան և յղկուն մտքին նախընտրուած անունըն էին Վ. Հիւլիօ, Լամարդին, Էմէ - Մարդէն և Տիկին տը Սթալը, Հիւլիօյին Հոգեկատարիւնը (Contemplations) իր սրտին աւտարանն էին: Առէպ կը կարգար այս երկը, մանաւանդ այն քորթուածը, զոր անմահ բանաստեղծը նուիրած է իր մեռած աղջկան յիշատակին, և այս կանուանի «A celle qui est restée en France»: Օնտինի զաղափարները բարձր և զգացումները վսեմ էին բոլորովին: Մովսէնին համար նէ մի պակասութիւն ունէր, — եթէ երբէք կրնայ պակասութիւն համարուել — այն է շատ սիրել իտեականը, կատարեալը, բացարձակը յաննայի և ամենուրեք: Երեսը թէ տակաւին պատրանք չէր ունեցած: Իրեն համար անձանօթ կը մնար այն մեղամաղ-

ձային պատահարն որ ամեն կեանքի և հասակի համար անխուսելի է, և որ կանուանի փարատումն պատրանայ: Տ... քն համոզուած էր թէ նէ իր ընթերցումներու տպաւորութեանց ներքե փոքր ինչ ճնշուած ըլլալով յանգետ կը սխալէր և կը մեղանչէր իրականին իրաւանց և երանութեան պահանջմանց դէմ: Նէ եզած է տեսլականին սիրուններուն մին. զգալով հանդերձ թէ կարելիին սահմաններէն դուրս սաւառնին և հոգետեսութեամբ ապրելու յոժարութիւնն որ մը փարատուելու սահմանուած պատրանք են. որք դէպքերու և մարդերու բարոյական տձեւութիւնները աւելի ազդու կերպով զգացնելու կը ծառայեն միայն Օնտին իր այժմեայ վիճակին մէջ չէր կարող ըմբռնել ապագային մէջ ընդունարուող այս ճշմարտութիւնը, վստն զի նիւթական կենաց պիտոյքն ու պահանջումները նոր կայսէին ներգործել իր վրայ: Իր հոգին Աստուծոյ կողմէն պատրաստուած սպիտակ, անարատ էջ մ'էր որուն վրայ անազնիւ կիրքերն և յոռի մտածումներն ոչինչ կրցեր էին տակաւին մրադրել: Պարզ և վսեմ էր սիրտը. անկեղծութիւնը, նաև վեհութիւնը յատկապէս անդ յիներ էին իրենց բոյնը: Ատութեան ատջն գանիլ կզգար քսութեան դէմ արձամարձական արտուած մը կը կրճր և ամեն նուտատ իրերու դէմ ունէր ծիծաղ մ'որ անթարգմանելի էր: Ընդունուած ծառայութեան և ամեն նախօքր բարութեան փոխարէն իր հոգին ինկարոյր բուրվառի մը պաշտօնը կը վարէր պարկեշտութեամբ Սրամիտ և պարզասիրտ էակ մ'էր: Երջանայեայ խմացականութիւն մի, և վնասակարը օգտակարէն զանազանը կրնալու չափ դատողութիւն ունէր: Սյս կատարելութեանց չնորհիւ նէ ծուլակի մը մինչև եզրը համնից և անոր մէջ թուալլոր ընկնիլ ձեւադնելով հանդերձ դիտէր յանկարծ կանգ առնուլ, նաև չնորձայի կերպով շինիլ՝ գողցի անպարկեշտութեան ակնարկող փոխուքի մը լրբութիւնը բնագոյմամբ զգալով, և սրտմուտ թեամբ սպտակելով:

Օնտին տակաւին չէր սիրած, թէն շատերը զինքը



պաշտելու չստի սիրած ըլլային: Պիտի սիրէր անշուշտ  
կրք իր մտաւարդարին հանդիպէր: Ան ատեն իր հոգին  
պիտի հաստատէ թէ իր ձիրքերն անսպառելի են իր բա-  
րոյական արժանիքը գնահատելու և զինքը գուրգու-  
լով սիրելու և շարգելու կարող էակի մը համար: Ֆրան-  
րանսին կրնն ըսաւ անոր. je sens que tu n'aimeras  
que moi seule: Օնտին այսպէս խօսելու իրաւունք ու-  
նեցող կոչներուն մին էր: Կարող էր ըլլալ Տանթէի մը  
Պէաթիւսը զոր Լամարգին իրաւամբ կանուանէ «խէա-  
կան փկլխափայտութեան և սիրային խնաստութեան անձ-  
նաւորութիւնը»: Պէաթիւս գերեկրային գրախափ մը  
պերճութեանց և երանութեանց սահմանները կը տանէ  
զճանտէ, և անա Օնտինն ալ գէպ երկրային բերկրու-  
թեանց գրախափ կրնայ « աջնորդել զով որ իր անու-  
նը, սիրտը և կեանքը յատկացնէ ներս երանութեան:  
Պէաթ է խոստովանիլ թէ ծայրայեղ փառասիրութեան  
կամ անխորժ երիտասարդութեան յատուկ երազ մը  
չէր իր միտքը և սիրտը ուրիշի մը յատկացնելու պար-  
տաւորող ծագական օրիորդի մ' այս պահանջումը: Նէ  
գիտէր թէ իր անձն իրեն համար նուիրական է. թէ իր  
իրաւունքն անկապտելի են, և անա իր ծագիկ հասակը  
կալմող ժամանակներու պատուանդանին վրայ չէ թէ  
հպարտութեամբ այլ մեծարտութեամբ, չէ թէ մեծա-  
մաւութեամբ այլ արժանապատուութեամբ կանգնելու, և  
այս անձին, և այս իրաւանց զէմ թեթեակի կամ ա-  
նալ գարար վարուողը արհամարհական նայուածքով մը  
շանթահարելու սովորութիւնը ունէր:

Ըսի արդէն թէ Օնտինի շրջապայտութեան ժամանակ  
ներս կը նկերանար Մովանէնն՝ որուն սիրտը կտնայի  
հրաշիկ վին կը նմանէր կարծես: Ստուութեան զէմ բը-  
նածին ատելութիւն, անոքներու և անմեղներու համար  
պաշտպան և օգնական կանգնելու յօժարութիւն, զըմ-  
բողոքութեան ժամանակ ինքն իր բարոյական լինակին  
ապաւինելու սովորութիւն, բանասարկուներու և շարս  
խօսներու գրարանութեանց զէմ խորին անտարբերու-  
թիւն և արհամարհանք, գեղեցկին առջև երկրպագու-

թիւն և բարիին ու օգտակարին համար անձնուիրու-  
թիւն, անա ասոնք էին Մովանէնին ընտաւորութեան յայ-  
տարար հանգամանքը: Բայց Տ... Օնտինին հանդիպե-  
լէն առաջ իր հոգւոյն մէջ անազին դատարկութիւն տի  
և կենաց զէմ անդարմանելի անյուշութիւն մը կզգար  
Այլ Օնտինին ներկայութիւնը, և ներս ազու աչքի  
արտափայլող վճիտ հոգւոյ մը փափկութիւններն անոր  
հոյեկան դատարկութիւնը լեցնել և անյուշութեան հի-  
ւանդութիւնը դարմանել սկսեր էին հանրագարման զե-  
ղի մը յատուկ ազդեցութեամբ:

Տ... Բիսկանդացի ուղեւոր մ' էր: Դրուժան տար  
փուէիէ մը մասնուէիէ ի վեր կնորսութեան կամէու-  
թեանց հրաժեշտ տուած և հիմա պատկերահանութեան  
որսորդութեան և ընթերցման կիրքով գրաւուած վա-  
ղեմի Մովանէն մ' էր Օնտինին բարեկամը, նաև նետա-  
չնորհագեղութեանց և չքեղութեանց պաշտոն հանդի-  
սացած էր՝ Բրինքիւրջի մէջ ստէպ ունեցած հանդիպում-  
ներու և տեսութեանց շնորհիւ: Նա արդէն զխաճ էր  
Օնտինին ստիպելական գեղեցկութիւնը և զնէ սիրած  
էր լսի արուեստագիտի բնութեամբ և գեղեցկին սիրտ  
հարի յօժարութեամբ: Ի մօտուտ ուսումնասիրած էր  
գեղանիին բոլոր մասկան և բարոյական ձիրքերը, և  
ներս վրայ կը հսկէր իր գանձին վրայ անընդհատ հսկող  
ներս վրայ կը հսկէր իր գանձին մամանակ երբ Օն-  
Շայլօթի մը պէս: Շրջապայտութեան ժամանակ երբ Օն-  
տին ժայտին վրայ կը նստէր և կը հանգչէր, Մովանէնն  
ալ իր խնամուէիին առջև գանուող հպատակի մը պէս  
կա՛ր կանուոր, և նոյն միջոցին իր միտքը, սիրտը,  
նայուածքը, բոլոր էութիւնը մտգնխական մարմնոց մը  
պէս ձգող ու գրաւող լուսեղէն պատկերին Օնտինին  
մերթ ընդ մերթ կը յատէր իր աչքը, ուր գորովայի  
զգացումէ մը գրաւուած հոգւոյ մ' օրհներգութիւնը կը  
մարմնաւորուէր չիթ մ' արտասուքի մէջ, պաշտելի ա-  
մարմնաւորուէր չիթ մ' արտասուքի մէջ, պաշտելի ա-  
բարածին, Օնտինին աչերուն վրայ որք իրենց արտեա-  
նունքին ներքև խոնարհելով պահուելու փորձ կընէին  
ու յիշան ընական ամօթխաճութեամբ, այլ նաև գուցէ



բողորովին չմտնելու համար երանութեան ու միանգամայն մեծարտութեան այն զգայութիւնները (sentation) որով կ'ողողուէին իր սե ու մեծ աչերը :

Տ. . . անգամ մի յանկարծ նշմարեց Օնտինի հանգստեան ժամանակ թէ տիրութենէ կը գրաւուի ներապայծառ ճակատը, ուր մտաասանջութիւնն և նիւթական կենաց յանկարծական անպատեհութիւնները տակաւին չկրցեր էին իրենց տղաւորութիւնը թողուլ, զիտեց նաև թէ ներս աչքը դժուարաւ զսպուած արտօսի մը փոքր ինչ կը խնայուէր :

Je donnerais dix rois de France;  
Et vingt emirs de Dahomey;  
Pour ôter à Ondine une transe;  
Une nuée au mois de mai!

ըսաւ Մովսէսէնն բանահիւսի մ' այս տողերը յիշելով և փոքր ինչ փոփոխելով :

Օնտին անպատոււմ քողցրութեամբ անգամ մը նա յեցաւ իր բարեկամին և կրցաւ հասկցնել թէ իր մի նայուածքով կարող էր մշտնջենապէս վարձատրել իր վրայ հոգի առողջ Մովսէսէնը : Տխրած էր նէ՛ ըստ սովորութեանը՝ դարձեալ մտքին առջև բերելով իր անզուգական մեր պատկերը և իրեն յորդորները, և անազեղանի ենդիւհեւոյ մը համար շինուած և իրստ յարմարութեամբ յիշուած այս տողերուն մէջ գտած էր առժամեայ պիտիւում մի իր թախճութեան դէմ :

Արեւին սկաւառակն հորիզոնէն աներեկոյթ ըլլալու կը մօտէր, և իր ճառագայթները մի քանի սպիտակ սուպերու ձայրերը կ'ոսկեզօծէին : Օնտին ժամացոյցին նա յեցաւ և խսոյն ոտք ելնելու և տուն վերազառնալու պատրաստուեցաւ : Պահ մ' ևս հանգչէ՛, ըսաւ Մովսէսէնն անձկութեամբ : Անոր նայուածքը ովկիսան սի աւազուտ ափանց վրայ խրոզ դժբազդի մը պէս Օնտինի աչացն անկ' ընդը կը սուզուէր անդ գողցիս հեծկտացող սգահար և վշտարեկ հոգեոյ մը հառաչանքը լսելու և մխիթարութեան իրօքեր գտնելու համար :

Օնտին բողորովին յուզուած և երախտագիտութեան անկեղծ զգացումով մը համակուած էր : Մովսէսէ՛ր ներա աչերուն նորէն թըջուիլը նշմարեց, և — ինչո՞ւ կը լաւ . հարցուց :

— Վասն զի կղզամ թէ մօտալուտ է մահս, և վրստան չեմ թէ գերվզմանիս վրայ ծաղկեայ պսակ մը զրուի, ըսաւ Օնտին :

— Ամեն մարդ պիտի մեռնի, պատասխանեց Մովսէսէնն, այլ ես հրաման չունիմ որ ինձմէ յառաջ մեռնիս : Բայց եթէ Անանկին (հարկը) վճուծ է սր ժամանակէն յառաջ յաւանութեան սեամէն անդին անցնիս իղմէն յառաջ, վատան եղիր թէ փափաքդ կատարող, նաև գերեզմանիդ վրայ լացող մը պիտի ունենաս :

Մովսէսէնն այս հանդիսաւոր խոստման վրայ տրտմալի ուրախութեան ժպիտ մ' ուրուագրուեցաւ ներա շրթանց վրայ և իր աչերէն թափող շնորհապարտութեան արտօսի մի կայլակն իր քնքոյշ ձեռքին վրայ ինկաւ : Մովսէսէնն սաստիկ յուզուեցաւ, խոնարհեցաւ անբաւ սիրով պագաւ ներա ձեռքը և խմնց անդին մարդրիտը, արտօսի ա՛յն կայլակը, որ դեռ կը փալփէր հոն :

Օնտին ո՞ւր է արդ : Անշուշտ չգնաց անդի ախարհը, բայց կենաց անհրաժեշտ պիտոյքը առին տարին գինքը ալլուր, իսկ Մովսէսէն բանահիւսը Ծէրի գիւղի գերեզմանին մէջ սկսած է իր յաւանական քունը բաւական ժամանակէ ի վեր և իր սիրոյն վիպակը ինձ պատմելէ տարի մ' ետք :

Բրիկֆիթո, 1894

Գ. Զ.





# ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ՝ ՅԻՇԱՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## Է Ջ Ա Ր

ՅՅՏՅ Յունիսի 9 ին ուրբաթ կէսօրէն Լաք Բի-  
րէալէն մեկնեցաւ Բտալական Վօսթօսօ շողենասն ուր  
Ես և կինս Տիկին և Օրիորդ Բրիսաֆն Կ. Սպարդալեան,  
Իզիբրէն մտեր էինք Պրանսա երթալու համար:

Մինչ շողենաւին վերին յարկին վրայ մկամաղծօրէն  
մտն կրկացի յաջ և յահեակ, Վօսթօսօն իր ընթացքը  
փութացնելով աջ կողմը կ'իջայուր Սալամինի և Էկի-  
նէի կղզիները ձախ կողմն ալ դամաքային Յունաստա-  
նը, որուն ժայռուտ, բարձր լեռներն և հեղինական Սը-  
շպեղագոսի մի քանի կղզիները սկսեր էին հորիզոնին  
հասարակութեան և անտունային բարեխառն օրուն մը  
վերջարուսային տուեքներուն մէջ հեղձեալ փոքրիկ  
անհետիլ: Ժամերով շարունակեցինք նաեւ Գիշերայն  
անցանք Չերիկօի նեղուցին և Մաթարանի հրուանդա-  
նին առջեկն՝ առանց անանելու այն զանականը որ կրտ-  
ուի թէ անոր բարձունքէն օրհնութիւն կրտայ և ողջ-  
երթ կը մաղկէ նաւորդներու և ուղեորներու: Առտու  
կանուխ նորէն Վօսթօսօյի վերին դասիկնին վրայ ենք,  
կը նաւենք Յոնիական ծոցին մէջ և մեզ կը մնայ առ-  
նուզ տակաւին երեք հարիւր յիսուն մղոնի չափ ձամ-  
քօյ մինչև Իաթանա հասնելու համար: Ալ բոլորովին  
դ սրբաձ են նշմարուելէ քաղաք և ցամաք: Ի հեռուստ  
մերթ ընդ մերթ հորիզոնին յետին սահմաններուն ժող  
կերեկն մի քանի առազաստաւոր նաւեր, նաև շողի-  
նաւերու ծխաններէ ելնող և խկոյն խտացող ամպա-  
նման սպիտակ շողիներ, որք մեզ կ'զգացնեն մարդա-  
բնակ աշխարհի մ' էութիւնը և կեանքը: Եւս քան զԵս  
կը յառաջանանք, և ալ ինքզինքս կը դանմ թաղուած

երկու անբաւութեանց մէջ. մին է եթերական, ուր կը  
սաւառնի նայուածքս, միւսն է ջրալին որուն անդուն-  
դը կը խորասուզի միաքս, մինչ ինքզինքս կ'զգամ զը-  
րաւուած ախորժկի ծուլութեան և անգործութեան ըզ-  
գացումէ մ' որ Յոնիական ծովը չըջապատող մեզմ և  
քաղցր կլիմային յատուկ է ամառուան մէջ: Որ և է  
զիրք ձանձրայի կը թուի ինձ և անընթեռնի՝ այն հը-  
րաչալի մատնին քով որուն հեղինակն է արեգերական  
իմացականութիւնն և որ կանուանի Բնութիւն: Անյազ  
նայուածքիս անսպասելի անուանն են Միջերկրականի  
ջուրերուն յատուկ կապուտագոգութիւնն, անընդհատ  
կազմուող և լուծուող անլերջանալի արիներուն վրայի  
սպիտակութիւնը և այն փրփրայի տիտն որ Վօսթօսօյի  
պտուտակէն շարունակ կը հորդուի և կը փակուի եր-  
կուստեք արշաւող ջուրերէն:

— Ո՛րքան կը սիրէք երազելը, պարոն, ըսաւ ձայն  
մը:

Ձայնոցն էր ուղեկիցիներուս մին, Օրիորդ Բրիսաֆն  
Կ. Սպարդալեան, որ Պրանսա կ'երթար հիւանդութեան  
մը դարմանը Օզ-Օ-Պօնի՝ ջուրերէն խճրելու համար:  
Ընթացին ձամբորդութիւնը, շողենաւային կեանքի յա-  
տուկ հանդարտ ժամերու անգործութիւնը, մաքուր և  
զազջ ողի մը փրկաւէտ սղղուած թեթև կարմրուք մը  
ծաւալեր էին անտիական Արմենուհոյն աչնահար զէմ-  
քին և կը տային իրեն առժամեայ զուարթու-  
թին վրայ, և կը մոռցնէր իր հիւանդային միժակէն ար-  
տապրուող և միշտ ներս միաքը գրաւող հնճուքը: Առ-  
ժամեայ, ըսի՛ վասն զի իր ծաղիկ հասակին բերմա՛ր  
փոխանակ միշտ զուարթ ըլլալու սովորաբար տխրու-  
թեամբ մը կը համակուէր նէ երբ կը խորէր և ըստ իս  
սխալմամբ կը կարծէր թէ ինքն արդէն արձանագրուած  
է այն կրիտասարդ նահատակութիւններու ցանկին մէջ զոր  
անողբքելի ախտ մը կը պատրաստէ ստէպ ձակատաղի  
մանայլայլի անողորմութեամբը:

Ինչ բանի վրայ երազելս յայանելէն Լաք ծովին յըս-  
տակութեան և խորհրդաւոր կապուտակութեան վրայ



իր կարծիքը խնդրեցի և ինձի հետ զմայելու հրաւիրեցի զինքը :

Օր . Բ . Սպարզալեան, որ մեծանուն Մամուրեանի ուսումնաւարտ աշակերտուհիներուն մին է, խոնարհամտութեամբ և քննութիւն մը տալ և ձեռով գիտել տուաւ ինձ թէ Միջերկրականի կապուտակութեան պատճառն է ծովին մակերեսի ջուրերուն աղիութիւնը որ ամեն տարի չողիացող ջուրերէն մնացած աղով կը սաստկանայ . թէ բոլոր Անգլիան չորս միքրի խորութեամբ կրնայ ծածկուիլ այն աղերէն, որք տարուան մը մէջ բոլոր ծովերու մակերեսներէն չողիացող և չորս ու կէս մէթր խորութիւն ունեցող ջուրերէն կը ձգուին անոնց վրայ և տեղի կըտան ներքովիանեան աճագին հասանքներու և ուրիշ զարմանալի և խորհրդաւոր երեւոյթներու, և թէ նէ ամենակարող Սրարչագործի մ'անբաւ բարութիւնը կը տեսնէ այս երեւոյթներուն մէջ, որոնց մին էր ծովերէն արտադրուած ջրային չոգիներէն մըթնոյտրտան մշտնջենապէս տողորուիլը, և անոնց շնորհիւ երկրագունտիս արգասաւորուիլն, որով ամենուրեք անփոփոխ և հաստատ կը մնար կեանքը, տիեզերակա՛ն կեանքը : Նէ սոյն միջոցին կը հիանար ընական ոյժերու հրաշագործութեան, ինչպէս ես ալ կ'զմայելի իմ խօսակցիս, զու իմա գերմարդկային պատկերածանի մը ստեղծած սիրուն ու ներհուն արարածի մը պատկերին առջև . . . Օր . Բ . Սպարզալեան չուզեց ժամանակ տալ ինձ որ շնորհաւորեմ զինքը՝ իր բացատրութեանց և կարծիքներու վրայ, և իմ ողորջալի ակնարկութեանս փոխարէն չգիտեմ որո՛ւն գոհունակութեան ժպիտ մը արձակելէն ետք . . . հեռացաւ թէ՛ փոքր ինչ սաստկացող քամիէն զգուշանալու և թէ՛ վարը ամենուս սպասող ճաշի սեղանը իր ներկայութենէն չզրկելու համար : Հարկադրուեցաւ լիչելու թէ յիս ես ասունի հետ կար նստ անասուն կենդանի մը, և փութացի իջնելու վտարօրի ուղեորաց ընդարձակ բան ուր ընտանաբար ուշս գրաւող առարկաներուն առաջինն և կարեորագոյնն եղաւ Շարայի արժանի հրատոյրներովը զարգարուած ճաշի մեղան մը :

Բիրէսլէն չոգեմաւ մտած էր պարսն Ն . . . յոյն սեզանաւոր մը, և սեւերով հագուած չքուած հեյլնուհի մ'որ սնոր կինն էր և յեւրոպա կ'ուղեորէր Աթէնքի մէջ մեռած մօր մը սուգը Զվիցերիոյ լիճերուն մօտ անցունելու և սգահար սրտի մը սփոփումը անդ զանելու համար : Ունեցանք ուրիշ ուղեոր մ'ևս, որ Ռուս մ'էր յաղթանդամ, Բ . . . անունով, և որ մեզի պէս Բարիզ կերթար արուեստահանդէսը տեսնելու համար : Գլխաւոր զինի մը չոգիներէն ամենուն գլուխը փոքր ինչ տաքցաւ, համարձակութեան և հանգստութեան շեշտ մը առաւ ճաչէն ետք սովորաբար սկսող խօսակցութիւնը, և ա՛ա քստորդի մը մէջ՝ կարելի եղաւ ինձ գիտել թէ հեյլնուհին իր գեղութեան և ամուսնոյն հաւատարմութեան ապաւինած՝ հովեր կ'առնուր : Աթէնքի մի շփացած զաւակն էր նէ, և կուզէր հաւտացնել թէ իր մեղբայրուանային ժամանակի յատուկ հրատոյրները կրցած է ասրինքէ ի վեր անխախտ պահել և անոյցմով տակաւին գերել իր ամուսինը, որ Բիզանդիոյ սմեղուկ յոյներուն մին էր, և իր շղոտ կնկան հովերուն ու ատիկեան ժպիտներուն վրայ հոգի տալ կը ձեռացնէր՝ ան շուշտ ներս հետ զգուշութեամբ վարուելու և պատրանքը չհիարատելու պատճառներ ունենալով :

Անձնեայ Ռուսը, որ Բեթրապուրի մէջ փաստարան մ'է կ'եր, պաշտօն ստանձնած էր ուղեորութեան և Բարիզի արուեստահանդէսին վրայ նամակներ յղելու Ռուսիոյ մայրաքաղաքին մի գրական հանդիսին : Ծաչէն ետք գրատիպ-մեքենայի մը վրայ մատերը ժուռ անկով ալ և ալ լիկրթութեամբ վրայ տպուած նամակ մը աւարտելէն ետք գրանիկ էր բերան չոգեմաւին վերի յարկն ելաւ մեզի հետ և հոն ամենայն անձգութեամբ երկնցաւ բազմաբանի մը վրայ : Միտքը զրաւ հոն բաց օդին պատկի և գիշերը անցունել՝ առանց զգուշանալու գիւշի ուսն խոնաւութենէն և բաւական աղղու ցուրտէն սրուն ինքն արզէն սովորած կերևար իրը հիւսիսի հարազատ զաւակ : Արհեստ, գիտութիւն, փիլիսոփայութիւն, քանտիլատութիւն, ամեն բան նիւթ էր սնոր



խօսակցութեան : Երբ կարգն ի կաւ քաղաքակառուցեալն, պարոն Ք. . . սկսաւ իր երկրին կառավարութեան գերազանցութիւնները հռչակել : Սկսալ փոքր ինչ կասկածիլ այս ուստի անկեղծութեան վրայ, այլ մտածելով թէ կրնամ խղճի հանդարտութեամբ և աներկիւզ տեսնուել Ռուսի մը հետ՝ եթէ պատահարօր իր մորթին ներքե թաթարի մը հետ սպրդած և պահուած ըլլար նաև Վիտօր մը, տուի անոր Վաթիւլ Մանտէսի մէկ երկր : Ռուսիոյ քաղաքակրթութեան եռանդուն ջատագոյն այս գիրքը կարգաւոր կրնոր, եթէ արդէն չէր գտներ, ճիշդ գաղափար մը կազմել ան լատինական բառին (1) վրայ գոր առաջին անգամ թիւրքիներէք գործածեց :

Չեանեալ որն կիրակի առաւօտ ժամը 5 էր երբ խրքիկէս հեռագիրակ ի ձեռքն վեր պատկեցի հորիզոնին չուրջը նայելու և ցամաք տեսնելու համար, առ ոչինչ համարելով առաստեայ նաղեցիկ քամին և զեռ խոնառութեամբ ի մթնոլորտի մը հաւանական մասնութիւնները : Անրեղհատ կը նայէի հեռագիրակով Յոնիական ծովի զէպ ի հարաւային արեւմտեան կողմը, բայց զեռ ոչինչ կերեար : Ապխասկագոյն մտայ մը հորիզոնին մէկ ճայքէն միւսը կը տարածուէր իմ տեսութեանս առջև իրր անազն վարագոյր մը : Այնքան անթափանց էր այն որ Վոսթոյի ծխանին սուլիչը գազանային անոնի տղադակով մը ստէպ կը մոնչէր, կը դոտար Յոնիական և թիւրքիսան ծովերէն կրթեկեկոյ չոգենաւերու և անագատաւորներու հետ ընդհարման մ' առջիւր աննկու համար : Այսպէս ժամի մը չափ գողցես առ խարխափս նաւեցիներ, ապա մասնախորդն սկսաւ հեռզհետէ խտանալով նուազիլ և ցրուել արեւգական ճատագայթներու ազդմամբ :

Վոսթոյի հրամանատար Պ. Լուէիմի Մասթիքայ առ սեան՝ որ նաւախորութեան յատուկ կամրջկին վրայ կեցած էր՝ նշմարով մը զիս քովս կոչեց և հորիզոնին վերեւ ինձ գտնել տուաւ սպիտակափայլ ամպի նման քան մը : Մարդկային աչքը ծովի վրայ տասներէք մղո-

(1) Nihiliste.

նէն անզին չլրնալով որոշակի տեսնել, զեռ չէի կարող զանազանել երկնից վրայ բարձրացող այն ամպանման սպիտակութիւնը որ չոգենաւէն յիտուն մղանի չափ հեռի կը նշմարուէր : Բայց քիչ մ' ևս յառաջելով ալ՝ կարելի չեղաւ ինձ հեռացնել նայուածքս և հեռագիրակս այն հեռաւոր կէտէն որ ևս քան զեռ մ' օտննալով սկըսաւ իր բնական ձեռքն ընդնշմարուել : Այն կէտն ոչ այլ ինչ էր բայց եթէ էանայի հրաբխանէն ելնող չոգիներու անազին սիւնը : Ստոնք հրաբխին խառնարանէն վեր ելնելով և խտանալով կը կազմէին ինչ որ ժամ մը առաջ ինձ կերեար իրր հորիզոնին վերը բարձրացող սպիտակ ամպ մը : Պահ մ' ևս ճամբայ սուլնք և անսաղոտապէս ուրուազրեցան Սիկիլիայի արեւմտեան եզրերը, ասոնց վրայի զալարազարդ և ստուերաւոր ըլուրները, բարձրաբերձ լեաներու չղթայ մի, և ասոնց վերեւ իր 3450 մէքր բարձրութեամբը տիրող էանան որ Եւրոպայի հռաչեաներուն մեծագոյնն և բարձրագոյնն է : Անհուն դարերէ ի վեր իր սանդարամետական գործունէութեամբը ներքուստ կամ արտաքուստ կը վառի այս հրաբխն որ այնքան երկրային և օդերեւութային յեղաշրջումներու և ազէաներու տեղի տուած է, և որու խառնարանէն Ամբուտքը նետուած է անշուշտ . . . տեսնելու և ուսումնասիրելու համար թէ Վիւլգէն և Կիկլոպներն էանայի անդունդներուն մէջ ինչպէս կը դարբնեն Արամազդայ շանթերը :

Ժամը 11 ին հասանք Բաթման, որ Սիկիլիայի արեւելեան կողմին հարաւային ճայքին վրայ բաւական նշանաւոր քաղաք մ' է : Բուրս կելնելով չըջկանք նախ քարափանց վրայ, որոնց օւաթոյր սպաքարերն էտ նայի հրաշնչութեանց ժամանակ արտահոտած լաւաներու քառակուսի կտրուներ էին. ապա կառք մտանք՝ տալէն քառակուսի մը մեր լուծան որ պատահամբ զեռնը կտք աղքատի մը մեր լուծան որ պատահամբ զեռնը ինկաւ, և որու վրայ բոկոտն ստամբակներու երամ մը յարձակեցաւ. անցանք փողոցներէ որոնց լայնութիւնը, յարձակեցաւ. անցանք փողոցներէ որոնց լայնութիւնը, ուղղութիւնը, մարտութիւնը և լաւալաչէն սալալատաուղղութիւնը, համարատու և պարտաճանաչ քակի մը հարթութիւնը համարատու և պարտաճանաչ քա-



զաքապետութեան մ' էութիւնը կը հաստատեն: Կանգ առինք փոքր հրապարակի մ' առջև և բաւական ժամանակ մեր ուշադրութիւնը տուինք Պելլիքիի մի հոյաչէն արձանին: Մտանք քաղաքին մայր եկեղեցին: Քաթանայի բարեպաշտուհիներն անդ առ ոչինչ կը գրէին Րէօմիլի մեղիկեայ սիւնակին մինչև 28 աստիճան բարձրացած ըլլալը, իսկ մենք ժամկոչի մը մեզ տուած ճարտարապետական տեղեկութեանց հոսանքէն հազիւ կըրցանք պրծիլ լուճայի մը շնորհիւ, վասն զի դրամն, ոչ միայն չուկայի, այլ նաև եկեղեցւոյ խորանին վրայ աշխարհի առաջին փրկիչն ըլլալու պահանջատութիւնը ունի այժմ ...:

Ժամը 3 ին Վուբորոն արդէն կը մեկնէր և ղէպի Մեսինա կը յառաջանար գողցես քերելով Միկիլիոյ արեւելեան եզրերը, ուր կը տեսնէինք պարտէզներով, այգեստաններով, ձիթենիներով ծածկուած բլուրներ, գիւղեր, գործարաններ, ամառանոցներ, երկաթուղիի կայարաններ, կամուրջներ, և փոքր նաւամատոյցներու կապուած վարքաներ, որք Յունաստանի արեւելեան եզրաց և Արչիպելագոսեան կղզիներու վիմուտ, չորաբնկ և ամալի եզրաց հետ զարմանալի հակապատկեր մը կրնձայեն: Մինչ այս, մինչ այն, և անա կը մտնէք Մեսինային որ Քաթանաէն 25 ծովային մղոնի հեռաւորութիւն ունի, և որու համբաւաւոր նեղուցէն մինչև մեզ կը հասնի Թիրենեան ծովի բացերէն փչող սասախ հով մը: Ժամը 4 ին հասանք Մեսինա, մտանք իւր շքեղ նաւահանգիստը, անցանք բերդին առջևէն, իսկոյն դուրս ելանք, կառք մտանք և սկսանք յամբարար ման գալ Կարիպալտեան պողոտային (Via Garibaldi) վրայ: Այն օրն Սուրբ - Յովնանու տուն էր, և կրօնական տուն մ' Իտալացիներու, նա մանաւանդ Միկիլիացիներու համար ազգային տոնի մը նշանակութիւնը ունի, փողոցներու մէջ տեղ տեղ կը տեսնուին Աստուածամանայ պատկերներ, որոնց առ և մտնը կը վառին, առաւօտէն միջև իրիկուն ըսց են եկեղեցիները, և միշտ բազմութիւնն անպակաս կերևի անոնց մէջ: Կարծես Բրիտանի

յատկապէս սիրած քաղաքներուն մին է այս: Եթէ Ե. մուսաղէմ իր ինչեցեայն ունեցաւ Հերոդոտի հրամանաւ, Մեսինա ևս ունեցած է իրը, Կապիտը՝ որ Վերեսի հրամանաւ այս քաղաքին մէջ ի խաչ հանուած է և որուն վրայ այնքան կողբայ կիկերոն:

Մեզի հետ էին Պ. Ն... և կինը, գեղանի հելլենուհին բաւական անճանգիստ եղաւ և քրտնեցաւ՝ երբ Արեւնա Բեղորո անուն թատրոնին մէջ իր սիրական ամուսինն քիչ մը չափէն աւելի հետաքրքրութիւն ցոյց տուաւ անտիական դերասանուհիներու ճարտար ուստուսումնութեան, սրունքներու պերճախօսութեան և այլ պարային սասանութեանց: Ընչէն ետք գացինք քաղաքապետութեան ընդարձակ պարտէզը (Villa Nazionale) որ ցորեկանման լուսաւորուած էր ի պատիւ օրուան տօնին և խուռն բազմութեան մ' որ զինւորական նուագածուներու խումբի մը նուագած էրնանի մի սրտայոյզ երաժշտութիւնը կը վայելէր, և կէս գիշերին վերադարձանք ի Վուբորո:

Երկուշաբթի կէսօրէն ետք ժամը 6 ին Վուբորոն յամբարար չարժիլ սրելով դուրս կլաւ մի կողմը քաղաքին բերդը, միւսը՝ քարափունքը ձգելով, Բարապիցօ ըսուած արեւմտեան եզրը քերելով և յառաջելով Մեսինայի նեղուցէն ուր Միկիլիան Գալապրիայէն հօժը քելօմնթրի չափ կը հեռանայ և որով Թիրենեան ու Յոնիական ծովի ջուրերն իրարու խառնուելով, տեղի կը տան վտանգաւոր հոսանաց: Ժամը 7 ին անվաստ անցանք հոչակաւոր նեղուցէն, և անգամ մ' ևս փորձով համոզուեցանք թէ Կարիպալտի և Միկիլայի յորձանաց վտանգը պիտարաններու և բանահիւսներու երեակապութեան մէջ միայն էութիւն ունի:

Մինչ ուղեկիցներս տակաւին սեղանին վրայ էին ըսց ի Ռուս փաստաբանէն որ երկաթուղիով Բալերոն ևր թալու գաղափարը մեկուտի թողած էր ծովային և հրաշտնային տեսարաններ վայելելու համար, նա և ևս չօգնուէին վերին յարկին վրայ կերթի եկէինք և մեր նայգենաւին վերին յարկին վրայ կերթի եկէինք և մեր նայուածքը ամենուրեք կը ժուռածէինք անյագարար:



Մեր աջ կողմէն կերևար Միլացցոյի հրուանդանը, իսկ միւս կողմէն Լիբարեան կղզիներուն խուճար: Օղբ բողբոսկին հանդարտ, ընականարար ձողն ալ միասպաղաղ և գլխովին անշարժ է: Խորին և համատարած լուսթիւն մը կը տիրէ հորիզոնին մէջ ամենուրեք. ճանճի մը բզզուճը, շիւղի մ'անկուճն իսկ գոռցէ լսելի ըլլար:

Ռոհանք և գզուանք կզգայի՝ այս լուսթիւն մէջ: Արեգօղիան տհազին սկաւառակը կիսովին սկսած էր մայրը՝ մտնել, մինչդեռ հորիզոնին վրայ զեռ երեցող միւս կէտին ակնախտից ճաւաղայթները, միմտղորտի խաւերուն մէջ ոսկեփայլ նկարներ կազմելով՝ կը ջղանային Լիբարեան Արշիպիղագոսին և Թիրեննեան ծովի տարածութեան վրայ: Ի հեռուստ որոշակի կուրուազրուէին և օր մ'առաջ մտնելէն ետք հիւսա մեղմիկ նիբնոզ ովկիանին վրայ կը կանգնէին ընդոր Լիբարեան կղզիները: Ասոնց խուճքին հիւսիսի կողմն է Սթրօմալոյ, հրաբուխը, որ 700 մէթրի չափ բարձր է ծովի մակարդակէն, և որուն խառնարանէն Թանճր մուխի սիւնակ մը կելնէր, կը բարձրանար, կը տարածուէր, հարաւային կողմն է Վիւլքանօ կղզին որ 800 մէթրի բարձրութիւն ունի, և որուն հրաբերանէն ամենաթանճր մուխի, ձծուճքի և հրախուան ընդերկրային կղզիանաց մի տխտանեան սիւն կլնելով հետզհետէ կը բարձրանար և ընդարձակուելով երկինքը կը վարագուրէր ու կը մթահարէր: Ճիշդ այս միջոցին Սթրօմալոյի և Վիւլքանօյի զէպ երկինք տարածուած սևաթոյր սիւները մեր վերելը կը կազմէին տեսակ մ'ահագին կամար, որու ստորեւէն արեգական սկաւառակին մնացորդ մասը հորիզոնին անդունդները մտնելով աներևոյթ կըլլար: Սլ վերջալոյսն աղօտապէս կատուերաւորէր ամեն բան, ժամն հանդիսաւոր և անկաշուք էր. Լիբարեան հրախոններու գործունէութիւնը հաստատող այս միտային և շոգեղէն սիւները, Էտնայի անդունդներէն զէպի Լիբարեան կղզիներն և անտի մինչև Վեղուվ տարածուող ընդերկրային շարժական հոսանքներն, որք այնքան յեղաշրջութեանց և աղէտալի պատահալաց տեղի առւած են: Էտնան, որւն գագաթն մեր

յետագարձ նայուածքին զեռ աղօտապէս կենթարկուէր իբր բարձրարերձ մի ամպ Վիւլքանօյի հրաշնութեան վիճակն, որուն վօսբօսօյի հրամանատարն առաջին սնգամ հանդիպլը ինձ կը խոստովանէր. անոր հրաբերանէն բարձրօնալով մինչև Միլացցոյի հրուանդանին վերելը ընդարձակապէս տարածուած մուխէն և շոգիէն մեր շոգենաւին վրայ մոխիրներու և հրաբխային կղզիանաց անձրեններն ինձ համար կը կազմէին շքեղ և փառայեղ պատկեր մը: Այս տեսարանին առջև, ընական ուժերու այս գործունէութեան և երևոյթներու առջև, վերջալոյսի խորին և լսին ժամերուն առջև որք կարճս թէ կայծակի արագութեամբ կանցնէին, անհնարին յուզմանք և զմայրմամբ համակուիր զգացի, ընկերային աշխարհի վերարերող մարդերու և իրերու վրայ մտածելու կարողութիւնն իսկ պահ մը կորուսի, և բոլորովին հոգետեսութեան յատկացուցի ժամանակս մինչև այն րոպէն ուր յառաջանալով զէպի Բալբրօս, ալ սկսայ ոչ ալ ինչ տեսնել ի խաւարի, բայց միայն երկնից լուսեղէն մարմինները...:

Գ. Զ.





# Ա Լ Պ Ո Ս Ի Մ Ը Մ Ա Տ Ն Ո Ի Յ Ի Ի Ն Ը

Օրիորդ Սրբուհի Խ. Տամկաճեան՝ բարգաւաճումի ընդունակ իր մտքին սրութեամբը վարժարանի մը գլխաւորաններուն արդն ու զարդը, և դպրոցական դասընկերուհիներուն համակրելին և սիրելին հանդիսացած է Մայրենի լեզուն և Ֆրանսերէնը ուսնելէն ետք դպրոցացաւ աշակերտուհի մ'ըլլալէ, և ուշիմ հորաքրոջը խնամակալութեան ներքեւ իր իմացական և բարոյական ձիրքը կատարելագործեց և ասոնց, ինչպէս նաև Ֆիզիկական առաւելութեանցը շնորհիւ յաջողեցաւ իր մկրտութեան անունին կցելու անունը և մականունը երկտասարդի մ'որ ժիր և անբասիր, արթուն և կամքով աննկուն, իսկ վաճառականութեան աշխարհին մէջ դիրքովը փայլուն և մեծանուն անձնաւորութիւն մ'է՛ր Օրիորդ Սրբուհին ընտրուեցաւ, ուղուեցաւ, և իր հարսանեկան հանդէսին արարողութիւնը նուիրագործող եկեղեցական խորանին ջերմեռանդ երկրպագուն, և թէ՛ անցելոյն և թէ՛ ներկային մէջ իր հմայական և առինքնող անունին համապատասխան համեստութեամբը եղաւ Տիկին Սրբուհի Մ. Ազնաւորեան, նաև անոր ժիր և հաւատարիմ ընկերուհին Այս ազնիւ տիկնոջ ընդունելութեան սրահն ալ՝ նրբամտութեանը և հիւրասիրական ախորժելի կերպերուն շնորհիւ՝ Իզմիրի Հայոց լուսագոյն և բարձրակիցիկ ընտանիքներուն և մշտաւորականներու դասին պատկանող այրերու և կիներու համար ուրբաթ և կիրակի օրեր հաւաքարան մը եղած, և ինքն ալ իր թէյարբուծի սեղանին հիւրամեծար տիրուհին հանդիսացած է։

Սրբուհին՝ ունի գեղ ու խելք։ Հայրը բարետոմիկ և ազնիւ անձ մ'էր, սեղանաւոր մ'էր, իսկ մայրը հայ-

կական գեղեցկութեան անմոռանալի մի տիպարը և Ռուսական գեղեցկութեան անմոռանալի մի տիպարը և Ռուսական փայլեւական վրձինի արժանի պատկերացու մը կրնար ըլլալ մինչև այն օրը, ուր իր թարմ հասակին մէջ կեանքէն զրկուեցաւ անողորմելի հիւսնդութեան մ'անգթութեամբը՝ սուգով և վիշտով համակելով իր գեղապանութեան վրայ զմայլողները։

Սրբուհին, որ հանգուցեալներուն կրտսեր աղջիկն է, իր ազնուարարութեամբը և իր սրահին այցելուները մտածելու և խօսելու հրաւիրող և գրգռող ակնարկութիւններով, կարծիքներով և հարցումներով Իզմիրի հայուհիներուն և ջոջուհիներուն մին եղած է իրաւամբ։ Լէյպնից փիլիսոփայն կրտէ թէ՛ «Ո՛վ որ դաստիարակութեան տէրն է կրնայ աշխարհիս կերպարանք փոխել»։ Սրբուհին այդ ճ. մարտութեան ներշնչուելով, հայ մանկըտոյն կրթութեան և դաստիարակութեան, անոնց մտքին լուսաւորութեան և սրտին բարձրացման վերաբերող ձեռնարկութեանց մէջ իբրովի և կարողութեանը համեմատութեամբը եղած է անխոնջ պաշտպանուհի մը, ընկերակիցներուն աշխատակից մը, նաև կարօտեալներու համար Մեկենասուհի մը։ Ամուսինը, Տիար Միհրան Սզնաւորեան Իզմիրի՝ վաճառականներուն առաջնակարգը կրնայ նկատուիլ իր եզրօր Տիար Մարգարին հետ՝ Իզմիրի, Սելանիկի, Կրետի և Մանչըսթերի մէջ իրենց վաճառատուններուն գործառնութեանց ճոխութեամբը և ընդարձակութեամբը։ Ունի ոչ միայն նիւթական այլ նաև իմացական դրամագլուխ մ'որուն առատութեամբը և իր սրտին անսպառելի գթասիրութեամբը Հայոց ազգին և մասնաւորապէս անոր որբերուն և որբուհիներուն ապաւէնն ու պաշտպանն եղած է։ Տեղն է իրեն համար յիշուել թէ՛ «Մարգուս արժէքն իր գործերէն կարտագրի»։ Հիւսիսական է այս ճշմարտութիւնը՝ Միենոյն ճշմարտութիւնը պէտք է հաստատութիւնը՝ Սրբուհի Ազնաւորեանին համար, որ իր ոտնի Տիկին Սրբուհի և ազգասիրական բնաւորութեամբը կը զորմասիրական և ազգասիրական իր հոգւոյն և քսակին գանձեյաջողի ստէպ նուիրելու իր հոգւոյն և քսակին գանձեյաջողի ստէպ նուիրելու իր հոգւոյն և քսակին գանձեյաջողի ստէպ նուիրելու և կենաց փոթորիկներու մատնուած ըլլալու հարններու և կենաց փոթորիկներու մատնուած ըլլալու հարններու։



թշուառներու, կը հսկէ իր շնորհալի և ուշիմ զաւակներուն կրթութեան և դաստիարակութեան վրայ, ամենքն ալ ներուպական բարձր գպրոցներ զրկելով, և անոնց ամենուն ապագային հոգովը զբաղելով, ամենուն վրայ հսկելով սոբլեճարար, այսինքն մայրական արիութեամբ և գորովին զօրութեամբը: Նէ՛ ամուսնական հաւատարմութեամբը և պարկեշտութեամբը հոռմէական Մաթրոնի մը, ագիուականի մը պէս, Թարգինեան վայրենաբարոյ ապիրատէ մը բռնաբարւող և վերապրել չուզող անարատ տիկնոջ մը պէս կրնայ պարծիլ սիգալ, նաև ՚ի պահանջի հարկի իր նուիրական անունին յատուկ մեծասրտութեամբը կարհամարհէ լեզուային կնասիրական ապերասանութեան ամենաթեթև և կամէութիւնը, և մատնութեան ու նենգութեան դէմ ընդվզի իրր անլիհնոր և քաջասիրտ արմէնուհի՛ բառին ամբողջ նշանակութեամբը:

1915, Կեօզ - Թեքե

**ՎԸՏԱԿՅԱԿԱՆ ՆԱՄԱԿ**

Rien ne nous rend si grand  
qu'une grande douleur.

A. DE MUSSET

Ազնիւ Տիկին Արմենակ Կոստանց,

Առողջութեանս ձմեռնահար և փոքր ինչ խարխուլ վիճակն արգիլեց գիս ներկայ գտնուելու սիրելի կենակցիդ յուզարկաւորութեան սգալի հանդէսին: Ի վերուստ անողորմաբար վճռուած այս տարածամ և աղետալի պատահարէն փափուկ սրտիդ համար կարտադրի վիշտ մ' որուն սաստկութեան գիտակցութիւնը ունենալ կը կարծեմ: Իր յաւիտենական ննջարանը փոխադրուելով

երէկուանէ ՚ի վեր հանդիլ սկսող սիրական ամուսինդ, Արմենակդ՝ իր կրթութեան և լեզուագիտութեան, ինչպէս նաև Այտրնի գաւառին Արտաքին Գործերու Տեսչութեան բարձր պաշտօնը արժանաբար և կարողաբար վարած ըլլալուն շնորհիւ Իզմիրի պանծուի Հայերուն մին եղած էր: Տարակոյս չունիմ թէ անոր մտքին և սրտին կատարելութեանց համեմատութեամբ վիշտը պիտի գրուէ թէ՛ միտքդ, ուր յարածուն և թագուն զանձեր կը վխտան, և թէ՛ սիրտդ որ բարութեան և առաքինութեան զգացումներով զնգուն է: Բայց այս տեսակ տառապանքի և փորձանքի առջև փոքր հողիները միայն կընկրկին, իսկ դուն հողոյդ մեծութեամբը կրնաս արիաբար ընդվզիլ և դիմադրել բարոյական չարչարանաց, և բարձր սրտիդ խորերէն արձակել արհալարանայ, և բարձր սրտիդ խորերէն արձակել արհալարանայ և լոխն քրքիչ մ' որ ճակատագրին, դու՛ մաղերերիդային անխուսելի տնօրինութեան մը և անըմբռնելի ապիրատութեան դէմ անէճքի և մահուան դէմ բուն ատելութեան նշանակութիւնը ունի և պիտի ունենայ: Ահա այս պատճառաւ չեմ համարձակիր մխիթարութեան սովորական զգացումներ յայտնելու և վըտակցաբար լեզու թափելու քիչ որ դիտես անշուշտ թէ «Կենսոյն ոչ այլ ինչ է բայց միայն երկարապատում ատենապլութիւն մը մարդկային սեռի չարչարանաց»: Արամտութեամբդ և ի՛նչ տատարական համոզումներուդ ազդումովն անխմանալի և մահաբոյր աղէտներուն չարձակումներուն առջև շնորհակցելու և լռելիայն համակերպելու կարող քեզի պէս լըճամիտ և քաջասիրտ տիկնոջ մը լոխն և խորին վիշտերը սփոփելու փորձն անգամ սրբապօղծութիւն մ' է:

Խնդրեմ, ընդունէ՛, տիկի՛ն, իրական ցաւակցութեանս հաւատարմութիւնս հաւատա՛նքը, և հաւատա՛ անկեղծութեան զգացմանցս, որով մնամ միշտ

26 Յունիս 1917  
Կեօզ - Թեքե.

Բարեկարգ  
Գ. Զ.







ունի, և ունենալէ ետք պըրասիական բնազդէն զրդուելով իր կամքը և ջանքը յատկացուց լուսաւորելու իր միտքը և տգնիւ զգացումներով համակելու իր սիրտը: Այսօր իր հետը տեսնուող անձինք կը խոստովանին թէ կրթութեան, դաստիարակութեան և բազմազիւծի ընթերցումն բուն ներգործութեամբը յաջողած է տալ մշակոյթ մ' իր մտքին, որ զարբնաց մ' է նորածիլ գաղափարներու և տեսիլներու: Ունի նէ զուսթութեան և գոհունակութեան ժամեր, և շրջակ շքնդուներ իր երեակալութիւնը կը օրանայ, կը խոյանայ միզայն, նաև երբեմնակի բանախեւսային վերնագաւառներու մինչև տեսութեանէ աներեւութացող սահմանները: Հմուտ է իր մայրենի լեզուին, ինչպէս նաև Փրանսերէնի և յունարէնի: արող է խօսելու և ոչ թէ թմբովելու, և այս պատճառաւ կախարժի խօսելէ եւ ը ըտող, հասկցող և գնահատող է իր խօսակիցը: Գիտէ խօսակցիլ առանց շփոթուելու և մտիկ ընել լրջօրէն: Սակաւաթիւ կիներու յատուկ է այս լրջութիւնը: Եր խոստովանի թէ խօսակցութեան պայմաններուն մին է ուշադիր ըլլալ ըստածներուն և ժամանակ տալ խօսակցին գիտցածը և կրցածը յայտնելու:

Այս շնորհալի հայունին իր մկրտութեան անունէն ի զատ ունի ուրիշ անուն մ'ալ, որ է Պ... և որ Տանթէի եղեմարեսկ սրբունիներուն միոյն անունն է: Բայց իր վարուց և բարուց անարատութեամբը հանդերձ երկնային սրբուհի մ' ըլլալու յաւանակութիւնը չունենալով եղած է երկրային սրբուհի մը: Ըսել կուզեմ թէ իբր չընորհալոյս և պճնասէր գեղունի յաջողած է հիմնեանս մեհնանին խորհրդաւոր շուքերուն ներքև պատասպարուելու և ամուսնական հովանաւորութիւնը վայելելու: Այս վայելումին շնորհիւ ազատութեանը ժամանակին յատուկ պարգաւատութեանէն ազատուած և կ'նայ գաղտնիքներու տեղիտի հանդիսացած է: Կնային ընաւորութեան վրայ առանց վերապահութեան վճիռ արձակելը մտային յանդգնութեան շտաշլութիւն մ' է, և այս մասին վարանումով զատողութիւն ընելը խոհեմութեան պարտ մը:

Իմաստասէր քննադատ մը, Պախլ, կըսէ թէ՝ «Լաւագոյն է մտածումի մը շնորհազեղութիւնը տկարել քան թէ բռնաւոր մը բարկացնելը»: Հոս տեղին է ըսելու թէ գեղանի և թարմահասակ, քմայքոտ և հմայքոտ կինն ալ ոչ նուազ բռնաւոր մ'է իր հրասպոյրներուն կոթնելով: «Կինն անհաստա է հովէն տատանող փետուրին սէս» կըսէ Իտալացի բանաստեղծ մը: «Շատ խենդ է ո՛վ որ կը վստահի կնոջ» կըսէր Ֆրանսուա Ա.: Կլեմայի և միջալայրի ներգործութեամբը իտալացի, Փերանասցի կիներէն ոմանք թերևս կը հաստատեն իտալացի բանաստեղծին և Ֆրանսացի կնամոլ թագաւորի մը այս կարծիքները: Բայց ըստ իս բնաւ ընդունելի չեն ասոնք. քանի որ խնդիրը Պ...ի պէս պարկեշտ և սակայն արուեստագիտարար պըրասէր գեղանիի մը վրայ է: Այս արմնուէին բոլորովին օտար է, և օտար կը մնայ այս տեսակ մ' ընկերութեան համար, զոր Ազէքսանդր Տիւմա Ֆիս կը նկարագրէ Կիսայխարհի անունով երկնուամ իր մի շքեղ թատերգութեան մէջ: Այս կիսայխարհեան ընկերութիւնը հմա հայերուն մէջ ալ զըժբաղդաբար ունի մի քանի հետեւորդ կիներ, որք բարեբաղդաբար սակաւաթիւ են, և որք անխոստովանելի ապրելակերպ մ' ունին, հասարակաց համարումին կարեորութիւն չեն տար, արհամարհութեան զգացումը առ ոչինչ կը հատարեն, չունենոր են, նաև դիմակաւոր, և չզիտես ինչպէս և որպիսի միջոցներով յանկարծ ունեւորի և գուցէ բարձրակեցութեան (հայ-լայֆ) հովեր կառնուն, մեծուհի յատուկ ընկերային դիրք մը ստանալ կերպդեն, չինձու և խախուտ պերճութեամբ փառաւորուելու միամիտ և սիրամոլը այցելուներ ունենալու, թէյարբումի գումարումներով խրոխտալու և իրենց սատանութեանց որոգայթին մէջ կնախնդիրներ գլխիվրելու թագուն գիտաւորութեամբ:

Տիկին Պ... այս տեսակ կասկածելի արարածներու չգիջանիր և ոչ իսկ բարև տալու: Ունի ամուսին մ' որ պատառուկեր երկառասարդ մ'է, քաջալանջ, զգոն, հմուտ և ընտանեկան ըոյն մը կազմելու կարող է, և ոչ թէ



Լանչիօթի մը պէս վագրաբարոյ, գորսիզացիի մը պէս վրէժխնդիր, աարիքոտ և նախանձոտ սրձատ մը: Քաջ գիտէ թէ լոնչն ոսկի և խօսիչն արծաթ կարժէ բռնակալութեան և բարբարոսութեան ներքև զսպուած գերութեան ժամանակ: Տիկին Պ... պարկեշտութեամբը, իր շքեղութիւնը չեչտող ձիւքովը կրցած է ամուսնոյն սիրունին, նաև նախախնամուհին հանդիսանալ: Թէ ներա և թէ՛ ամուսնոյն համար չկրնար անլիճակի ճըշմարտութիւն մը նկատուիլ Նէյքարիչիին սա բանաստեղծական կարծիքը. «Մարզս՝ Ազրիլ է երբ կը սիրաբանէ, և Դեկտեմբեր՝ երբ կամուսնանայ»: Այսպէս մտածելովս չափազանց գնահատուածի և սղոքուածի վտանգին չեմ ենթարկուիր: Տիկին Պ... իր թարմութեամբը, բնատուր կատարելութիւններովը, գիտալուծիւններուն և նշմարումներուն նրբութեամբը, ինչպէս նաև ամուսնական կեանքի անուղքելի և աննահանջելի հարկերուն համակերպելովն իր ամուսնոյն Ա.թեմասն է, գուշէ նաև ստուգապէս սիրուած տիրապետուհին: Մականունն է՝ Զգայնիկ:

Ծարաւի է երանութեան, և արժանի էր ցաւերու և անձկութիւններու բացարձակ բացակայութեան, թէև գիտէ թէ մարդկային կեանքի չէ շնորհուած այսպիսի առանձնաշնորհութիւն մը, և թէ անհարկն է բոլորովին ազատ մնալ ճակատագրին անողորմ և անըմբռնելի յարձակումներէն:

Զգայնիկին կենաց հորիզոնը ծիրենախոյ էր: Լոյս և յոյս կը փողփողէին անոր հեռաւորագոյն կէտերէն, և իր թրթռակ լեզուն պերճօրէն կը նկարագրէր ուրախալի զգայութեամբ ստէյ համակուած իր սպիտակ սիրտը, որուն վրայ Ասդայէյն ոչինչ կրցած է սևազրել, մրտախ: Զգայնիկ մայրութեան երջանկութիւնը կը վայելէր, զի ունէր ժպիտներովը լուսարձակ հրեշտակ մը, որ ապառնի յատուկ ախորժելի անակնկալներու ինչպէս նաև բարեկուշակ հաւանականութիւններու նախասանձմանուած կերևար ներա բարօրութեան յարատեւութիւնը մաղթող բարեկամներու: Ինքնէ՛, այս յուսաւէտ և

փողփողուն հորիզոնին մի հեռաւոր կէտին վրայ յանկարծ կազմուեցաւ սև բիծ մը, որ հետզհետէ մեծցաւ և եղաւ սպառնական, մթանար ամպ մը: Ասոր անալի ու լոտումներէն արօտորեցաւ շանթ մը՝ որ մշտնջենական լուծեան դատապարտեց Զգայնիկին մայրութիւնը հեշտօրէն գրաւող սոխակի մը դայլայլելը և անդիմապրելի ժպիտներու երանաւէտ փափսուքը: Անբաւ եղաւ մայրին վիշտը, որ երկնային անխմանալի և յանկարծանաս անգթութենէ մը կը հետեւէր: Դառն վիշտերու համակերպիլ առաքինի հոգիներու յատուկ է, բաղդին արմարկութեանց ղէմ լոնչն և սիփփուածի և վերածնութեան հոգը ժամանակին ամենակարողութեանը թողուլ և համբերելը ապագայ յաղթութեան գիտակցութիւնը ունենալ է:

Զգայնիկ իր անկեղծ սգաւորութեան մէջ վայելչասէր և հանձարեղ պչրագէտ մ'է: Փոխանակ սևեր հագնելու՝ ստվորական սգաւորներու պէս բոլորովին սպիտակ է արդ իր արգուզարդը կազմող և իր վայելչագիտութիւնը փառաւորող հագուստը: Անուշադիր մը թերևս կարծէ թէ այս արմնուհին քմայքոտ և մոռացկոտ մայր մ'է ղեռ երէկ պեղուած յաւիտենական ննջարանի մ'առջև, որ իրեն համար մօզէլիան չիրիմ մ'ըլլալու արժանի է, և թէ իր կորուսած հրեշտակին յիշատակը բոլորովին սրբուած և ջնջուած է կաթոցին սիրով ողորուած իր մայրական սիրտէն: Ո՛րքան սխալ կարծիք: Ներա յոմայրական սիրտէն: Ո՛րքան սխալ կարծիք: Սպիտակութեան վրայ, շքեղ և փառահեղ կուրծքին պի՛ճութեան վերքը զգուշապէս գետեղուած կերեայ սեպիտը շղարչէ կազմուած փնջանման հանգոյց մը որ մահուան ղէմ իր զգացած յաւիտենական և բուռն ատելութեան զոգցես խորհրդանիշն է: Այս ատելութեան զգացումը ներա մայրական փափուկ սրտին խաւարումն է, ուսկէ կարտադրի թերահաւատութեան անձկութիւն մը, որուն սաստկութեամբը և դառնութեամբը շնորհալի Արմենուհին կը միտի իր ճակատագրին անմտութիւնը ապտակելու և կռթնելու ապագայ երջանկութեան ազգաբար և աւետալի պաղփարի մը վրայ...:

Պ. 2.



**Օր. ՄԱՆՆԻՆԻ ՊԵՐՊԵՐՆԵԱՆ**

La douceur de vivre est dans  
la renaissance éternelle du cœur.

LAMWENNAIS

«Դաշինք» էն խմայայ թէ յոնիական երկիրներու մեր հոչակաւոր մայրաքաղաքը ե՛լած է գեղարուեստագէտ և տաղանդաւոր Արմէնուհի մ'որուն հայրն էր՝ բարեկամ մեծանուն և յազմ հմուտ Ռէթէրո Պէրպէրեան: Այս հայուհին Օրբորդ Մաննիին է: Ուղեւորութեան շարժառիթը կերեայ իր ձայնին երաժշտութեամբը գմայեցնել և հրապուրել Իզմիրի հայերը և օտարազգիները: Անկեղծապէս բարի դարուստ և յաջողութիւն կը մաղթեմ, և առանց լսած և վայելած ըլլալու ներա ձայնին գեղգեղանքը՝ այժմէն ծափ կը զարնեմ, դ'տնալով թէ պատրաստ է երգելու, և մանաւանդ ի յուր հասարակութեան և թատերարժի վրայ երգել ուղեւորն համար: Իզմիրի հայը հազիւ սկսած է զգալ թէ բոնակալութեան ճշուամէն ա՛լ ազատուած է, և ազատութիւն բառը թաթովելու համարձակիլ: Գերութեան մէջ ապրող ազգերու համար ազատագրութեան միջոցներուն մին է երգել, և երգ լսելով և սիրելով յուզուել երբ կարգիւնին խօսելու, գրելու, քայլելու, խնդալու և լալու անգամ, և երբ չին կրնար լսել և լսուլ գոպիլ: Վ. Հիւլիօ կրօն. «Գերմանիոյ ժողովուրդը, որ ճգնուած ու գոպուած է, տրուաբ սիրով կերգէ: Երգին ազատուելու կը նմանի: Երգով կարտայայտուի ինչ որ կարելի չէ խօսքով յայտնել, ինչ բանի համար որ կարելի չէ լսել: Գերմանիոյ

ժողովուրդը երգելով չունչ կանու, նաև կ'զաւազրէ երգով: Սմենուրեք երգի ժողովատեղիներ ունի»:

Ամէն գերի ազգերու պէս հայ ազգն ալ իրաւունք, նաև պարտաւորութիւն ունի երգը սիրելու, երգելու, երգելով չնչելու. նաև զաւազրելու չէ թէ երկրին կառավարութեան դէմ, չէ թէ առիւծին դէմ, որ երախտագիտաբար կը մերժէ գիշատել Անտրէզլուսը, այլ ժեօնկը բուռած հողկային անտառներու որջարնակ վագրին դէմ, որ իր որսը գիշատելէն, լափիլղելէն և յագուրդ գանկէն կտփն ալ կը շարունակէ գիշատել մի միայն գիշատելու հաճոյքին համար... Տարակոյս չունիմ թէ Իզմիրի վերին և միջին դասերու պատկանող հայերը, նաև օտարազգիներն իրենց ներկայութեամբ պիտի փութան պատուելու հայ գուսանուհիին երգահանդէսը, և իրենց աւանդական գեղարուեստասիրութեամբը փառաւորելու Օր. Պէրպէրեանի թէ՛ տաղանդը և թէ՛ քսակը: Նէ իրաւունք ունի անչուշտ ըսելու իւրովի. La charité bien ordonnée commence par soi même. որ ըսել է. «նախ ինք իրեն ողորմիլ»: Կը յուսամ թէ պիտի հաճի անգամ մ' ևս թատերարժի վրայ իր ձայնական երաժշտութեամբը յոգնիլ և փայլիլ յօգուտ և ի նպաստ այն թշուառ վտարանդիներու, որք վամբիրներու վալրագութեան նահատակողներու մնացորդներն են: Այս երգեցիկ երիտասարդուհին նաև քանասեղծ մ'է. վասն զի երաժշտութիւնը՝ գործիական, երգն ալ՝ ձայնական բանահիւսութիւն մ' է: Հային միաքը բորենիներու, յովագներու և համանման գազաններու անգթութեանց նկարագրութեամբ տողորուելէն, մահուան գոյնը կազմող խաւարին գաւակներուն դէմ համակուելէն ետք առելութեամբ, որ լոտիան կը մտնչէ գոգցես ամէն արգահատող սիրտէ, չնորհալի և անչուշտ երգելի գուսանուհի մը դայլայլիկները վայելելով փրկուէտ չունչ մը պիտի առնու ազատութեան արշալոյսին արժանացող հայը:

Ի՛նչպիսիք չկարծուի թէ Օր. Պէրպէրեան միայն գուսանական տաղանդով կրնայ պարծիլ: Կարգն եկաւ ըսելու



թէ նաև գրագիտական արժանիք և վիպային ու միանգամայն բանաստեղծութեան յատուկ վառվառն երևակայութիւն մ' ունի: Կարգացի «Ռաշինք» ի մէջ իր «Օրագրի էջեր»ը և «Անցնող հովերէն»ը, որք սիրուն են և գոգտրիկ, և որք մշակուած մտքի մը կատարելութեանց և գուցէ սիրարեկ սրտի մը դժուարաւ զսպուած հառաչանաց հաւաստիքը կը տան: «Օրագրի էջեր»էն կը հասկցուի նաև թէ՛ Օր. Պէրպէրեանը իզմիր բերող կառախուներին ճակտին վրայ գրոշմուած շիեղ (luxe) բառը չքեղութեան անունը ունի միայն, և իր այս սպարանքին փարատումէն սրտտեղու ժամանակ ախորժելի խոնարհամտութեամբ մը կը մոռնայ յիշել թէ կառախուժքը եթէ ոչ արտաքուստ, գէթ ի ներքուստ ունէր չքեղութիւն մ' որ էր ներա ներկայութիւնը և ուղեորութիւնը: Բայց այդ վերնազիրներուն ուշագրաւ տողերէն կարելի է առանց յանդգնութեան հետեցնել. նաև հաստատել թէ Օր. Մաննիկ վիրաւոր հոգի մ' ունի, նաև սիրտ մը որ անցնող հովերէն սէր կուգէ, թէ նաև ազատ, անսէր օրեր վերադարձած են: Երեք խոսք որք խորհրդաւոր և կնճռալի նշանակութիւն մ' ունին: Ունին նաև բանահիւսութեան աւելնող և սիրային մարմաջով համակուած սրտի մը զեղումներու արտայայտութեան հետ սպինքսային հանելուկի մը կամէութիւնը...: Փառնի որ ունի վիրաւոր հոգի մը. վէրքը բուժելու յատուկ դարմանը անցնող հովէն ուղեւորին աւելի վտանգաւոր և թերևս անբուժելի վէրք մ' ևս ընդունելու վտանգին կենթարկուի, վասն զի դարմանը տալու հրաւիրուող վիրաբոյժը, հովը, բժիշկներու ամենէն անհաւատարիմն ու զրուժանն է: Վիրաւոր հոգի մ' ունենալ և անցնող հովէն սէր ուղեւոր կը նշանակէ կենաց ովկիանին վրայ նաւարկելու համարձակիլ, էջի անխուսելի անզգամութիւններէն արտադրուած փոթորիկներու մատնուիլ և գուցէ նաւարեկ մ' ըլլալ: Միթէ՞ յուսահատութիւն մ' է այս թէ անյուսութիւն մը: Չգիտեմ, բայց ներելի է կարծել թէ հովէն տրուած դարմանի մը ազդեցութեանը վտանգիլը գուցէ Տէժանիրի թունաւոր պատմուճանին

զիւցարանական հրաշագործութեան վստահած ըլլալու ապարազութիւնը ունենալ է: Կը փափաքիմ որ Օր. Մաննիկի հոգիին վէրքը շուտով բոյժ գտնէ, եթէ բանահիւսական կեղծիք մը չէ այն և իր գեղարուեստական տաղանդովը ևս քան զևս փայլելով, յաջողի փառաւորուելու, ճակատադրին ոչ թէ գերունին, այլ տիրապետունին ըլլալու, թատերարեմին վրայ ոչ թէ սպասարկու այլ թագուհի մը հանդիսանալու՝ իր երգերու քաղցրութեամբը և ձայնական ներդաշնակութեանց շնորհիւ, և ծափահարութեանց հեղեղին յանձնէ ձանձրոյթը, որմէ թերևս կը կրճուի անցնող հովէն սէր ու գող իր սիրտը, և վիշտը, որմէ գուցէ կը մաշուի իր վիրաւոր հոգին: «Ապրիլը ձանձրոյթի և վշտի միջև տատանիլ է», կըսէ յոռետես այլ երևելի փիլիսոփայ, Շօրէնատուր: Եթէ Օր. Պէրպէրեան այսպիսի սատանուծի մատնուած է, եթէ «ագատ, անսէր օրերը վերադարձած են», կը շնորհաւորեմ իր հոգին՝ ապաքինումի վիճակի մը հասած ըլլալը նկատելով, վասն զի այսպիսի օրերու ներգործութեամբը հնարին է վիրաւոր հոգիի մը համար բոյժ գտնելը, և ձանձրոյթէ ձգնուած և գուցէ մշտնջենապէս քնելու սահմանուած սրտի մը վերածնիլը: «Ապրելու քաղցրութիւնը սրտին յաւիտենական վերածնումին մէջն է», կըսէ Լամբնէ: Գ. Զ.





# Ա Շ Ի Ա Ր Հ Ս

## Մ Ե Ռ Ն Ի Լ Գ Ի Տ Ց Ո Ղ Ի Ն Ս Է

Je préfère un demi siècle d'esclavage pour mon pays a un mensonge national. Le premier élabora la rébellion, le second la corruption.

MAZZINI

**Մ Ե Ր Ե Ն Ե Ր Է** մ'ի վեր գաղղեցաւ լսելի ըլլալէ Սուրէն Պարթևեանին ձայնը, որ կորովի է և շանթարձակ սրտաւովի տալաւորութիւնը կը տայ բառերու շարքին ներքև յաջողապէս զետեղուած ծպտուն և թաղուն գաղափարներու սիպիւնան նշանակութիւնը ըմբռնողներու: Կը խոստովանիմ թէ ես այ եմ մին աջն անձերու, որք անոր ազմկայի ձայնին մէջ կրզգային արդարագործ դատաւորի մը, ազտութարար ակոյնանի մը բարկութիւնը հայ ազգը անճիտելու զեհննապարտ վայրագութեանց դէմ: Ներելի էր ուրեմն ինձ ցաւիլ Պարթևեանին աներևութանալը և լսել սխիլը դիտելով: Իրաւ է որ Ալֆրէտ տը Վինտի ծերանալէն ետք ոչինչ գրեց և գոչեց. «Լոտթիւնն է միայն մեծաշուք»: Յայտնի է թէ լռելու այս պարտականութիւնը կը պատկանի ընդհանրապէս այն հասակին՝ զոր տարիները մեզ կը գուժեն, ըսել կ'ուզեմ ձերութեան, որ մարդկային կենաց վերջարանն է, եթէ ոչ մահուան յատաճարանը... Բարերազգարար Պարթևեան տակաւին սրիաբար կը գիմագրուէ ժամանակին յարձակումներուն և մթնոլորտին անողորմութեանց դէմ: Այժմեայ պարագաներու մէջ երիտասարդ գրագէտներու, բանաստեղծներու լռելը, պատերազմի վիճակէն սովորաբար ար-

տաղրուած վարուց և բարուց ապականութեան հոսանքին առջև անտարբեր մնալն ազգային և ընկերային շահերու դէմ գրեթէ գաւազրութեան հաւատար դաւաճանութիւն մ'է: Պարթևեան, որ արդիական հզօր և աներկիւղ իմացականութեանց մին է, անշուշտ ինձի հետ համամիտ է՝ ծայրայեղ չգանելով այս կարծիքս: Հայը հիմա կը գտնուի իր ազգային կենաց այն շրջանին մէջ, ուր գրագէտներու, բանաստեղծներու, ընկերաբան քննադատներու պարտքն է խօսիլ և աղաղակել, գոռալ և որոտալ, մանչիլ և աղերսել խկ' ծերագրելով ոչմին, այն նուիրական և փրկարար ոյժին առջև, որ պաշտօնունի գերութեան չղթաները խորտակելու, զինապաշտութեան բարբարոսութիւնը տապալելու, և հանրութեան իրաւունքին գերին և սպասարկուն հանդիսանալու:

Տասնեկններորդ դարուն մէջ երբ կրեալէ ապրտամբները կը մաքառէին անօրէնութեան դէմ՝ Լէոնիտասի հրամանատարութեան ներքև թերթօրի կիրճին մէջ մեանիլ պիտոյ Սպարդաջի դիւցազանց թռոններուն պէս, երբ կղզիին վանքին մէջ հաւքուող և պատսպարուող մարտիրոսութեան հետամուտները հուրի և սուրի կը մատնուէին, անոնց մի անուանի ներսը, Ջիմպրաֆաքի, աղերսալի հալմակ մը գրեց ծրանսայի Հովերոսին, դու իմա՛ Վիզթօր Հիւկոյին որպէս զի տխտանեան փողարի մ' աղջուժը վայելոյ ձայնովը կրեալէ քրիստոնէից ազատութիւն և անկախութիւն տալու հրաւիրէ Եւրոպան: Եւ անա La légende des siècles ի անժա՛հ կընակը յետազայ նամակը գրեց հրախնային խառնարանէ մ' արտահոսող իր լաւայական գրիչովը:

«Առ թագաւորս Եւրոպայոյ,

«Թագաւորնե՛ր, ըսէ՛ք խօսք մը, և անա՛ կրէտէ կ'ազատի: Եթէ ըսելու յատկութիւն «չունիք, չըսէ՛ք ինձ թէ ուրիշ ի՞նչ բանի «յատկութիւնը ունիք:»

Եւ կրեալ ազատեցաւ թէև յամբարար: Երբ Մաք-







նակ պատին վրայ խորհրդաւորապէս և անյայտ ձեռք մը գծագրուած Manès, Thèsel, Pharès խօսքերը կ'ընդունամարէ իր յուսթի երեակայութեան առջև, և Դանիէլ մարգարէին պէս հրաւէր ընդունելով վրիժառու խիղճէն իւրովի կը բացատրէ Բաբելոնեան վազրերու մօտալուտ տապալումը, հաւաստի ըլլալով անշուշտ թէ Պօսիւէ եպիսկոպոսը Ֆրանսայի մի թագակիր բռնաւորին առջև խօսելով և ակնարկելով Բաբելոնեան թագաւորնիրու՝ կրտէ. «Թագաւորներուն սիրտը Աստուծոյ ձեռքին մէջն է», և Վ. Հիւկօ՝ ուղղելով իր խօսքը չորքորթ եպիսկոպոսին՝ կ'ըսէ. «Կը սխալիս, զի Աստուած ձեռք չունի և Բաբելոնեան թագաւորներն ալ սիրտ չունին»: Ասի ըսելով՝ Ալիսպիական ամպածրար բարձանց վրայ գարող Ֆրանսայի բանասիրութեան առաջին և յաւիտենական Արծիւը, որ այս աշխարհին մէջ իմ Աստուածս է. և որու վրայ ապշութեամբ կը գմայլիմ՝ ինչպէս ինքը կ'գմայլէր Շէյքսպիրի հանճարին վրայ "Je t'admire comme une brute., ըսելով, կը հետեցնէ թէ երկնից արամաբաշխական արդարութիւնը չպիտի յապաղի արդիական Պայթագարներու ճակատագիրը ճըտեկու և սահմանելու... :

Գ. 2.



## ՕՐԻՈՐԴ ԲԼԱԹԻՆԻՆ ԵՐԱԶԸ

**Ա**ՍԻՍԸ, հասկնալու կարող ունինդիր մ' երբ կը տեսնուի ներա հետ, կը համոզուի թէ ալեւմտեայ լուսաւորեալ ուստանի մը գաղութին պատկանող չնորհալի արմենուէի մը քովը կը գանուի, և ն'րա մտքին և սրտին ճօխութենէն կը զբաւուի շուտով: Այս հայուէին իր մայրենի լեզուին և անգլերէնի հմուտ է: Յէր հարսելի էր հասակաւը, եկեղեցիին խորանին առջև ամուսնական հաւատարմութեան ուխտ զնելէն ետք Բլաթին ժընէլ գնաց և հոն հաստատուեցաւ ամուսնոյն հետ: Բարեպաշտ մ' է նէ: Անունն է Բլաթին և մականունն ալ՝ Տիրանեան: Բաւական հարուստ և բարեամտիկ և ճարտիկ երիտասարդէ մ' երբ նէ որ մը հրաւէր ընդունեցաւ իր սիրտը անոր նուիրելու և հիմնեան տաճարին մեհենական խորհուրդներուն պարկեշտ և անկեղծ մասնակից մ' ըլլալու, Օրիորդ Բլաթին լոյն մենախօսութիւն մը, նաև խորհրդակցութիւն մ'ունեցաւ իր խղճին հետ, որ իր անունին պէս վաղուսն և մաքուր է, և աճա ըսաւ իւրովի. եթէ հաւանիմ սիրտս նուիրելու այս երիտասարդին, պիտի հարկաւոր իմ հրաժեշտ տալու ազատութեանս, և մկրտութեան անունիս կցելու ամուսնիս մականուննը: Ինչո՞ւ չկցեմ: Էօժէն Բելթան անուանի և կտարան հեղինակն իր Մայրը անուն երկին մէջ նախնի ժամանակներու կանանց և արանց պատմութիւնը գրելով՝ կ'ըսէ. «Կինն իր անուան կը կցէ իր էրկինն անունն ալ, և կ'ստորագրէ չոսմի մէջ Մարցիա Գաթմիս, Թիւլիա Գուէնթի՝ գերիին պէս որ իր տիրոջը անունը կ'առնու»: Հեթանոսութեան և գերութեան օրերէն մնացած և ընդունուած այս հանրական սովորութեան և ամուսնական կենսակցութեան հաւանելէն



առաջ Օրիորդ Բլաթին սակաւ ինչ խորհեցաւ: Խոհանքը քնարեր է երբեմնակի, նաև երազ տեսնելու խորհրդաւոր հրաւէր մ' է, նէ՛ իրր քաջ անգլիագէտ՝ Լորտ Պայրընի Տօն Ժիւսան անուն բանահիւսական երկին մէջ յիշուած Տուտուին երազը տեսաւ՝ իր ընթերցումներէն թեկադրուած վերջիչումի մը ներգործութեամբբ: Այս երազն էր խնձորենիէ մը գու խոս: բարիին և չարին գիտութեան ծառէն խնձորի մ' ընկնիլը. մինչև ներս ոտներուն քով գլտորուիլը, մէջէն խայթող մեղուի մը ելնելը, երազատես Տուտու ն մօտիլը և խայթուելու վախ տուած լլլալը . . . Օրիորդ Բլաթին զարթումէն, սթափումէն ետք, զարձեալ սկսաւ մտախոհել, և մննասխտութիւնը վերսկսելով՝ բաւ քթծիծաղով մը ի բովի, Թերես շիրմէնին կողմէն Սթալանթին սոջն նետուած ոսկի խնձորներուն տեսակէն է Պայրընի բանահիւսական երեակայուցութենէն հնարուած անըջային խրնձորը, և կամ շիրև իտեան պրտէզին մէջ արտադրուած տին ոսկիզէն խնձորներուն մին, զոր շերակէն՝ ըստ գիցաբանութեան՝ կրցաւ յախչա՞ն՝ անոնց պահպանութիւնը ընող հարիւրազլի ի վերջալը մեռցնելէն ետք. . .

Կան կիներ, որք թերես հաւանին Սաղանին հետ խոկ կարգուելով՝ եթէ հարուստ է ան կրտէ Վ. Շիւկօ, Օրիորդ Բլանթին անգամ մ' ևս իր վարանտ սրտին հետ խորհրդակցելով՝ հաւանեցաւ հարսանեկան հանդեսէն ետք իր անունին կցելու անունը իր ամուսինին որ սակայն սաղան մը չէ, ոչ ոլ հրեչտակ մ' անչուչտ, այլ բանի բուն և անսկուն, ժիր և ընտիր, անպարտելի և յարգելի վաճառակահ մ' է, նաև երիտասարդ մ' է, շուկայական դժուարութեանց և շուկամեղու մեքենայութեանց անգոմարար զիմադրող, և օրինաւորապէս ոսկի շահելու և զիզելու հետամուտ. վստահ ըլլալով թէ աղքատութիւնը ատանց ոսկիի ապրիլն իրեն համար ընկերային հիւանդութեանց ամենէն անտանելին է երբեմնակի: Ուրիւրմ Տրէյքըր կրտէ. «Սղքատութիւնը ամեն մուլութեանց պատճառն է, մինչդեռ հարստութիւնը, անարատ վսճառականութեամբ ստացուած

հարստութիւնը մարդկային մաքի լուսաւորութեան և ազգերու յառաջդիմութեան և մեծնութեան լծակն է:» Այս սրամիտ և բարեսիրտ երիտասարդին անունն է Ռուբէն Երանեան: Օրիորդ Բլաթին՝ ամուսնութեան չնորհիւ աճա այս ոսկեսէր անձին կինն ու տիրուէին հոյ՞ գիտհոյով եղած է արդ Տիկին Բ. Երանեան և իր մկրտութեան անունին կցելով անոր մականունը: Կրցուին տանդական և թերես ընկերային սովորութիւն մ' է և Լրջամտութիւնը երբէք թող չէ տուած Տիկին Բ. Երանեանին իր ամուսնոյն մականուան վերջին վանկը ջրջել, կոչուիլ Տիկին Բ. Երան և իրենց մականուան վերջին վանկը սրբոյներու թեթեամտութեան հետեւիլ մի քանի արանց և կանանց այլանդակ նորաձեւութեանը համեմատ: Կնոջ անունին իր ամուսնոյն անուան կցուիլը ճակատագրային հարկ մը չէ. Տիկին Բ. Երանեան իր Լր՞ութեամբ կրցած է լուսաւորել իր միտքը, կազմել իր կտորը, և բարձրացնել սիրար, յաակութիւններ, որով միայն կարելի է ունենալ անթերի և սիրելի բնաւորութիւն մը, և որով հրնարին է չչուարիլ և արի մնալ մեծ վիշակու, ծանր վտանգներու և գերմարդկային պատահարներու դէմ, զիանալով թէ անոնք ճակատագրին վճիռներու հետեւանք չեն, Յառաջադիմութեան և զգօնամտութեան գողափարներու թեկադրանքովը նէ յաջողած է իր Իմացականութեան մշակոյթը աւելցնելու: Մարդս երբ այսպիսի բնաւորութեան տէր է, և կուզե սրի կեանք բոււած մրրկալի Ուիկիանին մէջ, և երբ պատահարար կը հանդիպի փոթորիկի մը, իր նկարագրին կատարելութեան, իր բարոյական արիւթեան զիտակցութեամբ կը շարունակէ աներկիւղ իր նաւալութիւնը, և կը հասնի անչուչտ անքրթ նաւանաղխար՝ ստանց յուսահատած ըլլալու, ատանց ճակատագրին վերագրելու բնական ոյժերէ, օրէնքներէ արտադրուած ծվերու բարկութիւնները: Տիկին Բ. Երանեան այսպիսի յաջող ուղեորութեանէ մ' ևսք կրնայ պարծիլ և ըսել թէ ճակաւորութեանէ մ' ևսք կրնայ պարծիլ և ոչ թէ յաղթուող մը: տագրին զէմ յաղթող եղաւ և ոչ թէ յաղթուող մը:



իրաւունք ունի արդարեւ ճակատագիր ըսուած էակութեան սպառնալիքներու կարեւորութիւն չտալու: Եւ ի՞նչ է ճակատագիրը: Ոչ այլ ինչ, բայց միայն հեթանոսութեան և դիցաբանական աշխարհէն և Հելլոփոնի բարձանց վրայ սաւառնող բանահիւաններէ հնարուած հանելուկ մը, աւանդական, առասպելական խրատութիւն մը, բնութիւնն ոյժերէն արտագրուած անխորհուրդ պատահար մը: Հեթանոսութիւնը, դիցաբանութիւնը կ'ըսէ թէ ճակատագիրը համապարփակ վիճէն ծնած էակ մ'է: Ձեռքը ունի սափոր մը, օրուն մէջն են մարդկային անհատներու բախտերը, և ոտներուն տակը ունի երկրագունդը, իր վճիռները անդառնալի և պատկառելի կը սեպուէին աստուածներէն: Ուզող դատողութեան տէր անձ մը, երկնային և երկրային սըրբամտութեան առջև ընդվզելու, ճակատագիր, բազդ, դիպուած անուններով յիշուած բանահասական էութիւններու հաւտալու իրաւունք չունի, և երբ Բլաթի նի մը պէս ներհուն միտք մը՝ փոխանակ ճակատագիրս է, բազդս է, ըսելով, ընկրկելու և բնական կամ ընկերային պատահարներու, երեւոյթներու առջև վհատելու՝ կը կրթնի իր նկարագիրը կազմող մտային կրթութեան, կամքին կազմութեան և սրտն բարձրութեան վրայ, և կ'զմայի, երբեմն այլ կը տխրի բնութեան, այս խորհրդաւոր և յաւիտենական արուեստագէտին թէ՛ զեղեցիկ և թէ՛ տգեղ և անեղ տեսարաններուն առջև, նաև կը կռուի, կը զիմադրէ կեանքի տղեղութեանց դէմ, իրաւունք ունի իր ընտանեկան յարկին ոչ թէ ճակատագիրն այլ նախախնամուհին հոնդիտանալու:

Վ. Հիւլիօ կ'ըսէ. «Կինը քիչ բան կամ ոչինչ ընելով այս աշխարհիս երկու գանձերը կարտադրէ՝ առաջինն է մանուկը, մարդը, զեղեցկութիւնը, ցեղերուն ոյժերը, երկրորդն է՝ մարդուն ծաղիկը, արուեստագիտութեան, քաղցրութեան, մարդկութեան այն ծաղիկը, որ կանուանի քաղաքակրթութիւն»:

Արամբի և զրեթէ բազմածին կիներուն մին է Տիկին Բ. Երանեան, իր մայրական արարչագործութեան ար-

դիւնքովն ոչ միայն իր ամուսնոյն, այլ նաև իր սերունդին հետ ազգին առջև կրնայ պարծիլ, բաղդին կամ դիպուածին չվերագրելով իր նուիրական բեղմնաւորութիւնը, ընդհակառակն իմաստասիրաբար և զիտակցաբար կազմուած իր կամքին և բնատուր իրաւանց ներգործութեան հետեանք համարելով իր մայրական երջանկութիւնը: Բայց միայն այս չէ Բլաթիին յաղթանակը ճակատագիր կոչուած Սաղայէլին դէմ: Ներս սիրտըն ալ բշարիս է, ոսկրէն աւելի շքեղ և զօրեղ է նաև բեղուն և զեղուն է սիրով, և սէրը Սաղայէլին դէմ գործածուած զինուոց աւենէն ազդեցիկն է: Անվիրելին Ա. քիլէսին տկար կողմն էր իր կրունկը: Սաղայէլին ալ անբուժելի տկարութեան կողմն է՝ սրտին՝ եթէ ունի՝ սիրելու անընդունահալութիւնը: Սէրն է միայն ատելութեան դէմ մաքառող ոյժերուն ամենէն զօրաւորը, փրկաւէտը: Կնոջ սրտին ջահն է սէրը, մինչդեռ ատելութիւնը սաղանին սրտին խաւարն է: Սաղան՝ իրր մարմնաւորութիւն չարութեան՝ ունի իր հետեորդները, Կայէնը, Իսովոն, Պալթամֆը և ինն՝ իրր սիրոյ անձնաւորութիւն ունի նոյնպէս Շէյքսպիրեան հերոսուհիները, Ժիւլիէթը, Տէգաթմոնան, Օֆելիան, նաև Աւետարանին հերոսուհին, Աստուածամայրը, Մարիամը: Տիկին Բլաթիին իր յուրթի մտքին հարստութեան չնորհիւ կրնայ չարին տգեղութեանց դէմ յաղթութեան բարձրաձայն ազգակ մ'արձակել, Արարչագործութեան վսեմ զրօյնն անբախտաբար իր վրէժն ունի, և «Սիրեցէ՛ք զմիմեանս» ըսուած զերեկրային պատուիրանին համեմատ, ըսել առանց վերապահութեան, սիրելով և սիրուելով ըսել, յաղթանակը տարի հաւատքի և գոյամարտի ասպարէզին մէջ և Սաղայէլը տապալեցի:

Գ. Զ.





# ԴԱՄԲԱՆԱՅԻՆ

## Տ Ղ Մ Բ Ա Ն Ա Յ Ի Ն

1892 ին ամսանային Ախորէ մ' հար կրեկոյեան մութն եւ քան զեւ կը թանձրանար, մինչդեռ Սան-Ստեփանոյի մի տան պառչողմին երկօթեայ թափու վանդակապատին վրայ կոթած եւ ծնօտս աջ ձեռքովս բռնած տրտմակի զէպ ի ծովը կը նայէի, գալտեան մի սպասելով: Պատրանք մի եւ փարատուած էր լիս, եւ այս գիտակցութենէ արտօ գրուած անախորժ սուղաբութեան ներքե կը խոնէի, կերագէի, հաւանելով որ միաքօ թափառելով թարթափի իմ առջև պարզուած Մարմարայի տարածութեան վրայ: Արձանացս, մկա-մաղձութեանս առարկաներն էին մարդկային երանութեան զիւրարեկութիւնը, աշխարհիս ունայնութիւնը: Տե՛ղն էր փիլիսոփայելու յիւրաւի, եւ պատելով զլժ-բազը բարեկամուհւոյ մ' երեման՝ աչերուս սրգէն խու-լաւիլը կ'զգայի: Մինչ առագաստաւոր նաւի մը վերջա-լուսային ժամերու յատուկ եւ զեւ թափանցիկ սպօտութեան մէջ մերթ անորոշակի ընդունարուիլը եւ մերթ անութենէ կորսուիլը զիտելով կը շարունակէի չզղալ վայրկեաններուն սահիլը եւ անհետիլը, զբան մը ծինիլին թեթեւ ճոխնչն ուշարրեց զիս: Գլուխս դարձուցի, եւ ա-հա եկաւ, աթոռի մը կ'քուերու պէս բազմեցաւ յոտից ցզլուխ սեւերու մէջ թաղուած տիկին մը: Գունարեկ էր նէ եւ տրտմ: Ծագկեայ խորանի մը վերե կախուած եւ ժանիչակներէ ու վայրի ծագիկներէ չըմանալուած լուսա-գիծ պատկերի մ' առջև աղօթելէն հար զիս ընդունելու եկած էր ժպտով մ' որ ատենսք ներա զիմական շոր-հաղեղութեանց առաջինն էր, եւ որ արդ՝ իր պարունա-կած հեծկտանքով՝ կարծես ճակատագրին անողորմու-

թեան զէմ արձակուած արհամարհութեան ու միանգա-մայն սրտտուրթեան չանթի մ' ազգուծը ունէր:

Սրբուհի Տիւսարն էր նէ: Իր հոգեւորն Տօրինը իր անզուգական զուակը խորուսած եւ Նիսպէի ժայռին պէս վշտի եւ թշուառութեան կենդանի արձան մը դարձած էր: Ներա աչերը կարծրած էին, եւ տակաւին կը կրէին առատօրէն հասուած արտօսներու հեաքը:

Գուցէ զիտէր թէ Էգմիրէն յատկապէս եկեր էի իր զուակին գերեզմանին վրայ պսակ մ' անձամբ զնկու-համար: — Զիս տեսնելով՝ ըսաւ.

— Տօրինս կորուսի, բարեկամ՝ այլ ոչ իր հոգին որ անձան է. Այ ինձ եւ կը մնայ երթալ ուր որ է նէ, ի-րեն հեա ընդ միշտ ապրելու համար: Կը հաւատաս Սե-տուծոյ էութեան եւ հոգւոյ անմահութեան, շարայարեց սեւածիր թաշկինակովն իր աչքը սրբելով:

Ոտք ելած էի երբ նէ զէպի որտաղջամն ուզողուած էր քովս գալու համար Սաստիկ չ'զուեցայ եւ իբր պա-տասխան իր անարկու հարցումին՝ զէպ կրկինք նայե-ցայ անգամ մ' եւ աչերուս թըջուիլը զգալով:

Բարէ՛, մինչև այն ատեն կը կարծէի թէ ժամանակն եւ փորձառութիւնն ընտելացուցած են զիս ճակատագրին սովորական սենթեանց, եւ ինքզինքս կը համարէի ան-զրգուելի անտարբերութեամբ համակուած ստոյլիկեան մի: Մոտցեր էի, կամ ուզեր էի մոտնալ թէ եւ ալ ու-նիմ աչեր որք զիտեն լալ, թէ ունիմ միտք մի որ իր ասլիկարութեամբը հանդերձ զէթ մարդկային վշտի մը խորութիւնը կը չափէ կրեմնակի: Հաւատացի էի մի-ամտապէս թէ կարող եմ կենաց տխուր իրողութեանց տեսարանին առջև անխուով մնալու, մահուան անդի-տակից շահատակութեանց առջև յուզմունքս զսպիւռ: Թէ վերջապէս տիրացած եմ այն ոգւոյն որ ըզեզ մը չաթաթախելու սահմանուած հրազէնով մը կը զինէ յոյսէ եւ լոյսէ ճանձրացած Տը Գամօրի մը բազուկը՝ սարք թեկադրելէն հար իր զուակին ուզողուած եւ ինքնամո-լութեան եւ անզգայութեան հրաշակերտ սեպուած կտակ մի: Այլ սակայն ինքզինքս խաբեր էի. նէ որ իմաս-



տասիրական ծանր երկերու ընթերցումներով իր միտքը սնած էր, նէ որ մարդուս անդրա-դամբանական ճակատագրին ու նախասահմանութեան վերաբերող անլոյծ և սոսկալի հարցերը ուսումնասիրած և հզօր միտքերու յատուկ փիլիսոփայական համոզում մ'արդէն գոյությունցած էր յինքն իր հանրածանօթ հանճարեղութեամբ, նէ որ իր թէ՛ գրաւոր և թէ՛ անգիր զազա-վարներովն և զգացումներովն իր մտքին ընդարձակութեան և սրտին մեծութեան չափը տուած էր հոյ գրականութեան աշխարհին մէջ, այժմ իբր Տօրինին մայրն հարցումներուն անհրաժեշտովը սարսեց զիս, և ոչ միայն զգացուց ինձ թէ անասելի և անդարմանելի վշտի մը բեռին ներքեւ ճզմուած է ինքն, այլ նաև թէ ես ալ դերեզմանի մ'տոջն չէի կարող զսպել արտօսք մի...

«Մեռանի Տիկինն, մեռաւ Տիկինն», (զոգազակէր Պօսիւէ՛ Մերիէթ տ'Մնկթէրի մահը բոլոր Ֆրանսայի բոլոր Եւրոպայի գուժելու համար :

Չունէի հոչակաւոր եկեղեցականին տազանդը ամբողջ դամբանական մ'ազազակի մը մէջ ամփոփելու համար, այլ ունէի դամբանականներու պերճագոյնը, ըստուգապէս սգանար հոգւոյ մը արտմայլ յուզմանց հաւաստիքը, զոր այն օր նուիրեցի Տօրին Տիւսարին, զոր քիչ ժամանակէ ետք հարկադրուեցայ նուիրելու նաև իր մի սիրական բարեկամուէն, ոչ նուազ սղոցեցալ Օր. Բարիզ Կոստանդեանի, և զոր այսօր ալ կը նուիրեմ Տիկին Յ. Արաքսիա Կիւլթէնկեանին յշատակին :

Տօրին Տիւսար սիրտովը հայ, լեզուովը դաղղիացի, չնորհալի և պանծալի պատանուէի մ'էր, իր մեծանուն ծնողաց արժանի դաւակ մ'էր : Տասնամեայ հասակէն ի վեր կը ճանչէի զինքը, և ստէպ առիթ ունեցեր էի զմայլելու իր կանխասաց հանճարամտութեան և լեզուանութեան գանձերուն վրայ : Տղայութեան օրերու յատուկ այս գանձերն ևս քան զիս աւելցան տարիներուն հետ : Բարիզցիի մը պէս ֆրանսերէն կը խօսէր, նաև կը գրէր, իր տեսածները և զգացածները իբր պատկեր ընթերցողին առջև կը պարզէր՝ Զօլային գրչին նմանելու :

Նկրտող իր պատանեկան գրիչով, որ պատկերահանի մը վրձինին կամէութիւններով կը փայլէր արդէն : Մը փառքը կազմելու պատրաստուող տազանգներուն մին էր երաժշտութիւնը, որով օր մի Վեհափառ Սուլթանին առջև դաշնակ ածելու և Նօրին Կայսերական վեհափառութեան հաճելի ըլլալու ու վարձատրուելու փառքը վայելց, իսկ Բարիզի մէջ իր մեծանուն մօր թեւին և հսկողութեան ներքեւ կատարելագործելով իր երաժշտային հմտութիւնները Ամպրուազ Թովմասի և Կունայի չնորհաւորութեանց արժանացած էր :

Տօրին Տիւսարի անբաժան և սիրական ընկերուհիներուն մին էր Արաքսիա : Մօտէն կը ճանչէի Արաքսիային, Վահանեան գերդաստանի անուան շուք բերող այս անտրական անձին բարեմասնութիւնները : Եւրօրհայի էր նէ և լեզուանի : Ուստալ էր նէ և լեզուագէտ : Գերբաներէնի և Ֆրանսերէնի մէջ ունեցած հմտութեանց և իր հոգին զարգարող գերբնաիր յատկութեանց չնորհիւ արդէն ծանօթ էր Իլլազանդիոյ հայերուն, հոնդիսացած էր Բերայի հայ և օտար ընկերութեանց մէջ մի փաջուն թաղուէի, և Օսմանեան վեհապանձ Գերդաստանին թարգմանուէին ըլլալու փառքին արժանացած էր :

Տիւսար բաշայի սեզանին բոլորտիքն ուր ոչ նուազ կը փայլէր նաև հանգուցեալ Օր. Բարիզ Կոստանդեանի ուսումներով, լեզուագիտութեամբ և ժշակուած իմացականութեամբը : Տօրինէն զէպ Արաքսիայէն զէպ ի Տօրին և Բարիզ կարճակուէին աղու կատակարամութեան նրբին սլաքներ, ախորժելի հանճարամտութեամբ լի պատրաստարանական պատասխաններ և դիտողութիւններ, զրականութեան, պատմութեան, երաժշտութիւններ, զրաւիրական ճաշակի, գոյներու գիտութեան, նորասիրական վերաբերող խորհրդածութիւններ, ու ներդաշնակութեան վերաբերող խորհրդածութիւններ, բացառութեան կարօտ ակնարկութեաններ, պարկեշտութեան և համեստութեան սահմաններու մէջ պատմուած մասնադէպեր : Եւ այս բնացական ու բարոյական ճոխութեանց առջև կը մոռնայի իմ ագնիւ բարեկամ Տիւսար փաշայի պնակներուն ճոխութիւնը, և այս մը-



տաշին անյազութեանս իբր գերի՝ կը մոռնայի նաև խնդհ ստամոքսիս բողոքայի աղաղակները . . :


Սեղանէն ետք կը շարունակուէր տեսարանը, Տօրին և Արաքսիա իբր երկու սիրուն թռչուններ՝ կը ճուռ-ղէին, կը գեղգեղէին, փոխադարձ սրամտութեամբ և հանձարարանութեամբ կը մրցէին, կը խօսէին, կը ժլպ-տէին, կը խնդային, բարձրաձայն զիրար կը կոչէին, ապագային յոյսերով համակուած կը հրճուէին, նաև ակտորժեղի խաղեր կը խաղային անոր ասոր:

Արաքսիա Վահանեան օր մը հաւանեցաւ հաւատալու ամուսնական երանութեան, յանձն առաւ Յովհաննէս կիւլպէնկեանի պէս հոյակապ այլ զժբազգ երիտասարդի մը երանութեան հեղինակն ըլլալ՝ առանց ճակատա-գրին հաւանութիւնը ստանալու կանխաւ: Բարէ՛, մինչ Տօրին փրանսայի առաջին կարգի երաժշտագէտներու առաջնորդութեամբ կը պատրաստուէր կանգնելու փառ-քի պատուանդանին վրայ, յանկարծ աղօտապէս ընդ-նշմարեց սևաթոյր խաչ մը, որ Արեւելքի հորիզոնին ան-դունդներէն կերևար զխակասքի մ'աղետայի կիսա-ստուէրին վերև . . . : Արաքսիա համարձակցաւ Վեստ-եան տաճարի սպասուէին ըլլալէ դադրելու և Հիմնեա-նին քրմուէին հանդիսանալու, և անա սիպերի-տիան քամիի մ'անողոք ու մ'անարոյր շուրջը խածրեց այս նորափթիթ ծաղիկը, և անա Տօրին, և անա Արաքսիա զադրեցան երգելէ, զադրեցան չնչիլէ, զադրեցան ժպտիլէ, զադրեցան իրենց սիրականները մխիթարելէ, և անա վերջ առին կեանքեր որոնց անա-րատութեամբն և շքեղութեամբն արդ կը հպարտանան անգլխարար և անգիտակցարար «փստապեղէն շինուած յաւիտենական տուներուն»՝ ամենէն նախանձոսներն և անգուլթներն, հողերուն ամենէն սոսկալին և ամենէն սևը, այն որուն մէջ՝ ըստ Համլէթի՝ «Աննիպալներն, Աղէքսանդրներն փոշի կը դառնան և կը շինեն բրուտին կաւը՝ գարեջրի տակառի մի ծակը գոցելու համար» . . .

և անա վշտահար միտքս կը թափառի այս երկու աղե-տալի դամբարաններու բոլորտիքը, որոնց վրայ յերկ-րուստ կը յառի տակաւին լացող Տիւսաբներու, Վա-հաններու և կիւլպէնկեաներու մոլորագին նայուածքը, մինչ յերկնուստ խորհրդաւորապէս կը սարսփն Վահանե-անի և կիւլպէնկեանի սգահար հոգիները: Իսկ ես տրամապէս կը ծնրադրեմ Տօրինի և Արաքսիայի այս մտահաշուք կափարիչներուն առջև, և ամէն մէկին վրայ կը տեղաւորեմ դամբանային պսակներուն ամենէն ան-թառամը ամենէն անկեղծը, և «սրտէս խմուած «սրտէս թափուած»՝ ալ տասուքի յետին չիթը: Գ. Զ.

### ԱՍՏՂԻ ՄԸ ԽԱԻԱՐՈՒՄԸ

Et rose, elle a vécu ce que vivent les roses, l'espace d'un matin.  
MALHERBE

 Ա նորէն կ'զտնուիմ սև փոսի մ'առջև և վիզս ծռելով կ'զգամ աչքերուս դառնապէս թրջուիլը: Իրօ՛ք ոչ ես է նէ որ սեպպէս սպիտակ պատանքի մը մէջ ամփոփուելու, յաւիտենապէս ննջելու և իր սիրե-լիներուն ժպիտները և ուրախութիւնները, յոյսերը և երազները հետն առնելու տանելու անգլթութիւնն ունի անգիտակցաբար. նէ որ կենդանութեան ժամանակ զը-թութեան մի հրեշտակը կրնայ անուանուիլ: Ոչ ես է նէ որ անողոքելի հիւանդութեան մը մահարոյր ձիրան-ներսն մատնուած՝ ամսէ մ'ի վեր կը տառապէր, ապ-

(2) Ալբրեա աը Միւսէ,

(1) ՇԷՅՔՍԻԻՅՐ, Համլէր:











ներու և զգացումներու զարբնոյ մ' եղաւ: Ո՛չ ևս է նա որ իր բազմազխմի հմտութիւններովը, բարձր տաղանդով և օրինակելի ընթացքովը հայ ժամկոյ ստոգարէզին մէջ երևելի հանդիսացած էր. ոչ ևս է նա որուն խօսքն ազգային բեմերէն պերճօրէն կարտասանուէր, և զրիչն որ անաչառութեամբ արդարութեան թուրի պաշտօն կը վարէր՝ հսկելով նուիրական շահերու ամեն հանրային իրաւանց վրայ:

Մ. Մամուրեանին մասն անդարմանելի կորուստ մ' է ամենուն համար: Անոր յաւիտեական աներևութեամբն իր համեստափայլ ու կարի թշուառ ընկերուէին, համակրելին Մարիամ Մամուրեան կորոյս գորովափրտ և մեծանուն ամուսին մը, որդիական սիրոյ և հայրական միութեան կենդանի սիւսարն՝ Հրանտ Մամուրեան և իր աղջիւ ամուսինն՝ Իսկուէին՝ կ'ըրկուին անստգլխ հօր մը հովանաւորութենէ, իսկ ազգականները բարեկամները, ծանօթները, ամեն հայերը կորուսին անձնաւորութիւն մ'որ իր իմացական շքեղութիւններովն և բարոյակա՛ն կատարելութիւններովը պանծալի զիրք մը բռնած էր և միշտ պիտի բռնէ այժմեայ հայ պատմութեան էջերուն մէջ, ներկայ և ապագայ սերունդներուն մտքին ու սրտին մէջ: Վկայ են այս ճշմարտութեան այն ամեն անձինք, որոնց կրթութեան և գաստիարակութեան անվիհեր և բարեբաղդ ակօյեանն եղաւ Մամուրեան, և այն ամեն հայերն, որ տասնեկններորդ զարու գրեթէ կէսէն ի վեր անոր հեղինակած կամ թարգմանած երկերուն ընթերցման և ազգային վարժարաններու մէջ աւանդած ուսումներուն և փրկաւէտ դասերուն կը պարտաւորին իրենց մտքին զարգացումը և սրտին բարւոքումը: Նա իր բերրի և օգտակար կենացն ընթացքին մէջ, Արևելեան Մանկոյ և ուրիշ երկրու և թերթերու մէջ ցոյց տուաւ այնպիսի անողոքելի քննադատութեան օգի մը և ուրիշներու կարծիքէն տարբեր կարծիք մ'ունենալու և պաշտպանելու այնպիսի քաջութիւն մ'որք իր անունը տոհմային ու գրական տաքրութեանց մէջ անմահ պահելու սահմանուած են:

Այս քաջութեան մի անբաժան մասը կը կազմէր անիրաւութեան և անդիտակից օխերմութեան դէմ լուսութիւն մ'որու մէջ կամփոփուէր անսահման արհամարհութեան ու միանդամայն իրաւացի մեծարտութեան անդրդուելի զգացում մի: Բայց մարդկային անիրաւութեան և կրից թափէն արտադրուած հակառակութիւնն իսկ մինչև գերեզմանին եզրը միայն կրնայ հասնիլ, և այսօր ազգն համայն կողքայ իր մի փառաշուք վաւելին մահը. խորին արտմութեամբ և մելամաղձութեամբ կը կը կ'ըն հոն պահ մը, կը նայի մշտնջենական ննջարանը իջած թագաղի մը վրայ, և կորաքամակ անդ կը նըշմարէ վին մ'որուն յատակն աներեղթ է. դատարկութիւն մ'որուն ե'րբ և որմէ՛ լեցուելու սահմանուած ըլլալն ապագային վերաբերող աղօտ և անտեսանելի պատահարներու կարգին կը պատկանի: Միևնոյն տիրութեամբ և անասելի վիշտով և յուզմունքով համակուեցայ և ես, ո՛ր սիրելիլ իմ Մամուրեան, երբ մահաշուք անկողնոյդ քով տեսայ ի քեզ այն անընկճելի արիւթութիւնը, որով ինչպէս մարդկան, նոյնպէս և մահուան դէմ մաքառեցար և կը մաքառէիր յանուն փրկութեան և անուանդ որ փառքիդ արժանի քաջասրտութեամբ, երբ տեսայ և հաստատեցի թէ յաւիտենականութեան սեմին վրայ առ ոչինչ կը գրէիր աղետաւոր վախճանի մ'արհաւիրքը. ինչպէս առ ոչինչ կը համարէիր մարդերու և ճակատագրին անիրաւութիւնները, իսկ երբ տեսայ մեր ամենուս սիրելի Մարիամը, երեսնամեայ հաւատարիմ և անձնուէր կենակիցդ, ընկերուէիդ և թագուէիդ, իբր պահապան հրեշտակ զիչեր ու ցերեկ տքնութեամբ և անձկութեամբ հսկեց՝ տառապանքդ մեղմելու համար, և որ եթէ աշխարհ մ'ունենար իր ակին մէջ, պատրաստ էր նուիրելու իբր փոխարէն որպէս զի կարենար օր մը, ժամ մը, վայրկեան մ'ևս երկաբեկութեան կեանքդ, երբ գրեթէ փոխալով ըսիր ինձ թէ երկինք կը նայու՛մ զիս տեսնելով մահուանդ անկողնին քով, զգացի սրտիս ճգմուիլը, աչիւնս արտակուցէ օղորուիլը, անմեծ յիշատակիդ առջև ճնրագրելս








չնորհիւ. գեղադիտա՛կ, որ ըստ քեզ կթերաբնակ վեր-  
 նագաւառի մ'առաջին և փողփողուն արդն է: Իմ այս  
 կարծիք ոյժ կը գտնէ ինչ ինչ պարբերութեանցդ ըն-  
 թերցումէն, և այսպէս կարծելու ժամանակ կը յիշեմ  
 նաև բաժակ մը, որուն հոսանուտ պարունակութիւնը  
 կէս ժամուան մէջ իր դառնութեան համը կորոյս, և  
 ստացաւ հրեշտակի մը հաստատ մարմնաւորութիւնը՝  
 բանահիւսապէս վառ այլ տրփօրէն հիւանդ եր՛ակա-  
 յութեան մ'առջև . . . :

Կերակոյցիմ թէ այս անգամուան պատասխանս  
 գրեցի սիրտովս և ոչ թէ գրիչովս՝ ինչպէս կարծեր էիր  
 առաջին նամակիս ակնարկելով :

Իզմիր, 1 Փետր. 1885

Գ. Չ.



ՅԱՆԿ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ

ՎԻՍՍԻ ԳԵՂՈՒՆԻ

Երևու

Ա. Ննջող սրտի մը զարթումը	5
Բ. Լիւսի - Գեղունի	17
Գ. Հայ թիւրքարէ մը	25
Դ. Գեղապաշտը կնապաշտ է	29

ԳԻՄԱՆԱԾՈՐ ԱՍՊԵՏՈՒՆԻՆ

Ա. Վաղեօի ուսանող մը	55
Բ. Գիմակաւոր Սապետունի	70
Գ. Գիմակաւոր խաբեբայ մը	83
Դ. Գեղանի սատանունի	92
Ե. Սիրուն Շահունեան	103
Զ. Վարանում և որոշում	108
Է. Սմբատ Ալանեան	118
Ը. Հարունիք	126
Թ. Հարսնայելի այցելութիւն	129

ՅԱՆՈՒՅԵՐ ԳՐՈՒՆԱԾՆԵՐ

Օնտին և իր արտօսը	139
Ուղեւորութեան յիշագրութիւններէս էջ մը	152
Սկսումի մը մատնութիւնը	162
Վշտակցական նամակ	164
Առ Օրիորդ Զ. Վարպետեան	166
Սէզ Սիրտ մը	167
Օրիորդ Մաննիկ Պէրպէրեան	172
Աշխարհս մեռնիլ զիտցողինն է	176
Օրիորդ Բլաթինին երազը	181
Գամբանային տպաւորութիւններ	186
Ատողի մը խաւարումը	191
Գամբարանը	195
Սևը, Վիշտն և Ես	198



Էջ	ՏՈՂ	Սխալ	Ուղիղ
28	9	յայնէ	յայնէ թէ
30	31	զեքերելու	զեզերելու
33	4	պով	(ջնջուած է)
33	7	ծեր	քու
33	15	Աննոեհ	աննսեհ
40	10—11	որուն	որոնց
40	31	Սօնագոյի	Սօնագոյի
49	4	յանգուրդ	յագուրդ
57	12	շոհիքը	շոհիքը
66	21	բիրիճի	բիրինճի
67	9	կը զարմանաս	կը զարմանամ
71	36	աջաւրջ	աջալուրջ
73	26	գողնա	գողնալ
75	36	կասղած	կսղած
76	22	ֆերայի	ֆերարայի
88	19	Սիրունիին	Սիրունին
92	7	դարոց	դպրոց
99	19	գահամուանգուծեան	գահաժառանգուծեան
103	19	պատուակեր	պատուակիր
103	25	նախակերական	նախակրական
109	24	վերագաւառները	վերնագաւառները
111	23	մեղրասային	մեղրամասային
116	1	փալիլ	փայլիլ
123	8	այսպօսի	այսպիսի
124	14	աննեհ	աննսեհ
127	13	զեղելիլը	զերելիլը
128	9	մելամախցուծեամբ	մելամաղձուծեամբ
129	20	կար	կայ
131	3	ժերօնէններու	ժիրօնէններու
135	1	քաջալանք	քաջալանջ
136	2	ներելի	ներելի
144	23	ունէի	ունէին
151	19	անրաւ	անբաւ
158	17	գործաբաններ	գործարաններ
161	19	ալ	այլ
186	16	խոյաւիլը	խոնաւիլը
190	29	փսսապեղէն	փոսապեղէն

ԾԱՂԻԿ Հանդես Գրական եւ Ինասաստիրական  
 Հինգ տարուան կազմուած :  
 ԹՇՈՒՍՈՆԵՐ (Վ. Հիւկօ) Տասը հատոր :  
 ՄԱԹԻԼՏ (էօժէն Սիւ) :  
 ՄԱՆՍԸ ԼԵՍԳՕ (Ապէ Բրեկօ) :  
 ՄԱՐԻՕՆ ՏՐԼՕՐՄԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ  
 (էօժէն Տը Միրգուր) :  
 ՊԱՐՈՆ ՏՐ ԳԱՄՕՐ (Օգրավ Ֆեոյեհ)  
 (Լամարրֆիւն)  
 ՕՐԻՈՐԻ ՏՐ ԼԱԳԷՆԹԻՆԻ (Ժօրժ Սան)  
 ԴԱՐՈՒՍ ՄԷԿ ԶԱԽԱԿԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ  
 (Ալֆրէհ Տը Միւսէ) :  
 ՍՕՆ ԱՊԵՆՍԵՐԱԺ (Եսթրիան) :  
 ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ :  
 ՎԻՊԱԿՆԵՐ ԵՒ ՃԻՐՈՒՅԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐ

Ա Ն Տ Ի Պ Վ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Ս է Ր Ո Ւ Ն Ի :  
 Յ Ո Ւ Լ Ի Ա Ն Է :









10

10



ԳԻՆ 100 ՂՐԾ



1550

2013



